

ՆԻՈՒ ԵՈՐԷ ԹԱՅՄՁԻ ՄԵՏԱԶԱՆԱԿ
ՎԱՃԱՌԷ ՈՒՆԵՅՈՂ ԳԵՂԻՆԱԿ՝

ԼԻՍԱ
ՊԸՎԻՐ

Ե
Մ
Ի
Ր
Ե
Ր
Յ
Ձ

ԱՌՕՐԵԱՅ
ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապրիլ Գգօր եւ
Կրակոտ Կեանք մը

Սիրելի բարեկամներ,

Իմ բուն փափաքս եւ աղօթքս է, որ բարձրանաք զօրութեամբ, խորանաք ձեր հաւատքին մէջ եւ ապրիք Աստուծոյ, ուրիշներու եւ ձեր անձերուն հետ ներդաշնակութեամբ ապրելու ուրախութիւնը: Կը զօրանաք մինչ կ'աճիք ձեր հաւատքին մէջ՝ կարդալով, խօսելով եւ ապրելով իր խօսքը:

Չօրութիւնը կոչում մըն է եւ պատուէր մը, բայց թէ ճիշդ կը ստանանք մեր զօրութիւնը նոյնքան կարելոր է որքան թէ ինչպէս կը դրսեւորենք զանիկա: Մեր մշակոյթը մեզի կ'ըսէ, թէ զօրութիւնը կու գայ ներսէն, բայց ճշմարտութիւնը այն է, որ Աստուած է մեր ինքնավստահութեան եւ զօրութեան աղբիւրը: Ան է, որ իր ձեռքերուն մէջ կը պահէ մեր ապագան:

Չօրաւոր էք, որովհետեւ Քրիստոսով ձեզի տրուած է զօրութիւն, սեր եւ ողջմտութիւն: Չօրաւոր էք Աստուծոյ խօսքին ճշմարտութեան մէջ՝ զիջում չընելով արդարութեան ձեր հետապնդումին մէջ:

Ոտքի ելէք եւ փնտոցէք **իր** զօրութիւնը **ձեր** կեանքին մէջ:

Միանաբար Քրիստոսով,



Լիսա
LisaBevere@ymail.com



ՀՕՐԱՒՈՐ

ԱՌՏՐԵԱՅ
ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապրիլ 3օրը եւ
Կրակոտ Կեանք մը

ԼԻՍԱ ՊԸՎԻՐ

Strong Devotions, Western Armenian, by Lisa Bevere

© 2024 Messenger International

MessengerInternational.org

Originally published in English as *Strong Devotions*

by Thomas Nelson, Nashville, USA.

ISBN 978-4002-1313-9

This version of the Strong Devotions published in cooperation with Thomas Nelson, a registered trade mark of HarperCollins Christian Publishing Inc.

Additional resources in Western Armenian are available for free download and video streaming at **MessengerX.com** and on the **MessengerX** app
To contact the author: LisaBevere@ymail.com

This book is a gift from Messenger International and is NOT FOR SALE

Չօրաւոր, Առօրեայ Խորհրդածութիւններ, արեւմտահայերէն, Լիսա Պըվիըր

© 2024 Messenger International

MessengerInternational.org

Սկզբնապէս հրատարակուած է անգլերէն լեզուով, *Strong Devotions*

վերնագիրով, Thomas Nelson, Nashville, USA:

ISBN 978-4002-1313-9

Չօրաւոր, Առօրեայ Խորհրդածութիւններ գիրքի այս տարբերակը հրատարակուած է Thomas Nelson-ի հետ համագործակցաբար, որ գրանցուած վաճառանիշ մըն է HarperCollins Christian Publishing Inc.-ի:

Յաւելեալ նիւթեր արեւմտահայերէնով հասանելի են անվճար ներբեռնման եւ հոսքային հեռարձակման համար **MessengerX.com** կայքին մէջ եւ **MessengerX** յաւելուածին մէջ:
Հեղինակին հետ կապ հաստատելու համար՝ LisaBevere@ymail.com

Այս գիրքը նուէր է «Messenger International» Առաքելութեան կողմէ եւ ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱՅ ՉԷ:



App Store-ը Apple Inc.-ի ապրանքանիշն է, որ արձանագրուած է ԱՄՆ-ի եւ այլ երկիրներու մէջ:
Google Play-ը եւ Google Play-ի պատկերանիշը Google LLC-ի ապրանքանիշերն են:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՍ 1 – Ծորանո՞ր Կարած՞եմ

1 Սխալ Չէ Զօրաւոր Ըլլալը2
2 Ինքնավստահ՝ Քրիստոսով4
3 Առանձին Չենք	6
4 Աստուած Կը Լսէ Մեզ	8
5 Մեր Իսկական Փափաքը	10
6 Գոհացած	12
7 Հանդարտած՝ Սիրով	14
8 Ապահով Պահուած	16
9 Հանդարտեցէ՛ք	18

ՄԱՍ 2 – Ծորանո՞ր Երգիով

1 Երգին Զօրութիւնը	22
2 Ինքնավստահ եւ Ատակ	24
3 Առողջ Սիրտ մը	26
4 Ընդունիլ Կնոջ մը Բնութիւնը	28
5 Հանդարտ եւ Հօր	30
6 Կրակոտ	32
7 Պաշտամունքը Երգէ մը Աւելին Է	34
8 Հոգեւոր Իշխանութիւն	36
9 Աղօթեցէ՛ք Հոգիով	38

ՄԱՍ 3 – Թորանո՞ր Ասկրությունա՞նք

1 Մաքուր	42
2 Նուիրուած	44
3 Ծրարը	46
4 Հիսուած Աքանչելիքով	48
5 Շունչի Կապեր	50
6 Բուժուիլ Զղջումէն	52
7 Պատուել Ամուսնութիւնը	54
8 Պաշտպանուած	56
9 Հարս մը	58

ՄԱՍ 4 – Թորանո՞ր Խշմարչությունա՞նք

1 Իմաստուն՝ Խօսքերով	62
2 Աներկմիտ	64
3 Պարիսպներ	66
4 անոր Շուրջը Քալել	68
5 Հեռանալ Զղջումի Երկրէն	70
6 Սիրելի Կին մը	72
7 Երկրորդ Դասակարգի Քաղաքացի մը Չես	74
8 Ամբողջ Սէրդ	76
9 Քալել Լոյսին մէջ	78

ՄԱՍ 5– Թորանո՞ր Եսրաբէրութիւններու Տէջ

1 Երբեք Մերժուած	82
2 Խաղաղութիւն՝ Բախումի Ատեն	84
3 Յարումներ եւ Ուղղութիւն	86
4 Ապահով եւ Անվտանգ	88
5 Իմաստուն՝ Բարեկամութեան մէջ	90

6 Արդարութեան Աստուածը	92
7 Բամբասանքէ Զուրկ	94
8 Ներդաշնակութեամբ Ապրիլ	96
9 Աճիլ Բարեպաշտ Համայնքի մը մէջ	98

ՄԱՍ 6 – Թորանթի Խակատամարտի մէջ

1 Հսկող եւ Զգոյշ	102
2 Խաղաղութիւն՝ Սեռերուն Միջեւ	104
3 Աններողամտութեան Ճակատամարտը	106
4 Ապաստանդ	108
5 Մենք Ճակատամարտի մը մէջ ենք	110
6 Վահաններ եւ Նետեր	112
7 Իրական Պատերազմը	114
8 Պատերազմիլ Լոյսին մէջ	116
9 Վճռական	118

ՄԱՍ 7 – Թորանթի Գևորհիկի մէջ

1 Անցեալդ Ապագայ Չէ	122
2 Ներուած	124
3 Շնորհալի	126
4 Աճում, Ոչ՝ Յանցաւորի Զգացում	128
5 Սիրտի Պարտէզը	130
6 Դատաստանի Տուփը	132
7 Ընդունիլ եւ Արձակել	134
8 Զինուած՝ Կեանքով Յոյց Տալու Համար	136
9 Չկայ Դատապարտութիւն	138

ՄԱՍ 8 – Թորանո՞ր Տնկնապայտունքի Տէգ

1 Ուշադրութեամբ Մտիկ Ընել	142
2 Ախորժակդ Կառավարել	144
3 Հարց Չէ Բարկանալը	146
4 Ուշադիր Ըլլալ Բառերուդ	148
5 Ազատագրուիլ Զղջումէն	150
6 Խօսքին մէջ Արմատացած	152
7 Ցանել եւ Հնձել	154
8 Հանգիստին Զօրութիւնը	156
9 Աստուծոյ Դեսպանը	158

ՄԱՍ 9 – Թորանո՞ր Ազատութեան Տէգ

1 Մեղքէն Արձակուած	162
2 Նոր Սիրտ մը	164
3 Խոստովանութեան Զօրութիւնը	166
4 Մեղքէն Ազատագրուած	168
5 Երբ Ցաւը Շատ Մեծ է	170
6 Հաստատ՝ Ազատութեան մէջ	172
7 Չկապուած	174
8 Նոր Դարձած	176
9 Ազատագրուած՝ Իրը Ըլլալու Համար	178

ՄԱՍ 10 – Թորանո՞ր Արքութեան Տէգ

1 Ոչ Այս Աշխարհին Պատկանող	182
2 Հնազանդութիւն Սորվիլ	184
3 Սրբացած	186
4 Զտուած՝ Կրակով	188
5 Ֆիզիքապէս Ծոմ Պահել	190

6 Սիրտդ Տալ	192
7 Խաչը Առնել	194
8 Աստուծոյ Խօսքը	196
9 Համբերութիւն	198

*Զօրաւոր
Կարող Տոյ*

ՍԽԱԼ ՉԷ ՉՕՐԱԴՈՐ ԸԼԼԱԸԸ

Աստուած զօրաւոր է, եւ կ'ուզէ, որ դուն ալ զօրաւոր ըլլաս:

ԵՓԵՍՍԱՑԻՆԵՐՈՒՆ 6.10

Մինչ կը սկսինք զօրաւոր դառնալու այս ճամբորդութիւնը, եկէք նախ հետեւեալը յստակացնենք կամ հաստատենք.

Զօրաւոր ըլլալը սխալ բան մը չէ:

Շատ յաճախ Քրիստոնէայ կիներ կը նոյնացուին տկարութեան հետ եւ ոչ զօրութեան: Երբեմն կրօնը մեզի սորվեցուցած է պահուրտիլ փոխանակ ոտքի կանգնելու կամ բարձրանալու: Ճիշդ է, որ կանչուած ենք հեզ ըլլալու... բայց ոչ՝ տկար: Հեզութեան լաւագոյն սահմանումն է՝ կառավարուած զօրութիւն: Թէ՛ Մովսէս եւ թէ՛ Յիսուս հեզ էին, բայց տկար չէին: Հեզերը գիտեն, որ իրենց զօրութիւնը Աստուծմէ կու գայ: Եսթր հեզ էր, բայց բնա՛ւ տկար չէր: Հեզերը նաեւ խոնարհ կ'ըլլան, որովհետեւ կը հասկնան, որ իրենց զօրութիւնը կու գայ աւելի բարձր Զօրութենէ մը կամ Իշխանութենէ մը: Հեզերը գիտեն ինչպէս եւ երբ կռուին, բայց անոնք կռիւ չեն փնտոներ:

Զօրութիւնը երկսայրի սուր մըն է, որ կրնայ գործածուիլ իբրեւ կործանումի գէնք մը կամ արձակումի միջոց մը՝ որ գերիները կ'ազատագրէ: Անսովոր չէ, որ առաջին գերին, որ արձակման կարիքը ունի մենք ենք: Այս կեանքը ապրիլը զօրութիւն կը պահանջէ: Եւ որքան երկար կ'ապրինք, կեանքը այդքան կը դժուարանայ: Անաստուած մշակոյթի մը մէջ բարեպաշտ կեանք մը ապրիլը կը պահանջէ շատ աւելի մեծ ոյժ քան ինչ որ դուն եւ ես կրնանք ձեռք ձգել մեր սեփական միջոցներով: Պիտի նայինք Եփեսացիներուն

դրկուած նամակի հետեւեալ համարներուն, որոնք կը բացատրեն, թէ ինչո՛ւ մեզմէ իւրաքանչիւրը պէտք է ընդունի մարտահրաւերը եւ զօրաւոր դառնայ: Նկարագրելէ ետք, թէ մենք ի՛նչպէս պէտք է վարուինք մեր յարաբերութիւններուն մէջ, Պօղոս Եփեսացիներուն 6.10-18-ը կը սկսի ըսելով. «Ի վերջոյ զօրացէք Տիրոջմով եւ իր ամենակարող զօրութեամբ» (հմր 10):

Յարաբերութիւնները զօրութիւն կը պահանջեն: Բայց երբ որ փորձեն մէկը սիրել կամ նոյնիսկ հասնիլ իմ զօրութեամբս, կը ծախողիմ: Մենք շատ սահմանափակ մարդկային կարողականութիւն ունինք այն տեսակի զօրութեան, որուն կարիքը ունինք ամէն օր: Ատոր համար կը դիմենք մեր Տիրոջ ոյժին եւ զօրութեան: Ուրիշ տարբերակ մը պարզապէս կ'ըսէ. «Աստուած զօրաւոր է, եւ կ'ուզէ, որ դուն ալ զօրաւոր ըլլաս»: Աստուած գիտէ, որ մենք զօրաւոր չենք, ուստի մեզ զօրաւոր կը դարձնէ: Դաւիթ ոյժի այդ աղբիւրէն զօրութիւն ամբարեց իր մէջ երբ պաշտամունք ընող հովիւ մըն էր: Մեր Աստուածը Ամենակարող է, որպէսզի մեզ կարող դարձնէ: Մեր Հայրը Ամենազօր է, որպէսզի իր դուստրերուն զօրութիւն տայ: Աստուած ծրագիր մը ունի կեանքիդ համար, եւ Չարախօսը դաւ մը ունի քեզի դէմ (հնարքներ): Անոր նպատակն է քեզ Աստուծոյ ծրագիրէն դուրս հանել: Զգուշացնենք քեզ, որ Չարախօսը արդարօրէն չի կռուիր: Այն պահուն, որ դուն Աստուծոյ դուստր մը կը դառնաս, Սուրբ Հոգիին նշանը կը կրես եւ թշնամին կը սկսի քեզ նկատի առնել: Վերածնունդէդ առաջ դուն իր ստրուկն էիր, իսկ հիմա իր թիրախն ես: Բայց երբ կը ծանօթանանք ճշմարիտ զօրութեան մեր աղբիւրին, ժամանակը եկած կ'ըլլայ զինուելու: «Ձեր վրայ առէք Աստուծոյ սպառազինութիւնը, որպէսզի կարենաք Սատանային հնարքներուն դէմ դնել» (Եփեսացիներուն 6.11):

Սիրելի Երկնաւոր Հայր, շնորհակալ եմ, որ դուն զօրաւոր ես եւ կ'ուզես, որ ես ալ զօրաւոր ըլլամ: Պիտի գինուիմ՝ քու ծրագրիդ մէջ կանգուն մնալու համար:

Եւ Զօրաւոր եմ,

ՈՐՈՎՎՇԵՏԵՒ ԱՍՏՈՒԱԾ Է ԻՄ ԶՕՐՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐԱ:

ԻՆՔՆԱՎԱՏԱՅ՝ ՔՐԻՍՏՈՍՈՎ

Անսպասելի մէջ իրաւունքը պիտի բնակի, ու բարեբեր արտին մէջ արդարութիւնը պիտի մնայ. արդարութեան գործը խաղաղութիւն պիտի ըլլայ, եւ արդարութեան արդիւնքը՝ հանդարտութիւն ու ապահովութիւն յաւիտեան:

ԵՍԱՅԻԻ 32.16-17

Չ որ կը պատկերացնես ինքնավստահ կին մը, ի՞նչ տիպար կամ պատկեր կու գայ միտքդ: Ամսաթերթերու մէջ, վաճառատուներու մէջ եւ գրեթէ ամէն անգամ, որ պաստառի մը կը նայինք կը տեսնենք աշխարհի գաղափարը ինքնավստահ կնոջ, որ գլուխներ կը դարձնէ իր ամէն բան հակակշիռի տակ ունենալու տպաւորութիւնը տուող ժպիտով եւ անթերի հագուածքով ու կեցուածքով: Զուգադիպութիւն չէ, որ այդ ինքնավստահութիւնը յաճախ ծախու է՝ գեղեցկութեան կամ որոշ ապրելակերպի արտադրութեամբ մը, որ կ'առաջարկէ մեզ տանիլ նուազ փափաքելի «նախապէս» է մը դէպի հոյակապ «յետոյ» ի մը: Բայց երկար ժամանակի վրայ յաջողութենէն կամ գրաւչութենէն հաստատում կամ ընդունելութիւն փնտռելը պարապ հետապնդում մըն է: Քանի՞ հաւանութեան նշանի (*լայքի*) պէտք ունինք նկարի մը համար կամ քանի՞ գրաւոր կարծիքի (*քոմենթի*) օտար մարդոցմէ, որպէսզի վերջապէս ըսենք. «Բաւարար է... ես ամբողջական եմ»: Վստահ եղէք, որ օրական միլիոն հատը բաւարար պիտի չըլլայ մեզ լեցնելու համար:

Եթէ վստահինք ժողովրդականութեան կամ գեղեցկութեան, շարունակ ուրիշներու պիտի նայինք հաստատելու համար մեր

արժեքը եւ փափաքելի ըլլալը: Մեր աչքին մեր անձին արժեքը շարունակ վտանգի եւ սպառնալիքի ենթակայ պիտի ըլլայ ուրիշ կիներու պատճառով, եւ մեր ինքնավստահութիւնը վաղանցիկ պիտի ըլլայ: Բայց կայ ուրիշ ձեւ մը: Մենք ունինք Իշխան մը, որ միշտ պատրաստ է գեղեցիկ դարձնելու այն կիները, որոնք իրեն կու գան:

Անոր մեզի տուած ինքնավստահութիւնը աւելի խորունկ է քան մենք երբեւէ գիտենք ի՛նչպէս արտօնել, որ մէկը հասնի նոյնիսկ հոն: Անիկա աւելին է քան հագուածք մը, ընկերային հաղորդամիջոցներու վրայ դրուած նկարները գեղեցկացնող հեռաձայնային կիրարկում մը (*ֆիլթր* մը) կամ նոր զարդարանք մը: Անիկա այն խորունկ, ջերմ փայլքն է, որ կու գայ այն գիտութենէն, թէ՛ մենք սիրուած ենք եւ խորապէս ճանչցուած: Երբ կին մը սիրուած է այդ ձեւով... ասիկա երեւելի կ'ըլլայ: Քրիստոս Յիսուս օրհնած է մեզ իր շնորհքով: Ժամանակն է, որ արտօնենք, որ իր սէրը ըլլայ աւելի քան բաւարար եւ ետ կենանք ուրիշ տեղերու մէջ գոհունակութիւն փնտռելէ:

Ժամանակն է, որ նայինք մեր ներքին անձին «նախապէս եւ յետոյ»ին: Ժամանակն է, որ իրապէս գնահատենք Քրիստոսի կատարածը եւ մեր ինքնավստահութիւնը կերտենք անոր վրայ: Անոր տուած սէրը երբեք չի մարիր: Ան կ'ուզէ քնքշօրէն հոգ տանիլ իւրաքանչիւրիս, որպէսզի ծաղկինք իր սիրոյն մէջ:

*Տէր, շնորհակալ եմ՝ զիս ամէն օր նորոգելուդ,
մաքրելուդ եւ վերաշինելուդ համար, որպէսզի
ըլլամ այն կինը, որ դուն կը պարկերացնես: Ես
վստահութիւն ունիմ քու փրկող շնորհքիդ վրայ:*

Ըստ Զօրմեոյ ԵՎ,

ՈՐՈՎԿԵՏԵԻ ՅԻՍՈՒՍ ԻՆԾԻ ՏՈՒԱԾ Է
ԻՆՔՆԱՎՍՏԱՀՈՒԹԵԱՆ ՃՇՄԱՐԻՏ ԱՂԲԻՒՐ ՄԸ:

ԱՌԱՆՁԻՆ ՉԵՆՔ

Ձեր կրած փորձությունները մարդկային սահմաններէն դուրս փորձություններ չեն: Բայց վստահեցէ՛ք Աստուծոյ. անհկա թոյլ պիտի չտայ, որ ձեր կարողութենէն աւելի փորձուիք, այլ՝ փորձութեան մէջ իսկ ցոյց պիտի տայ զայն յաղթահարելու միջոցը, որպէսզի կարենաք տոկալ:

Ա.ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ 10.13

Երկառակ անոր որ կրնայ ըլլալ, որ դէմքդ բնաւ չտեսնեմ կամ անունդ գիտնալու պատիւը բնաւ չունենամ, գիտեմ, որ մենք այդքան ալ տարբեր չենք եւ կեանքի ընթացքին նոյն մարտահրաւերներէն շատերը երկուքս ալ պիտի դիմագրաւենք: Կորնթացիներուն ղրկուած նամակը մեզի կը խոստանայ, որ ինչ խնդիր ալ, որ դիմագրաւենք անհկա եզակիօրէն մերը չէ: Մենք առանձին չենք մեր փորձություններուն կամ յաղթանակներուն մէջ: Բայց մեր անձին թշնամին՝ Սատանան, կը սիրէ մեկուսացնել եւ ամբաստանել մեզմէ իւրաքանչիւրը այնպէս, որ կարծես առանձին ենք: Ան այս ձեւի սուտեր կը փսփսայ. «դուն միակն ես, որ այս հարցը ունիս: Ուրիշ ոչ մէկը քեզի չափ վատ վիճակի մէջ է»: Գիտեմ, որ այս ձեւի բաներ լսած էք, որովհետեւ ես ալ լսած եմ այդ ձեւի սուտերը:

Երբ հարցը կը վերաբերի իր խոստումներուն եւ իր Խօսքին, Աստուած խտրութիւն չի դներ մարդոց միջեւ: Ան կ'ընդունի ամէն մարդ, որ կու գայ իր առջեւ խոնարհ եւ հնազանդ սիրտով: Ատիկա ճիշդ չէ հպարտներուն եւ իրենք զիրենք արդարացնողներուն համար, որոնք կը կարծեն, թէ ամէն բան գիտեն: Ան մեզ լաւագոյնս կը լսէ երբ իրեն կու գանք սպառած եւ յոգնած մեր սեփական ձեւերով

հարցերը լուծելու մեր փորձերին: Աստուած կը վերցնէ յոգնածները եւ կոտորուածները եւ կը հրաւիրէ զիրենք, ըսելով. «Եթէ ձեզմէ մէկը կը զգայ, թէ անհրաժեշտ իմաստութիւնը չունի, թող խնդրէ Աստուծմէ, որ բոլորին կու տայ առատօրէն եւ սիրայօժար կերպով, եւ Աստուած պիտի տայ իրեն» (Յակոբոսի 1.5):

Կան մեծ թիւով թանկարժէք կիներ, որոնք առանձին եւ մեկուսացած կը զգան: Ժամանակն է, որ անդրադառնանք, որ ինչպէս մեր դժուարութիւնները մեզ կը միացնեն, նոյնպէս ալ մեր զօրութիւնները կրնան մեզ միացնել: Թերեւս դուն մեկուսացած եւ ամբաստանուած կը զգաս: Ատոնք սուտեր են: Դուն առանձին չես: Քու Տէրդ քու փրկարարդ է եւ ոչ թէ քեզ ամբաստանողը:

Ասիկա այն շատ մը պատճառներէն մէկն է, թէ՛ ինչո՞ւ համայնքը կամ եկեղեցին այդքան կարեւոր է: Երբ կը կապուինք ուրիշներու հետ, որոնք արդէն անցած են այն դժուարութենէն, որուն մէջն ենք մենք այսօր, մեզ կը քաջալերեն, որ հաւատք ունենանք: Իսկ մենք հաւատքով քայլ կ'առնենք եւ կը համարձակինք հաւատալ, թէ ճիշդ ինչպէս Աստուած հաւատարիմ էր իրենց հանդէպ, ան հաւատարիմ պիտի ըլլայ նաեւ մեզի հանդէպ: Կ'ուզեմ վստահեցնել քեզի, թէ.

Աստուած բարկացած չէ քեզմէ:

Ան քեզ չ'ամբաստաներ:

Ան պատրաստ է օգնելու քեզի:

Եւ դուն առանձին չես:

Հայր, կը փառաբանեմ քեզ անոր համար, որ առանձին չեմ կամ քու կողմէդ չեմ ամբաստանուած: Շնորհակալ եմ, որ կ'ողջունես զիս քու բժշկարար ներկայութեանդ մէջ: Մինչ կը բժշկուիմ, պիտի բաժնեկցիմ պատրմութիւնս, որպէսզի ուրիշներ ալ քաջալերուին:

Եւ Զօրաւոր Եւ,

ՈՐՈՎՀԵՏԵԻ ԱՌԱՆՁԻՆ ՉԵՄ: ԻՄ ՏԵՐՍ
ՓՐԿԱՐԱՐՍ Է, ՈՉ ԹԷ ԶԻՍ ԱՄԲԱՍՏԱՆՈՂԸ:

ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ԼՍԷ ՄԵՉ

Սակայն Աստուած լսեց, աղօթքիս ձայնին ուշադիր եղաւ:

ՍԱՂՄՈՍՆԵՐՈՒ 66.19

Տնչպէս շատ մը ծնողներ պիտի ըսեն ձեզի, երբեմն մեր թանկագին, գեղեցիկ հրեշտակները կը զարնեն, վատ ածականներ կամ անուններ կու տան կամ ջղագրգիռ նուականեր կ'ունենան՝ իրենց ուզածը ունենալու համար (ինչ որ տարբեր չէ երբեմն մեր ըրածներէն): Երկու տարեկան մանուկի հետ տաք կռիւի մը ընթացքին աւելի դիրիին կը թուի՝ բոլոր կողմերուն ալ համար, որ արտօնուի անոր ուզածը: Արտօնել, որ ան այդ ճակատամարտը շահի՝ այն յոյսով, որ յետոյ դուն պատերազմը կը յաղթես: Կրնայ այդպէս ըլլալ... Բայց միայն աւելի դժուարութեամբ եւ աւելի բուռն պայքարներով քան այն սկիզբի բախումը: Երբ մանուկի մը վատ վարմունքը կը վարձատրենք, ատիկա միշտ գին վճարել կու տայ մեզի: Վերջաւորութեան դուն մանուկին օգուտ մը ըրած չես ըլլար, այլ՝ ընդհակառակը վնաս հասցուցած կ'ըլլաս: Աստուած՝ մեր Երկնաւոր Հայրը, ամէնէն իմաստուն ծնողն է: Ան գիտէ, թէ ո՞ր *բանը*, որուն համար տղայական զայրոյթի կամ քմահաճոյքի պոռթկումներ կ'ունենանք, պիտի վտանգէ աւելի մեծ արժէք ունեցող բան մը... մեր նկարագիրը:

Կը խոստովանիմ, որ եղած են ժամանակներ երբ ունեցած եմ այդպիսի զայրոյթի պոռթկումներ՝ իմ ուզածս ունենալու համար: Գանգատած եմ եւ տրտնջացած, ըսելով. «Աստուած, ինչո՞ւ ինքը այս բանը ունի, իսկ ես՝ ոչ»: Ուրիշ անգամներ հարցս մարդոց հետ եղած է եւ ըսած եմ. «Աստուած, գիտես, որ ես ճիշդ եմ եւ իրենք սխալ: Ըսէ՛ իրենց կամ ցոյց տուր իրենց»: Ատիկա ըսելը յատկապէս

յարմար էր երբ ամուսինիս կամ ուրիշ Քրիստոնեաներու հետ անհամաձայնություններ կ'ունենայի: Կը պատկերացնէի, որ Աստուած պիտի ընդմիջէր իրենց առօրեայ խորհրդածութեան պահը՝ իրենց ըսելու համար, թէ ո՞րքան ճիշդ էի ես: Անշուշտ այդ աղօթքները բնաւ չեն պատասխանուած: Ես շատ երախտապարտ եմ, որ Աստուած իմ բարիքիս հետամուտ էր փոխանակ իմ ուզածս ինձի տալու:

Կան շատ պատճառներ աղօթքներու չպատասխանուելուն համար, բայց բնաւ մի՛ ենթադրեր, որ ան չի պատասխաներ քանի որ չի լսեր: Ան միշտ գործօն կերպով կը հետեւի, որ մենք աճինք եւ ըլլանք աւելի լաւ վիճակի մը մէջ, նոյնիսկ եթէ այդ պահուն չենք հասկնար ատիկա: Աղօթենք լաւագոյն մտադրութեամբ կամ աղօթենք սահմանափակ տեսիլքով, ան կը խոնարհեցնէ իր ականջը դէպի մեզի՝ գիտնալով ճիշդ ի՞նչ բանի պէտք ունինք: Ան յաւիտենական տեսակէտ մը ի մտի ունի: Մինչ աճած եմ եւ համարձակութիւնը ունեցած եմ անձս եւ ուրիշները Աստուծոյ ձեռքերուն մէջ ձգելու, անոր արդարութիւնը յաղթանակած է առանց իմ ներըմբռնումներուս: Մենք միշտ կրնանք վստահիլ Աստուծոյ, որ կը լսէ եւ կը պատասխանէ այնպիսի ձեւերով, որոնք կը յայտնաբերեն անոր գերիշխանութիւնը մեր կեանքերուն մէջ:

Տէր, ես երախտապարտ եմ, որ երբ կը խօսիմ՝ դուն մտիկ կ'ընես ողորմութեամբ եւ կը պատասխանես քու կամքիդ եւ իմաստութեանդ համաձայն: Ապագաս ապահով է ձեռքերուդ մէջ:

Ըստ Զօրմեոյ ԵՎ,

ՈՐՈՎՎՇԵՏԵԻ ՁԵՌՔԵՐՈՒՆ ՄԷՋՆ ԵՄ ԱՆՈՐ,
ՈՐ ԳԻՏԷ, ԹԷ ԻՆՉ ԿԱՅ ԱՊԱԳԱՅԻՆ ՄԷՋ:

ՄԵՐ ԻՍԿԱԿԱՆ ՓԱՓԱՔԸ

*Աչքերս դէպի լեռները կը վերցնեմ. ուրկէ՞ պիտի գայ իմ օգնութիւնս:
Իմ օգնութիւնս Տիրոջմէ՛ն է, որ երկինքն ու երկիրը սպեղծեց:*

ՍԱՂՄՈՍՆԵՐՈՒ 121.1-2

*Ս*մէն մարդ գոհացում կամ իրագործումի զգացում կը փնտռէ: Ոմանք դրամի, իշխանութեան կամ աշխարհային յաջողութեան կը դիմեն՝ զանիկա գտնելու համար: Ուրիշներու համար անիկա սիրոյ, սեռային յարաբերութեան կամ ուրիշներու կողմէ գնահատանքի հետապնդումին մէջն է: Գոհացումը կրնայ նաեւ փնտռուիլ դրական բաներու մէջ, ինչպէս՝ մարդոց օգնելու կամ արդարութեան համար ջատագովելու: Բայց վերջ ի վերջոյ, եթէ մենք գոհացում կը փնտռենք Աստուծմէ դուրս, յուսախաբ պիտի ըլլանք: Ճիշդ բանը սխալ տեղի մէջ փնտռելը միշտ յուսախաբութիւն կը պատճառէ:

Մենք պէտք է մեր աչքերը բարձրացնենք դէպի երկինք, որովհետեւ մեր օգնութիւնը կու գայ մեր Ստեղծիչէն: Միայն ինչ է, որ կը գտնենք մեր աղբիւրը եւ մեր գոհացումը: Ահա՛ տխուր ճշմարտութիւնը. երբ յամառօրէն ուրիշ աղբիւրներ կը փնտռենք, Աստուած կը ձգէ, որ մեր ճամբով երթանք: Ճիշդ ինչպէս արգելք չեղաւ Ադամի եւ Եւայի, որ իրենց ձեռքը մեկնեն եւ քաղեն պտուղը Պարտէզին մէջ, ան արգելք չ'ըլլար մեզի ալ, որ ձեռք ձգենք բան մը, որ պիտի օգնէ մեզի, որ մեր ձեռով ընթանանք: Ան կը փափաքի ըլլալ մեր իսկական փափաքը, բայց կ'արտօնէ, որ ունենանք մեր ուզածը նոյնիսկ եթէ անիկա վնասակար է մեզի համար: Պօղոս

գրեց մարդկութեան մասին երբ ըսաւ. «Քանի որ չուզեցին զԱստուած ճանչնալ, Աստուած ալ թոյլ տուաւ, որ անոնք իրենց անարգ միտքերուն անձնատուր եղած՝ ընեն ինչ որ պէտք չէ ընել» (Հռոմայեցիներուն 1.28):

Երբ մեր ոտքը գետին կը զարնենք եւ կ'ըսենք՝ «Ո՛հ: Ես իմ ուզածս կ'ուզեմ», Աստուած քայլ մը ետեւ կ'երթայ եւ կ'արտօնէ, որ ունենանք այն ինչ որ մեր անմիտ կամքը կը պահանջէ: Միայն յետոյ է, որ կը յայտնաբերենք, որ անիկա մեր յուսացածը չէր:

Աստուած չ'ուզեր պատժել մեզ ինչպէս որ չ'ուզեր, որ գերի ըլլանք: Մտի՛կ ըրէք անոր բաց հրաւերին. «Ուրեմն եկէ՛ք վիճաբանինք,- կ'ըսէ Տէրը.- եթէ ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պէս են՝ ձիւնի պէս պիտի ճերմկնան, եթէ որդան կարմիրի նման են՝ ասրի պէս ճերմակ պիտի ըլլան: Եթէ ուզէք հնազանդիլ՝ երկրին բարիքը պիտի ուտէք» (Եսայիի 1.18-19):

Եկէք վերադառնանք իրեն՝ պատրաստակամ եւ հնազանդ սիրտերով, եւ զինք դարձնենք մեր ոյժի եւ օգնութեան աղբիւրը:

Երկնաւոր Հայր, ներէ ինծի անհաւար բաներու դիմելուս համար մինչ դուն կեանքի եւ օգնութեան իմ ճշմարիտ աղբիւրս ես: Մաքրէ՛ զիս եւ օգնէ, որ ունենամ պատրաստակամ եւ հնազանդ հոգի մը:

Եւ Զօրաւոր Եմ,

ՈՐՈՎՀԵՏԵՒ ԵՐԿԻՆՔՆ ՈՒ ԵՐԿԻՐԸ
ՍՏԵՂԾՈՂԸ ԱՅԴՊԷ՛Ս ՍՏԵՂԾԱԾ Է ԶԻՍ:

ԳՈՅԱՑԱԾ

Իմ անձս պիտի կշտանայ՝ իբր թէ ճարպով ու պարարտությամբ, եւ իմ բերանս պիտի գովաբանէ քեզ ցնծութեան շրթունքով: Երբ անկողինիս վրայ քեզ կը յիշեմ, գիշերուան պահերուն մէջ քու մասիդ կը խորհրդածեմ. որովհետեւ ինծի օգնական եղար, ու քու թելերուդ հովանիին փակ պիտի ցնծամ: Իմ անձս քեզի կը յարի, քու աջ ձեռքդ ինծի նեցուկ կ'ըլլայ:

ՍԱՂՄՈՍՆԵՐՈՒ 63.5-8

Յիշէ այն առիթը երբ ճաշկերոյթի մը ներկայ եղար, ուր կար առողջապահական, համով ճաշերու երկար շարք մը, բայց դուն չափէդ աւելի չկերար: Վայելեցիր պարզապէս բաւարար չափով կերակուր եւ ոչ պէտք եղածէն աւելի: Այդ գիշեր երբ քնանալու մտար, բաւարարուածութիւն ունէիր փոխանակ անհանգստութիւն: Շատ գոհացուցիչ բան մըն է լաւապէս սնուիլը եւ լաւ հանգիստ ընելը:

Մեր ներքին անձերը կրնան ունենալ նոյն տեսակի գոհացում, որ մեր մարմինները կ'ունենան: Դաւիթի նման կրնանք ընտրել պառկիլ մեր անկողինին վրայ եւ յիշել Աստուծոյ բարութիւնը: Կամ կրնանք պառկիլ մեր անկողինին վրայ եւ յիշել մեր խնդիրները եւ ձախողութիւնները: Մեզի կ'ըսուի, թէ մեր միտքը պէտք է հանգստացնենք՝ մտածելով մեր Հօր սքանչելիքներուն մասին: Պատկերացո՛ւր մեծ թռչուն մը, որ իր ձագերը կը պահպանէ եւ կը պաշտպանէ իր թելերով: (Ասկէ ետք այդ ձեռով է, որ պիտի տեսնեմ իմ Մխիթարիչս:) Այդպիսով երբ կը քնանանք, հանգիստ կ'ընենք: Երախտագիտութեան եւ սքանչելիքներու այդ մթնոլորտին մէջ մեր սիրտը կ'երգէ մեր կեանքին մէջ Տիրոջ օգնութեան եւ պաշտպանութեան մասին: Ամէն օր կրնանք սօնակատարել զԱստուած:

Քունը շատ խորհրդաւոր բան մըն է: Անիկա ժամանակ մըն է երբ ամէնէն ւաւելի խոցելի վիճակի մը մէջ կ'ըլլանք: Մեր գիտակցութիւնը կը կորսնցնենք եւ կը սահինք քունի մէջ քանի մը ժամուան համար: Մեծամասնութիւնս ւաւելի խորունկ քուն կը քնանար երբ մանուկ էր քան երբ չափահաս եղաւ: Գոհ եւ անհոգ ըլլալով, մանուկները իրենց օրուան գործունէութիւններէն ետք անմիջապէս կը յանձնուին գիշերուան գիրկը: Իբրեւ չափահասներ, մեզի համար ւաւելի դժուար է մեր օրուան գործունէութիւնները բաժնել մեր գիշերուան հանգիստէն: Մենք հակում ունինք սխալ բաներ անկողին բերելու մեզի հետ: Երբ ատիկա կ'ընենք, կը կռուինք մտահոգութիւններու եւ վախերու հետ մինչեւ արշալոյս եւ կ'արթնանք ւաւելի յոգնած քան երբ քնանալու մտանք:

Ես սորվեցայ, որ բնաւ լաւ չէի քնանար երբ անկողին մտնելէս առաջ կ'արտօնէի, որ մտահոգութիւններս խուժէին: Գիշերը այն ժամանակն է երբ կը գոցենք մեր աչքերը օրուան պատահածներուն եւ կը բանանք մեր սիրտերը Աստուծոյ: Սաղմոսներու 127.2-ը կը խոստանայ. «Տէրը ինքն է, որ քուն կը պարգեւէ իր սիրած մարդուն»: Նկատի առ, որ չըսեր, թէ ան քուն կը պարգեւէ կատարեալ եղողներուն կամ կատարեալ օր մը անցընողներուն: Ան քուն կը պարգեւէ իր զաւակներուն, զորս կը սիրէ: Դուն այդ զաւակներէն ես: Կ'ուզեմ, որ պատկերացնես, որ անոր բարութիւնը եւ պաշտպանութիւնը անկողին կը դնեն քեզ եւ կը ծածկեն քեզ այս գիշեր: Եթէ ատիկա ընես, կրնամ վստահեցնել, որ առտուն պիտի արթննաս պաշտամունքի երգով մը միտքիդ մէջ:

Տէր, ամէն գիշեր ես ետին պիտի ձգեմ իմ սխալական օրս եւ պիտի մտածեմ քու անսխալական սիրոյդ մասին: Դուն կը սիրես զիս, քանի որ դուն սէր ես: Շնորհակալ եմ ինծի քուն փալուղ համար:

Ես Զօրմեոյ եմ,

ԵՐԲ ԿԸ ԽՈԿԱՄ ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐՈՒԹԵԱՆ
ՄԱՍԻՆ ԵՒ ԱՆՁՍ ՀԱՆԳԻՍՏ ԿԸ ԳՏԵՒ:

ՀԱՆԴԱՐՏԱԾ՝ ՍԻՐՈՎ

*Տէրը՝ քու Աստուածդ քու մէջդ զօրաւոր է, ի՛նք քեզ պիտի փրկէ:
քեզի համար ուրախութեամբ պիտի բերկրի, իր սիրոյն մէջ
հանդարտ պիտի կենայ, եւ քեզմով ցնծութեամբ պիտի խայտայ:*

ՍՈՓՈՆԻԱՅԻ 3.17

Մեզմէ շատերը սեռային մղձաւանջի մէջ են: Ուրիշներ յարաբերութիւններու մղձաւանջներու մէջ են: Տակաւին ուրիշներ ֆինանսական մղձաւանջներու մէջ են: Ես սորված եմ, որ յաճախ մղձաւանջը դիմագրաւելու լաւագոյն ձեւը երազելն է:

Օրինակի համար, երբ զաւակներս կ'արթննային գիշերը բանէ մը վախցած, հիւանդ կամ չափազանց յուզուած, ես զիրենք ինծի կը մօտեցնէի, որպէսզի հանդարտեցնէի զիրենք: Ատիկա ընելու համար կ'օրօրէի կամ իրենց քով կ'երկննայի իրենց անկողիներուն մէջ կամ եթէ ժամը ուշ էր եւ ամուսինս ճամբորդած էր, իմ անկողինս կը բերէի զիրենք: Ինչո՞ւ: Կ'ուզէի, որ գիտնան, որ ես իրենց մօտիկ էի: Հոն՝ իմ գիրկիս մէջն էր, որ մտիկ կ'ընէի իրենց վախերուն մինչ կը շոյէի իրենց մազերը: Աստուծոյ սիրոյն եւ իմ սիրոյս մասին վստահեցնող խօսքեր կը փսփսայի եւ կը յիշեցնէի իրենց Աստուծոյ հաւատարիմ պաշտպանութեան մասին: Օրօրներ կ'երգէի մինչեւ որ իրենց շնչառութիւնը ինծի կ'ըսէր, թէ նորէն քունի մտած են: Իր վախի մէջ եղող զաւակներուն հանդէպ մօր մը այդ քնքոյշ մօտեցումը կու գայ Աստուծոյ սիրտէն: Անիկա պարզապէս փոքր մէկ արտայայտութիւնն է մեզ մխիթարելու Աստուծոյ փափաքին: Երբ մենք կը ցաւինք, երբ կը ձախողինք, երբ կը վախնանք, Աստուած կ'ուզէ, որ մօտենանք իրեն եւ երբեք չհեռանանք: Իբրեւ իր զաւակները, մենք հրաւիրուած ենք ապահովութեան եւ սիրոյ իր գիրկը: Հոն ան մեզի պիտի տայ գեղեցիկ տեսիլքներ, որոնք կարող պիտի ըլլան մեզ հանդարտեցնելու եւ հանգստացնելու:

Կը սիրեմ պատկերը Հօր մը, որ քնքշօրէն կ'օրօրէ իր դուստրը, որպէսզի նորէն քնանայ, որպէսզի հանգստանայ եւ բուժուի: Ամբողջ սրտովս կը հաւատամ, որ քու Հայր Աստուածդ հետեւեալները կ'ուզէ ընել քեզի.

- քեզ իրեն մօտեցնել
- Յանցաւորի եւ ամօթի զգացումներու ամէն հետք մաքրել քեզմէ
- Մէկ կողմ դնել վախերդ՝ ճշմարտութեան լոյսին տակ անոնց մասին խօսելով քեզի հետ
- քեզի յոյս մը եւ ապագայ մը տալ
- Օրօրել քեզ մինչեւ որ փոթորիկդ հանդարտի
- Հանգիստի վերադարձնել քեզ
- Վերականգնել երազը սիրտիդ մէջ

Աստուած հեռու կամ անմերձենալի չէ: Պատրաստ է օգնութեան հասնելու մեզի եւ իր մեծ զօրութեամբ ան կը փրկէ մեզ: Ան չի նեղանար երբ վախով կամ անօգնական ըլլալով իրեն կ'աղաղակենք: Ան կ'ուրախանայ իր զաւակները հանդարտեցնելով՝ ինչպէս մայր մը ուրախութիւն կը սեպէ իր զաւակները հանգստացնելը կամ մխիթարելը: Բայց մօր մը մխիթարելու կարողութիւնը սահմանափակ է, մինչ Աստուծոյ մխիթարելու կարողութիւնը այնքան անսահման է որքան անոր սէրը: Աստուծոյ նկարագիրին խորունկութիւնը կը հանդարտեցնէ մեզ՝ մինչ ան կ'երգէ մեզի: Հրաւիրէ՛ զինք, որ մօտենայ եւ հանդարտեցնէ այն փոթորիկները, զորս դուն չես կրնար հանդարտեցնել:

Երկնատր Հայր, կը մօտենամ քեզի՝ հաւատալով Սոփոնիայի 3.17-ի խոստումին, թէ՛ դուն ինծի հետք ես եւ պիտի հանդարտեցնես զիս քու սիրովդ: Այդ երազը շատ աւելի հզօր է քան որեւէ մղձաւանջ, զոր կը դիմագրաւեմ ներկայիս: Կը յանձնուիմ՝ քու մէջդ հանգստանալու համար:

Եւ Զօրաւոր Եմ,

ՈՐՈՎՀԵՏԵԻ ՀՁՐՐԸ ԻՆԾԻ ՀԵՏ Է. Կ'ԵՐԳԷ ԵԻ
ԿԸ ՀԱՆԴԱՐՏԵՑՆԷ ԱՆՁՍ ԻՐ ՍԻՐՈՎ:

ԱՊԱՅՈՎ ՊԱՅՈՒԱԾ

Պահէ՛ սիրտդ ամբողջ զգուշութեամբ, քանի որ կեանքի աղբիւրները անկէ են:

ԱՌԱՎՆԵՐՈՒ 4.23

Դ՞նչ է ամէնէն արժէքաւոր բանը տանդ մէջ: Ի՞նչ պիտի պատահէր եթէ անիկա գողցուէր կամ կորսուէր: Կրնայ ըլլալ, որ կարող ըլլաս նորը գնելու խնայած դրամովդ կամ ապահովագրութեան ճամբով, ինչ որ քիչ մը գլխու ցաւ պիտի պատճառէ վստահաբար, բայց առնուազն մեծ աղէտ մը պատահած չ'ըլլար: Իսկ հիմա, ի՞նչն է ամէնէն անգին բանը տանդ մէջ, զգացական իմաստով: Թերեւս, ինծի պէս, նկարատետր (*ալպոմ*) մըն է կամ ուրիշ որեւէ առարկայ մը, որ անցեալի մասին պատմութիւն մը կը պատմէ: Եթէ ատիկա առնուէր քու տունէդ, անկարելի պիտի ըլլար նորը բերելը: Պէտք պիտի ունենայիր ընդունելու անոր կորուստը: Պիտի տխրէիր, բայց կեանքը պիտի շարունակուէր: Իրականութիւնը այն է, որ եթէ գող մը մտնէր տունդ եւ գողնար ամէն արժէքաւոր բան, ան պիտի չկարենար առնել ամէնէն արժէքաւոր բանը. որովհետեւ ան չի կրնար գողնալ քու ամէնէն թանկագին գանձդ... սիրտդ:

Իրականութեան մէջ միակ ձեւը, որ կարելի կ'ըլլայ սիրտ մը գողնալ այն է, որ եթէ զանիկա կապես մէկու մը կամ բանի մը, որ կրնայ գողնալ զայն: Այդ ատեն կորուստդ իրապէս մեծ կրնայ ըլլալ: Այդ պատճառով է, որ Աստուած մեզի կ'ըսէ, որ սիրենք զինք մեր ամբողջ սրտով. որովհետեւ միայն ի՛ր մէջ մեր սիրտերը ապահով կը պահուին: Սիրտդ կամ «յուզումներդ/զգացումներդ», ինչպէս Աստուածաշունչի անգլերէն մէկ տարբերակը կ'ըսէ, ունի

զօրութիւնը «ազդելու կեանքիդ միւս բոլոր բաներուն վրայ» (Առակներու 4.23):

Այն համարը, որ մեզի կ'ըսէ, որ պահենք մեր սիրտերը նաեւ զանիկա կը նկարագրէ իբրեւ «աղբիւր» մը: Աղբիւրէն կ'ելլէ մաքուր, թարմ, ապահով ջուր, որ կը սնուցանէ իր շուրջը գտնուող բոյսերուն եւ կենդանիներուն կեանքը: Անիկա վստահաբար կ'ազդէ իր շուրջը գտնուող ամէն բանի վրայ: Քաղաքակրթութիւնը յառաջ կու գայ ջուրի աղբիւններուն շուրջը: Չոր վայրերու մէջ, աղբիւրը բառացիօրէն կեանքի եւ մահուան տարբերութիւնը կ'ընէ: Եթէ անիկա ձեռով մը ապականի կամ եթէ կտրուի երկրին ընթերքը գտնուող իր ակէն, շրջանին մէջ ամէն բան կ'ազդուի: Բաներ կը թօշին եւ կը մեռնին: Ուստի կարեւոր է պահել աղբիւր մը եւ հոգ տանիլ անոր, ապականութենէ պաշտպանել զայն եւ այնպէս ընել, որ իր ակէն չանջատուի: Մենք կը պահենք մեր սիրտերը այնպէս որ կարծես անոնք կեանք տուող ջուրի աղբիւրներ կը հայթայթեն մեր կեանքին: Անոնցմէ դուրս կը պահենք դառնութիւնն ու գայթակղութիւնը, որպէսզի պահած ըլլանք զանոնք ապականութեամբ թունաւորուելէ: Կը պահենք զանոնք չորութենէ՝ կապուած մնալով ճշմարիտ աղբիւրին՝ աղօթքով եւ փառաբանութեամբ: Կը պահենք զանոնք ոչ-առողջ յուզմունքներէ կամ զգացումներէ՝ զանոնք չկապելով այս աշխարհի անվստահելի բաներուն, որոնք կրնան մեր սիրտերը գողնալ: Երբ դուն ժրաջանօրէն կը պահես սիրտդ՝ սիրելով «Քու Տէր Աստուածդ ամբողջ սրտովդ, ամբողջ հոգիովդ եւ ամբողջ մտքովդ» (Մատթէոսի 22.37), ինչպէս Յիսուս պատուիրեց, ան քեզ ապահով եւ բարգաւաճ պիտի պահէ:

*Աստուած, ցոյց տուր ինձի ի՛նչպէս ամբողջ սիրտս քեզի
դամ եւ զանիկա լաւ կերպով պահեմ: Գիտեմ, որ քու
հոգապարութեանդ դակ գպնուիլը ամէնէն ապահովն է:*

Եւ Զօրութեան Եւ,

ՔԱՆԻ ՈՐ ԿԸ ՊԱՀԵՄ ՍԻՐՏԻՍ ԱՂԲԻՒՐԸ:

ՀԱՆԴԱՐՏԵՑԷՔ

Հանդարտեցէ՛ք ու գիտցէ՛ք թէ ես եմ Աստուած:

ՍԱՂՄՈՍՆԵՐՈՒ 46.10

*Մ*յս գիշեր երբ անկողին մտնես, կ'ուզեմ, որ բան մը փորձես: Քու քնանալու բնական սովորոյթիդ կամ *ռոյթինի*դ մէջ հետեւեալը մտցուր. լռութեան մէջ պառկիլ եւ սիրտդ Աստուծոյ առջեւ բանալ: Ընդունէ՛ պարզապէս ակնածանքով Աստուծոյ առջեւ կենալու, հանդարտելու եւ գիտնալու հրաւերը: Գիտնալ ի՞նչ: Գիտնալ զինք իբրեւ Աստուած՝ արտօնելով, որ Ինքզինք յայտնէ կեանքիդ մէջ. ուրախութիւններուդ եւ ցաւերուդ, բախումներուդ կամ տագնապներուդ մէջ: Ան կ'ուզէ սիրոյ խօսքեր փսփսալ քեզի նախքան որ քունը տիրապետէ վրադ:

Լուռ հանդարտութեան մէջ բան մը մի՛ ըսեր... միայն մտիկ ըրէ: Եթէ բախումի մը մէջ ես, մի՛ արդարացներ քու դիրքդ: Հանդարտի՛ր եւ արտօնէ՛, որ Աստուած Ինքզինքը յայտնէ քու լռութեանդ մէջ: Դուն իր ներըմբռնումը եւ տեսակէտը պիտի ստանաս մինչ վար կը դնես բոլոր առարկութիւններդ:

Աղօթքը եւ խոկումը շատ աւելի կապ ունին մեր լսածներուն հետ քան մեր ըսածներուն: Երբ կը մտածենք աղօթքի մասին, յաճախ կը պատկերացնենք բան մը, զոր մենք կ'արտադրենք. խօսքեր, սիրտէն ելած արտայայտութիւններ եւ իր առջեւ դրած մեր խնդրանքները: Այդ բոլորը լաւ բաներ են: Բայց աղօթքը միայն այդքան չէ: Այո, կայ ժամանակ մը երբ կը խնդրենք իրմէ մեր սիրտին փափաքածը: Կայ ժամանակ մը երբ արդարութեան կատարման համար կը դիմենք իրեն եւ կ'աղաչենք: Բայց մեր բառերուն գետերը պիտի չմաքրեն մեզ: Անոնք պարզապէս կ'արտայայտեն մեր

տեսակէտը: Իմ դատողութեան կամ պատճառաբանութիւններու ուժգին հոսանքս այնքան ցեխոտ եւ խառն է, որ չի կրնար մաքրել զիս. անիկա միայն կ'արծարծէ ջուրերը (կամ նիւթերը) եւ յաւելեալ նստուածք կը հաւաքէ: Ես պէտք ունիմ իմ ներըմբռնումս քաշելու այն խորունկ ջուրերէն, որոնք զօրութիւնը ունին թարմացնելու զիս եւ հանելու ինձմէ յանցաւորի եւ ամօթի զգացումները:

Դադար: *Սելա:* Ժամանակ տրամադրէ լսելու այն ինչ որ Աստուածդ կ'ըսէ: Եթէ օրուան վերջաւորութեան մտահոգութիւնները եւ խռովալից խորհուրդները կը խճողեն միտքդ, պէտք չունիս արտօնելու, որ անոնք ծծեն ոյժդ եւ խանգարեն հանգիստդ: Մի՛ երկննար անկողինիդ մէջ եւ միտքիդ մէջ շարունակ դիտեր օրուան մէջ ունեցած ճնշումներուդ եւ ձախողութիւններուդ անվերջանալի կրկնութիւնները: Փոխարէնը լռութեան պահ մը ա՛ն՝ ըլլալու համար անոր հետ, որ կրնայ իրական խաղաղութիւն բերել: Միայն ա՛ն կրնայ իրապէս ազատագրել քեզ այն խորհուրդներէն, որոնք կը յօգնեցնեն քեզ, եւ կրնայ նորէն լեցնել քեզ մինչ կը քնանաս: Երբ արթննաս, պիտի տեսնես, թէ՛ «Տիրոջ կարեկցութեա՛մբ անհետացած չենք, որովհետեւ անոր գթութիւնը չի սպառիր. անոնք ամէն առտու կը վերանորոգուին, մեծ է քու հաւատարմութիւնդ» (Ողբերը 3.22-23):

Հայր, մինչ կը քնանամ, հանդարտեցո՛ւր անձս եւ խօսէ՛ սիրտիս: Միայն դո՛ւն կրնաս կասեցնել վազող միտքերս:

Օրուանս վերջին պահը քեզի կու տամ՝ շնորհակալ ըլլալով այն նոր կարեկցութեան եւ գթութեան համար, զորս պահած ունիս ինձի համար առտուան մէջ:

Եւ Զօրաւոր Եմ,

ԵՐԲ ՀԱՆԴԱՐՏ ԵՒ ԼՈՒՌ ԵՄ ՏԻՐՈՋՍ ԱՌՋԵԻ:

*Զօրանքի`
Ինգիտի*

ԵՐԳԻՆ ՉՕՐՈՒԹԻՒՆԸ

*Նոր երգ երգեցէք Տիրոջ, որովհետեւ սքանչելիքներ ըրաւ.
իր աջ ձեռքն ու սուրբ բազուկը իրեն յաղթութիւն տուին:*

ՍԱՂՄՈՍՆԵՐՈՒ 98.1

Տեղեցիկ եւ աստուածային կապակցութիւն մը կայ սիրոյ եւ երաժշտութեան միջեւ: Անոնք կ'ընդարձակեն եւ կը յայտնաբերեն մէկզմիւսը: Երաժշտութիւնը զօրութիւնը ունի փոխադրելու մեզ: Երաժշտութեան մէջ սուզուած խօսքերը զօրութիւնը ունին դպչելու տեղեր մեր սիրտին մէջ, ուր ուրիշ ոչ մէկ բան կրնայ հասնիլ: Բոլորս ալ ապրած ենք երգի մը ազդեցութեան տակ մեծ ուրախութեան յափշտակութեամբ թռչելու եւ կամ տառապանքի խորերը իջնելու փորձառութիւնը:

Երաժշտութիւնը հիմնական բանալի մըն է Աստուծոյ հանդէպ մեր սիրոյն արթննալուն համար, որովհետեւ անիկա ունի զօրութիւնը մեզ տանելու մեր ներկայի իրականութենէն դէպի ինքնին Աստուծոյ ներկայութիւնը: Անիկա մակերես կը հանէ մեր ամէնէն իրական եւ ամէնէն խորունկ զգացումները եւ կը փոխադրէ մեզ տարածութիւն մը, որ անելի մօտիկ է Աստուծոյ սիրտին: Անիկա կրնայ մեր փոխարէնը խօսիլ երբ բառերը դժուար արտայայտելի են եւ մեր զգացումները կը խեղդեն մեզ:

Գիտէ՞իք, որ երաժշտութիւնը օծութիւն ունի: Հետեւաբար պէտք է իմաստութեամբ ընտրես զանիկա: Հին Կտակարանին մէջ օծութիւնը յաճախ կը խորհրդանշուէր թագաւորի մը, քահանայի մը կամ մարգարէի մը վրայ իւղ թափելով: Անիկա շօշափելի ներկայացումն էր Աստուծոյ Հոգիին: Նոր Կտակարանին մէջ օծութիւնը կը ներկայացնէ Սուրբ Հոգիին մեր մէջ բնակիլը եւ անոր մեզի տուած զօրութիւնը՝ Քրիստոսը յայտնաբերելու համար:

Ուստի աստուածային, օծեալ երաժշտութիւնը լիազօրուած է Հոգիին կողմէ՝ մեզ Աստուծոյ ներկայութեան տանելու համար: Եղած են պաշտամունքի ժամանակներ երբ ես ամբողջութեամբ կլանուած եմ իր ներկայութեան մէջ: Հակառակ անոր որ զինք աչքերովս չեմ տեսած, սակայն այնպէս զգացած եմ, որ ան իմ ամբողջ էութիւնս պարուրած էր: Այդ ներկայութեան մէջ ես ամբողջութեամբ ապահով եւ սիրուած զգացած եմ:

Քանի որ երաժշտութիւնը ունի զօրութիւնը մեզ տեղեր տանելու զգացապէս, կարեւոր է, որ մեր հասնելիք տեղը իմաստութեամբ ընտրենք: Եթէ կը փափաքիս մաքրութեամբ քայլել, պէտք է ինքզինքդ պաշտպանես որեւէ անբաղձալի ազդեցութենէ: Երաժշտութիւնը պիտի շրջանցէ քու պաշտպանութեանդ առաջին գիծը եւ բնակութիւն հաստատէ միտքիդ մէջ նոյնիսկ եթէ դուն ատիկա չես ուզեր: Կրնայ ըլլալ, որ երգի մը բառերը դուն բնաւ անձնապէս չես երգած, բայց անոնք հոն են եւ շարունակ կը կրկնեն երգին պատգամը միտքիդ մէջ: Բոլորս ալ լսած ենք, որ մարդիկ ըսած են. «Երգ մը կայ, որ *կախուած է* միտքիս մէջ»: Ուստի այդ անմաքուր երգերը փոխարինէ ուրիշով մը՝ երկնային երգով մը: Երկրի բոլոր երգերը վատ չեն, բայց բոլորը չեն, որ քեզ Աստուծոյ պիտի մօտեցնեն: Երկինքի երգերը ատիկա կ'ընեն: Մինչ կ'երգենք այդ երգերը, կը հոչակենք Աստուծոյ հանդէպ մեր սէրը եւ փափաքը: Կրնաս երաժշտութեան զօրութիւնը գործածել՝ երկննալու եւ հանգչելու համար Աստուծոյ ներկայութեան մէջ. անիկա անպայման քեզ Աստուծոյ պիտի մօտեցնէ:

Տէր, շնորհակալ եմ երաժշտութեան պարգեւին համար: Մօտիկ եղիր ինծի երբ սիրտս կը բարձրացնեմ երգով, եւ ցոյց տուր ինծի ինչպէս երաժշտութեան զօրութիւնը գործածեմ՝ անձս զօրացնելու համար: Թող սիրտիս մէջ գոյութիւն ունեցող ամէն երգ փառաւորէ քեզ:

Եւ Զօրուոր Եւ,

ԵՐԲ ԶԱՅՆՍ ԿԸ ԲԱՐՁՐԱՅՆԵՄ՝

ԵՐԳԵԼՈՒ ԵՐԿՆԱՅԻՆ ԵՐԳ ՄԸ:

ԻՆՔՆԱՎԱՍՏԱՅ ԵՒ ԱՏԱԿ

Աստուծոյ վրայ մեր ունեցած վստահութեամբն է, որ կ'ըսենք այս բաները. վստահութիւն՝ որ Քրիստոս կու տայ մեզի: Որովհետեւ ընաւ չենք խորհիր, որ մենք մեր ոյժերով այդպիսի գործ մը կրնանք ընել. այլ՝ Աստուած է, որ այդ կարողութիւնը կու տայ մեզի:

Բ.ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ 3.4-5

Չեմ կարծեր, որ կեանքիս մէջ կայ մարզ մը, որուն մէջ ամբողջապէս ինքնավստահ եւ ատակ կը զգամ: Առանձինս, վստահ եմ, որ անատակ եմ: Լաւ լուրը այն է, որ պէտք չունինք այդպէս ըլլալու: Աստուած է, որ մեզ ատակ կը դարձնէ: Ոչ ոք կրնայ ապրիլ հաւատքի կեանք մը առանց Սուրբ Հոգիին առաջնորդութեան: Դաւիթ Թագաւոր աղօթեց. «Մաքո՛ւր սիրտ ստեղծէ իմ մէջս, ո՛վ Աստուած, ուղի՛ղ հոգի վերահաստատէ իմ ներսս: Զիս մի՛ վտարեր ներկայութենէդ, եւ ինձմէ՛ մի՛ առներ քու Սուրբ Հոգիդ» (Սաղմոսներու 51.10-11):

Դաւիթ գիտէր, թէ ո՛վ էր իր աղբիւրը մաքուր սիրտ մը ունենալու համար, եւ կը հասկնար Սուրբ Հոգիին դերը այդ գործընթացին մէջ: Յովհաննէսի 20-ին մէջ Յիսուս Սուրբ Հոգին տուաւ իր աշակերտներուն: Անոնք պէտք ունէին Սուրբ Հոգիին, որպէսզի կարենային ներել: Բ.Կորնթացիներուն 3.6-ը կ'ըսէ. «Ինքն է, որ մեզ արժանի ըրաւ ըլլալու ծառաները նոր Ուխտին, որ կապուած չէ՛ գրաւոր Օրէնքին, այլ՝ Սուրբ Հոգիին. որովհետեւ գրաւոր Օրէնքը մահուան կ'առաջնորդէ, մինչդեռ Հոգին կեանք կու տայ»: Ինչո՞ւ չհրաւիրել Սուրբ Հոգին, որ կեանք փչէ կարդացած

աստուածաշնչական հատուածներուդ վրայ, որպէսզի կեանք եւ փոխակերպում յառաջ բերեն մէջդ:

Սուրբ Հոգին խոստացուած Մխիթարիչը եւ Խորհրդատուն է, որ պիտի սորվեցնէ եւ յիշեցնէ մեզի ամէն բան, որ Յիսուս ըսաւ: Այդ թանկագին պարգեւը կը նշանակէ, թէ մենք անձնական Ուսուցիչ մը ունինք՝ մինչ կը սերտենք Խօսքը, եւ Առաջնորդ մը՝ մինչ կը փնտռենք իր սիրտը: Հոգին կը բանայ մեր աչքերը՝ որպէսզի տեսնենք, մեր ականջները՝ որպէսզի լսենք եւ մեր սիրտերը՝ որպէսզի հաւատանք:

Երկնաւոր Հայր, շնորհակալ եմ, որ արաւկ եմ եւ ինքնավստահ քեզմով: Սուրբ Հոգի, առաջնորդէ՛ զիս եւ մաքուր սիրտ մը եւ վերանորոգուած, ճիշդ հոգի մը ստեղծէ մէջս: Զօրացո՛ւր զիս, որպէսզի ապրիմ այնպիսի ձեով մը, որ կեանքս փառաւորէ Հայրը:

Եւ Զօրացո՛ւր Եմ,

ՈՐՈՎՀԵՏԵՒ ՔՐԻՍՏՈՍ ԻՆՔՆԱՎՍՏԱԿ

ԵՒ ԱՏԱԿ ԿԸ ԴԱՐՁՆԷ ԶԻՍ:

ԱՌՈՂՋ ՍԻՐՏ ՄԸ

*Ուրախ սիրտը դեղի պէս օգտակար է, բայց
ընկճուած հոգին անդամները կը չորցնէ:*

ԱՌԱԿՆԵՐՈՒ 17.22

Ստուածաշունչը մեզի կու տայ հոյակապ գաղափարներ մեր առողջութեան աղբիւրին վերաբերեալ: Ծուծին մէջ կամ ոսկորներուն կեդրոնը խոնաութիւն կ'ըլլայ: Հոգ է, որ մեր ինքնապաշտպանութեան համակարգը նոր բջիջներով կ'ամրապնդուի եւ արեան բջիջները կը շինուին: Մեր կեանքը արեան մէջն է, եւ մեր արիւնը նոր բջիջներով կ'ամրապնդուի ոսկորներուն մէջ գտնուող ծուծին միջոցաւ: Եթէ ոսկորները չորնան, ինքնին մեր կեանքի աղբիւրը կը վտանգուի: Ասիկա դարձեալ կը հաստատուի Առակներու 14.29-30-ին մէջ, որ կ'ըսէ. «Համբերատար մարդը շատ հանճարեղ է, իսկ զայրացող հոգի ունեցողը իր յիմարութիւնը կը ցուցադրէ: Առողջ սիրտը մարմինին կեանք է, բայց նախանձը ոսկորներուն փտութիւն է»:

Աստուածաշունչը դէմ դիմաց կը դնէ համբերատարութիւնը եւ զայրացող հոգին ինչպէս նաեւ՝ առողջ սիրտը [անզլերէնին համաձայն՝ «խաղաղ սիրտը»- *Թարգմանիչ*] եւ նախանձը: Համբերատարութիւնը հասկացողութիւն կու տայ, մինչ զայրանալը յիմարութեան ապացոյց է: Առողջ [խաղաղ] սիրտը կեանք կու տայ մարմինին, մինչ նախանձը կամ չարակամութիւնը կը փտեցնէ կամ կ'արէ ինքնին ոսկորները: Հրաշալի չէ՞, որ ոսկորի քաղցկեղի կարգ մը տեսակներ կը բուժուին ոսկորի ծուծի փոխպատուաստումով: Մեր ոսկորի ծուծին առողջութիւնը շատ կարեւոր է: Ոսկորները կառոյցային նեցուկն են մեր մարմիններուն: Անոնք այն կառոյցն են, որով ոտքի կը կանգնինք եւ առանց որոնց կ'իյնանք: Աստուածաշունչը կը հաստատէ, թէ կայ իրական եւ միշտ ներկայ եղող յարաբերութիւն մը հոգեւոր սիրտին եւ առողջութեան միջեւ: Ակնարկութիւնս այն չէ անշուշտ,

թէ անոնք, որոնք հիւանդ են հոգեւոր հարց մը ունին: Մենք կ'ապրինք ինկած աշխարհի մը մէջ, որ խոցուած է հիւանդութեան եւ ախտերու անէծքով: Ըսածս այն է, որ դառնութիւնը, աններողամտութիւնը, չլուծուած բարկութիւնը եւ ուրիշ սիրտի հետ կապուած հարցեր ուղղակիօրէն կ'ազդեն ինքնապաշտպանութեան համակարգիդ: *Բարկութիւնը քու Դաշնակիցդ Դարծուր* վերնագիրով իր գիրքին մէջ, Նիլ Քլարք Ուորըն կ'ըսէ, թէ զայրոյթը (դժգոհութիւնը) յաճախ կը կապուի հոգեբանական հարցերէ յառաջ եկած անհանգստութիւններու հետ, իսկ յուսախաբութիւնը երկրորդ կարգի կը սեպուի: Ան կը թուէ չլուծուած բարկութենէ յառաջ եկած այդ տարածուած անհանգստութիւններէն կարճ ցանկ մը, նշելով՝ գլխացաւերը, ստամոքսի հարցերը, հարբուխը կամ անտրամադրութիւնը, մեծաղիի բորբոքումը եւ արեան գերճնշումը: Ուրիշ ուսումնասիրութիւններ կը նշեն նաեւ՝ յօդացաւերը, զանազան շնչառական անհանգստութիւնները, մորթային հիւանդութիւնները, վիզի եւ կոնակի հարցերը եւ նոյնիսկ քաղցկեղը: Աստուածաշունչը դարերէ ի վեր կ'ըսէ այն ինչ որ մարդը այսօր կը յայտնաբերէ, թէ ճիշդ է: Առակներու 3.5-8-ը իմաստութեան հարստութիւն մը կամ գանձ մըն է այն մասին, թէ ի'նչպէս պէտք է ապրինք:

*Տէրո՛ջ վստահէ ամբողջ սիրտովդ, ու քու խելքիդ մի՛ ապաւինիր. զայն ճանչցիր քու բոլոր ճամբաներուդ մէջ, եւ ինք պիտի շտկէ քու ուղիներդ: Քու աչքերուդ իմաստուն մի՛ ըլլար. վախցի՛ր Տիրոջմէն ու հեռացի՛ր չարութենէ: Ասիկա քու ջիղերուդ առողջութիւն պիտի ըլլայ, եւ ոսկորներուդ պարարտութիւն [կամ՝ «Ասիկա առողջութիւն պիտի բերէ մարմինիդ եւ սնունդ՝ ոսկորներուդ», ըստ անգլերէն տարբերակին- *Թարգմանիչ*]:*

Խոստում մը ունինք հոս. եթէ ապրինք Աստուծոյ առողջապահութեան ծրագիրին համաձայն, ան կ'ըսէ, թէ ատիկա առողջութիւն պիտի բերէ մեր մարմինին եւ սնունդ՝ մեր ոսկորներուն:

Տէր, դուն իմ սիրտս եւ առողջութիւնս նպաստակով մը իրարու կապեցիր:

Կը խնդրեմ, որ օգնես ինծի, որ ապրիմ առողջ հոգիով մը, որպէսզի կարենամ խուսափիլ անպէտք ֆիզիքական հետեւանքներէ: Օգնէ՛ ինծի, որ թէ՛ մարմինս եւ թէ՛ շունչս շարունակ սնուցանեմ քու իմաստութեամբդ:

Եւ Զօրաւոր Եմ,
ԵՐԲ ՍԻՐՏՍ ՌԻՐԱԽ ԵՒ ԱՌՈՂՋ ԿԸ ՊԱՀԵՄ:

ԸՆԴՈՒՆԻԼ ԿՆՈՋ ՄԸ ԲՆՈՒԹԻՒՆԸ

*Այլ՝ ապրինք ճշմարտության համաձայն, սիրով, եւ հեղափոխելով աճինք
Քրիստոսի հետ մեր միության մէջ, որովհետեւ ի՛նքն է գլուխը:*

ԵՓԵՍԱՑԻՆԵՐՈՒՆ 4.15

*Տ*րեւ կիներ, մեր բնութիւնը եւ ֆիզիքական ձեւակերպումը եղած են՝ սնուցանելն ու քնքշութիւնը ի մտի ունենալով: Մենք չենք շինուած կարծր անկիւններով, այլ՝ նուրբ կորութիւններով: Մենք ստեղծուած ենք քնքշութեան եւ գութի աւելի մեծ կարողականութեամբ քան տղամարդիկը: Մենք թե՛ սէրը եւ թե՛ ցաւը աւելի խորունկ ձեւով կը զգանք մեր էութեան մէջ: Մենք աւելի կարեկցող ենք քան արուները, եւ կրնանք արցունք թափել բոլորովին օտար մարդոց ցաւերուն, դժուարութիւններուն եւ կորուստներու համար: Երբ չենք կրնար այդ զգացումները արտայայտել ճիշդ ձեւով, ընդհանրապէս կա՛մ դէպի ներս եւ կա՛մ դէպի դուրս կը պայթինք:

Ի՞նչ կը պատահի երբ կը պայթինք: Իմ ամէնէն քիչ սիրած համարներէս երկուքը կ'ըսեն, թէ ի՛նչ կը պատահի ամուսնական պարունակէն ներս: Ասիկա յաճախ կը մէջբերուէր ինծի ամուսնութեանս սկիզբի ժամանակներուն. «Աւելի լաւ է տանիքի մը անկիւնը բնակիլ, քան թէ տուն մը բաժնեկցիլ կռուասէր կնոջ մը հետ» (Առակներու 25.24): Կամ՝ միւս, աւելի նուազ գրաւիչ տարբերակը. «Աւելի լաւ է անապատը բնակիլ, քան կռուազան ու դիրագրգիռ կնոջ հետ» (Առակներու 21.19):

Ա՛նչ... Տանիքի մը անկիւնը ապրիլ կը նշանակէ ամէն տեսակի դժուարութիւններու ենթակայ ըլլալ: Տանիքին վրայ պաշտպանութիւն

չկայ անձրեւէն, ձիւնէն, հովէն կամ կիզիչ արեւէն: Սողմոն մեզի կ'ըսէ, թէ աւելի լաւ է ապրիլ այդ պայմաններուն տակ քան ապաստան գտնել տան մը մէջ վիճատէր կնոջ մը հետ: Ես ամուսինիս՝ Ճոնին հետ կը վիճաբանէի՝ ըսելով, թէ այն ատեն տանիքը կը գործածէին իբրեւ բակ, բայց երկրորդ համարը այդ իմաստով բացատրելը դժուար էր. աւելի լաւ է ապրիլ անապատին մէջ՝ օձերուն եւ կարիճներուն հետ քան բարկացած, խոժոռ եւ վիճատէր կնոջ մը հետ: Կոուիլը կը յոգնեցնէ ոչ միայն ուրիշները, այլեւ մեզ:

Կիները ստեղծուած են ըլլալու առողջ եւ կրակոտ սիրով լեցուն, սիրալիր եւ գթասիրտ: Երբ մեր սկսնական ձեւակերպումին կամ ստեղծագործութեան նպատակին հակառակ ձեւով կը գործենք, իրականութեան մէջ պատերազմած կ'ըլլանք մեր մարմիններուն դէմ: Այդպիսով կը խախտենք այն կեանք տուող, զօրացնող եւ նեցուկ կանգնող դերը, որ ունինք մեր կեանքին մէջ: Կիները կրնան կատարել այդ դերը՝ ըլլան ամուսնացած կամ ամուրի:

Երբ կը միտինք մեր խորհուրդները եւ զգացումները պայթելու աստիճան շիշի մը մէջ հաւաքել, եկէք յիշենք, որ ատիկա մէկու մը օգուտ չի բերեր: Ատիկա մեզ չի փրկեր բախումներէ. անիկա պարզապէս կը պատճառէ ներքին նեղութիւն, որ կը վնասէ մեզի եւ մեր շուրջը գտնուող բոլորին: Եկէք ճշմարտութիւնը խօսինք սիրով, այնպիսի ձեւով մը, որ լսելի ըլլայ մեր դիմացինին կողմէ, եւ ներդաշնակութեան մէջ ապրինք այն առողջ, կրակոտ եւ սիրալիր բնութեան հետ, զոր տրուած է մեզի Աստուծոյ կողմէ:

Տէր, փութիւն ճշգրիտ փեսիք մը՝ իբրեւ կին իմ բնութեանս մասին: Սորվեցուր ինձի ըլլալ մեղմ բայց զօրաւոր՝ ծառայելով քեզի եւ գործածելով այն ծայնը, որ ինձի փութեամբ ես ճշմարտութիւնը խօսելու համար սիրով:

Եւ Զօրաւոր Եւ,

ԵՐԲ Կ'ԸՆԴՈՒՆԻՄ ԲՆՈՒԹԻՒՆՍ ԵՒ Կ'ՈՒՐԱԽԱՆԱՄ
ԱՆՈՎ՝ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԽՕՍԵԼՈՎ ՍԻՐՈՎ:

ՀԱՆԴԱՐՏ ԵՒ ՀԶՕՐ

Մեղմ պատասխանը ցատումը կը կատեցնէ, իսկ խիստ խօսքը բարկութիւնը կը գրգռէ:

ԱՌԱՎՆԵՐՈՒ 15.1

Յաճախ կը յիշեմ այն պահը երբ խօսակցութիւն մը լաւէն վատի կ'երթար կամ վատէն՝ լաւի: Երբեմն կը լսէի Սուրբ Հոգիին զգուշացումը. «Հանդա՛րտ կեցիր, ձայնդ ցածցո՛ւր, մեղմութեա՛մբ պատասխանէ: Մի՛ ըսեր այն ինչ որ կ'ուզես ըսել, այլ՝ մտիկ ըրէ իմ մեղմ, թեթեւ ձայնիս եւ իմ խօսքերս խօսէ՛ փոխարէնը»: Երբեմն հնազանդ եմ եւ մտիկ կ'ընեմ... ուրիշ անգամներ մէկ խօսք եւս կ'ըսեմ նախքան հնազանդիլս, եւ ապա կը տեսնեմ, թէ ո՞րքան սուղի կը նայի ինձի այդ անմտութիւնս:

Գտած եմ ձայնս լսելի դարձնելու գաղտնիքը: Իրապէս բաւական պարզ է. եթէ կ'ուզես ձայնդ լսելի դարձնել, ըսելիքդ ըսէ այնպիսի ձեւով մը, որ պիտի ուզէիր զանհիկա լսել ուրիշէն: Զաւակներս, ամուսինս, պաշտօնեաներս, շունս, ամէն մարդ իրականութեան մէջ ինձի աւելի մտիկ կ'ընէ երբ խօսքերս կ'ըսեմ այնպէս, որ ես պիտի ուզէի լսել զանոնք ուրիշէն: Գիտեմ, որ կը նախընտրեմ, որ մէկը հետս խօսի մեղմ, յարգալից ոճով մը: Ես շատ աւելի լաւ կը լսեմ երբ մէկը երեսիս չի պռռար: Ձայնի բարձրութիւնը կամ բառերու կրկնութիւնը չէ, որ ուրիշներու ուշադրութիւնը, յարգանքը եւ յանձնառութիւնը կը գրաւէ, այլ՝ մեր խօսածին կարեւորութիւնը եւ այն ոճը, որով կը ներկայացնենք մեր ըսելիքը: Ոչ ոք լուրջի կ'առնէ անձ մը երբ ան զայրոյթի պռռթկում կ'ունենայ: Այո, կրնայ ըլլալ, որ ան իր ուզածը ունենայ այդ պահուն, բայց յետոյ գին կը վճարէ: Մենք զայրոյթի պռռթկումներ կ'ունենանք եւ կը բարձրացնենք մեր ձայնը շատ մը պատճառներով, եւ ահա անոնցմէ քանի մը հատը.

1. Կը վախնանք, որ մեզի պիտի չլսեն:
2. Պոռալը արդիւնք տուած է անցեալին (մեր ուզածը ունեցած ենք):
3. Կ'ուզենք ահարկութիւն պատճառել ուրիշներուն կամ հակակշռել զանոնք:
4. Ատիկա տեսած ենք մեր մանկութեան տարիներուն:
5. Տակաւին բարկացած ենք չլուծուած հարցի մը համար:
6. Վատ սովորութիւն մըն է:

Այս պատճառներուն մեծ մասին արմատը վախն է: Աստուած մեզի վախի հոգին չէ տուած, այլ՝ զօրութեան, սիրոյ եւ զգաստութեան հոգին (տե՛ս Բ.Տիմոթէոսի 1.7): Կը պոռանք եւ զայրոյթի պոռթկումներ կ'ունենանք երբ անզօր կը զգանք: Պիտի փորձենք ահարկութիւն պատճառել ուրիշներուն եւ հակակշռել զանոնք երբ մեր շահը կը փնտռենք: Կը դիմենք մեր անցեալին երբ կատարեալ սէրը տակաւին չէ փարատած ամէն վախ: Չափազանցուած հակազդեցութիւններ կ'ունենանք երբ երէկուան հարցերը այսօրուան մէջ կը բերենք:

Մինչ կը նորոգենք մեր միտքը, վատ սովորութիւնները կը կոտորուին եւ վախի բռնակալութիւնը կը խափանուի: Երկար ժամանակ առաջ յայտնաբերեցի, թէ ի՛նչ երեւոյթ ալ ունենայ կացութիւնը, ես չեմ անիկա հակակշռողը: Ես կրնամ հակակշռել իմ անձս, բայց Աստուած է վերջաւորութեան ամէն բան հակակշռողը:

Այդ ճշմարտութիւնը ընդունիլը մեզ կը դնէ ճիշդ մտայնութեան մէջ, որպէսզի հաղորդակցինք այնպիսի ձեւով մը, որ մեզի մտիկ ընեն:

Տէր, երբ ես կը պայքարիմ եւ կը կռուիմ հակակշիռ ձեռք ձգելու համար, օգնէ, որ յիշեմ, որ ես առնուազն կրնամ հակակշռել իմ լեզուս եւ խօսելու ոճս: Քու շնորհքովդ զիս զգայուն դարձուր քու մեղմ, թեթեւ ձայնիդ, եւ արքօնէ, որ անիկա առաջնորդէ զիս:

Եւ Զօրաւոր Եմ,

ԵՐԲ ԿԸ ԽՕՍԻՄ ՀԱՆԴԱՐՏ ԵՒ ՀԶՕՐ ԿԵՐՊՈՎ:

ԿՐԱԿՈՏ

[Մեղքը] քեզի կը բաղձայ, բայց դուն տիրէ՛ անոր վրայ:

ԾՆՈՒՆԴՆԵՐՈՒ 4.7

Շատ յաճախ մեր մշակոյթը *փաշըն* (կիրք) բառը կը սահմանափակէ սեռային պարունակին մէջ: Բայց *փաշըն* բառը [այս գիրքին մէջ թարգմանուած իբրեւ «կրակոտ»- *Թարգմանիչ*] ունի շատ աւելի ընդարձակ տարողութիւն: Դիւրին չէ զանիկա սահմանելը, քանի որ անիկա իր մէջ ունի մարդկային զգացումներու երկու ծայրայեղութիւնները. սէր եւ ատելութիւն: *Փաշըն*ը մօտէն կապուած է զգացումի, խանդավառութեան, յուզումի, փափաքի, գորովի, սիրոյ եւ խանդաղատանքի հետ: Ո՛վ չ՛ուզեր ասոնցմէ աւելի ունենալ: Միւս կողմէ, անիկա նաեւ կապուած է բառերու հետ, որոնք կրնան կապանքի տակ դնել մեզ, ինչպէս՝ հրապուրուիլ, ցանկալ եւ կիրք: Եւ ապա ուրիշ մակարդակի վրայ անիկա կապուած է նաեւ հետեւեալ տեսակի բառերու հետ՝ պոռթկում, բորբոքում, զայրոյթ, ցասում, կատաղութիւն, դժգոհութիւն եւ բարկութիւն:

Սիրոյ եւ ատելութեան այդ երկու ծայրայեղութիւններուն մէջ ի՞նչպէս կրնանք ապրիլ կրակոտ կեանք մը՝ առանց այրելու:

Գաղափար կրնանք առնել *փաշըն*ի սխալ կիրարկումը ցոյց տուող առաջին պատմութենէն. Կայէնի եւ Աբէլի պատմութիւնը, Ծնունդներու 4-ին մէջ: Աստուած ընդունեց Աբէլի անկեղծ զոհը, բայց մերժեց Կայէնի անտարբեր զոհը: Եւ Կայէն զայրացաւ: Երբ Աստուած տեսաւ, որ Կայէն բարկութեամբ բորբոքած էր իր եղբօրը հանդէպ, «Տէրը Կայէնի ըսաւ. “Ինչո՞ւ բորբոքեցար, եւ ինչո՞ւ երեսդ կախեցիր. եթէ բարիք ընես, ընդունելի չ՛ըլլա՞ր: Եթէ բարիք չընես, մեղքը դրան քով պառկած է. ան քեզի կը բաղձայ, բայց դուն տիրէ՛ անոր վրայ”» (Ծնունդներու 4.6-7):

Դժբախտաբար Կայլեն կացութիւնը չշտկեց Աստուծոյ հետ: Փոխանակ տիրելու մեղքին վրայ եւ տիրապետելու իր բարկութեան, ան սպաննեց իր եղբայրը:

Կայլենին ուղղուած Աստուծոյ զգուշացումը մեզի ալ զգուշացում մըն է: Այո, մենք հաւանաբար մարդասպանութիւն գործելու չենք հասնիր, բայց «եթէ բարիք չընենք», մեղքը վստահաբար մեր դրան քով պառկած է: Մենք պէտք է տիրապետենք մեր զգացումներուն եւ զանոնք շինիչ կերպով ուղղենք եւ ոչ կործանիչ: Ճշմարտութիւնը այն է, որ *փաշընը* կամ կիրքը կրնայ արժէքաւոր ցուցանիշ մը ըլլալ, անկախ անկէ, թէ պատկերին ո՞ր ծայրը կը գտնուի: Կիրքը ինքզինք կը դրսեւորէ իբրեւ բարձրացած ֆիզիքական եւ զգացական պատրաստուածութեան վիճակ մը՝ պաշտպանելու համար բան մը, որուն հանդէպ *փաշընէթ* կամ կրքոտ ենք: Մենք կրքոտ կ'ըլլանք բաներու հանդէպ, որոնք կարելի են մեզի համար: Մեծամասնութիւնս դիւրաւ չի գրգռուիր կամ ազդուիր չնչին կամ առօրեայ բաներէ, բացի եթէ անոնք կը կապուին աւելի մեծ չափի վրայ մեզի համար իմաստալից եղող բաներու հետ: Ուստի երբ մեր կիրքերը կ'արթնան՝ անոնք կը յայտնաբերեն մեզի համար կարելի եղող բաները: Մենք կրնանք ընտրել այդ ոյժը (*էնըրճին*) ուղղել կեանք տուող բաներու, փոխանակ արտօնելու, որ անիկա յանգի քառսի մէջ՝ ինչպէս Կայլեն ըրաւ: Նոյնիսկ զգացական ծայրայեղութիւններու մէջ, մենք ընտրութեան իշխանութիւնը կամ զօրութիւնը ունինք: Մեր կարողութեան սահմաններուն մէջն է մեր կիրքերը կառավարելը եւ ընելը ընտրութիւններ, որոնք կեանքի կ'առաջնորդեն:

Հայր, սորվեցուր ինձի, որ մտիկ ընեմ կեանքիս մէջ գոյութիւն ունեցող փաշըններուն (կիրքերուն) եւ զանոնք քեզի բերեմ՝ սրբազործուելու համար: Կը խնդրեմ, որ ինձի համար կարելի դարձնես այն բաները, որոնք կարելի են քեզի համար:

Ըստ Զօրմեոյ ԵՄ,

ՈՐՈՎՇԵՏԵՒ ԿՐՆԱՄ ԸՆՏՐԵԼ ԿԱՌԱՎԱՐԵԼ ԱՆՁՍ,
ՓՈԽԱՆԱԿ ԱՐՏՕՆԵԼՈՒ, ՈՐ ԿԻՐՔԵՐՍ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ
ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱՆ ԿԵԱՆՔԻՍ ՎՐԱՅ:

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ ԵՐԳԷ ՄԸ ԱԲԵԼԻՆ Է

*Սուրբ Հոգիով լեցուեցէք, իրարու հետ սաղմոսներով,
օրհնութիւններով եւ հոգետր երգերով խօսեցէք, եւ ձեր
սիրտերուն մէջ միշտ երգեցէք ու սաղմոս ըսէք Տիրոջ:*

ԵՓԵՍԱՑԻՆԵՐՈՒՆ 5.18-19

Օ առաքանութիւնն ու պաշտամունքը հոգետր կարգապահութենէ մը աւելին է. անկկա *փաշըն* (բուն փափաք) մըն է, հաճոյք մը եւ բանալին՝ Աստուծոյ հետ աւելի խորունկ սիրոյ յարաբերութեան մէջ մտնելու: Աստուծոյ կը մօտենաս՝ մտիկ ընելով եւ երգելով սիրոյ երգեր իրեն եւ իր մասին:

Այսօրուայ հատուածին մէջ կը գտնենք յորդոր մը փառաբանութեան եւ պաշտամունքի ատեն Հոգիով լեցուելու: Կը լեցուինք մինչ բարձրաձայն կ'երգենք եւ երաժշտութիւն կ'ունենանք մեր սիրտին մէջ, բայց այս հատուածը ուրիշ բանալի մըն ալ կը պարունակէ... Աստուծոյ մասին մեր հաղորդակցութիւնը ուրիշներու հետ: Պաշտամունքը երգելէն աւելին է: Անկկա ինքզինք կը յայտնէ մեր խօսակցութիւններուն մէջ, քանի որ միայն բնական է խօսիլ բաներու մասին, որոնցմով լեցուն է մեր սիրտը: Երբ կը սիրես մէկը, կը խօսիս անոր մասին: Սիրուած ըլլալը խանդավառող բան մըն է, եւ անշուշտ պիտի ուզես ատոր գեղեցկութիւնը բաժնեկցիլ ուրիշներու հետ:

Բարեկամներ յատուկ կապեր կ'ունենան, եւ ուրիշներու հետ նոյն *փաշըն*ը ունենալը (նոյն բանին համար կրակ ունենալը) կը նմանի խարոյկի մը շուրջ նստած ընկերներու, որոնք բոլորը

կը վայելեն կրակին տաքութիւնն ու գեղեցկութիւնը: Այդ կապը կ'օգնէ, որ մէկս միւսը շինենք ճշմարտութեամբ: Ատոր համար է, որ հաւաքական պաշտամունքը այդքան հզօր է. Աստուծոյ հանդէպ սէրդ կ'արտայայտես՝ ընկերներով շրջապատուած ըլլալով:

Իսկական ընկերները մէկը միւսը աւելի եւս կը բարձրացնեն եւ կը քաջալերեն զիրար, որ քալեն մեր Տիրոջ հաճելի եղած ձեւով: Երբ ընկերներդ կը հետեւին Յիսուսի, բոլորդ ալ նոյն ուղղութեամբ կ'ընթանաք: Ինքզինքդ շրջապատէ մարդոցմով, որոնք միութեան մէջ են քեզի հետ հոգիով եւ նպատակով: Միշտ ամէն բանի շուրջ կրնաք չհամաձայնիլ: Սորվո՛ղ եղիր եւ պաշտպանէ՛ կապդ կամ յարաբերութիւնդ:

Լեցո՛ւիր Հոգիով եւ պաշտամո՛ւնք ըրէ՛ խօսակցութիւններուդ մէջ, երգերուդ մէջ եւ հաւատացեալներու համայնքին մէջ:

Սիրելի Տէր, թող փառաբանութեան խօսքեր եւ երգեր հոսին կեանքէս: Ողողէ զիս քու սիրովդ մինչեւ որ չկարենամ լուռ չմնալ անոր մասին, թէ ո՞րքան հոյակապ է քու կողմէդ սիրուիլը:

Եւ Զօրաւոր Եմ,

ՈՐՈՎՀԵՏԵԻ ԶՕՐԱՅԱԾ ԵՄ
ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԱՊՐԵԼԱԿԵՐՊՈՎ:

ՀՈԳԵԻՈՐ ԻՇԽԱԼՆՈՒԹԻՒՆ

Որովհետեւ Աստուած իր Հոգին մեզի տուա՛ւ որպէսզի մեր վախկոկութիւնը յաղթահարենք եւ զօրանանք, սիրով լեցուինք եւ զգաստ կեանք մը վարենք:

Բ.ՏԻՄՈԹԷՈՍԻ 1.7

*Ս*ուրբ Հոգին զօրութիւն, սէր եւ զգաստութիւն կամ խոհեմութիւն կու տայ մեզի: Այդ երեք արժէքներուն միացումը անպայման որ յառաջ կը բերէ զօրաւոր կիներ: Ես համոզուած եմ, որ այն պարգեւները, զորս Աստուած դրած է մեր կեանքերուն մէջ պիտի չծաղկին առանց Հոգիին այդ երեք պարգեւներուն գործունէութեան: Այդ համարի մէկ ուրիշ տարբերակը կ'ըսէ. «Որովհետեւ Աստուած տուաւ մեզի ո՛չ թէ երկչոտութեան՝ այլ զօրութեան, սիրոյ ու խոհեմութեան Հոգին» (Բ.Տիմոթէոսի 1.7):

Չեմ գիտեր ուրիշ բան, որ կը մարէ մեր զօրութիւնը, սէրը եւ խոհեմութիւնը անելի քան վախի հոգին: Պատճառներէն մէկը այն է, որ վախը կը չարչրկէ մեզ հարցումներով, որոնք կ'ականահարեն այդ երեք ստորոգելիները: Առաջին, խօսինք զօրութեան մասին: Ուրիշ ձեւով եթէ պիտի ըսենք՝ հոգեւոր իշխանութիւն: Մենք առանձին շատ քիչ կամ ոչ մէկ զօրութիւն կամ իշխանութիւն ունինք: Ադամ պարտէզին մէջ Աստուծոյ կողմէ իրեն եւ Եային տրուած իշխանութիւնը զիջեցաւ: Հնազանդութեան միջոցաւ, Յիսուս ետ առաւ այն ինչ որ կորսնցուած էր Ադամի անհնազանդութեան պատճառով: «Յիսուս մօտենալով խօսեցաւ անոնց հետ: Ապա ըսաւ. “Ամէն իշխանութիւն տրուեցաւ ինձի երկինքի մէջ եւ երկրի վրայ”» (Մատթէոսի 28.18):

Մեր իշխանությունը եւ զօրութիւնը կ'իրագործուին Քրիստոսով: Ինչո՞ւ պիտի վախնանք եթէ մեր կեանքը իր մէջ պահած ենք:

Երկրորդ Տիմոթէոսի մէջ Պօղոս կը քաջալերէ Տիմոթէոսը՝ երիտասարդ ծառայող մը եւ Քրիստոսի աշակերտ մը, որ հաւատքի պարգեւը աճեցնէ իր կեանքին մէջ: Ատիկա գիտենք, քանի որ նախորդ համարին մէջ Պօղոս իրեն կը յիշեցնէ. «Այդ պատճառով ալ կը յիշեցնեմ քեզի, որ բոցավառ պահես այն շնորհքը, որ Աստուած քեզի տուաւ՝ երբ քեզ ձեռնադրեցի» (Բ.Տիմոթէոսի 1.6):

Մէկը քեզ ձեռնադրած ըլլայ կամ ոչ, բոլորիս ալ տրուած է հաւատքի չափ մը, եւ զանհկա խնամելով բազմապատկելը մեզի ձգուած է: Հաւատքի նիւթը շուրջ 300 անգամ նշուած է Նոր Կտակարանին մէջ: Հաւատքի մասին ամէնէն գրաւիչ հոչակումներէն մէկը կը գտնուի Եբրայեցիներուն Գիրքին մէջ. «Իսկ առանց հաւատքի անկարելի է Աստուծոյ հաճութիւնը շահիլ: Արդարեւ, Աստուծոյ մօտեցողը պէտք է հաւատայ՝ թէ ան գոյութիւն ունի եւ կը վարձատրէ անոնք, որ զինք կը փնտռեն» (11.6):

Մեր մեծամասնութիւնը կը հաւատայ, որ Աստուած գոյութիւն ունի: Կը սայթաքինք հաւատալու մէջ, թէ ան պիտի վարձատրէ անոնք, որոնք կը փնտռեն զինք: Վախը իր ամբաստանութիւններով կը յարձակի մեր մէջէն ամէնէն զօրաւորներուն վրայ իսկ: *Բաւարար չէ ըրածը: Բաւարար զօրութիւն չունիս: Բաւարար չափով չես սիրեր: Բաւարար չես:* Յիսուսի շնորհիւ կը պատասխանենք, թէ իրմով մենք բաւարարէն աւելի ենք:

Երկնաւոր Հայր, շնորհակալ եմ ինձի տալուդ համար Սուրբ Հոգիդ, որ կը յիշեցնէ ինձի, թէ Քրիստոսով կրնամ քալել սիրոյ մէջ, իշխանութեամբ եւ խաղաղութեան մէջ ու միտքի յստակութեամբ:

Ըն Զօրմեոք ԸՆ,

ՈՐՈՎՀԵՏԵԻ ՔՐԻՍՏՈՍՈՎ ԻՆԾԻ ՏՐՈՒԱԾ Է
ԶՕՐՈՒԹԻԻՆ, ՍԷՐ ԵՒ ԽՈՒՆՄՈՒԹԻԻՆ:

ԱՂՕԹԵՑԷ՛Ք ՀՈԳԻՈՎ

Ամէն արեւն աղօթեցէ՛ք Հոգիով՝ ամէն տեսակ աղօթքով եւ աղերսանքով: Հսկեցէ՛ք ասոր վրայ բոլորովին յարապետութեամբ ու աղերսանքով՝ բոլոր սուրբերուն համար:

ԵՓԵՍԱՑԻՆԵՐՈՒՆ 6.18

*Ս*ղօթքը եւ հնազանդութիւնը ամէնէն հզօր միջոցներն են հոգեւոր պատերազմի մէջ, եւ մենք բարձր զգաստութեան եղանակի մը մէջ ենք: Նկատի՛ առ, որ Պօղոս կ'առաջարկէ, որ աղօթենք Հոգիով ոչ միայն երբեմն, այլեւ ամէն ատեն: Ի՞նչպէս կ'աղօթենք Հոգիով: Ձեւերէն մէկը Աստուծոյ Խօսքը աղօթելն է: Աստուածաշունչին մէջ պիտի գտնես այնքան տեսակի աղօթքներ որքան կան պէտքեր: «Հայր Մեր»ը աղուոր ամենօրեայ աղօթք մըն է, բայց մինչ մեր առօրեան կ'ապրինք, պիտի հանդիպինք տարբեր տեսակի բաներու, որոնց մասին կ'ուզենք աղօթք բարձրացնել: Պիտի տեսնենք կարիքաւոր մարդիկ, ճգնաժամի մէջ եղող երկիրներ, իմաստութեան եւ խորաթափանցութեան կարիքը ունեցող ղեկավարներ: Պէտք է աղօթենք մեր բարեկամներուն, ընտանիքներուն եւ մեր թշնամիներուն համար:

Ուրիշ ձեւ մը Հոգիով աղօթելու՝ աղօթած ատենդ Սուրբ Հոգիի առաջնորդութեան մտիկ ընելն է: Պիտի ըլլան ժամանակներ երբ պիտի զգաս, որ սխալ բան մը կայ կամ մէկը կարիք մը ունի: Աղօթէ՛ անոր համար: Շատ պատահած է, որ ժամանակ մը ետք կապուած եմ անձին հետ եւ գիտցած, որ դժուար ժամանակէ մը կ'անցնէր այն ատեն երբ ես մղուած էի իրեն համար աղօթելու:

Աղօթքը կրնայ ըլլալ պաշտօնական եւ անպաշտօնական: Կրնաս աղօթել ոտքի կեցած, նստած, երկնցած կամ ծունկի եկած: Աղօթքը նաեւ կրնայ ըլլալ պոռալու չափ բարձր ձայնով կամ սիրտիդ մէջ լուռ խոսկումի ձեւով: Աղօթելը պէտք է ըլլայ շնչելու չափ բնական բան մը: Աստուածաշունչը մեզի կը քաջալերէ, ըսելով. «Միշտ ուրախ եղէք, անդադար աղօթեցէք: Ամէն բանի համար շնորհակալ եղէք, որովհետեւ Աստուած ատիկա՛ կը սպասէ ձեզմէ, որ Քրիստոս Յիսուսի միացած էք» (Ա.Թեսաղոնիկեցիներուն 5.16-18):

Սուրբ Օգոստինոս հետեւեալը ըսած է. «Աղօթեցէ՛ք այնպէս, որ կարծես ամէն բան Աստուծմէ կախեալ է, եւ աշխատեցէ՛ք այնպէս, որ կարծես ամէն բան ձեզմէ կախեալ է»:

Մենք միայն այնքան զօրաւոր ենք որքան կ'աղօթենք: Զօրաւոր կիները ուշադիր կ'ըլլան, որ իրենց աղօթքի կապակցութիւնը ամուր պահեն: Ես կը սիրեմ պաշտամունքի երգեր լսած ատենս աղօթել: Նաեւ կը սիրեմ աղօթքներու օրագիր մը պահել. տասնամեակներու ընթացքին անոնք Աստուծոյ հաւատարմութեան վկայութիւնները եղած են:

Մեր Երկնաւոր Հայրը գիտէր մեր դիմագրաւելիք ճակատամարտերը եւ մեզի տուաւ ամէն բան, որուն կրնանք պէտք ունենալ ոչ միայն ոտքի մնալու համար, այլեւ յաղթահարելու: Թշնամին պիտի շարունակէ պայքարիլ մեզի դէմ, բայց ան պիտի չյաղթէ:

Երկնաւոր Հայր, սորվեցո՛ւր ինձի, որ աղօթեմ մինչեւ որ անկախ ինձի համար դառնայ այնքան բնական բան մը որքան խօսիլը: Շնորհակալ եմ Սուրբ Հոգիիդ առաջնորդութեան համար:

Եւ Զօրաւոր եմ,

ԵՐԲ ԱՂՕԹՔՆԵՐՍ ԶՕՐԱՒՈՐ ԵՆ:

Զօրանքի
Մագրությունք

ՄԱՔՈՒՐ

Արդ, անոր՝ որ կրնայ ձեզ անկումներէ փրկել, պահել անարափ եւ անբիծ, եւ անխառն ուրախութեամբ լեցուն՝ իր փառաւոր ներկայութեան կանգնեցնել, միակ Աստուծոյն՝ որ մեր փրկիչն է՝ փա՛ռք տուէք, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ: Անոր եւ փառքը, մեծութիւնը, զօրութիւնն ու իշխանութիւնը, թէ՛ բոլոր ժամանակներէն առաջ, թէ՛ այժմ եւ թէ՛ գալիք բոլոր ժամանակներուն: Ամէն:

ՅՈՒԴԱՅԻ 24-25

Մենք չենք կրնար մենք մեզ մաքուր պահել, բայց ան մաքուր է: Առաջին ակնարկով, մաքրութիւնը կրնայ թուիլ թէ նոյնն է ինչպէս սրբութիւնը, բայց այդպէս չէ: Սրբութիւն կը նշանակէ՝ անջատուիլ կամ սրբագործուիլ Աստուծոյ համար, մինչ մաքրութիւնը մեր սրբագործուած ըլլալուն պատճառով մեր վարուած ձեւն է: Մաքրութիւնը սրբութեան արտադրութիւնն է: Մենք կը սորվինք մաքրութեամբ վարուիլ երբ կը կառուցանենք հիմ մը, որ հաստատուած է Աստուծոյ Խօսքին վրայ:

Աստուած կ'ուզէ մեր կեանքի աղբիւրը ըլլալ: Եթէ իրապէս քաջ ես, հրաւիրէ Սուրբ Հոգին, որ քննէ քու սիրտդ եւ շարժառիթներդ Աստուծոյ ծակող եւ թափանցող Խօսքին լոյսին տակ: Եբրայեցիներուն 4.12-13-ը կ'ըսէ.

Որովհետեւ Աստուծոյ Խօսքը կենդանի է եւ ազդու, աւելի հատու՝ քան ոեւէ երկսայրի սուր, եւ կը թափանցէ մարդու շունչին ու հոգիին մէջ, մինչեւ ողն ու ծուծը, եւ կը քննէ մտածումներն ու սրտին խորհուրդները:

Հաւատացէ՛ք, ասիկա թուլասիրտներուն համար չէ: Աստուծոյ

Խօսքը միայն գիրեր չեն թուղթի վրայ... անիկա կենդանի է: Եթէ կ'ուզես այն իրական ոյժը, որ դուրս կու գայ ճշմարտութիւնը ընդունելէն, կը քաջալերեմ քեզ, որ հաւատաս իր Խօսքին եւ մօտենաս անոր: Անոր կենդանի Խօսքը կը փափաքի պարել սիրտիդ մէջ եւ փսփսալ քեզի գիշերը: Անիկա այնքան սուր է, որ կրնայ բաժնել շունչը հոգիէն, եւ այդ ընթացքին երեւան հանել ծածուկ խորհուրդներ եւ կեցուածքներ: Յիշէ՛, որ ոչ մէկ բան կը ծածկուի Աստուծմէ: Ան ամէն բան կը տեսնէ, հակառակ անոր որ մենք չենք տեսներ: Յաճախ մեր սիրտերը կը խաբեն մեզ, բայց եթէ խնդրենք ճշմարտութիւնը գիտնալ, Աստուած իր զանազանութիւնը պիտի բաժնեկցի մեզի հետ՝ իր Խօսքին միջոցաւ: Մենք չենք ուզեր մարդուն խորհուրդը... Մենք կ'ուզենք Աստուծոյ ներըմբռնումը: Մարդուն խորհուրդը միշտ ազդուած է մշակոյթէն եւ տուեալ ժամանակի չափանիշներէն: Ամէն տասնամեակի մէջ անմտութիւնը ինքզինք կը վերապատշաճեցնէ տուեալ ժամանակի համոզումներուն՝ արտացոլացնելով ընկերութեան բարոյական ջերմաստիճանը: Բայց Աստուծոյ Խօսքը կանգուն կը մնայ յաւիտեան, եւ անիկա այն չափանիշն է, որուն հիման վրայ հաշիւ պիտի տանք:

Աստուածաշունչին մէջ պիտի հանդիպիս ճշմարտութիւններու եւ խոստումներու, որոնք սկիզբը կրնան անկարելի կամ անիրապաշտ թուիլ... բայց այդպէս չեն: Մինչ ներս կ'առնենք Խօսքը, կը սորվինք, թէ մաքրութիւնը եւ սրբութիւնը կարելի են: Որովհետեւ Աստուծոյ սրբութեան կոչը օրէնքներու հետ կապ չունի. անիկա իրեն պատկանելու հետ կապ ունի:

*Երկնատը Հայր, կը հրաւիրեմ, որ քու Խօսքդ կենդանի
եւ ազդու ըլլայ կեանքիս մէջ: Դուն ես, որ զիս սուրբ կը
դարձնես, ուստի անջարդ զիս այն սուրբէն, որոնք կ'ըսեն,
թէ մաքրութիւնը անկարելի է: Կ'ուզեմ ապրիլ այնպիսի
ձեռով մը, որ ուրիշներ գիտնան, որ ես քուկը եմ:*

Եւ Զօրաւոր Եմ,

ՈՐՈՎՎԵՏԵՒ ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԸ ԿԵՆԴԱՆԻ
ԵՒ ԱԶԴՈՒ Է ԿԵԱՆՔԻՍ ՄԷՋ:

ՆՈՒՒՐՈՒԱԾ

Ես ձեզի հանդէպ Աստուծոյ նախանձախնդրութեամբ լեցուած՝ կ'ուզեմ, որ միայն Քրիստոսը սիրէք, ինչպէս մաքուր կոյս մը, որ իր սէրը կը վերապահէ անոր՝ որ իր ամուսինը պիտի ըլլայ: Բայց կը վախնամ, որ ձեր միտքը ապականի եւ հեռանաք Քրիստոսի հանդէպ ամբողջական եւ մաքուր նուիրումէն, ճիշդ ինչպէս Եան խաբուեցաւ: օձին խորամանկ սուտերէն:

Բ.ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ 11.2-3

Ս րբուն փափաք ունիմ տեսնելու, որ մաքրութեան զօրութիւնը կը տիրէ ամէն կնոջ կեանքին վրայ՝ ըլլայ ան ամուրի կամ ամուսնացած, երիտասարդ կամ տարեց: Երբ եկեղեցիին մէջ կը խօսինք մաքրութեան մասին, յաճախ կը խօսինք սեռային ընտրութիւններու եւ վարմունքի մասին, բայց մաքրութիւնը՝ ինչպէս կը տեսնենք վերի հատուածին մէջ, կը վերաբերի «Քրիստոսի հանդէպ ամբողջական եւ մաքուր նուիրում»ին: Մաքրութիւնը կը սկսի մեր միտքին մէջ: Եւ մաքրութեան համար պայքար մղելը կ'ընդգրկէ մերժել խաբեբային պատճառով շեղիլը: Ասիկա կը նշանակէ կարգալից խօսքը՝ ճշմարտութիւններ գտնելու համար հոն եւ հրաւիրել Սուրբ Հոգիին զօրութիւնը սիրտիդ մէջ, որպէսզի բաժնէ ճշմարտութիւնը սուտերէն:

Ինչպէս Պօղոս կը մատնանշէ այսօրուան հատուածին մէջ, կրնանք հեռանալ Քրիստոսի հանդէպ մեր մաքուր նուիրումէն: Կրնանք ընտրել, թէ որո՞ն բառերուն մտիկ պիտի ընենք. մեր Փրկիչի՞ն բառերուն կամ փորձողին բառերուն, որ կ'ուզէ քանդել մեր կեանքը: Աստուծոյ խօսքն է, որ գերագոյն իշխանութիւն ունի:

Եթէ խնդրես Աստուծմէ, ան պիտի առնէ Հոգիին սուրը եւ կտրէ-
հանէ ամէն ստութիւն քու կեանքէդ:

Եթէ բաւարար չափի ճնշում բանեցուի մեր վրայ տուեալ
կացութեան մը մէջ, վերջաւորութեան պիտի իյնանք որեւէ
ճակատամարտի մէջ, որուն ներքնապէս չենք յաղթած: Եկէք
սկսինք միտքի մաքրութեամբ: Մինչ «բոլոր միտքերը գերելով՝
Քրիստոսի հնազանդութեան կը բերենք» (Բ.Կորնթացիներուն
10.5), պիտի տեսնենք, որ մաքրութիւնը կը հոսի մեր կեանքի բոլոր
մարզերուն մէջ:

*Սիրելի Երկնաւոր Հայր, դուն ես մաքրութեան եւ սրբութեան
ինքնին էութիւնը: Ես քուկդ եմ եւ կը նուիրուիմ Խօսքդ
ներս առնելուն եւ անոր տալուն պատիւ, գերակայութիւն եւ
իշխանութիւն կեանքիս բոլոր մարզերուն մէջ: Կը հրաւիրեմ
Խօսքիդ սուրը, որ կտրէ ամէն անատողջ եւ անբարեպաշտ
կապուածութիւն եւ մաքրէ զիս ներսէն դուրս:*

Եւ Զօրացոյ՛ Եւ,

ՈՐՈՎՀԵՏԵԻ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ ԿԸ ՓՆՏՈՒՄ
ԳԱՆՁԻ ՄԸ ՊԷՍ՝ ՈՅԺ ՔԱՇԵԼՈՎ ՔՐԻՍՏՈՍԻ
ԱՆԱՐԱՏ, ՄԱՔՐԱՄԱՔՈՒՐ ԽՕՍՔԵՐԷՆ:

ԾՐԱՐԸ

*Մարդը արտաքին երեւոյթին կը նայի,
բայց Տէրը սիրտին կը նայի:*

Ա.ԹԱԳԱԻՈՐՆԵՐՈՒՆ 16.7

Կրնաս այսօրուայ համարը կարդալ եւ մտածել, թէ արտաքին երեւոյթները պէտք չէ կարելուր ըլլան, քանի որ Աստուած մարդուն ներսը կը նայի: Այո, շնորհակալութիւն Աստուծոյ, որ ներքինին կը նայի, բայց մենք տակաւին երկրի վրայ կ'ապրինք եւ ամէն մարդ հոս արտաքինին կը նայի եւ իր տեսածէն կ'ազդուի:

Յորդոր ստացած ենք, որ զգոյշ ըլլանք անոր մէջ, թէ մենք մեզ արտաքնապէս ի'նչպէս կը ծրարենք: Զգուշացում ստացած ենք, որ սնափառութիւնը անցողակի յոյս մըն է, եւ հետեւաբար անմտութիւն է վստահիլ մեր արտաքին տեսքին: Բայց պարզապէս որովհետեւ մեր վստահութիւնը մեր արտաքին տեսքին վրայ չենք դնել, ատիկա չի նշանակել, որ պէտք է անտեսենք զանիկա:

Իրականութիւնը այն է, որ մենք միշտ հաղորդակցութեան (պատգամներ փոխանցելու) մէջ ենք՝ մտադիր ըլլանք կամ ոչ: Մեր պատգամները պիտի յղուին հետեւեալ երեք ձեւերէն մէկուն միջոցաւ. ինչ կ'ըսենք (մեր բառերը եւ ոճը), ինչ կ'ընենք (մեր վարմունքները եւ արարքները) եւ մեր տեսքը (մեր արտաքինը կամ ներկայացումը): Եւ մարդիկ յաճախ աւելի կ'ազդուին իրենց տեսածով քան լսածով: Երբ ատիկա կը հասկնանք, կրնանք ատիկա գործածել ի նպաստ մեզի եւ մեր մտադրութիւնները փոխանցել ազդու կերպով: Վստահ եմ, որ ձեռով մը կամ ուրիշ լսած ենք այն հին ասացուածքը, որ կ'ըսէ. «Բնաւ երկրորդ առիթ չես ստանար լաւ առաջին տպաւորութիւն մը ձգելու համար»: Այո, կրնայ ըլլալ, որ հին ասացուածք մըն է, բայց շատ ճիշդ է: Եւ ճիշդ ի'նչ ըսել կ'ուզէ:

Հագուածքդ եւ ինքզինքդ ներկայացնելու ձեւդ ոչ միայն անմիջական պատգամ մը կը դրկէ ուրիշներուն, այլեւ քումտադրածէդ ատելի՛ բան կրնայ ակնարկել դիմացինիդ: Անիկա կրնայ հակառակ պատկերը տալ անձիդ մասին քու կարծիքիդ, կամ անոր մասին թէ դուն ի՞նչ բանի կը վստահիս, ի՞նչ բանէ ազդուած ես, եւ անշուշտ թէ՛ որո՞ն կը պատկանիս: Չեմ պատրաստուիր քեզի նորածնութեան որոշակի խրատներ տալու անշուշտ, որովհետեւ միայն դուն կրնաս պատասխանել հետեւեալ հարցումին. ներկայիս ի՞նչ կը փոխանցես քեզ տեսնողներուն կամ քեզի հետ յարաբերողներուն: Ի՞նչ պատգամ կու տաս: Արդեօք անիկա ճշգրիտ արտացոլացում մըն է քու ով ըլլալուդ կամ պարզապէս նկար կը նկարուիս եւ զանիկա ընկերային հաղորդամիջոցներուն վրայ կը հրապարակես:

Ըսենք, թէ հագուածքդ եւ արտաքին տեսքդ ճշգրտօրէն կ'արտացոլացնեն քու ով ըլլալդ: Կրնաս ըսել. «Ես գործի մարդ եմ, եւ հագուածքս պատշաճ է ասպարէզիս համար»: Կամ կրնայ ըլլալ, որ աշակերտ կամ ուսանող մըն ես եւ կ'ըսես, թէ հագուածքդ ատիկա կ'արտացոլացնէ: Բայց եկէք քիչ մը ատելի խորունկ փորենք: Ի՞նչ ազդեցութիւն կ'ունենաս ուրիշներու վրայ քու հագուածքովդ: Մարդիկ քե՞զ կը տեսնեն կամ միայն հագուածքդ: Երբ ուրիշներ քեզի նային, ի՞նչ կը տեսնեն:

Մինչ բնաւ պէտք չէ վստահինք մեր արտաքին տեսքին, կրնանք հաղորդակցութեան այդ ձեւը կամ միջոցը գործածել իմաստուն եւ բարեպաշտ ձեւով մը, ճիշդ ինչպէս կ'ընենք մեր բառերուն եւ արարքներուն պարագային:

Տէր, ցոյց տուր ինձի ի՞նչպէս իմաստուն ըլլալ հաղորդակցութեան բոլոր ձեւերուն մէջ, ներառեալ ինքզինքս ներկայացնելու ձեւին մէջ: Յայտնէ՛ ինձի, թէ ճիշդ ի՞նչ կըլսես իմ արտաքին տեսքովս, եւ թող այդ բոլորը ըլլան քու փառքիդ համար:

Եւ Զօրաւոր Եմ,

ՈՐՈՎՀԵՏԵՒ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԾՐԱՐ ՄԸՆ
ԵՄ. ՆԵՐՔՆԱՊԷՍ ԵՒ ԱՐՏԱՔՆԱՊԷՍ
ՆՈՒԻՐՈՒԱԾ ԱՍՏՈՒԾՈՅ:

ՀԻՒՍՈՒԱԾ ՍՔԱՆՉԵԼԻՔՈՎ

Քեզ որովայնի մէջ չձեռակերպած՝ քեզ կը ճանչնայի:

ԵՐԵՄԻԱՅԻ 1.5

*Ս*տուած շատ մօտէն մասնակից է մեր կազմութեան գործին: Ան հիւսած է մեզ արգանդին մէջ՝ մեր մօրը մեզ զգալէն երկար ժամանակ առաջ: Նախքան որ մենք մեզ ճանչնալու կարողականութիւնը ունենանք, ան մեզ կը ճանչնար: Մինչ մենք կ'աճէինք գաղտնաբար, ան կը ծրագրէր մեր կեանքի օրերը եւ մեր առջեւ կը գծէր մեր կեանքի ճամբան: Դուն երբեք ալ սոսկ բջիջներու կոյտ մը չէիր. դուն միշտ կենդանի էիր իր մէջ:

Ամէն զաւակ, որ կը ծնի՝ յոյսի պարգեւ մըն է՝ վստահուած մեզի, որ հոգանք իրեն: Եթէ երբեք տեսած ես մարդ արարածի մը ծնունդը, ապա գիտես, որ իւրաքանչիւր մանուկ փաթթուած է կարողականութեան սքանչելիքին մէջ:

Կը յիշեմ, որ նախքան որ գիտնամ երրորդ որդիովս յղի ըլլալս, զգացի ի՛նչպէս անոր կեանքը կ'արծարծուէր իմ մէջս: Ճոն կը ծառայէր Ռոչըրսթըրի մէջ, Նիու Եորք, եւ ես պաշտամունքի ծառայութեան ընթացքին արտասովոր կերպով տկար կը զգայի: Զգացի, որ պիտի նուաղէի, ուստի նստայ: Այդ ատեն լսեցի Սուրբ Հոգին կը փսփսար. «դուն կեանք կը կրես մէջդ... Մէջդ որդի մը կ'աճի»: Այդ պահուն զգացի Աստուծոյ ներկայութիւնը: Ատիկա պարզապէս օրինակ մըն է, թէ Աստուած ո՛րքան մօտէն ծանօթ է արգանդին մէջ աճող մանուկներուն:

Եթէ մէկը ասիկա ըսած չըլլար քեզի... Եթէ մէկը երբեւէ

ըսած չըլլար քեզի, թէ դուն հիւսուած ես սքանչելիքով եւ ծանօթ ես քու Ստեղծիչիդ... Հապա եթէ ատոր փոխարէն լսած ես ակնարկութիւններ, թէ արկածով յղացուած ես կամ սխալ մըն ես: Եթէ չկարենանք անդրադառնալ մեր ստեղծագործութեան մէջ դեր խաղցած սքանչելիքին, ապա դժուար պիտի ըլլայ ճանչնալ այդ սքանչելիքը ուրիշներու մէջ: Եթէ մեզ մեծցուցած են այն զգացումով, թէ մենք գլխու ցաւ մըն ենք, ապա դիւրին պիտի ըլլայ զաւակ մը տեսնել իբրեւ անկոչ հիւր:

Շատ մեծ թիւով կիներ իրենք զիրենք ամէն բան հաւասարակշռելու ճշումին տակ կը զգան՝ ասպարէզ, մայրութիւն, յաւելեալ գործունէութիւններ, որովհետեւ դրամատիրութեան մեր մշակոյթը մայրութիւնը մերկացուցած է իր արժէքէն: Շատ մը ձեւերով կեանքը որոշ ժամանակամիջոցի մը ընթացքին տրուելիք գրաւոր մը կամ քննութիւն մըն է: Կրնաս անշուշտ ասպարէզ մը ունենալ ե՛ւ ըլլալ հոգատար ու ընտանիքիդ հետ ժամանակ անցընող մայր մը: Իմ զաւակներս աւելի ուրախութիւն եւ աճելու առիթներ տուած են ինծի քան որեւէ իրագործում, որ ունեցած եմ ասպարէզիս մէջ: Եթէ կ'ուզես մայր ըլլալ, մի՛ ամչնար: Քու պատկերացուցածէդ աւելին պիտի պահանջէ քեզմէ, բայց միեւնոյն ատեն անհկա փոխադարձաբար քեզի պիտի տայ աւելին քան ինչ որ երբեւէ երագած ես:

Երկնատր Հայր, դուն ես կեանք տրուողը: Կը հաւատամ, որ սքանչելիքով զիս հիւսած ես եւ օրերս առջեդ փռած ես ժպիտով: Դուն մայրերուն յանձնած ես ազնուական պարտականութիւն մը, որովհետեւ զաւակները քեզմէ եկած նուէրներ են:

Եւ Զօրաւոր Եմ,

ՈՐՈՎՀԵՏԵԻ ՍՏԵՂԾՈՒԱԾ ԵՄ ԻՐԵՆ
ՀԱՄԱՐ ԵՒ ԻՐ ԿՈՂՄԷ:

ՇՈՒՆՉԻ ԿԱՊԵՐ

Մի՛ կարծեք, թե աշխարհին խաղաղութիւն բերելու եկայ: Ո՛չ. չեկայ խաղաղութիւն բերելու, այլ՝ սուր:

ՄԱՏԹԷՈՍԻ 10.34

Յիսուս կ'ուզէ մեզ ազատագրել ամէն բանէ, որ մեզ ետ կը պահէ իրմէ: Հոգեւոր պատերազմ կը նշանակէ՝ դիմագրաւել ամէն կուռք կամ արգելք, որ կը կենայ իրեն հետ մեր յարաբերութեան ճամբուն մէջ: Կը հաւատամ, որ կրնանք գերութեան մարզեր դիմագրաւել կամ հարուածել: Երբ Յիսուս շղթաներ կը տեսնէր, կը կտրէր զանոնք. երբ Յիսուս դեւեր կը տեսնէր, կը վտարէր զանոնք. երբ Յիսուս հիւանդներ կը տեսնէր, կը բժշկէր զանոնք. երբ Յիսուս մեղքով կապուած մարդիկ կը տեսնէր, կը ներէր իրենց եւ կը զօրացնէր զանոնք, որ երթան եւ այլեւս մեղք չգործեն: Կը սիրեմ Յիսուսը, որովհետեւ ան շատ իրական է, ժամանակակից ու մարդոց մօտիկ եւ գործնական:

Ժամանակ մը եկաւ երբ ես անդրադարձայ, որ կը տառապէի անառողջ «շունչի կապեր»ու կապանքէն, զորս պէտք էր կտրէի: Ի՞նչ է շունչի կապը: Պարզ ձեւով ըսելով՝ երբ շունչդ (ներքին անձդ) կը կապուի կամ կը հիւսուի ուրիշի մը հետ: Ասիկա կրնայ թե՛ լաւ եւ թե՛ վատ բան մը ըլլալ: Մօր մը շունչը կապուած կամ հիւսուած է իր զաւակին շունչին հետ: Բայց մինչ ան կը մեծնայ եւ տղամարդ կը դառնայ, իր մօրը հետ իր յարաբերութիւնը պէտք է փոխուի, որպէսզի կարենայ իր սիրտը տալ իր կնոջ: Ամուսինի մը շունչը պէտք է կապուի կամ հիւսուի իր հարսին շունչին հետ, որպէսզի երկուքը մէկ մարմին ըլլան: Ասոնք լաւ եւ առողջ կապերն են, որոնք կը կապեն եւ կը հիւսեն մեր սիրտերը իրարու հետ՝ սիրով: Այս ձեւի առողջ կապեր նաեւ կարելի է կերտել բարեկամութիւններու

մէջ, ինչպէս Դաւիթի ու Յովնաթանի պարագային: Դուն կրնաս այդպիսի կապ մը ունենալ քրոջ մը կամ մօտիկ բարեկամի մը հետ: Ձեր միջեւ անբառ հասկացողութիւն մը կ'ըլլայ. առանց խօսելու իրարու կը հասկնաք:

Բայց երբ անառողջ շունչի կապեր կը կազմուին, հակակշիռ բանեցնելու վախ կ'ըլլայ ի՞նչ փոխանակ միութիւն եւ բարեկամութիւն ըլլալու: Այդպիսի կապեր կրնան կերտուիլ անօրինական սեռային յարաբերութիւններու, անառողջ կախեալութիւններու (տիրապետութիւններու) կամ սխալ (անկայուն) կամ բռնաբարում պարունակող յարաբերութիւններու միջոցաւ: Անառողջ շունչի կապերը մեզ կոտրուած կը ձգեն: Յաճախ կը փորձենք քակել զանոնք, բայց ես սորվեցայ, որ աւելի լաւ է, որ արտօնենք, որ Տէրը իր սուրը անցընէ եւ կտրէ այն բանը, որ կը կապէ մեզ: Միայն Աստուած կրնայ մեր կոտրուածութիւնը առողջացնել եւ մեզ ամբողջական դարձնել:

Մենք ունինք հաւատարիմ եւ գթառատ Քահանայապետ մը, որ քեզ մտերմօրէն կը ճանչնայ: Ան պատրաստ է գործածելու իր սուրը՝ կտրելու համար ամէն բան, որ քեզ ետ կը պահէ իրմէ: Ան կ'ուզէ կտրել ամէն անառողջ շունչի կապ, որպէսզի միայն առողջները մնան: Ան իր Խօսքը պիտի դրկէ, որպէսզի բժշկէ եւ վերականգնէ քու շունչդ: Ժամանակ առ աղօթելու՝ արտօնելու համար, որ Աստուած կարենայ մաքրել կեանքդ: Խնդրէ՛ Սուրբ Հոգիէն, որ յայտնաբերէ որեւէ անառողջ շունչի կապ եւ ապա հրաւիրէ՛ իր Խօսքին սուրը, որ կտրէ զանիկա: Ան, որ խոստացաւ՝ հաւատարիմ է:

Տէր, կը խնդրեմ, որ յայտնաբերես որեւէ անառողջ շունչի կապ, որ գոյութիւն ունի կեանքիս մէջ եւ կտրես զայն քու Սուրբ Հոգիիդ զօրութեամբ: Բժշկէ՛ զիս եւ վերականգնէ շունչս: Յոյ՞ց տուր ինչպէս սնուցանեմ կեանքիս լաւ կապերը եւ առողջ պահեմ զանոնք:

Եւ Զօրաւոր Եմ,

ՈՐՈՎՀԵՏԵՒ ՇՈՒՆՉՍ ԿԱՊԱԾ ԵՄ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ:

ԲՈՒԺՈՒԻԼ ՉՂՋՈՒՄԵՆ

Արդարեւ դո՛ւն ստեղծեցիր երկկամունքս, եւ դո՛ւն զիս ծածկեցիր մօրս որովայնին մէջ: Կը ներքողեմ քեզ, որովհետեւ ահաւոր ու սքանչելի կերպով ստեղծուեցայ. քու գործերդ սքանչելի են եւ իմ անձս լաւ գիտէ: Իմ ոսկորներս քեզմէ չպահուեցան՝ երբ ծածկաբար ձեւակերպուեցայ, երկրի ստորին մասերուն մէջ ճարտարութեամբ կազմուեցայ: Քու աչքերդ իմ սաղմս տեսան. բոլոր անդամներս քու գիրքիդ մէջ արձանագրուած էին ու ժամանակին պիտի կազմուէին, երբ դեռ անոնցմէ ո՛չ մէկը կար: Ո՛րչափ պատուական են ինձի քու մտածումներդ, ո՛վ Աստուած, որչա՛նք մեծ է անոնց թիւը:

ՍԱՂՄՈՍՆԵՐՈՒ 139.13-17

Յու Դաւիթ բանաստեղծական ձեւով կը պատկերէ ամէն կեանք, որ կը սկսի արգանդի մը մէջ: Հապա եթէ վիժումի ցաւը կրած մէկն ես... Եթէ այդ է քու պարագադ, բժշկութիւն կը հոչակեմ վրադ: Կրնայ ըլլալ, որ վախի մէջ եղող դուստր մըն էիր, որ հաւատացած էր սուտի մը կամ կրնայ ըլլալ, որ թոռ մը կորսնցուցած ես: Ինչ ալ ըլլան պայմանները եւ ով ալ ըլլաս դուն՝ կը հաւատամ, որ Հայր Աստուած կ'ըսէ, թէ ներուած ես, եւ կեանք մը կը սպասէ քեզի կացութեանդ միւս կողմը:

Վիժումներուն սուգը շատ հագուադէպօրէն հրապարակաւ կ'ապրեցուի: Այդ փոքրիկ կեանքերուն գեղեցկութիւնը կը ջնջուի շատ կոկիկ եւ արդիւնաւէտ կերպով: Միայն յետոյ է, որ յանցաւորի զգացումի պատանքը կը ծածկէ մայրը, հայրը եւ ոեւէ մէկը, որ կապ ունէր եղելութեան հետ:

Մենք կ'ապրինք մշակոյթի մը մէջ, որ ապշեցուցիչ կերպով անձնասէր է: Երբեք չի կրնար զօրացնել քեզ բարեպաշտութեամբ ապրելու համար, քանի որ կը կառավարուի մարմնաւոր անձին

պահանջներով: Անշուշտ նաեւ կը դիմագրաւենք չամուսնացած յղի կիներուն հանդէպ եկեղեցիներուն կոպիտ վերաբերումի կամ դատողութեան մարտահրաւէրը: Վերջերս մասնակցեցայ կլոր սեղանի քննարկումի մը, որուն հինգ զրուցավար կիներէն երկուքը վիժում ունեցած էին՝ անկարող ըլլալով դիմագրաւել եկեղեցիին դատողութիւնն ու իրենց պատճառած ամօթի զգացումը: Վիժում ընել ուզող կիները զանազան տեսակէտներ կը լսեն ընկերութենէն.

- «Երիտասարդ եւ գեղեցիկ ես... ամբողջ կեանքդ առջեւդ է»:
- «Օր մը հոյակապ մայր մը պիտի ըլլաս, բայց հիմա չէ այդ ժամանակը»:
- «Կրնաս զաւակներ ունենալ երբ որ պատրաստ ըլլաս»:
- «Այս երեխան ընդունուած չէ, մինչ ամէն զաւակ արժանի է ընդունուած ըլլալու»:

Թէ՛ երիտասարդ եւ թէ՛ տարեց կիներէ լսած են, որ այս ձեւի խրատներու մտիկ ըրած են եւ ապա զղջում ապրած են: Անոնք դարմանատուն մտած են իբրեւ երկու հոգի, եւ անկէ դուրս եկած են վիրաւորուած եւ կոտրուած: Պէտք չէ՞ մենք՝ որ ճանչցած ենք Յիսուսի սէրը եւ գութը աւելի օգնող կամ ձեռք մեկնող ըլլանք այդ կիներուն քան վիժումի դարմանատուները: Կեանք պահպանելու հռետորութիւնը (*փրօ-լայֆ*) քուէարկութեան կեցուածք մը չէ միայն. անհկա ապրելակերպ մըն է, որ նեցուկ կը կանգնի որդեգրութիւններու եւ քաջ ընտրութիւններու:

Որքան ալ ցաւալի ըլլայ զղջումը, երբեք չենք կրնար ետ երթալ եւ փոխել պատահածը: Մեր յոյսը առջեւ նայելուն մէջն է: Պէտք է ընդունիս Աստուծոյ ճշմարտութիւնը եւ ներումը: Եթէ վիժում ունեցած ես, ներէ դուն քեզի եւ արքօնէ, որ բուժումը սկսի:

Եւ Զօրմուր Ե՛՛՛,

ՈՐՈՎՅԵՏԵՒ Կ՛ՐՆՏՐԵՄ ԿԵԱՆՔԸ ԵՒ ՅՈՅԱԸ
ՓՈԽԱՆԱԿ ԶՂՁՈՒՄԻ ԵՒ ԱՄՕԹԻ ԶԳԱՅՈՒՄՆԵՐԸ:

ՊԱՏՈՒԵԼ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ

*Ամուսնությունը թող պատուական համարուի բոլորէն,
ու անկողինը՝ անարատ պահուի, քանի որ Աստուած
պիտի դատէ պոռնկողներն ու շնացողները:*

ԵՐԲՅԵՑԻՆԵՐՈՒՆ 13.4

*Ս*յս համարին մասին խօսելէն առաջ պէտք է լաւ հասկնանք «պատուել» բառը: Մենք կը պատուենք բան մը կամ մէկը երբ ատելի մեծ կշիռ կամ արժէք կու տանք անոր ի՛նչ ըլլալուն կամ ո՛վ ըլլալուն: Օրինակի համար, ես կը պատուեմ իմ ամուսինս երբ յարգանքով կը խօսիմ անոր հետ եւ կը գործեմ անոր հետ փոխանակ անոր դէմ: Միւս կողմէ երբ կ'անպատուես մէկը կամ բան մը, անհոգ եւ անտարբեր կամ անզգոյշ կ'ըլլաս անոր հանդէպ, քանի որ արժէք չես տար անոր: Ամուսնութիւններու մէջ ամուսինները կրնան անպատուել իրենց կիները ճիշդ ինչպէս կիները կրնան անպատուել իրենց ամուսինները երբ հասկցած չեն ըլլար պատուելու սկզբունքը: Եբրայեցիներուն այդ համարը կը խօսի որոշակիօրէն ամուսնական անկողինը կամ մտերմութեան վայրը պատուելու մասին:

Կը պատուենք մեր ամուսնութիւնը՝ ամուսնութենէն առաջ մաքուր մնալով: Ամուսնութենէն դուրս սեռային յարաբերութիւնը կ'անպատուէ ամուսնութեան ուխտը, այդ արարքին մասնակիցները եւ զԱստուած: Ատոր հակառակ, ամուսնական ուխտին մէջ սեռային յարաբերութիւնը կը պատուէ զԱստուած, անհատները եւ անոնց ամուսնութիւնը: Ուրիշ ձեւ մը, որով կը պատուենք մեր ամուսնութիւնը՝ երբեք ուրիշ մարդիկ կամ բաներ մեր մտերմութեան վայրէն ներս չարտօնելն է: Ասիկա կը նշանակէ, թէ մասնակից չենք ըլլար բաներու, որոնք կը նսեմացնեն բացարձակ սեռային

միութեան գեղեցկութիւնը: Այդ բաներէն են՝ պոռնկագրութիւնը, գիշութիւնը, այլասերումը, մարմնավաճառութիւնը կամ անմաքրութիւնը:

Որովհետեւ ես վերը նշուած ճշմարտութիւնները չէի ապրեր նախքան ամուսնանալս, պէտք էր շատ մը ստուերային բաներ դիմագրաւէի ամուսնանալէս ետք: Ես պէտք էր կարենայի ինքզինքս ազատօրէն տալ ամուսինիս, բայց նկատեցի, որ կապուած էի անցեալի ընտրութիւններու: Մենք ստեղծուած ենք միայն մէկ անձի հետ սեռային միութիւն ապրելու համար, որովհետեւ սեռային մտերմութիւնը վերապահուած է մէկ միութեան՝ երկու հոգիի միջեւ, որոնք մէկ կը դառնան ամուսնութեան ուխտով: Մտերմութիւնը պէտք է բացարձակ ըլլայ, որպէսզի իրական մտերմութիւն ըլլայ: Եթէ ընտրենք սեռային յարաբերութիւն ունենալ շատերու հետ, ատիկա կը նուաստացնէ այն մէկին յատուկ ըլլալը:

Կը հաւատամ, որ ասիկա պատճառներէն մէկն է, որ շնութիւնը՝ իր տարբեր ձեւերով, շատ տարածուած է մեր մշակոյթին մէջ: Քանի որ չենք հասկնար ուխտի գաղափարը, մարդիկ կ'ըսեն. «Ամուսնութիւնը պարզապէս կտոր մը թուղթ է»: Ամուսնութիւնը սոսկ երկու հոգիի մէկ ըլլալը չէ. անոր մէջ Աստուած է, որ երկուքը մէկ կ'ընէ: Եթէ չենք հասկնար, թէ ամուսնութեան մէջ կան երեք անձեր եւ ոչ մէկ, ապա անիկա կը դառնայ... թուղթ: Աստուծոյ Խօսքը պատուելը զօրութիւն, ուխտ եւ մտերմութիւն կը բերէ ամուսնութեան մէջ: Աստուած կ'ուզէ վերականգնել այն ինչ որ խզուած է եւ բժշկել այն ինչ որ անպատուած է:

*Երկնատր Հայր, սորվեցո՛ւր ինձի ինչպէս պատուել ամուսնութիւնը:
Սուրբ Հոգի, յայտնաբերէ ինձի ամուսնութեանս եւ ամուսնութեան
մասին իմ տեսակէտիս հետ կապուած պղծութեան եւ անպատուութեան
որել: մարգ: (Ասիկա կրնաս աղօթել ըլլաս ամուսնացած կամ ամուրի:)
Կ'ուզեմ պատուել մտերմութեան քու ուխտդ կեանքիս մէջ:*

Եւ Զօրաւոր Եմ,

ԵՐԲ ԿԸ ՊԱՀՊԱՆԵՄ ՄՏԵՐՄՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ԿԸ ՄԵՐԺԵՄ ԱՄԷՆ ԲԱՆ, ՈՐ ԿԸ
ԽԱՓԱՆԷ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՈՒԽՏԸ:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹ

Տէրը իմ ժայռս, բերդս ու փրկիչս է:

ՍԱՂՄՈՍՆԵՐՈՒ 18.2

Ս և ցնցուած էի: Մեր հովիւը ինձմէ խնդրած էր, որ խումբ մը աղջիկներու խօսեի սեռային մաքրութեան մասին, եւ ես գաղափար չունէի, թէ ի՞նչ պիտի ըսեի իրենց: Ոչ միայն գաղափար չունէի, այլեւ սարսափած էի: Ի՞նչ էր հարցս: Տարիներ ճամբորդած էի աշխարհի չորս կողմը եւ խօսած էի ամէն տարիքի պատկանող կիներու մեծ խումբերու ամօքէ: Ինչո՞ւ կը վախնայի խօսելու մեր տեղական երկրորդական վարժարանի աղջիկներու խումբին: Խորունկ շունչ մը առի: Պարզապէս պէտք էր հաւաքէի ինքզինքս: Վերջապէս ես նախկին երիտասարդներու հովիւին կիսն էի: Այդ երկու տարիները գրեթէ անվնաս վերապրած էի: Յետոյ անդրադարձայ, որ այդ տարիքային խումբը չէր, որ կը նեղացներ զիս... խօսելիք նիւթս էր: Գիտէի, որ ինձի պիտի հարցնէին, թէ ի՞նչ կրնային ընել եւ պէտք չէր որ ընէին տղաներու հետ իրենց յարաբերութիւններուն մէջ:

Ի՞նչ պիտի խօսեի այդ խումբ մը աղջիկներուն «սահմաններ»-ու մասին: Ես ինքս աղջիկ զաւակ չունէի, եւ շատ ժամանակ ալ չունէի պատրաստուելու: Ծունկի եկայ եւ աղօթեցի: *Յայր, ես պատասխանի մը պէտք ունիմ այս աղջիկներուն համար: Կ'ուզեմ քու իմաստութիւնդ փոխանցել, ոչ թէ իմ կամ ուրիշ մէկու մը կարծիքը: Եւ պէտք ունիմ շուտով գիտնալու:*

Սպասեցի: Ոչինչ: Ոտքի ելայ եւ լոգանքի մտայ: Յաջորդ օրն էր հանդիպումս աղջիկներուն հետ: Լոգանքի ատեն միտքս հոս-հոն կ'երթար մինչեւ որ Սուրբ Յոգին խօսեցաւ եւ կեդրոնացումս շտկուեցաւ. «դուն օրէնքներ կը փնտռես՝ իրենց վարմունքը զսպելու կամ սահմանափակելու համար: Օրէնքները չեն, որ արգելք պիտի

ըլլան իրենց: Այն զօրութիւնը, որուն պէտք ունին պէտք է ծնի յարաբերութենէ: Իրենց մի՛ ըսեր, թէ ինչ “չեն” կրնար ընել. իրենց ըսէ, թէ ինչ “կրնան” ընել: Իրենց ըսէ, որ իրենց տղայ-ընկերներուն հետ կրնան ընել այն բաները, զորս հանգիստ պիտի զգային ընելու իրենց հայրերուն ներկայութեան»:

Ստացայ պատասխանս: Հայրերը պէտք է ըլլան իրենց դուստրերուն արժանապատուութիւնը պահպանողները: Թերեւս այդ չէր քու պարագադ: Թերեւս դուն չունիս երկրաւոր հայր մը, որ պաշտպանէ քեզ: Լաւ լուրը այն է, որ դուն ունիս երկնաւոր Հայր մը: Ան երբեք պիտի չուզէր քեզ տեսնել օգտագործուած եւ պղծուած: Թերեւս արդէն իսկ պէտք եղածէն աւելին ըրած ես: Անկախ քու անցեալէդ, Աստուած կը հսկէ քու ապագայիդ: Այդ պատասխանը միայն դեռահաս պատանիներու համար չէ. անիկա կը վերաբերի ամէն դուստրի, որ դժուարութիւն ունի մաքուր կեանք մը վարելու անմաքուր մշակոյթի մը մէջ:

Օրէնքները չեն, որ կը փոխեն մեր սիրտերը: Մենք հաշուետու ենք աւելի բարձր կարգի մը: Մենք հաշուետու ենք սիրոյ: Ատիկա կը վերաբերի մեր երկնաւոր Հօր հետ յարաբերութիւն ունենալուն: Պաղ քարի վրայ քանդակուած սահմանափակումներու, բարոյական սկզբունքներու եւ բարոյագիտական կանոններու փոխարէն մենք ունինք մեր սիրտերուն վրայ գրուած կենդանի ճշմարտութիւններ: Երբ մենք մեր հաւատքը կը վերածենք «ընելիքներ եւ չընելիքներ»ու ցանկի մը, կը կորսնցնենք այդ յարաբերութիւնը անոր հետ, որ լաւագոյնը կ'ուզէ մեզի համար:

*Երկնաւոր Հայր, թող իմ մաքրութիւնս զայ քեզի
հետ իմ յարաբերութենէս: Անկախ իմ անցեալէս, ես
քեզ կը կոչեմ իմ պաշտպանս եւ կը հրաւիրեմ քեզ
կեանքիս ամենէն մտերմիկ վայրերուն մէջ:*

Ըն Հօրաւոր Ըն,

ՈՐՈՎՈՐՆԵՏԻ ԼԻԱԶՅՈՐՈՒԱԾ ԵՄ ՀՕՐԸ ՀԵՏ
ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՈՉ ՕՐԷՆՔՆԵՐՈՎ:

ՀԱՐՍ ՄԸ

Ինչպես փեսան հարսով կը բերկրի, այնպես քու Աստուածոք քեզմով պիտի բերկրի:

ԵՍԱՅԻԻ 62.5

*Ե*ր սիրեմ այն իրականութիւնը, որ Աստուած մեզ կը նմանցնէ իր հարսին: Վերջերս իմ զաւակներէս երկուքը ամուսնացան: Առջեւի շարքը նստած, տեսայ ինչպէս երկուքն ալ լացին երբ տեսան իրենց հարսերուն դէպի իրենց քալելը, ինչ որ անշուշտ պատճառ եղաւ, որ ես ալ լամ: Հարսերը կը փայլէին իրենց սպիտակ հագուստներուն մէջ եւ կատարելապէս զարդարուած էին: Կ'ուզեմ մտածել, թէ Յիսուս այդպէս կը տեսնէ մեզ: Յայտնութեան 19.7-ին մէջ կը կարդանք. «Եւ իր հարսը ինքզինք պատրաստեց»:

Ի՞նչպէս կ'ընենք ատիկա: Պատասխանը գտնելու համար, եկէք քիչ մը աւելի խորերը սուզուինք: Հարս մը ի՞նչպէս կը պատրաստէ ինքզինք իր փեսային համար: Ատիկա գեղեցիկ հագուստէ մը, մազ յարդարելէն եւ շպարուելէն աւելին է. անիկա պատրաստութիւն մըն է, որ տեղի կ'ունենայ սիրտին մէջ: Ստորեւ իմ կարգ մը կարծիքներս.

- Հարս մը կը փափաքի ամէն ձեւով հաճեցնել իր փեսան:
- Հարս մը կ'ուզէ ըլլալ մաքուր եւ կրակոտ իր բոլոր ըրածներուն մէջ:
- Հարս մը կ'ուզէ հասկցուիլ խորութեամբ մը, զոր իր բառերը չեն կրնար հաղորդել:
- Հարս մը պէտք ունի ապահով զգալու երբ ինքզինք խոցելի կը դարձնէ:
- Հարս մը կը սիրէ առանց վախի ինքզինք արտայայտելու ազատութիւնը:
- Հարս մը կ'ուրախանայ անակնկալներով եւ չակնկալուած նուէրներով:

- Հարս մը կը սիրէ գաղտնիքներ բաժնեկցիլ իր փեսային հետ:
- Հարս մը կը սիրէ երբ իր սիրելին իր ետեւէն կը վազէ, եւ ինքն ալ կը սիրէ անոր ետեւէն վազել:
- Հարս մը կը սիրէ գիտնալ պատկանելիութեան ուրախութիւնը:
- Հարս մը կը փափաքի խնամուիլ, պաշտպանուիլ, ուղղութիւն ստանալ եւ նոյնիսկ մեղմ կերպով սրբագրուիլ:
- Հարս մը սպառած կ'ըլլայ իր ամուսինին հանդէպ սիրով:

Կը հաւատամ, որ այդ փափաքները եւ տակաւին աւելին կան ամէն Աստուծոյ դուստրի սիրտին մէջ: Կրնանք համարձակիլ արտօնել, որ այդ փափաքները արժարծեն մեր սիրտերը, որովհետեւ Աստուծոյ ամէնէն խորունկ փափաքը մեզ սիրելով տանիլ է այն բոլորին մէջ, որ Ինք ստեղծեց մեզ որ ըլլանք: Յիսուս՝ մեր Փեսան, կ'աղաչէ մեզի, ըսելով. «Արտօնէ՛, որ սիրեմ քեզ»:

Ուրիշ ոչ ոք կրնայ այդպէս սիրել մեզ: Այդ փափաքները այնքան խորունկ են, որ ոչ մէկ երկրաւոր տղամարդ կրնայ գոհացնել զանոնք բոլորը: Երկրաւոր սէրը կրնայ փախչիլ եւ յուսախաբ ընել մեզ, որովհետեւ մենք ուրիշ սիրոյ մը կը տենչանք: Քու երկնաւոր Իշխանդ երբեք յուսախաբ պիտի չընէ կամ պիտի չվիրաւորէ քեզ: Ան դարբնած է քու ամէնէն խորունկ փափաքներդ եւ միշտ եղած է այն ինչ որ սիրտդ կը ցանկայ կամ կը տենչայ: Ան քու բոլոր պէտքերդ գոհացուցած է: Ինչո՞ւ չփաթթես դուն քեզ իր արդարութեամբ: Դուն քեզ զարդարէ՛ անոր երկրպագութեամբ: Զուարճացիր անոր փաթթուկով, եւ արտօնէ, որ սիրտդ պարէ անոր առջեւ:

Սիրելի երկնաւոր հայր, սիրելով առաջնորդէ զիս այն բոլոր բաներուն մէջ, զորս դուն ստեղծած ես զիս, որ ըլլամ: Հարսի մը պէս ես ինքզինքս պիտի պատրաստեմ քեզի համար: Դի՛ր զիս կնիքի մը պէս սիրտիդ վրայ, եւ մինչ ես կը քալեմ այն բոլոր բաներուն մէջ, զորս ունիս ինծի համար, թող զգամ քու ժպիտդ:

Եւ Զօրմեոյ Ե՛՛՛՛,

ՈՐՈՎՀԵՏԵԻ ԻՄ ՓԵՍԱՍ ԿԸ ՅՆԾԱՅ ԻՆՁՄՈՎ:

*Զօրաւոր՝
Ըշմարտութեամբ*

ԻՄԱՍՏՈՒՆ՝ ԽՕՍՔԵՐՈՎ

*Հաճելի խօսքերը մեդրի խորհսխին պէս են, հոգիին
քաղցրութիւն են, ու ոսկորներուն՝ առողջութիւն:*

ԱՌԱՎՆԵՐՈՒ 16.24

Յովհաննէս Առաքեալ գրեց իր բարեկամ Գայիոսին.
«Սիրելի՛ն, կ'աղօթեմ, որ բոլոր գործերուդ մէջ յաջողութիւն
ունենաս եւ առողջ ըլլաս մարմինով, ինչպէս որ առողջ ես հոգիով»
(Գ.Յովհաննէսի 2):

Ըստ երեւոյթին Յովհաննէս գիտէր, որ մեր առողջութիւնը
կ'ազդուի մեր հոգիին բարօրութենէն: Չկայ ձեւ այդ երկուքը
իրարմէ բաժնելու: Անոնք շատ մտերմիկ կերպով միահիւսուած են
իրարու: Ճիշդ է, որ խօսքերը ֆիզիքական վնաս չեն պատճառեր,
բայց Աստուածաշունչը զանոնք կը նմանցնէ մահացու զէնքի եւ
բուժիչ բալասանի. «Մարդիկ կան, որոնք անխոհեմ խօսքերով
սուրի պէս կը խոցոտեն, բայց իմաստուններուն լեզուն դարման
է» (Առակներու 12.18):

Վիրաւորական եւ բարկութեամբ ըսուած խօսքերը կը խոցոտեն
մեզ ինչպէս դանակահարման վերքերը: Մէկը կը հարուածէ մեր
ուսը, ուրիշ մը կը քսուի մեր ստամոքսին եւ տակաւին ուրիշ մը
իր թիրախը կը դարձնէ մեր թեւը, եւ ապա մեր դէմ յարձակողը
փախուստ կու տայ: Կ'ապշինք այդ յարձակումին եւ մեր հագուստին
վրայ յառաջացած արեան հետքերուն վրայ: Չգալով, որ պիտի
նուաղինք, կը գոցենք մեր աչքերը պահ մը՝ մենք մեզի հարց
տալով, թէ ի՛նչպէս կ'ըլլայ, որ խօսքերը կարող ըլլան այդքան
վնաս հասցնելու:

Ապա կը լսենք ուրիշ ծայն մը: Անիկա մեղմ է եւ քաղցր: Կը զգանք անոր ջերմութիւնը՝ մինչ լոյսի ոսկեայ մառախուղ մը կը հալածէ խաւարը: Կեանքի եւ բժշկութեան խօսքերը կը ջնջեն այն խօսքերը, որոնք վիրաւորած էին մեզ: *Կը սիրեմ քեզ: Ես հետդ եմ: Դուն իմս ես:* Անոնց քաղցր ջերմութիւնը կը հանդարտեցնէ մեր բորբոքեալ ցաւը: Իւրաքանչիւր հաճելի խօսք կը գործէ իբրեւ կազդուրիչ մը:

Այդ է խօսքերուն ազդեցութիւնը մեր հոգիին վրայ: Խօսքերը կրնան վիրաւորել եւ խօսքերը կրնան բժշկել: Այս գիտութիւնը ունենալով, եկէք մեր խօսքերը գործածենք ազատագրելու եւ բժշկելու համար ուրիշները փոխանակ դանակահարելու եւ վիրաւորելու զանոնք: Փոխանակ անհոգ ըլլալու մեր խօսքերուն նկատմամբ, եկէք ուշադիր ըլլանք եւ ընտրենք իմաստուն ըլլալ մեր խօսքերով կամ գործածած բառերով: Մեր ըսածներուն ուշադիր ըլլալով, յարգած կ'ըլլանք խօսքերուն զօրութիւնը:

Քաջալերանքի եւ գութով արտասանուած պարզ բառեր մեծ տարբերութիւն կ'ընեն մէկու մը համար: Մենք կեանք տուող դեղ գործածած կ'ըլլանք երբ Աստուծոյ խօսքէն կը խօսինք: Միայն ան է բժշկողը, ուստի զարմանալի չէ, որ անոր խօսքերը բժշկութիւն կը կրեն իրենց մէջ: Շատ ջանք չ'ուզեր ուրիշները քաջալերելը եւ ատիկա օգուտ կը բերէ անոնց շատ աւելի ձեւերով քան մենք երբեւէ կրնանք գիտնալ:

Ընտրութիւնը քուկդ է: Ի՞նչ պիտի խօսիս դուն այսօր. վնաս կամ առողջութիւն:

Աստուած, սորվեցուր ինձի խօսքերուն զօրութիւնը եւ օգնէ, որ բառերս գործածեմ այնպիսի ձեւով մը, որ բժշկութիւն եւ քաջալերանք բերեն անոնց, որոնք իմ ճամբուս մէջ դրած ես:

Եւ Զօրաւոր Եմ,

ԵՐԲ Կ'ԸՆՏՐԵՄ ԲԱՌԵՐՍ ԳՈՐԾԱԾԵԼ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ,
ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԵԱՆՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

ԱՆԵՐԿՄԻՏ

Սորվեցողը ինձի քու ճամբար, ՏԷ՛ր, որպեսզի ես հաւատարիմ մնամ քեզի, աներկվիտ սրտով քեզ պաշտելու համար:

ՍԱՂՄՈՍՆԵՐՈՒ 86.11

Շարիներ առաջ երբ ճոնը եւ ես Իսրայէլ այցելեցինք, տակաւին կը յիշեմ հռոմայեցիներուն մասին մեր շրջապատոյտի առաջնորդին ըսածը: Ան ըսաւ, թէ անոնք ձեռով մը բարեգործ նուաճողներ էին եւ նոյնիսկ արտօնեցին, որ հրեաները պահեն իրենց կրօնական համոզումները՝ այնքան ատեն որ պիտի որդեգրէին հռոմէական մշակոյթը: Անոնք ուզեցին, որ հրեաներուն տեսքը, ապրելակերպը եւ վարմունքը ըլլային հռոմայեցիներուն նման: Ներխուժումի մարտավարութիւնները շատ չեն փոխուած այդ ժամանակէն ի վեր:

Ներկայիս մեր մշակոյթն ալ մեզի կ'ըսէ. «Կրնաս ունենալ քու կրօնդ՝ այնքան ատեն որ կը հաստատես մեր համոզումներու համակարգն ալ: Անմիտ մի՛ ըլլար: Միայն մէկ ճշմարտութիւն չկայ. կան շատ մը ճշմարտութիւններ: Կրնաս հաւատալ ի՛նչ որ ուզես եթէ մեզի պէս վարուիս»: Բայց անշուշտ ատիկա չի յարմարիր մեզի: Աստուած բնաւ չէ կանչած մեզ, որ մէկ ըլլանք մեր մշակոյթին հետ: Մենք մէկ ենք իր մէջ: Այսինքն՝ կը հաւատանք Յիսուսի երբ կ'ըսէ. «Ե՛ս եմ ճամբան, ճշմարտութիւնը եւ կեանքը: Միայն ինձմով կարելի է Հօրս երթալ» (Յովհաննէսի 14.6):

Մենք կը հետեւինք մեր Տիրոջ եւ ոչ թէ ճշմարտութիւն համարուող որեւէ նորոյթի: Մեր Տիրոջ ճշմարտութիւնը կը ներշնչէ մեզ, որ հրաժարինք մեր ձեւերէն եւ բարձրանանք Աստուծոյ տեսակէտին: Աստուծոյ մտածելու ձեւը ամբողջովին տարբեր է քան մեր մտածելու եւ հասկնալու ձեւը: Զիջում ընելու պարապ

խօսքերը կը քաջալերեն մեզ, որ նոյնը մնանք՝ պատրուակներ տալով մեր վարմունքին համար: Այս աշխարհը մեր տունը չէ. մենք պարզապէս անկէ կ'անցնինք: Ատիկա կը նշանակէ, թէ մենք այլեւս չենք համակերպիր մեր մշակոյթին, այլ՝ կը փոխակերպուինք մեր Սուրբ Աստուծոյն հետ մեր յարաբերութեան շնորհիւ:

Մենք մեր խրատը կը գտնենք Աստուծոյ Խօսքին մէջ եւ ոչ թէ այս ներկայի ճանճրացած, յոգնած աշխարհի խելքին եւ իմաստութեան մէջ: Իբրեւ Քրիստոսի հետեւորդներ, կանչուած ենք քաջալերելու մէկս միւսը: Այսինքն քաջութիւն կը ներշնչենք իրարու՝ Աստուծոյ խոստումները արտայայտելով: Աշխարհը մեզի կ'ըսէ. «Ինչ որ կ'ուզես՝ ըրէ՛: Դուն ես, որ անձդ կը շինես»: Բայց մենք երկինքի դեսպաններ ենք, որոնք կը քալեն երկրի վրայ մեծ շփոթի ժամանակաշրջանի մը մէջ: Եւ փոխանակ մենք մեզի համար ապրելու՝ կ'ապրինք Աստուծոյ համար:

Տիրոջ Խօսքը պէտք չէ ջրուելով խառնուի այս դարու իմաստութեան հետ: Աստուծոյ Խօսքը միշտ ալ առանձինը կանգնած եղած է: Մենք դժուարութիւն կ'ունենանք երբ կը քալենք մեր ամէն մէկ ոտքը մէկ աշխարհի մէջ, որովհետեւ մեր սէրերը կամ զգացումները բաժնուած կ'ըլլան: Այսօրուան համարին մէջ Դաւիթ լուսարծակի տակ կ'առնէ աներկմիտ սիրտ ունենալու մեր պէտքը [անգլերէն տարբերակին համաձայն «անբաժան սիրտ»]- *Թարգմանիչ*: Կը հաւատամ, որ դուն ասիկա կը կարդաս, որովհետեւ կը փափաքիս Աստուծոյ ծառայել ամբողջ սրտովդ: Ան կ'ուզէ, որ մեր սիրոյն կամ զգացումներուն մէջ պայքար չըլլայ: Ան կը հրաւիրէ մեզ, որ մեր սիրտերը դնենք իր հոգածութեան ապահովութեան տակ եւ ապա պատերազմ մղենք մեր հոգիներուն թշնամիներուն դէմ:

Տէր, քու Թագաւորութիւնդ է իմ մշակոյթս: Տո՛ւր ինձի աներկմիտ սիրտ, որպէսզի վախճան քու անունդ:

Եւ Զօրաւոր եմ,

ԵՐԲ ԻՄ ՍԻՐՏՍ ԱՆԵՐԿՄԻՏ Է:

ՊԱՐԻՍՊՆԵՐ

*Այդ օրը Յուդայի երկրին մէջ սա՛ երգը պիտի երգեն. «Մենք
ամուր քաղաք մը ունինք. փրկութիւնը հաստատուած
է պարիսպներու եւ պատուարներու տեղ»:*

ԵՍԱՅԻ 26.1

Երբ ժամանակներուն քաղաքներու շուրջ պարիսպներ կը կառուցանուէին՝ իբրեւ պաշտպանութեան միջոց: Անոնք վայրի անասունները եւ թշնամիները դուրսը կը պահէին: Մեզի համար անծանօթ գաղափար մըն է ատիկա, բայց այն ատեն քաղաքները շրջապատուած էին բարձր պարիսպներով: Անոնք զգուշացում մըն էին դուրսիններուն, թէ՛ «Պիտի չարտօնուի, որ ներս մտնէք մինչեւ որ գիտնանք, որ ապահով էք»: Անոնք նաեւ կը ծառայէին իբրեւ պաշտպանութեան միջոց անոնց համար, որոնք անոնցմէ ներս կը բնակէին: Այդ քաղաքներուն բնակիչները սորված էին վստահիլ այդ պարիսպներուն եւ դռնապաններուն՝ արշաւողներու եւ վանտալութեան դէմ իրենց պաշտպանութեան համար: Այդ պատերը կը պաշտպանէին քաղաքացիները հիւանդութեան աւերումէն: Պարիսպները կը ծառայէին իբրեւ պաշտպանութիւն ընդդէմ հովին, անձրեւին եւ անապատի փոթորիկներուն:

Ասոր լոյսին տակ, պատկերացուր քաղաք մը առանց պարիսպներու. քաղաք մը, որ ներխուժումի ենթարկուած է եւ կողոպտուած թշնամիներուն ուզած ատենը: Թշնամիներ եւ արշաւողներ կու գան ու կ'երթան իրենց ուզածին պէս: Ո՞վ պիտի ուզէր ապրիլ տեղ մը, ուր պաշտպանութիւն չկայ, ապաստան չկայ: Երբ չենք պաշտպաներ մեր հոգին, կը բնակինք նոյնանման վայրի մը մէջ: Մեր սիրտը այլեւս ապահովութեան եւ խաղաղութեան ապաւէն կամ ապաստան չ'ըլլար, այլ՝ կը դառնայ խափանուած եւ կողոպտուած

քաղաք մը: Կը դառնանք ենթակայ մեր տրամադրութիւններուն, մղումներուն եւ որեւէ սուտի եւ կործանարար խօսքի, որ կը հասնի մեր ականջներուն: Յուսախաբութիւնը կը դառնայ մեր ամենօրեայ հացը, եւ տառապանքն ու զղջումը մեր բաժինը կ'ըլլան:

Ուստի ի՞նչպէս կը վերակառուցանենք այն պարիսպները, որոնք կը պաշտպանեն մեզ: Կրնանք սկսիլ մեր խօսքերը մտադրուած կամ ուշադիր ձեւով խօսելով. խօսելով խօսքեր, որոնք կը բժշկեն եւ կը շինեն: Սորվէ՛ Աստուծոյ Խօսքը եւ թէ՛ անհկա ի՞նչպէս կիրարկելի է ամուսնութեանդ, գործիդ, եւ զաւակներուդ ու բարեկամներուդ հետ յարաբերութիւններուդ մէջ: Օրինէ՛ կեանքիդ այդ մարզերը եւ մերժէ՛ անիծել զանոնք: Արտօնէ՛, որ Աստուծոյ Խօսքը փոխակերպէ անձդ, եւ պիտի քաղես օգուտները: Կարեւոր է, որ արտօնես, որ Աստուած արձակէ քեզ ամէն կապուածութենէ կամ թակարդէ, որուն մէջ ինկած ես իբրեւ հետեւանք անցեալի պոռթկումներուն կամ վիրաւորական խօսքերուն: Անոնք կրնան ըլլալ խօսքեր, զորս դուն խօսած ես կամ ուրիշներու կործանարար խօսքերը, որոնք արձակուած էին իբրեւ հրթիռներ քու պարիսպներուդ դէմ: Պէտք է զգոյշ ըլլանք այն ինքնակործանարար խօսքերէն, զորս մենք մեզի դէմ կը խօսինք, ինչպէս՝ «Ոչ ոք մտահոգ է ինձմով: Վերջաւորութեան առանձին պիտի մնամ եւ դաւաճանուած»: Կամ՝ «Ես տգեղ եմ եւ գեր: Ինչո՞ւ ոեւէ մէկը պիտի սիրէ զիս»: Այդ խօսքերը կը վիրաւորեն մեզ եւ պատճառ կ'ըլլան, որ մեր պարիսպները քանդուին: Փոխարէնը Աստուծոյ Խօսքին մէջ փնտռէ՛ շինութիւն բերող նիւթերը. Աստուծոյ խոստումները զործածէ՛, որպէսզի յայտնաբերես եւ հոչակես քու մասիդ ճշմարտութիւնը, եւ թող անոնք պաշտպանութեան զօրաւոր պարիսպ մը ըլլան սիրտիդ շուրջը:

Սիրելի երկնաւոր Հայր, ցոյց տուր ինձի իմ մասիս եւ կեանքիս մասին ճշմարտութիւնը Խօսքիդ մէջ: Օգնէ՛ ինձի, որ ճշմարտութեան զօրաւոր պարիսպներ կառուցանեմ սիրտիս շուրջը, որպէսզի կարենամ ծաղկիլ անոնց պաշտպանութեան տակ:

Եւ Զօրաւոր Եմ,

ԵՐԲ ՍԻՐՏՍ ԿԸ ՊԱՇՏՊԱՆԵՄ ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔՈՎ:

ԱՆՈՐ ՇՈՒՐՁԸ ՔԱԼԵԼ

Չկայ ծածուկ բան, որ չյայտնուի եւ կամ գաղտնի բան՝ որ չգիտցուի եւ երեւան չգայ:

ՂՈՒԿԱՍԻ 8.17

*Չ*րբ Քոլորատո փոխադրուեցայ, գացի մեր նստասենեակին համար բազմոց մը գնելու: Գտայ մէկ հատ, որ շատ սիրեցի: Միտքէս ըսի. «Այս է կատարեալ բազմոցը»: Շատ գեղեցիկ տեսք ունէր՝ տեղադրուած կահկարասիի խանութին մէկ պատին դիմաց եւ շրջապատուած գեղեցիկ տան զարդարանքներով եւ արուեստի գործերով: Բայց յետոյ յիշեցի, որ տանս մէջ անոր ետեւը պատ մը պիտի չըլլար: Բազմոցը պէտք էր առանձինն ալ լաւ երեւէր՝ առանց որ իր ետեւը պատ մը ունենար իբրեւ յենարան: Երբ բազմոցը պատէն հեռացուցի նայելու համար, թէ ի՛նչպէս պիտի ըլլար տեսքը, անդրադարձայ, որ մեր տան համար յարմար պիտի չըլլար: Եթէ բազմոցին միայն առջեւի բաժինին նայած ըլլայի, պիտի գնէի զանիկա: Շատ պիտի սիրէի զանիկա... մինչեւ որ անոր ետեւի բաժինը տեսնէի:

Մեզմէ շատերը մեղքին միայն հաճելի թուացող կողմը կը տեսնեն: Կը սիրենք անոր տեսքը, մեզի տուած զգացումը, եւ մենք մեզի կ'ըսենք. «Կ'ուզեմ ունենալ ասիկա»: Միայն յետոյ է, որ կը ստուգենք անոր ետեւի բաժինը եւ անոր խայտառակութիւնը կ'ապրինք:

Բայց երբ կ'ըսենք կամ կ'ընենք մեղանչական բաներ գաղտնօրէն, Աստուած չէ, որ կը խայտառակէ մեզ, այլ՝ մենք մեզ կը խայտառակենք: Ատիկա կը նմանի անոր, որ սերմեր կը ցանենք գաղտնօրէն եւ ապա Աստուծմէ կը բարկանանք երբ բոյսը կը սկսի յայտնուիլ: Թերեւս կը հաւատանք, որ կարող ենք բաներ պահելու

այնքան լաւ կերպով, որ վերի համարը իրականութեան մէջ կիրարկելի չէ մեր պայմաններուն մէջ: Բայց եթէ Աստուծոյ Խօսքը կ'ըսէ, թէ ոչ մէկ բան ծածուկ պիտի մնայ, ատիկա կը նշանակէ, թէ բացառութիւններ պիտի չըլլան: Այդ ճշմարտութիւնը ի մտի ունենալով, կարելի է, որ ապրինք մեր վարմունքին նկատմամբ աւելի մեծ գիտակցութեամբ: Եփեսացիներուն մէջ Պօղոս Առաքեալ ատիկա կը կոչէ՝ ապրիլ շրջահայեացութեամբ: «Բայց ամէն բան, որ կշտամբուած է՝ կը յայտնաբերուի լոյսին միջոցով, որովհետեւ լոյսն է, որ կը յայտնաբերէ ամէն ինչ [...] Ուրեմն զգուշացէ՛ք, որ ընթանաք շրջահայեացութեամբ. ո՛չ թէ անխոհեմներու պէս, հապա՛ իմաստուններու պէս [...]» (Եփեսացիներուն 5.13,15-16):

Շրջահայեացութեամբ ապրիլ կը նշանակէ՝ ապրիլ այն անդրադարձումով, որ մեր կեանքը ծայրէ ծայր իրարու կապուած է, եւ ժամանակը պիտի գայ երբ մեր անցեալին պատկանող իրադարձութիւն մը պիտի հասնի մեզի մեր ապագային մէջ: Շրջահայեաց բառին անգլերէնը *սրրքամսփեքթ* է, որուն առաջին արմատը՝ *սրրքամ*, կը նշանակէ՝ «շուրջը դառնալ» կամ «շրջապատել»: Երկրորդ արմատը՝ *սփեք*, կը նշանակէ՝ «տեսնել կամ նայիլ բանի մը»։ Ծիշդ ինչպէս տուն շինող մը կը մատնանշէ տան մը իւրայատկութիւնները, որպէսզի գնողները նկատի առնեն իր հմտութիւնը նախքան որ գնեն տունը: Նոյնպէս ալ մեզի տրուած է պատուէրը մեր կեանքին ընթացքին կշռելու մեր որոշումները եւ արարքները ամէն անկիւնէ եւ տեսակէտէ: Պէտք է քալենք մեր որոշումներուն շուրջը՝ այցելելով ամէն սենեակ, վստահ ըլլալու համար, որ անիկա լաւ կ'երեւի ամէն անկիւնէ դիտուած: Ապա կրնանք իմաստութեամբ վարուիլ եւ տալ լաւ որոշումներ, որոնք մեզի գորութիւն կը բերեն:

*Տէր, յիշեցուր ինձի, որ քեզի համար ամէն բան
բացայայտ է: Չկայ բան մը, որ կրնամ պահել քեզմէ:
Օգնէ, որ շրջահայեաց ըլլամ իմ բոլոր արարքներուս մէջ՝
գործելով այնպիսի ձեւով, որ քեզի պատիւ կը բերէ:*

Եւ Զօրաւոր Եմ:

ՈՐՈՎՀԵՏԵՒ ԵՍ ՄԻԱՅՆ ԱՅՍՕՐՈՒԱՆ
ՀԱՄԱՐ ՉԵՄ ԱՊՐԻՐ:

ՅԵՌԱՆԱԼ ՉՂՋՈՒՄԻ ԵՐԿՐԵՆ

Դրան մուտքը չորս բորոպ մարդիկ կային: Անոնք իրարու ըսին. «Ինչո՞ւ հոս մնանք՝ մինչեւ որ մեռնինք»:

Դ.ԹԱԳԱԻՈՐՆԵՐՈՒՆ 7.3

Տրնայ գալ ժամանակ մը երբ մեզմէ իւրաքանչիւրը պէտք է որոշէ ըսել՝ «Այլեւս կը բաւէ»: Չղջումը կ'ուտէ մարդկային սիրտը ճիշդ ինչպէս բորոտութիւնը կ'ուտէ մարդուն միսը: Չօրաւոր աղջիկները գիտեն, թէ ե՛րբ է ժամանակը ոտքի ելլելու եւ հեռանալու: Ամբողջ կեանքդ զղջումով ապրելէ խուսափելու համար, ապրէ՛ կեանքդ նպատակաւոր կերպով՝ մէկ աչքդ ապագային վրայ դրած: Բոլորս պէտք ունինք քալելու՝ մեր հասնելիք տեղը ի մտի ունենալով: Առանց յստակ նպատակաուղղութեան, քալելը կը դառնայ թափառում մը: Իրապէս ուրիշ ձեւ չկայ քու ուզած տեղդ հասնելու: Թերեւս ներկայիս ինքզինքդ կը գտնես տեղ մը, ուր չէիր ուզեր հասնիլ: Թերեւս կ'ապրիս զղջումի տխուր կամ մռայլ վայրին մէջ: Գաղտնիք մը ըսեմ քեզի. զղջումը քեզ հող պիտի պահէ:

Ժամանակն է, որ «Եթէ միայն...» եզրը փոխարինես «Նոյնիսկ որ...» եզրով: Չղջումը պիտի շարունակէ արձագանգել մեր կեանքերուն մէջ մինչեւ որ զանիկա ուղղակիօրէն դիմագրաւենք եւ լուծենք անոր հարցը:

Կը հաւատամ, որ իւրաքանչիւր սերունդ ունի պատեհութիւնը եւ յանձնարարութիւնը ազատագրուելու իր սխալներէն՝ ճշմարտութիւնը խօսելով եւ զգուշացնելով յաջորդ սերունդին: Ատիկա երբեք չենք կրնար ընել եթէ ընկղմինք զղջումի մէջ:

Մինչ կ'ազատագրուինք մեր զղջումներէն, յաջորդ սերունդին կը փոխանցենք սորվելու աւանդ մը: Ատիկա կը նշանակէ, թէ յաջորդ սերունդը պատեհութիւնը պիտի ունենայ աւելի բարձր կանգնելու, աւելի յստակ տեսնելու եւ խուսափելու այն փոսերէն, որոնց մէջ մենք ինկանք: Հիմա ժամանակը չէ անհոգ կերպով մնալու մեր անցեալի ձախողութիւններու զղջումին մէջ կամ առանց յստակ ուղղութեան թափառելու: Ժամանակն է յառաջ երթալու:

Աստուած, կը մերժեմ մնալ զղջումներուս սովին մէջ: Ես ուրբի պիտի ելլեմ եւ յառաջ երթամ, որպէսզի ուրիշներ զօրութիւն գտնեն իմ ըրածներէս: Ես կը փոխարինեմ «Եթէ միայն...»ներս՝ «Նոյնիսկ որ...»ներով՝ ընդունելով ապագայիս համար քու տեսիլքդ փոխանակ անցեալի զղջումներս:

Եւ Զօրաւոր Եմ,

ՈՐՈՎՀԵՏԵՒ ԶՂՋՈՒՄԷՍ Կ'ԱԶԱՏԱԳՐՈՒԻՄ՝
ՆՊԱՏԱԿՈՎ ԱՊՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

ՍԻՐԵԼԻ ԿԻՆ ՄԸ

Քանի որ քու ամուսինդ Արարիչդ է, անոր անունը Ջօրքերու Տէր է, ու քու Փրկարարդ Իսրայէլի Սուրբն է. ան ամբողջ երկրի Աստուածը պիտի կոչուի: Արդարեւ Տէրը քեզ կանչեց լքուած եւ հոգիով վշտացած կ'ըսէ քու Աստուածդ:

ԵՍԱՅԻԻ 54.5-6

*Ս*յօրուան հատուածը յատուկ խոստում մը ունի կիներուն համար: Աստուած կրնար ըսել՝ «Քանի որ քու հայրդ Արարիչդ է»: Բայց այդպէս չըսաւ: Ան Ինքզինք ներկայացուց իբրեւ սիրող ամուսին մը, որ կը վերականգնէ կամակոր կին մը: Ան կը նկարագրէ իր խոստումին ստուգութիւնը. «Թէեւ լեռները հեռանան եւ բլուրները երերան, իմ կարեկցութիւնս քեզմէ պիտի չհեռանայ, ու խաղաղութեանս ուխտը պիտի չերերայ» (հմր 10): Որքան ալ սաստիկ ըլլան ցնցումները կեանքիդ մէջ, քեզի հանդէպ Աստուծոյ սէրը երբեք պիտի չերերայ: Թող այդ նիւթը միանգամ ընդմիշտ լուծուի միտքիդ մէջ:

Այս աստուածաշնչական հատուածը չունի բացառութիւններ: Անոր մէջ ընդգրկուած են կիներ, որոնք ամուրի են, ամուսնալուծուած, ամուլ կամ այրիացած: Անիկա կ'ընդգրկէ կիներ, որոնք կոտրուած կը զգան, նուազ արժէքաւոր, անատակ կամ շատ վատ վիճակի մէջ: Այդ խոստումը կը վերաբերի բոլոր տարիքային խումբերուն: Անիկա Աստուծոյ ձայնն է, որ կը խօսի իր սիրելիներուն եւ թանկագիններուն: Ան խաղաղութիւն կը խօսի իր կիներուն: Ուստի ստացի՛ր իր խաղաղութիւնը եւ արտօնէ՛, որ անիկա հանդարտեցնէ ամէն բարկութիւն, անձկութիւն կամ վախ սիրտիդ մէջ:

Կիներուն տրուած է իրայատուկ առիթ մը: Մեր էութեան հետ կապուած ամէն բան ստեղծուած է ծառայելու եւ սնուցանելու համար: Բայց յաճախ մենք կ'ապրինք մեր երկնաւոր Հայրը դժգոհ ձգելու վախով, եւ կը յոգնինք ամէն բան ճիշդ ձեւով ընելու մեր ջանքէն: Կը վախնանք, որ մեր ջանքերը բաւարար չափով լաւ պիտի չըլլան եւ ոչ մէկ գոհողութիւն, որ կ'ընենք պէտք եղած չափով կարելոր պիտի ըլլայ: Յիշէ՛, որ հարցը հիմնուած չէ քու ըրածիդ վրայ, այլ՝ թէ ի՛նչ կատարուած է քեզի համար: Ոչ մէկս կրնայ երբեւէ ապրիլ կեանք մը, որ բաւարար չափով հաճելի է Աստուծոյ՝ ամբողջութեամբ կատարելով անոր կանոնները: Մենք պէտք է ըլլանք Աստուծոյ սիրտին հետամուտ եղող կիներ, բայց մենք պիտի չուզենք ատիկա ընել եթէ կը վախնանք անոր կողմէ մերժուելէն եւ անոր բարկութենէն: Ատիկա կը ստեղծէ յուսախաբութեամբ լի մթնոլորտ մը: Աստուած կ'ուզէ արծակել իր դուստրերը այդ ծանր բեռէն:

Դուն աստուածային ձեւակերպումով եւ նպատակով ստեղծուած կին մըն ես: Ատիկա բան մըն է, զոր պէտք է տօնակատարենք, որովհետեւ դուն ահաւոր ու սքանչելի կերպով ստեղծուած ես եւ՝ անդրդուելիօրէն սիրուած:

Տէր Աստուած, հոգիիս մէջ դրոշմէ, թէ ի՛նչ տեսակի կին մը կ'ուզես, որ ըլլամ: Կ'ընդունիմ քու աներեր սէրդ եւ այն ամէնը, որ ըրած ես ինձի համար: Մօտեցո՛ւր զիս քեզի՝ ուր խաղաղութիւն պիտի վայելեմ կնոջական էութեանս մէջ:

Եւ Զօրաւոր Ե՛մ,

ՈՐՈՎՀԵՏԵՒ ԱՍՏՈՒԾՈՅ ԿՈՂՄԷ

ՁԵՒԱԿԵՐՊՈՒԱԾ ԵՄ:

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՔԱՂԱՔԱՑԻ ՄԸ ՉԵՍ

*Ես ձեզի Հայր պիտի ըլլամ եւ դուք իմ տղաքս ու
աղջիկներս պիտի ըլլաք,- կ'ըսէ Ամենակալ Տէրը:*

Բ.ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ 6.18

Մ որ ես Քրիստոնեայ եղայ եւ անդրադարձայ, որ Աստուած իրապէս կը սիրէ զիս, շատ մեծ էր այդ խորհուրդը ինձի համար, որ ըմբռնէի: Այդպիսի գեղեցիկ գթասրտութեան ի պատասխան՝ ինքզինքս ձգեցի իր հոգատարութեան: Իմ կին ըլլալս երբեք չտեսայ իբրեւ հարց մը: Ապա այցելեցի եկեղեցիներ եւ ներկայ եղայ խորհրդաժողովներու եւ լսեցի բաներ, որոնք ամպոտեցին ինձի հանդէպ Աստուծոյ սիրոյ իրականութիւնը: Ձեռով մը կը ստանայի այն տպաւորութիւնը, որ ես փրկութեան ծրագիրին մէջ մտած եմ՝ իբրեւ Թագաւորութեան երկրորդ դասակարգի քաղաքացի մը: Ըսեմ նաեւ, որ այնպէս չէր, որ ոեւէ մէկը այդպիսի բան մը ուղղակիօրէն ըսաւ ինձի, բայց կար այն հասկացողութիւնը, որ կիներուն պէտք չէր վստահիլ եւ անոնք հազիւ թէ փրկուած էին:

Այս նիւթով իմ առաջին շփոթեցուցիչ պատահարս ունեցայ երբ տակաւին համալսարանն էի: Քրիստոնէական խորհրդաժողովի մը ընթացքին պաշտամունքի շատ հիանալի պահէ մը ետք, հովիւր բացման խօսք մը ըսաւ եւ բեմ հրաւիրեց իր կինը: Դիտեցի ինչպէս շնորհալի եւ սիրալիր կին մը բարձրացաւ բեմ, որ շրջապատուած էր հազարաւոր ներկաներով: Ապա ան սկսաւ կատակներու եւ վարկաբեկիչ խօսքերու շարք մը, որոնց բոլորին նիւթը կամ պատճառը իր կինն էր: Կինը անոնցմէ քանի մը հատին պատասխանեց փոխադարձ կատակներով: Ներկաները

խնդացին, բայց ես անհանգիստ զգացի: Հովիւին պատճառած վերքերը քիչ մը ասելի խորունկ էին քան կնոջը: Կինը կարծես գիտէր իր սահմանները, իսկ հովիւը սահման չունէր:

«Գիտէ՞ք, որ մենք՝ տղամարդիկս ո՛ր պիտի ըլլայինք առանց կիներուն», հարցուց ան զուարթօրէն: «Տղամարդիկը տակաւին պարտէզին մէջ պիտի ըլլային», ըսաւ: Ամբողջ վայրը պայթեցաւ խնդուքով: Ես միա՛կն էի, որ շուարեցայ: Արդեօք դուրս ելած էի ամօթի աշխարհէ մը՝ ուրիշի մը մէջ ծաղրուելու համար: Երեսս կարմրեցաւ, եւ զգացի, որ արցունքներ պիտի իջնէին աչքերէս:

Յաջորդ օրը ծառայութեան ներկայ ըլլալու փոխարէն պատրուակներ ըրի եւ կամաւորաբար ծառայեցի մանուկներուն: Երբ մանուկները գիրկս կ'առնէի, կը պատկերացնէի, որ Աստուած այդպէս կը զգար ինծի հանդէպ: Ներքնապէս կու լայի եւ ան ինծի կը խօսէր քաղցրութեամբ: Շատ բան կար, որ չէի հասկնար, բայց անոր սէրը ինծի հանդէպ ստոյգ էր: Կիներ ինչո՞ւ կ'ընդունին իրենց սեռին դէմ ուղղուած վիրաւորական արտայայտութիւնները: Արդեօք որովհետեւ կը վախնա՞ն: Ոչ: Կը հաւատան, որ անոնք ճիշդ են որոշ մակարդակի վրայ եւ հետեւաբար իրենք արժանի են այդ վարմունքին: Բայց այդպէս չէ. մենք ատոր արժանի չենք բնաւ: Աստուած բարկացած չէ կիներէն, որովհետեւ կին են: Ան մեզ չստեղծեց իբրեւ երկրորդ դասակարգի քաղաքացիներ: Ան կը սիրէ մեզ իբրեւ Հայր մը, որ կը սիրէ իր զաւակը, եւ անոր սէրը մեզի հանդէպ ստոյգ է:

Տէր, շնորհակալ եմ զիս կին ընելուդ համար: Յոյց փոր ինծի ճշմարտութիւնը արժէքիս մասին ինչպէս նաեւ քու սիրոյդ ճշմարտութիւնը: Համարձակ դարձուր եւ զօրացո՛ւր դուստրերդ այսօր:

Եւ Զօրաւոր Եմ,

ՈՐՈՎՀԵՏԵՒ ԱՆՈՐ ԴՈՒՍՏՐՆ ԵՄ: ԵՍ
ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՉԵՄ. ԵՍ ԱՆՈՐ ԱՌԱՋԻՆ ՍԷՐՆ ԵՄ:

ԱՄԲՈՂՁ ՍԵՐԴ

Աստուած մարդ չէ՛ որ ստէ:

ԹԻԻԵՐՈՒ 23.19

Մեծ թիւով կիներ կ'ապրին այն սխալ գաղափարով, թէ՛ իրենց կոչումը սպասման մէջ է մինչեւ որ ամուսնանան եւ իրենց երազներու տղամարդուն հետ ապրին անվախճան սէրը: Մեր ընթացքին մէջ տեղ մը մոռցած ենք, թէ մենք ենք Աստուծոյ երազը: Պէտք չունինք սպասելու, որ սէրը գտնէ մեզ. անիկա արդէն գտած է մեզ: Նախ Յիսուս սիրեց մեզ: Մեր սիրուած ըլլալու կամ չըլլալու հարցը պէտք է լուծուի:

Այդ ճշմարտութեամբ հանդերձ, դարեր շարունակ Եւայի դուստրերը Ադամի որդիներուն աղաղակած են՝ «Ամբողջ սէրդ տուր ինծի: Պաշտպանէ՛ զիս: Ապահովութեան եւ անվտանգութեան ամէնէն խորունկ պէտքս գոհացո՛ւր»: Երբ Ադամի որդիները կը պատասխանեն, անոնք կ'ընեն հոչակումներ, զորս չեն կրնար պահել կամ կատարել՝ յոյս ունենալով, որ Եւայի դուստրերը պիտի գոհացնեն իրենց այն կարօտը կամ իղձը, զոր չեն կրնար բառերով արտայայտել: Երկուքին փնտռածն ալ ձախողութեան դատապարտուած է, որովհետեւ միայն Աստուած կրնայ գոհացնել այդ խորունկ փափաքները մեր մէջ:

Իր էութեան մէջ Վայրի վերնագիրով իր բացառիկ գիրքին մէջ, Ճոն Էլտրիճ կը խօսի այն յուսախաբութեան մասին, որ տղամարդիկ կ'ունենան երբ իրենց գոհացումը կը փնտռեն այսպէս կոչուած «դեղնորակ մազերով աղջիկ»ին մէջ: Լա՛ւ, կիներուն պարագան ի՞նչ է: Մեր յոյսն ալ նոյնքան սխալ տեղ դրուած չէ՞: Մենք ալ երկար ժամանակ Ադամէն գոհացում փնտռած ենք, հակառակ անոր որ ան ալ դատապարտուած էր մեզ յուսախաբ

ընելու: Ադամ Եւային համար ամուսինէ մը շատ աւելին էր: Որոշ ձեւերով ան տեսակ մը հայր մըն էր, որովհետեւ Եան միակ կինն էր, որ ծնած էր տղամարդէ մը: Եւ խաբուեցաւ օձէն եւ մեղք գործեց եւ ապա յուսախաբ եղաւ Ադամի ընտրութենէն, ճիշդ ինչպէս յուսախաբ եղած էր իր ընտրութենէն: Իրականութիւնը այն է, որ մենք կ'ուզենք տղամարդիկ, որոնք իրենց ոյժը կը ստանան մեզմէ աւելի մե՛ծ աղբիւրէ մը:

Ադամի որդիներուն յանցանքը չէ. անոնք չեն կրնար մեզի տալ այն օրհնութիւնը, զոր կը փնտռենք, եւ մենք վախցուցինք զիրենք երբ մեր անձերուն վրայ այդքան իշխանութիւն տուինք իրենց: Պէտք է սորվինք, որ այն օրհնութիւնները, որոնց իրապէս պէտք ունինք կու գան միայն Աստուծմէ: Պէտք է արտօնենք Աստուծոյ, որ մեզի տայ նոր անուն մը, որովհետեւ մենք այլեւ Եւայի դուստրեր չենք՝ որոնք կը պահուըտին շուքին, այլ՝ լոյսի եւ խոստումի դուստրեր. իր հարսը:

Տղամարդոց հետ մեր յարաբերութեան մէջ կրնանք գտնել սէր, ընկերութիւն, կեանքի ընկեր, բայց երբեք պիտի չգտնենք Փրկիչ մը: Յիսուս է միայն այն Տղամարդը, որ չի կրնար ստել, որովհետեւ Ինք Ճշմարտութիւնն է: Անոր Սուրբ Հոգին աւելի մօտիկ է մեզի քան մեր քաշած շունչը: Յիսուսով մենք փրկուած ենք, պաշտպանուած, սիրուած եւ առողջացած այնպիսի ձեւերով, որ միայն կարելի են անոր համար, որ կատարեալ ձեւով կը սիրէ:

Տէր, դուն ես Ճշմարտութիւնը, որ չի կրնար սրբել: Միայն դուն կրնաս զիս առողջացնել, ամբողջական ընել: Ներէ ինձի, որ քեզմէ զատ ուրիշի մը այդքան իշխանութիւն փրկի անձիս վրայ:

Եւ Զօրմեոյ Ե՛՛՛՛,

ԵՐԲ ԻՄ ԱՄԲՈՂՋԱՅՈՒՄՍ ԿԸ ԳՏՆԵՄ
ԱՍՏՈՒԾՈՅ ՄԷՋ ՓՈԽԱՆԱԿ ՄԱՐԴՈՅ:

ՔԱԼԵԼ ԼՈՅՍՒՆ ՄԷՋ

Իսկ եթե լոյսի մէջ քալենք, ինչպէս ինք լոյսի մէջ է, այն արեն ճշմարտապէս հաղորդակից կ'ըլլանք իրարու, եւ իր Որդւոյն Յիսուսի արիւնը կը սրբէ մեզ ամէն մեղքէ:

Ա.ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 1.7

Յ նչ կը նշանակէ «լոյսի մէջ քալել, ինչպէս ինք լոյսի մէջ է»: Պատասխանելու համար, պէտք է նայինք նախորդ համարներէն մէկուն՝ Ա.Յովհաննէսի 1.5-ին, որ կ'ըսէ. «Աստուած լոյս է, եւ բնաւ խաւար չկայ անոր մէջ»: Աստուած ոչ միայն լոյսի մէջ կը քալէ. ան լոյս է: Այդ լոյսը չի բխիր արտաքին ծածկոցէ մը, այլ՝ յառաջ կու գայ իր իսկ էութենէն: Անոր որեւէ մէկ մասին մէջ խաւար չկայ: Ատիկա մեզի համար դժուար է նոյնիսկ երեւակայել, ուր մնաց պատկերացնել: Ամէն բան, որ կը տեսնենք մթութիւն մը կամ շուք մը ունի այս կամ այն ձեւով: Ամէն լոյսի աղբիւր, որ կը ճանչնանք շուք կը պատճառէ: Յովհաննէս առաքեալ չէր խօսեր լոյսի աղբիւրի մը մասին, որ կը ծագի կամ կը փայլի մեզմէ դուրս կամ մեր շուրջը, այլ՝ որ յառաջ կու գայ մեզմէ:

Յովհաննէս չէր խօսեր բնական, ֆիզիքական լոյսի մասին, այլ՝ մեր հոգիին լոյսին մասին (հակառակ անոր որ երկինքի մէջ, ինչպէս Մովսէսի պարագային եղաւ, անիկա իրապէս ֆիզիքական կերպով երեւելի կրնայ ըլլալ): Այս ներկայի խաւար եւ շուքեր ունեցող աշխարհին մէջ լոյսի մէջ կը քալենք երբ կ'ապրինք մաքուր սիրտով: Կը վերցնենք խաւարի բաժինները մեր կեանքէն՝ արտօնելով, որ Յիսուսի արիւնը մաքրէ մեզ: Ատիկա կը վերականգնէ եւ կը պահէ մեր ընկերութիւնը ուրիշ հաւատացեալներու եւ Աստուծոյ հետ:

Բայց «Եթե ըսենք՝ “Մեղք չունինք”, մենք մեզ կը խաբենք եւ մեր մէջ ճշմարտութիւն չկայ» (Ա.Յովհաննէսի 1.8):

Եթէ որեւէ ձեւի ինքնագիտակցութիւն ունինք, մեծամասնութիւնս բնաւ պիտի չըսէր, թէ մեղք չունի: Բայց ասիկա կրնայ ըսել առանց անդրադառնալու: Երբ կ'արդարացնենք, կը մեղադրենք կամ պատրուակներ կ'ընենք մեր վարմունքին համար, ձեւով մը ըսել կ'ուզենք, թէ անթերի ենք: Այդ համոզումը երեւան կ'ելլէ մեր խօսակցութիւններուն մէջ. «Կը ներէք: Գիտեմ, որ պէտք չէր այսինչ կամ այնինչ բանը ընէի... բայց (պատրուակ մը կու տանք)»: Մեծամասնութեանս համար այդ պատճառաբանութիւնները շատ ծանօթ են: Այդ ձեւի խօսակցութիւններ մենք ալ ունեցած ենք մեր մանկութենէն ի վեր: Բայց ասիկա ներողութիւն խնդրել չէ, այլ՝ մեղադրելու ձեւ մը: Մենք իրապէս զղջացած չենք ըլլար մինչեւ որ պատասխանատուութիւն չվերցնենք մեր ըրածներուն համար:

«Կը ներես, բայց դուն բարկացուցիր զիս»: Ասիկա մեղադրելու ձեւ մըն է, որ կ'ըսէ, թէ ուրիշ ընտրութիւն չունէինք: Ա.Յովհաննէսի 1.8-ը կ'ըսէ, թէ երբ կ'ըսենք, թէ մեղք չունինք, մենք մեզ խաբած կ'ըլլանք եւ «մեր մէջ ճշմարտութիւն չկայ»: Մէկ բան է ճշմարտութեան մասին գիտնալը եւ բաւական տարբեր բան մը՝ զանիկա ապրիլը:

Աստուած կ'ուզէ մաքուր ձեռքեր եւ մաքուր սիրտ մը: Ասոնք կ'իրագործուին խոնարհութեամբ, թափանցիկութեամբ եւ անկեղծութեամբ:

*Սիրելի Տէր, ցոյց տուր ինձի ինչպէս քալել լոյսի մէջ եւ չմեղադրել
ու պատրուակներ չընել խաւարի որեւէ մէկ գործի համար:*

Եւ Զօրմեայ Եւ,

ՈՐՈՎՀԵՏԵՒ ԼՈՅՍԻ ԱՂԲԻՒՐԸ ԻՆՔՆԻՆ ԶԻՍ
Կ'ԱՌԱՋՆՈՐԴԷ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՃԱՄԲՈՒՆ ՄԷՋ:

Զօրանքի՝

Յարարերու թիւերու

մէջ

ԵՐԲԵՔ ՄԵՐԺՈՒԱԾ

Արդարեւ իր բարկությունը մէկ վայրկեան կը տեսէ, իսկ իր բարեհաճութեան մէջ ենք մեր ամբողջ կեանքի ընթացքին:

ՍԱՂՄՈՍՆԵՐՈՒ 30.5

Տ՛նչ կ'ընես երբ կը գիտնաս, որ վիրաւորած կամ նեղացուցած ես մէկը: Ես դժուար ձեռով սորված եմ, որ եթէ ետ քաշուիմ, խուսափիմ այդ անձէն կամ պատրուակներ ընեմ, յարաբերութիւնը կը քանդուի: Միւս կողմէ եթէ սիրտս այդ անձին կողմը դարձնեմ, ձեռք երկարեմ, եւ ահա դժուար բաժինը՝ խոնարհաբար ներողութիւն խնդրեմ, այդ յարաբերութիւնը բժշկուելու առիթ կ'ունենայ: Ասիկա միշտ ճիշդ մօտեցումն է մեր յարաբերութիւններուն մէջ՝ Նոյնիսկ եթէ ատիկա չենք տեսներ ուրիշներու կողմէ: Կան ժամանակներ երբ մարդիկ պիտի ընտրեն չներել քեզի, բայց պէտք է հետեւեալը գիտնաս. Աստուած երբեք այդպէս պիտի չընէ: Անոր սէրն ու ներումը միշտ կը գերակշռեն: Նոյնիսկ երբ կ'ունենաս այն զգացումը, թէ ան իր երեսը դարձուցած է քեզմէ, ան երբեք պիտի չմերժէ քեզ:

Կան ժամանակներ երբ կը գիտնամ, որ Աստուած չհաւնեցաւ վարմունքս: Այն պահուն, որ անկեղծ կ'ըլլամ ինքզինքիս հետ, կը զղջամ եւ իր ներողամտութիւնը կը խնդրեմ, սիրտս կը լեցուի իր լոյսով եւ սիրով: Նոյնիսկ երբ գիտեմ, որ դատաստանի արժանի եմ, ան կը լոգցնէ զիս գութով: Ան անմիջապէս կը վստահեցնէ ինձի. «Դուն իմս ես: Ես կը սիրեմ քեզ: Գիտեմ, որ կ'ուզես փոխուի: Ես արդէն ներած եմ քեզ: Հիմա ժամանակն է մոռնալու»: Այս պահուն ան կ'ուզէ, որ ատիկա գիտնաս:

Դուն իր զաւակն ես: Ան կրնայ մերժել արարքներդ, խօսքերդ կամ վարմունքդ, բայց ան երբեք պիտի չմերժէ քեզ: Եթէ գիտես, որ

բան մը ըրեր ես, որուն պիտի չհաճի Հայրդ, դէպի իրե՛ն դարձիր փոխանակ իրմէ հեռանալու: Ետ քաշուիլը կամ պահուըտիլը կ'երկնցնէ գործընթացը եւ մեզ խաբելով ետ կը պահէ ապրելէն «իր բարեհաճութիւնը, որ կը տեսէ մեր ամբողջ կեանքի ընթացքին»: Բա՛ց սիրտդ եւ ստացիր թէ՛ անոր սէրը եւ թէ՛ այն դասը, զոր պէտք է սորվիս:

Հայր, գիտեմ, որ դուն զիս այնքան կը սիրես, որ չես կրնար ինձի ցոյց չտալ սխալս: Յոյց տո՛ւր քու Խօսքիդ եւ Հոգիիդ միջոցաւ կեանքի որեւէ մարզ, որ պէտք ունի մաքրուելու քու գութովդ: Ես կ'ընտրեմ վազել դէպի քեզ եւ ոչ քեզմէ հեռու:

Եւ Զօրաւոր եմ,

ՈՐՈՎՀԵՏԵԻ ԳԻՏԵՄ Ո՛ՒՐ
ԴԱՌՆԱՄ ԵՐԲ ՍԽԱԼԻՄ:

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ՝ ԲԱԽՈՒՄԻ ԱՏԵՆ

Որքան կրնաք՝ ամենուն հետ խաղաղ ապրեցէք:

ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ 12.18

Պրբեմն բախում մը լուծելը աւելի դիւրին է խօսքով քան գործով: Երբ բախումը Քրիստոնեաներու միջեւ է, առնուազն ունինք նոյն չափանիշները հարցեր լուծելու: Բայց երբեմն մարդիկ կը մերժեն հաշտուիլ: Այդ պարագային ի՞նչ կ'ընենք: Ես բաւարար չափով երկրի վրայ ապրած եմ, որ այդպիսի պարագաներու հանդիպած ըլլամ քանի մը անգամ: Առիթով մը ակամայ վիրաւորեցի բարեկամուի մը եւ զգացի, որ խզում մը եղաւ մեր յարաբերութեան մէջ: Սիրտս քննեցի եւ իր քովը գացի: Հարցուցի եթէ բան մը ըրած էի, որ վիրաւորած էր զինք: Ըսի նաեւ, որ գիտէի, որ երբեմն կրնայի վիրաւորել մէկը առանց գիտնալու եւ վստահեցուցի իրեն, որ չէի ուզեր, որ մեր միջեւ եղող պաղութիւնը այդպէս մնար: Ան ինծի ըսաւ, որ բան մը չէի ըրած, եւ սակայն նոյն հեռաւորութեան վրայ մնաց: Իրեն նուէր մը տարի եւ նօթ մը ձգեցի, ուր դարձեալ ներողութիւն կը խնդրէի: Պատասխան չստացայ: Անգամ մը եւս անձնապէս գացի: Ան ինծի վստահեցուց, թէ հարց մը չկար, բայց տակաւին հեռու մնաց ինձմէ: Վերջապէս դիմեցի երկուքիս բարեկամ եղող մէկու մը եւ հարցուցի եթէ գիտէր, թէ ի՞նչ ըրած էի, որ վիրաւորած էր այդ անձը: Բան մը չէր գիտեր: Ես լման պատմութիւնը պատմեցի իրեն, որպէսզի գաղափար մը ունենար: Վերջաւորութեան՝ ամբողջ եղածը լսելէ ետք, ինծի ըսաւ. «Լիսա, ներողութիւն խնդրեցի՞ր»:

«Այո», վստահեցուցի իրեն:

«Քայլ առի՞ր դէպի իրեն»:

«Այո, քանի մը անգամ», ըսի:

«Եթէ այդ բոլորը ըրեր ես եւ ան տակաւին չ'ընդունիր քեզ, պէտք է մոռնաս նիւթը»:

Անոր խօսքերը ազատ արձակեցին զիս: Անդրադարձայ, որ ես հնազանդած էի Հռոմայեցիներուն 12.18-ին, որ կ'ըսէ. «Որքան կրնաք՝ ամենուն հետ խաղաղ ապրեցէք»: Ես շատ յանցաւոր եւ կորսուած կը զգայի, քանի որ չէի ալ գիտեր, թէ ի՛նչ էր ըրած սխալս: Շատ հաւանաբար ան այլեւս հաճոյք չէր ստանար մեր բարեկամութենէն, կամ մեր կեանքի եղանակները փոխուած էին: Տեսած եմ ինչպէս բարեկամներ մտած են կեանքիս մէջ եւ ելած կեանքէս մինչ Աստուած գործ մը ըրած է իմ կամ իրենց կեանքին մէջ:

Մեր պատասխանատուութիւնը հաշտութեան համար աղօթելն է եւ հարցնել է Աստուծոյ, թէ ի՛նչ դեր պէտք է խաղանք այդ գործընթացին մէջ: Եթէ խոնարհաբար եւ սիրով լեցուած երթանք այն անձին քով, որուն հետ հաշտուիլ կ'ուզենք եւ տակաւին մերժուինք, երբեմն պատճառը կ'ըլլայ այն, որ ան տակաւին պատրաստ չէ ընդառաջելու: Ատիկա կրնայ ցաւցնել, բայց դուն ձախողած չես ըլլար եթէ կը հնազանդիս Աստուծոյ խօսքին:

*Սիրելի Աստուած, կը խնդրեմ, որ ինձի տրաս զօրութիւնը
հաշտարար ըլլալու իմ յարաբերութիւններուս մէջ եւ
իմաստութիւն՝ գիտնալու ե՞րբ ուրիշներու հակազդեցութիւնները
իմ հակակշիռէս դուրս են: Այնքան արեւն որ հարցը ինձմէ՛
կախեալ է, օգնէ՛ ինձի, որ խաղաղութիւն հաստատեմ:*

Եւ Զօրեւոր Եմ,

ՈՐՈՎՀԵՏԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՄԲ Կ'ԱՊՐԻՄ

ՈՒՐԻՇՆԵՐՈՒ ՀԵՏ ԵՒ ԱՍՏՈՒԾՈՅ:

ՅԱՐՈՒՄՆԵՐ ԵՒ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

Ո՛վ Աստուած, պահպանէ՛ զիս, որովհետքս քեզի ապաւինեցայ: Տիրոջ ըսի. «դո՛ւն ես իմ Տէրս, առանց քեզի բարիք մը չունիմ» [...] Տէրը շարունակ իմ առջեւ դրի. քանի իմ աջ կողմս է, պիտի չսասանիմ: Հերեւաբար սիրտս ուրախացաւ ու փառքս խայտաց, մարմինս ալ ապահովութեամբ պիտի հանգչի:

ՍԱՂՄՈՍՆԵՐՈՒ 16.1-2,8-9

Յարումներդ կ'ուղղեն որոշումներդ: Յարումներդ վերջաւորութեան ազդեցութիւն պիտի ունենան կեանքիդ բոլոր մարզերուն վրայ: Մեզմէ անոնց համար, որոնք կ'ուզեն զԱստուած իրենց յարումներուն կեդրոնը դարձնել, հարցումը հետեւեալն է. «Ի՞նչպէս կրնամ փափաքիլ Աստուած մը, զոր չեմ տեսներ»:

Եթէ կ'ուզես գիտնալ ի՞նչպէս ընել բան մը, կը խօսիս մէկու մը հետ, որ արդէն իսկ սորված է ատիկա լաւ ձեւով ընել: Դաւիթ Թագաւոր գիտէր ի՞նչպէս փնտռել զԱստուած եւ միշտ բուն փափաք ունենալ անոր հանդէպ: Ան հետամուտ եղաւ Աստուծոյ այնպիսի ձեւով մը, որ իրմէ առաջ ոչ մէկը ըրած էր: Դաւիթ բնաւ չկասկածեցաւ Աստուծոյ սէրէն կամ հաւատարմութենէն եւ իր կեանքը ապրեցաւ շարունակ ընդառաջելով անոր եւ շնորհակալ ըլլալով:

Այսօրուայ հատուածին մէջ Դաւիթ Աստուծոյ առջեւ կեցած՝ իր սիրտին հռչակումները կ'ընէ Աստուծոյ: Մեր սիրտը կ'երեւի մեր խօսած խօսքերուն մէջ, ըլլայ ատիկա աղօթքի մէջ, բախումի կամ պարզ խօսակցութեան: Ատոր հակառակն ալ ճիշդ է. սիրտն ալ կը փոխակերպուի մեր խօսած խօսքերով: Վերը նշուած Սաղմոսին

մէջ Դաւիթ երեւան կը հանէ կարգ մը հզօր ճշմարտութիւններ, զորս պէտք է իւրացնենք.

1. Աստուած քու ապաւէ'նդ ըրէ... նոյնիսկ թագաւորներ չեն կրնար իրենք զիրենք պաշտպանել:
2. Անձնականի' առ... զինք քու Տէ'րդ կոչէ:
3. Ըսէ' իրեն, որ չկայ բան մը, որ կը փափաքիս իրմէ աւելի:
4. Շարունակ անո'ր նայէ:
5. Իրեն'ն տուր գերակայութիւնը եւ պատուէ' զինք կեանքովդ:
6. Հետեւէ' իրեն քու բոլոր ըրածներդ մէջ:
7. Իր կո'ղմը կեցիր, քանի որ ինքն է ղեկավարը:
8. Հանգստացի'ր եւ ցնծա', քանի որ այլեւս դուն չես ղեկավարը:
9. Հանգչի'ր իր մէջ՝ այս հզօր ճշմարտութիւններուն շնորհիւ:

Մինչ մենք սիրոյ եւ ուխտի հոչակումներ կ'ընենք Աստուծոյ առջեւ, մեր միջեւ կապերը կը զօրանան: Մենք մեր կեանքին մէջ ամէն յարաբերութիւն կը սկսինք եւ կարողութիւնը կ'ունենանք զանիկա ընդարձակելու մեր խօսքերով եւ անոնց համապատասխան մեր արարքներով: Խօսքերը կրնան բժշկել եւ մաքրել մեր կեանքի նուիրական տարածքները ճիշդ ինչպէս կրնան վիրաւորել մեր ամէնէն խորին էութիւնը:

Աստուծմով մարզելու համար սիրտդ, ընտրէ' բառերդ այնպէս ինչպէս կ'ընտրես բարեկամներդ... իմաստութեամբ: Անոնք կրնան թիւով քիչ բայց թանկագին ըլլալ: Փնտռէ' զինք բերնիդ բառերով, եւ Դաւիթի նման դուն ալ պիտի տեսնես, որ իրեն հանդէպ փափաքդ կ'աճի:

Սիրելի Տէր, կ'ուզեմ ճանչնալ քեզ, փնտրել քեզ այնքան բուն փափաքով եւ մտադրուած ձեւով, որ պիտի փնտրէի ամէնէն շար փայփայուած մարդկային յարաբերութիւնը: Մինչ կը բանամ բերանս աղօթքով, թող յարումս քեզի հանդէպ աճի:

Եւ Զօրմար Ե՛՛՛,

ՈՐՈՎՀԵՏԵՒ ԽՕՍՔԵՐՍ ՅԱԳԵՅԱԾ ԵՆ
ԱՄԵՆԱԿԱՐՈՂ ԱՍՏՈՒԾՈՅ ՍԻՐՈՎ:

ԱՊԱՅՈՎ ԵՒ ԱՆՎՏԱՆԳ

Տէրը տնանկին ալ պատրասարան պիտի ըլլայ,
պատրասարան՝ տագնապի ժամանակները:

ՍԱՂՄՈՍՆԵՐՈՒ 9.9

Մեռային եւ ֆիզիքական բռնաբարումը համաճարակի մակարդակի տարածում ունին: Իմ Հայրս ի՞նչպէս կ'ուզէ, որ ինձի հետ վարուին:

Ատիկա շատ կարեւոր հարցում մըն է մեզի հետ մտերմութեան մակարդակի մէջ եղող մարդոց հետ մեր յարաբերութիւններուն վերաբերեալ: Այդ մարդիկը կրնան ըլլալ մեր բժիշկը, ուսուցիչը եւ մինչեւ մեր ընտանիքը եւ բարեկամները: Ան կրնայ ըլլալ ընկերոջ մը (պոլիֆրենտի մը) չափ մօտիկ մէկը կամ ամուսինի մը չափ մտերմիկ մէկը: Բայց հաճիս մտիկ ըրէ ինձի. եթէ դուն որեւէ ձեռով բռնաբարումի կամ վարկաբեկումի կ'ենթարկուիս, սիրոյ արարք մը կամ առողջ բան մը չ'ըլլար լուռ մնալը: Մի՛ մնար յարաբերութեան մէջ անոնց հետ, որոնք կը բռնաբարեն քեզ կամ սխալ վարմունք կ'ունենան քեզի հանդէպ: Ճիշդ ինչպէս առողջ, բարեպաշտ հայրերը կը պաշտպանեն իրենց դուստրերը, քու ապահովութիւնդ շատ կարեւոր է երկնաւոր Հօրդ համար: Քու երկնաւոր Հայրդ երբեք չ'ուզեր, որ մէկը պղծուի կամ բռնաբարուի: Ան կ'ուզէ, որ դուն պաշտպանուած եւ փայփայուած ըլլաս: Մի՛ վախնար ուրիշ մարդոցմէ կամ նոյնիսկ քու սխալ ընտրութիւններէդ: Ան նեցուկ պիտի ըլլայ քեզի մինչ դուն կեցուածքդ կ'առնես: Երբեք չ'մտածես, որ ան քեզի պիտի ըսէ. «դուն ուզեցիր ատիկա քու հոն ըլլալովդ» կամ «դուն քու գլխուդ բերի որ այս խնդիրը»: Ան երբեք այդպիսի բաներ պիտի չ'ըսէ քեզի: Ան պիտի ըսէ. «Դո՛ւրս ելիր, տո՛ւն գնա եւ ապահով եղիր»: Դուն ամէն իրաւունք ունիս քու ձայնդ բարձրացնելու՝ որեւէ տեսակի բռնաբարումի մասին լուր տալու համար պէտք եղած իշխանութիւններուն:

Ասիկա կիրարկելի է սիրային յարաբերութիւններու, բարեկամութիւններու եւ գործի կապակցութիւններու մէջ ինչպէս նաեւ ուել մէկուն պարագային, որուն հետ մօտիկ կապեր ունիս: Ղուկաս մեզի կը թելադրէ՝ «Աղօթեցէք անոնց համար՝ որոնք ձեզի նեղութիւն կը պատճառեն» (Ղուկասի 6.28): Պօղոս մեզի կ'ըսէ՝ «Որքան կրնաք՝ ամենուն հետ խաղաղ ապրեցէք» (Հռոմայեցիներուն 12.18): «Որքան կրնաք» եզրը, որ անգլերէն տարբերակին համաձայն «այն չափով որ ձեզմէ կախեալ է»ն է [Թարգմանիչ] կը նշանակէ, թէ որոշ չափով ալ դիմացինէն կախեալ է: Դուն թէ՛ իրաւունքը եւ թէ՛ կարողութիւնը ունիս կեցուածք առնելու եւ առողջ հեռաւորութիւն մը պահելու անոնցմէ, որոնք քեզի վնաս կ'ուզեն հասցնել: Եթէ կեանքիդ մէջ կայ մէկը, որ քեզ կառավարել կ'ուզէ եւ այնպէս կը զգաս, որ չես կրնար ուղղակի անոր դիմաց կենալ, ապա անձնապէս մի՛ հանդիպիր անոր հետ: Եւ վստահաբար երբեք պէտք չունիս հանդուրժելու սեռային կամ ֆիզիքական բռնաբարում որեւէ պայմանի տակ:

Տարածութիւն դնել քու եւ մէկու մը միջեւ, որ վնաս հասցուցած է քեզի ոչ միայն կը պաշտպանէ քեզ, այլեւ դիմացի անձին ալ կը հասկցնէ, թէ իր վարմունքը անընդունելի է եւ պէտք է, որ անոր համար լուծում մը գտնէ: Կրնաս ներել մէկու մը՝ առանց անոր տալու արտօնութիւն, որ ապագային քեզի հետ որեւէ յարաբերութիւն ունենայ կամ կեանքիդ մէջ որեւէ դեր: Անոր ներելը պիտի պաշտպանէ քու անձիդ առողջութիւնը... բան մը, զոր Աստուած մեծապէս կ'արժեւորէ: Դուն սիրելի դուստր մըն ես Աստուծոյ: Գիտցի՛ր, թէ ան ի՛նչպէս կ'ուզէ, որ մարդիկ վարուին հետդ:

Յիսուս, տո՛ւր ինձի քու զօրութիւնդ եւ իմաստութիւնդ, որպէսզի կարենամ լուծել կեանքիս մէջ որեւէ թունաւոր յարաբերութեան հարցը: Գիտեմ, որ իմ կողքիս պիտի կենաս եւ կը վստահիմ քեզի:

Եւ Զօրացի Եւ,

ԵՐԲ ՍԱՀՄԱՆ ԿԸ ԴՆԵՄ ՆԱԽԱՏԱԿԱՆ ԵՒ
ՎՆԱՍԱԿԱՐ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ:

ԻՄԱՍՏՈՒՆ՝ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Աւելի լաւ է յայտնի կշտամբանքը, քան ծածուկ սէրը: Բարեկամին տուած վէրքերը հաւատարիմ են, իսկ ոտխին համբոյրները՝ խաբէական:

ԱՌԱԿՆԵՐՈՒԻ 27.5-6

*Ք*արեկամութիւնը կրնայ հզօր ազդեցութիւն ունենալ մեր վրայ: Ճշմարիտ բարեկամները մեզի ճշմարտութիւնը կ'ըսեն՝ խօսելով խօսքեր, որոնք կրնան վիրաւորել մեր հպարտութիւնը, բայց վերջաւորութեան բժշկել մեզ: Վստահելի բարեկամները մեզի կ'ըսեն այն ինչ որ պէտք ունինք լսելու, փոխանակ անոր թէ ինչ կ'ուզենք լսել: Միւս կողմէ, մեզի կ'ուղղուի հետեւեալ զգուշացումը. «Չար ընկերը լաւ նկարագիրը կը խաթարէ» (Ա.Կորնթացիներուն 15.33): Իմաստուն բան է ինքզինքդ շրջապատելը մարդոցմով, որոնց նման կ'ուզես ըլլալ, փոխանակ մարդոցմով, որոնց նման չես ուզեր ըլլալ:

Ստորեւ կարգ մը կարծիքներ, թէ զօրաւոր կիները ի'նչպէս բարեկամ կ'ընտրեն.

Առաջին, վստահ եղիր, որ բարեկամներդ քու կողքիդ են եւ ոչ քեզի դէմ կամ հակառակ: Արդեօ՞ք անոնց հետ ունեցած կապակցութիւնդ գանգատներու շուրջ է: Անոնց հետ ըլլալէն ետք արդեօ՞ք տուն կը վերադառնաս յոգնած, սպառած կամ զայրացած: Զանա՛ գտնել բարեկամներ, որոնք ներդրում կ'ընեն քու աճմանդ մէջ, եւ դուն ալ այդպիսի՝ բարեկամ մը եղիր ուրիշին:

Երկրորդ, կ'ուզես բարեկամ մը, որ կը մղէ քեզ աճելու եւ կ'օգնէ, որ կեդրոնանաս՝ ըլլալու այն անձը, որ կ'ուզես ըլլալ: «Երկաթը երկաթով կը սրուի, ու մարդը իր բարեկամին երեսը կը գրգռէ», կ'ըսէ մեզի

Աստուծոյ Խօսքը Առականերու 27.17-ին մէջ: Պէտք է ունենաս եւ ըլլաս բարեկամ մը, որ ճշմարտութիւնը պիտի խօսի սիրով փոխանակ փաղաքշական եւ շոյող ըլլալու կամ ըսելու բաներ, զորս դիմացինը կ'ուզէ լսել: Անհամաձայնութիւնը կրնայ առողջ բան մը ըլլալ, եւ՝ «[Այդ տեսակի] Բարեկամին տուած վէրքերը հաւատարիմ են»:

Համբերատար եղիր: Վստահութիւնը եւ բարեկամութիւնը ժամանակ կ'առնեն: Մտերմութիւն չի նշանակեր չափէն աւելի բաժնեկցիլ եւ իրարու մասին շատ բան գիտնալ: Ես տեսած եմ բարեկամութիւններ, որոնք շատ արագ կը ծաղկին եւ շատ արագ ալ կը մարին: Ինչպէս ուրիշ որեւէ արժէքաւոր բան, բարեկամութիւնն ալ աշխատանք կը պահանջէ: Ես սորված եմ, որ մէկու մը իրական կամ կեղծ բարեկամ ըլլալը կը գիտնամ երբ միասին բախում մը կ'ունենանք եւ զանկալ լուծել կը փորձենք:

Ընկերային հաղորդամիջոցները ճիշդ գետինը չունին բարեկամութիւններ մշակելու. հոն միայն ծանօթութիւններ կ'ունենանք: Ուստի զգոյշ եղիր: Աղօթէ՛ եւ խնդրէ՛ Հօրմէդ, որ ճիշդ տեսակի բարեկամներ տայ քեզի կեանքիդ այս եղանակին համար: Եթէ մէկը շարունակ կը նուաստացնէ քեզ, կը դաւաճանէ քեզի կամ կը լքէ քեզ, դուն քեզի հարց տուր, թէ ինչո՞ւ բարեկամ ես հետը: Ստուգէ՛ շարժառիթներդ: Արդե՞օք դուն անառողջ յարաբերութիւններու կրկնուող շրջանակի մը մէջ բռնուած ես: Աղօթէ՛, որ Աստուած օգնէ քեզի, որ զանազանես Աստուծոյ կամքը Սուրբ Հոգիին միջոցաւ:

Մենք կրնանք ազնիւ, բարեկամային եւ լաւ ըլլալ ամէն տեսակի մարդոց հետ: Բայց այնպէս ըրէ, որ քեզի մօտիկ եղողներուն հետ միշտ ճշմարտութիւնը խօսիք սիրով:

Աստուած, գիտեմ, որ ինձի համար քու կամքդ է, որ ընկերութիւն մշակեմ եւ աճիմ բարեկամութիւններու մէջ եւ անոնց միջոցաւ: Օգնէ՛ ինձի, որ իմաստութեամբ ընտրեմ այն մարդիկը, որոնց հետ ժամանակ պիտի անցընեմ:

Եւ Զօրմուք Եւ,

ԵՐԲ ԲԱՐԵԿԱՄ Կ'ԸԼԼԱՄ ՄԱՐԴՈՅ ՀԵՏ,
ՈՐՈՆՔ ԻՆՏԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ Կ'ԱԾԻՆ:

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԱԾԸ

Ո՛վ որ առաջինը ըլլայ իր դատը ներկայացնելու՝ իրատունք ունեցող կը թուի. բայց երբ իր սոխը գայ՝ զայն կը քննէ:

ԱՌԱԿՆԵՐՈՒ 18.17

Ս մեն անգամ, որ մէկէ աւելի մարդ ըլլայ սենեակի մը, խօսակցութեան մը կամ ընկերային հաղորդամիջոցներէն մէկուն մէջ, բախումի հաւանականութիւն կ'ըլլայ: Շատ յաճախ վէճին երկու կողմն ալ կ'ըլլան մարդիկ, որոնք յամառօրէն կը մերժեն իրենց միտքը փոխել եւ կը մերժեն մտիկ ընել, քանի որ կը հաւատան, որ իրե՛նք ճիշդ են:

Երբ Իսրայէլի որդիները Եգիպտոսի գերութեան տակ էին, կը տեսնէին, թէ ի՛նչպէս բախումները կը լուծուէին վայրագութեամբ եւ ահարկութեամբ (վախ բանեցնելով): Իրենց ազատութեան եղանակին անոնք պէտք ունէին բախումի լուծման առողջ ձեւի մը:

Եգիպտոսի երկրին մէջ իրենց ապրած գերութեան կեանքը փոխարինած էին Աստուծոյ ներկայութեան ամպին եւ պաշտպանութեան տակ եղող կեանքով մը: Ատիկա կը նշանակէր քարէ կուռքերու եւ կոյր պատկերներու իշխանութենէն ելլելով՝ մտնել իշխանութեանը տակ կենդանի Աստուծոյ մը, որ սուրբ է եւ արդար, սիրող է եւ ահարկու: Սիրոյ եւ կրակի այդ Աստուածը ոչ մէկ ձեւով կը նմանէր Եգիպտոսի աստուածներուն, որոնց կը հաճեցնէին նուէրներով կամ զոհերով: Իսրայէլի Սուրբին պէտք էր, որ ծառայէին հոգիով եւ ճշմարտութեամբ: Եւ անոր իշխանութեան ինքնին պատճառը արդարութիւնն էր. «Բայց Տէրը իր գահին վրայ

նստած է յաւիտեան. ան իր գահը հաստատած է արդարութեան համար» (Սաղմոսներու 9.7):

Երբ մեզի հետ անարդար կերպով վարուած կ'ըլլան, կրնանք վստահիլ, որ վերջաւորութեան արդարութիւնը պիտի գործադրուի: Մեզմէ իւրաքանչիւրիս խորերը հիւսուած կայ արդարութեան ձգտում մը, բայց եթէ մենք մեր անձերուն հետ անկեղծ պիտի ըլլանք, պէտք է ընդունինք, որ պատահած է, որ անարդար գտնուինք ուրիշներու հանդէպ: Շա՛տ մարդոց եւ պայմաններու վերաբերեալ ես վստահ էի, որ ճիշդ էի մինչեւ որ լսեցի պատմութեան միւս կողմը: Ճիշդ ասոր համար է, որ Պօղոս հետեւեալ խրատը կու տայ մեզի Ա.Կորնթացիներուն 4.5-ին մէջ, ըսելով. «Ուստի դուք ալ ռեւէ մէկը մի՛ դատէք ժամանակէն առաջ, մինչեւ գայ Տէրը, որ մարդոց մութ գաղտնիքները լոյսին պիտի բերէ եւ երեւան հանէ միտքերուն մէջ ծածկուած խորհուրդները: Ահա այն ատեն իւրաքանչիւրը Աստուծմէ պիտի ստանայ արժանի գովասանքը»:

Մենք կրնանք իր իմաստութիւնը փնտռել բախումներու մէջ եւ հանգիստ ըլլալ՝ գիտնալով, որ վերջաւորութեան ինք պիտի դատէ եւ փրկէ: Իր ղեկավարութեամբ քալելով, կրնանք պատասխանել արդարութեամբ եւ գութով առանց պատասխանատուութիւնը ունենալու պատիժ սահմանելու, վրէժ լուծելու կամ հաւանութիւն պարտադրելու: Կրնանք աղօթել Աստուծոյ եւ տեսնել անոր գործելը եւ խրատ տալը: Վերջ ի վերջոյ ան Մխիթարիչ (Խրատատու) մըն է, որ միշտ մեզի հետ է:

*Տէր, շնորհակալ եմ, որ ճնշումը վրայէս վերցուցած
ես: Բախումներու ժամանակ կրնամ վստահիլ
քեզի եւ սպասել քու ղեկավարութեանդ:*

Եւ Զօրաւոր եմ,

ԵՐԲ ԲԱԽՈՒՄԻ ԱՏԵՆ ԿԸ ՎՍՏԱՀԻՄ
ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԾՈՅՆ:

ԲԱՄԲԱՍԱՆՔԷ ՉՈՒՐԿ

Պակասամիտ եղողը իր ընկերը կ'արհամարհէ, բայց հանճարեղ մարդը կը լռէ: Բանասարկութեան գացողը գաղտնիքը կը յայտնէ, իսկ հաւատարիմ հոգի ունեցողը բանը կը ծածկէ:

ԱՌԱՎՆԵՐՈՒ 11.12-13

Քոլորս ալ այսպիսի պարագայէ մը անցած ենք. աղուոր խօսակցութիւն մը կ'ունենաք երբ խումբին մէջէն մէկը կը սկսի բամբասել: Շուրջը կը նայիս՝ յուսալով, որ մէկը կը դադրեցնէ բամբասանքի նիւթը: Բայց որքան երկար մտիկ ընես, այդքան անհանգիստ կ'ըլլաս դիմագրաւելու զանիկա: Դուն քեզի կը համոզես, որ լսածներդ հարց պիտի չըլլան քեզի համար. վերջապէս դուն հասուն եւ իմաստուն ես... Պիտի կարենաս աննախապաշար մնալ: Բայց միայն յետոյ է, որ պիտի անդրադառնաս, որ տեսողութիւնդ ամպոտած է: Յաջորդ անգամ, որ տեսնես այն անձը, որուն մասին էր բամբասանքը, տարօրինակ պիտի զգաս: Կամ յաջորդ անգամ, որ պարզապէս իր անունը լսես, զինք դատելու ճնշումը պիտի զգաս. ոչ միայն անոր արարքները, այլեւ շարժառիթները: Բամբասանքի մասնակցելէ խուսափիլը դիւրին չէ, բայց նոյնիսկ բամբասանքի մտիկ ընելը կ'արատաւորէ մեզ (տե՛ս Առակներու 17.4): Ասիկա ընկերային հաղորդամիջոցներու վրայ իրական առօրեայ մթնոլորտ մըն է, որմէ պէտք է խուսափինք: Լաւ կ'ըլլայ, որ նախ հասկնանք, թէ բամբասանքը ի՛նչ կ'ընէ՝ եթէ կ'ուզենք խուսափիլ անոր մասնակցելէ: Միոյրմ-Ուէպսթըր Բառարանը բամբասող անձը կը նկարագրէ իբրեւ՝ «անձ մը, որ սովորաբար անձնական կամ ցնցիչ իրականութիւններ կը բացայայտէ ուրիշներու մասին»: Բամբասող անձը սովորութիւն ըրած կ'ըլլայ անձնական կամ գաղտնի տեղեկութիւններ բաժնեկցելու մարդոց հետ, որոնք անմիջական կերպով առնչուած

չեն կացութեան: Ամէն մարդ տուեալ առիթներով բամբասանք ըրած է: Բայց բամբասող անձը առիկա կ'ընէ առանց նոյնիսկ մտածելու: Փորձառարար գիտեմ, որ անոնց շարժառիթը կրնայ ըլլալ այնքան անմեղ որքան ճանչցուած եւ կարեւոր զգալու մղումը կամ այնքան խաւար որքան մէկու մը անունը արատաւորելու փափաքը:

Բամբասանքը կը թունաւորէ յարաբերութիւնները եւ կ'աղաւաղէ ճշմարտութիւնը: Բամբասանքը միշտ վստահութեան դաւաճանութիւն է: Գաղտնիք մը, արկած մը, բախում մը, որ կարելի պիտի ըլլար ծածկել՝ կը բացայայտուի ուրիշ մէկու մը շահին համար: Անձ մը կը ծախուի, որպէսզի ուրիշ մը ապահովութիւն, դիրք կամ ազդեցութիւն շահի: Մարդիկ կը բամբասեն՝ հանգամանք շահելու, ուշադրութիւն գրաւելու, զուարճացնելու կամ իրենք իրենց աւելի լաւ զգացնելու համար: Ուրիշներ կը բամբասեն՝ մէկը պատժելու կամ անոր դաս մը տալու համար՝ զայն իրենց խօսքերով դատելով:

Առիկա մեր տեղը չէ: Սուրբ Հոգին կը կակուղցնէ մեր սիրտերը, որպէսզի եթէ մէկու մը մասին խօսինք, ներքին զգուշաւորութեամբ մը ընենք առիկա: Բամբասանքի դէմ պաշտպանուիլը շատ կարեւոր է սիրտդ պաշտպանելու համար: Մինչ կ'որոշես ետ քաշուիլ այդ ձեւի խօսակցութիւններէն, Հոգիին վրայ՝ յենուիր իմաստութեան համար, որպէսզի գիտնաս ի՞նչպէս վարուիլ այդպիսի կացութիւններու մէջ: Երբեմն լաւագոյն բանը ոտքի ելլել եւ հեռանալն է: Պիտի չուզէիր, որ բերանդ քեզ տանէր այդ խաւար ճամբան ի վար: Մի՛ արտօներ, որ ոեւէ մէկը վատ ձեւով խօսի քու մօտիկներուդ մասին: Փոխարէնը, աղօթէ՛, սիրէ՛ եւ անհրաժեշտութեան պարագային նաեւ դիմադրէ՛:

Տէր, հսկի՛ց մը դիր բերանիս եւ ականջներուս վրայ, որպէսզի չարապատրեմ սիրտս: Սորվեցո՛ւր ինձի ի՛նչպէս մեղմօրէն բայց հաստատօրէն դիրք առնեմ, սրբագրեմ վարմունքս եւ մտիկ ընեմ հոգիիս մէջ գոյութիւն ունեցող զգուշութիւններուն:

Եւ Զօրաւոր Եմ,

ԵՐԲ ԿԸ ԽՕՍԻՄ ԿԵԱՆՔԻ ԽՕՍՔԵՐ ՓՈԽԱՆԱԿ
ՈՐԵՒԷ ՏԵՍԱԿԻ ԲԱՄԲԱՍԱՆՔ ԸՆԵԼՈՒ:

ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԱՊՐԻԼ

Ներդաշնակութեամբ ապրեցէք իրարու հետ: Հպարտ մի՛ ըլլաք, այլ՝ պատրաստ եղէք ցած դիրքի վրայ եղող մարդոց հետ ալ յարաբերելու: Ինքնահաւան մի՛ ըլլաք: Մէկու մը ըրած չարիքին չարիքով մի՛ պատասխանէք: Զգոյշ եղէք, որ ընէք այն ինչ որ ճիշդ է բոլորին աչքին:

ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ 12.16-17

*Տ*րարու հետ ներդաշնակութեամբ կամ խաղաղութեամբ ապրիլ կը նշանակէ՝ ապրիլ այնպիսի ծելով մը, որ յարմար, համահունչ եւ բարեկամական է Քրիստոսի Մարմինին մէջ ուրիշներու հետ: Համերաշխութեամբ ապրելու այս պատուէրը կը կիրարկուի եկեղեցւոյ պատերէն ներս ե՛ւ դուրս: Դիւրին է մէկ կողմ դնել ամէն իւրայատկութիւն, որ կը կարծենք, որ ունինք, որովհետեւ Քրիստոսով բոլորս ալ մէկ ենք: Երբ ատիկա հասկնանք, բարեկամութիւն պիտի մշակենք Աստուծոյ ծառայութեան մէջ եղող այնպիսի մարդոց հետ, որոնց հետ բարեկամութիւն մշակելը անհաւանական պիտի սեպէինք, անկախ անկէ, թէ անոնք ո՛ր են իրենց կեանքի եղանակներուն մէջ: Այսօրուան համարը կը զգուշացնէ մեզ, որ հպարտութիւնը եւ ինքնահաւանութիւնը պատճառ պիտի ըլլան, որ աններդաշնակ կերպով ապրինք ուրիշներու հետ: Պատճառներէն մէկը այն է, որ ինքնահաւանութիւնը մեզի մտածել կու տայ, թէ իրաւունք ունինք չարիքի դիմաց չարիք հատուցանելու, ինչ որ հակառակն է այն բանին, որ Աստուածաշունչը կը քաջալերէ, որ ընենք: Յիշէ՛, որ Քրիստոսով մեզի կը թելադրուի մեր վրան առնել

ծառայի բնոյթը: Ասիկա կը նշանակէ, թէ ճիշդը ընելով՝ կ'ապրինք իբրեւ ճիշդի օրինակներ:

Երբ գոռոզութիւնը եւ հպարտութիւնը մէկ կողմ կը դրուին, մեր միւս երեսը կը դարձնենք երբ ապտակ զարնէ՝ մէկը մեզի, մեր բաճկոնը կու տանք երբ մէկը մեր շապիկը ուզէ մեզմէ եւ մէկ մղոն աւելի կը քալենք մէկու մը հետ: Մեզի ուղղուած յորդորն է՝ ջանք ընենք ուրիշներու համար ճիշդը ընելու եւ խաղաղութեամբ ապրինք բոլորին հետ՝ ո՛րքանով որ ատիկա կը վերաբերի մեզի: Ատիկա կը նշանակէ՝ մանուկի նման վստահութիւն զարգացնենք մեր Հօրը հանդէպ: Միայն Ինք գիտէ բոլոր կողմերը. պատմութեան ամէն էջի ամէն մէկ տողը: Ան է հաւատարիմ եւ ճշմարիտ հեղինակը:

Մենք կ'ապրինք ժամանակի մը մէջ, ուր ճնշումը շատ բարձր է, բայց տակաւին մարդիկ կ'ընդառաջեն ազնուութեան: Մինչ կ'ապրիմ օրս, ուշադիր կ'ըլլամ, որ նկատեմ մարդիկը: Կը գովեմ զանոնք, կ'օգնեմ իրենց կամ պարզապէս կը բարեւեմ: Շատ շատեր իրենց կեանքի ընթացքին մէջ կը քալեն ականջակալներով եւ իրենց աչքերը շեղելով: Մարտահրաւէր կ'ուղղեմ ձեզի, որ ըլլաք զօրաւոր եւ ազնուութեան քայլեր առնէք: Եթէ ուրանանք, որ ցեղային լարուածութիւն եւ ֆինանսական հպարտութիւն ունինք, ոչ մէկ բան կ'ընենք զանոնք բժշկելու համար: Եկէք նախաձեռնող ըլլանք: Աղօթէ՛, որ նախապաշարումի որեւէ եւ ամէն մարդ, որ կրնայ ծածկուած ըլլալ սիրտիդ մէջ բացայայտուի: Եթէ գտնես որեւէ այդպիսի մարդ, ընդունէ՛ զանիկա եւ ապաշխարէ՛ անկէ: Մէկ կո՛ղմ դիր հպարտութեան ճամբով քեզի կուրուութիւն պատճառող որեւէ բան, որ կը քաջալերէ քեզ, որ արդարացնես յայտնաբերածդ կամ պատրուակներ ընես եւ վրադ առ խոնարհութեան վերարկուն:

Հայր, բացայայտէ հպարտութեան եւ նախապաշարումի ամէն մարդ կեանքիս մէջ, որպէսզի կարենամ խաղաղութեամբ եւ ներդաշնակութեամբ ապրիլ ուրիշներու հետ:

Եւ Զօրաւոր Եմ,

ԵՐԲ ՈՒՐԻՇՆԵՐՈՒ ՀԵՏ
ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԵԱՄԲ Կ'ԱՊՐԻՄ:

ԱՃԻԼ ԲԱՐԵՊԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԸ ՄԵՉ

*Դուք իմ բարեկամներս էք, եթէ գործադրէք
ինչ որ կը պատուիրեմ ձեզի:*

ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 15.14

*Մ*նոնք, որոնք Քրիստոսի բարեկամ են, իսկական բարեկամներ կ'ըլլան քեզի: Անոնք լաւ կը խօսին, որովհետեւ լաւ կ'ապրին: «Դուք իմ բարեկամներս էք, եթէ գործադրէք ինչ որ կը պատուիրեմ ձեզի» (Յովհաննէսի 15.14): Յիսուս շատ յստակ է հոս: Բարեկամները կը պահեն իր պատուէրները եւ կը քաջալերեն ուրիշները եւս, որ նոյնը ընեն: Անոնք պատուէրները չեն պահեր որպէսզի իրեն հանդէպ իրենց սէրը փաստեն, այլ՝ որովհետեւ կը սիրեն զինք:

Իսկական բարեկամները միշտ աւելի վեր պիտի բարձրացնեն քեզ եւ պիտի մղեն քեզ, որ ունենաս մեր Տիրոջ առջեւ հաճելի ընթացք մը: Անոնք պիտի ուզեն ժամանակ անցընել հետդ եւ պիտի հետաքրքրուին քու աճումովդ: Անոնք պիտի խնդան եւ լան հետդ: Կեանքի եղանակները կրնան բաժնել ձեզ իրարմէ, բայց քանի որ սիրտի բարեկամներ էք, երբ նորէն հանդիպիք, կարծես երբեք չէիք բաժնուած իրարմէ: Իսկական բարեկամները պիտի չվախնան քու աճումէդ, օրհնութիւններէդ կամ իրագործումներէդ, այլ՝ պիտի ուրախանան եւ տօնակատարեն զանոնք քեզի հետ կարծես իրենց սեփականը ըլլալին անոնք: Մենք միշտ պէտք ունինք խումբ մը կիներու, որ ըլլան մեր ետեւը, քովը եւ առջեւը: Այս սկզբունքները կը վերաբերին երիտասարդներուն ե՛ւ տարեցներուն:

«Եթէ մէկը իրեն յաղթէ, երկուքը կրնան անոր ընդդիմանալ.

երեքպատիկ դերձանը դիրաւ չի փրթիր» (Ժողովողի 4.12): Բարեկամները կը պատերազմին քեզի հետ եւ քեզի համար աղօթքով՝ բարեխօսելով եւ տալով քեզի զօրութիւն մը, զոր առանձինդ չես կրնար ունենալ: Հօր բան մը կը պատահի երբ բարեկամներ կը հաւաքուին իր անունով: Յիսուս ըսաւ. «Ուր որ երկու կամ երեք հոգի հաւաքուին իմ անունովս, ես հոն եմ՝ անոնց միջեւ» (Մատթէոսի 18.20): Ատիկա անհաւատալի օրհնութիւն մըն է այդ տեսակի բարեկամութեան համար, որ անհրաժեշտ է մեզի համար:

Բարեկամներ Աստուծոյ Խօսքը կը սերտեն միասնաբար եւ կը հիանան մէկը միւսին մէջ Սուրբ Հոգիին զօրութեամբ: Քաջալերուէ՛: Աստուած գեղեցիկ եւ խորունկ գործ մը կ'ընէ իր դուստրերուն մէջ հոս երկրի վրայ: Կ'ըլլան ժամանակներ երբ բարեկամներ անհամաձայնութիւններ կ'ունենան իրարու հետ, բայց ատիկա չի նշանակեր, որ անոնց կապը պէտք է խզուի: Պաշտպանեցէ՛ք եւ ծածկեցէ՛ք մէկդ միւսը, քանի որ մենք ստեղծուած ենք աճելու համայնքի մը մէջ: Աճման ընթացքին միշտ ալ պիտի ըլլան սխալներ եւ ձախորդութիւններ, բայց երբ նուիրուած ենք իրարու, լաւագոյնը կ'ակնկալենք փոխանակ յոռեգոյնը փնտռելու:

Եթէ կեանքիդ մէջ չունիս այդ ձեւի յարաբերութիւններ, մտադրութիւնը ունեցիր կերտելու զանոնք մինչ յառաջ կ'երթաս ընթացքիդ մէջ: Աղօթէ՛ եւ խնդրէ՛ Աստուծոյ առաջնորդութիւնը ինչպէս նաեւ նոր ձեւեր՝ բարեպաշտ կապեր հաստատելու: Սկիզբը կրնայ վախ պատճառել ատիկա, քանի որ ոմանք այդ մակարդակի նուիրում չեն ուզեր ունենալ: *Ռի'սք առ եւ ձեռքդ երկարէ՛* ուրիշին: Ի՛նչ ձեւի տակ ալ որ ըլլայ ատիկա՝ միասին աղօթել, Աստուածաշունչ սերտել կամ իրարու հետ ընկերութիւն ընել, այդ կիներուն հետ ժամանակ անցընելդ անհրաժեշտ է քեզի համար:

*Յիսուս, կ'ուզեմ իրական բարեկամ ըլլալ եւ իրական
բարեկամութիւններ ունենալ: Յոյց տո՛ւր ինձի ո՛ր եւ
ի՛նչպէս կերտել այդպիսի յարաբերութիւններ:*

Ըստ Զօրանք ԵՄ,

ԵՐԲ ԿԸ ԿԱՆԳՆԻՄ ՔՐԻՍՏՈՍՈՎ ԻՄ ՔՈՅՐԵՐՈՒԻՍ ՀԵՏ:



MessengerX


Ձեր «Էփիլեյձըն»-ը՝ ամենօրեայ աշակերտության համար

Բոլորովին անվճար

Պարզապես ներբեռնեցե՛ք ձեր շարժական սարքին վրայ և օգտագործեցե՛ք: Կամ օգտագործեցե՛ք «ուեպ» տարբերակը հետևեալ հասցեով.



[MessengerX.com](https://messengerx.com)



125+ լեզուներ, որոնց թիւը կ'աւելնայ



Դիտեցե՛ք և ներբեռնեցե՛ք բովանդակութիւնը աւելի քան 125 լեզուներով:



Բաժնեկցեցե՛ք աղբիւրներ ձեր բարեկամներուն հետ կամ սերտողութեան խումբ մը սկսե՛ք:



Մենք մշտապես նորութիւններ կ'աւելցնենք պարունակութեան:

Դիտեցէք: Կարդացէք: Լսեցէք:

Չետագօտեցէք բովանդակութեան ընդարձակ գրադարանը, որ կ'ընդգրկէ դասընթացքներ, ելեկտրոնային գիրքեր, օտեօ-գիրքեր, կարճ ֆիլմեր, եւ ակելին, զորս կրնաք դիտել, կարդալ եւ լսել:



Աճեցէք Ամենակարեւոր Մարզերուն Մեջ

Չետագօտեցէք այնպիսի սիւթեր, ինչպիսիք են՝ ընտանեկան փոխյարաբերութիւններ, առողջ յարաբերութիւններ, գտնել ձեր կեանքին նպատակը , պոռնկագրութենէ ազատագրութիւն, ինչպէս ձեր հաւատքը կառուցել, Աստուծոյ ծայնը լսել, գործարքի ղեկավարութիւն, եւ ակելին:

Ձեր Աճին Ճամբորդութիւնը


MessengerX-ին նպատակն է ձեզի օգնել, որ ձեր յաջորդ քայլը առնէք ձեր կեանքին մեջ: Ուստի մենք ծրագրած ենք աշակերտական ճամբորդութիւն մը, օգտագործելով հզօր միջոցներ, որպէսզի յարատեւելով ճամբորդութեան աւարտին հասնիք:



Աւելի շատ հնարաւորութիւններ, գորս պիտի սիրէք

- Պարզ եւ դիւրին բաժնեկցելու միջոցներ, որոնք ձեզի պիտի օգնեն, որ հոսաքը տարածէք եւ նոյնիսկ սերտողութեան խումբեր սկսիք:
- «Chromecast» եւ «AirPlay»՝ ձեր նախասիրած սմարթ հեռատեսիլներով դիտելու համար:
- Պահպանեցէք ձեր յառաջադիմութիւնը ձեր բոլոր սարքերուն վրայ: Պահպանեցէք ձեր նախասիրած սիւթերը ձեր գրադարանին մէջ՝ արագ մուտքի համար:
- Ներբեռնեցէք սիւթերը ձեր սարքին վրայ՝ անցանց դիտելու համար:
- Ուժեղ որոնում եւ գտում՝ գտնելու համար այն, ինչ որ կը փնտռէք:
- Ինքնաբերաբար անցնիլ օտիօ-գիրքի մը, Աստուածաշունչերու եւ նոյնիսկ պաշտամունքի երգերու յաջորդական գլուխներուն՝ ձեր լեզուով:

MessengerX - Նոյնքան դիրին, որքան՝ 1-2-3-ը



- 1 Ներբեռնեցե՛ք **MessengerX** «Էփիլիբեյշըն»-ը «App Store»-էն եւ «Google Play»-էն:
- 2 Մասնակցային հաշիւ ստեղծեցե՛ք եւ ձեր լեզուն ընտրեցե՛ք:
- 3 Փնտրեցե՛ք, կարդացե՛ք, դիտեցե՛ք, լսեցե՛ք, ներբեռնեցե՛ք եւ բաժնեկցեցե՛ք ձեր նախասիրած աղբիւրները:


Դարձե՛ք աշակերտ եւ աշակերտեցե՛ք

Իբրեւ **MessengerX**-ին մէկ մասը, դուք կ'օգնեք թարգմանուած աղբիւրները տրամադրելու աշխարհի շուրջ գտնուող բոլոր մարդոց:

Որովհետեւ ամէն մարդ արժանի է գիտնալու:



MessengerX.com



Զօրանքի`

Ըսկարաններու մէջ

ՀՍԿՈՂ ԵՒ ՉԳՈՅՇ

Ձգասյր եղէք, արթուն կեցէք. որովհետեւ ձեր ոտխըր՝ Չարախօսը՝ կը շրջի մոնչող առիծի պէս, փնտրելով թէ ո՛վ կլլէ:

Ա.ՊԵՏՐՈՍԻ 5.8

Մեր թշնամին որսի ելած է՝ յուսալով, որ բռնէ մեզ թմրած եւ անտեղեակ վիճակի մէջ: Ուրիշ անգլերէն թարգմանութիւն մը կը գործածէ *արթուն* եւ *աշալուրջ* բառերը: «Արթուն»ին հակառակը «գինով»ն է: Գինովները անգիտակից կ'ըլլան իրենց շուրջը պատահածներէն: Անոնց ըմբռնումը եւ տեսակէտը պղտորած կ'ըլլայ, ինչ որ կը դանդաղեցնէ անոնց հակազդելու կամ պատասխանելու ժամանակը եւ կը խեղաթիրէ անոնց բանականութիւնը: Աշալուրջ եւ արթուն ըլլալ կը նշանակէ՝ ըլլալ հսկող եւ զգոյշ, զգոն եւ ուշադիր:

Առաջին Պետրոսի այդ համարը Չարախօսը կը բաղդատէ մոնչող առիծի մը հետ, որ դիրին որս կը փնտռէ՝ լափելու համար: Ան բառացիօրէն չ'սպառեր մեզ, այլ՝ կը կլլէ մեզ ուրիշ, աւելի աննկատ ձեւերով: Հակառակ իրենց նուազ բացայայտ ըլլալուն, այդ ձեւերը նուազ վտանգաւոր չեն: Ան կը կլլէ մեր ուրախութիւնը, խաղաղութիւնը, հանգիստը, ոյժը ինչպէս նաեւ յարձակում կը գործէ մեր առողջութեան, յարաբերութիւններուն եւ մտածումներուն վրայ: Ան կը մոնչէ ամբաստանութիւններ՝ շփոթի աղմուկ մը ստեղծելու համար: Կը հաւատամ, որ Աստուած անօթի առիծի մը այդ սարսափելի պատկերը գործածեց՝ բացատրելու համար մեզ հետապնդելու մէջ Սատանային վճռականութիւնը եւ յարատեւութիւնը: Ան շատ շուտ կ'առնէ գայթակղութեան եւ դառնութեան հոտը ճիշդ ինչպէս առիծ մը կը գտնէ իր որսը:

Առիւծները կը գրաւուին արիւնի, եւ արիւնը կը հոսի մեր

վիրաւորուած տեղերէն: Պէտք չէ ձգենք, որ մեր վերքերը շարունակեն արիւնիլ՝ անտեսելով ցաւը եւ մակերեսային ձեւով ծածկելով զանոնք: Զգաստ եւ աչալուրջ ըլլալուն մէջ կայ մեր վերքերը մեր Հօրը բերելը՝ բժշկուելու համար: Ան պիտի կապէ զանոնք եւ բժշկէ մեզ՝ իր Սուրբ Հոգիին զօրութեամբ: Եկէք աչալուրջ ըլլանք նոյնիսկ պզտիկ եւ անվտանգ թուացող վերքերու նկատմամբ: Երբ կանուխէն կը նկատենք այդ վերքերը, կրնանք մեր տեսակէտը եւ բանականութիւնը առողջ պահել՝ գիշերուան պահակութեան համար:

Հայր, զիս իմաստորձն պահէ թշնամիին որսալու գործունէութեան նկատմամբ: Օգնէ՛ ինծի, որ ժրաջանօրէն վերքերս քեզի բերեմ, որպէսզի բժշկես զանոնք: Պաշտպանէ՛ զիս, բժշկէ՛ զիս եւ սորվեցո՛ւր ինծի, որ ըլլամ թէ՛ ինքնակառավարող եւ թէ՛ զգաստ մինչ կը շարունակեմ պատերազմիլ:

Եւ Զօրացո՛ւր Եմ,

ԵՐԲ ԱԶԱԼՈՒՐՁ ԵՄ, ԵՒ ԿԸ ՀԵՏԵՒԻՄ,
ՈՐ ԲԱՆ ՄԸ ԶԿՐԻՊԻ ԻՆՁՄԷ:

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ՝ ՍԵՌԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ

*Քու ու կնոջ միջեւ, քու զարմիդ եւ անոր զարմին
միջեւ թշնամութիւն պիտի դնեմ: Ան քու գլուխդ պիտի
ջախջախէ, իսկ դուն անոր կրունկը պիտի խայթես:*

ԾՆՈՒՆԴՆԵՐՈՒ 3.15

Ս մէն տեղ, որ կը նայինք, այնպէս կը թուի, թէ ճակատամարտ մը կայ տղամարդոց եւ կիներուն միջեւ: Տղամարդու ինքնութենէն մերկացած, զայրացած տղամարդիկ եւ վիրաւորուած, բարկացած կիներ զիրար կը մեղադրեն իրենց ցաւին համար, եւ իւրաքանչիւր կողմ կ'ուզէ, որ միւս կողմը շտկէ կացութիւնը: Բայց ո՛չ տղամարդիկը ոչ ալ կիները կրնան բժշկել այդ վիրաւորուած տեղերը... Միայն Աստուած կրնայ անգամ մը եւս վերականգնել մեզ մեր երազած պարտէզին մէջ:

Այն ժամանակէն ի վեր երբ օձը թիրախ ընտրեց Եւան պարտէզին մէջ, կնոջ եւ օձին միջեւ ճակատամարտը՝ որուն մասին մարգարէացաւ Աստուած, տակաւին կը շարունակուի (տե՛ս Ծնունդներու 3.15): Աստուծոյ դուստրե՛ր, Ադամի երկրաւոր որդիները չեն կրնար փրկել ձեզ այդ օձէն... Երկնաւոր Իշխա՛նը ատիկա կրնայ ընել: Օձին նպատակը միշտ ալ նոյնն է. Եւայի դուստրերը մերկացնել իրենց արժանապատուութենէն, ոյժէն եւ պատիւէն, եւ այդպէս ընելով զանոնք անզօր դարձնել: Եւ երբ կիները կը մերկացուին իրենց արժանապատուութենէն եւ կը նուաստացուին, տղամարդիկն ալ ամօթի մէջ կը մնան, քանի որ կինը տղամարդուն փառքն է (տե՛ս Ա.Կորնթացիներուն 11.7):

Կ'ուզեմ, որ քաջութիւնը ունենաս այդ պայքարը իր իսկական

էութեան մէջ տեսնելու. դուն կը մերկացուիս քու զօրութենէդ, արժանապատուութենէդ եւ հագուստէդ (ծածկոյթէդ)՝ օձի մը կողմէ... Պէտք է աստիկա տեսնես եւ գայրանաս: Որովհետեւ միայն այդ ատեն է, որ բաւարար չափով քաջ պիտի ըլլաս պատերազմելու քու իսկական թշնամիիդ դէմ եւ ամբողջական հաւատարմութիւն եւ նուիրում ցուցաբերելու հաւատարիմ եւ ճշմարիտ Թագաւորին հանդէպ: Այդ ատեն է, որ հանդերձներ պիտի գտնես՝ մերկութիւնդ շքեղութիւնով ծածկելու համար: Պիտի գաս այն անդրադարձումին, թէ տղամարդիկը չեն կամ մեր անուսինները չեն, որոնց դէմ կը պատերազմինք, այլ՝ կը պատերազմինք մեր հոգիի թշնամիին դէմ:

քու հոգիիդ խորերը կայ աղաղակ մը. դուն կը ցանկաս աւելի խորունկ սէր, մտերմութիւն եւ հաղորդութիւն քան ինչ որ տղամարդ մը կրնայ տալ քեզի: Դուն կ'աղաղակես երկնային Իշխանի մը սիրոյն համար: Եւ գաղտնիք մը տամ քեզի... ան ալ խենթի պէս քեզի կը փափաքի: Ա՛ն է, որ այդ փափաքի հունտը ցանած է քու սիրտիդ խորերը, եւ միայն Ինք կրնայ գոհացում տալ քու տենչանքներուդ:

Մենք շարունակ յուսախաբ պիտի ըլլանք գոհացում ստանալու մեր փնտռութիւն մէջ եթէ շարունակենք փնտռել սխալ տեղերու մէջ: Տղամարդիկը չեն քու հարցդ, բայց անոնք նաեւ չեն քու պատասխանդ... Մենք պէտք է մեր աչքերը բարձրացնենք դէպի երկինք, որովհետեւ մեր օգնութիւնը կու գայ Տիրոջմէն, որ երկինքն ու երկիրը ստեղծեց (տե՛ս Սաղմոսներու 121.1-2): Միայն այդ ատեն եւ հող է, որ կը գտնենք մեր ուրախութեան աղբիւրը եւ կը վերականգնենք մեր ոյժը եւ պատիւը:

*Հայր, երբ փորձութեան մէջ կ'ըլլամ սխալ թշնամիներու
դէմ պատերազմելու կամ սխալ տեղերու մէջ
գոհացում փնտռելու, յիշեցո՛ւր, որ քեզի նայիմ: Դուն
ես իմ Փրկիչս, իմ ուրախութեանս աղբիւրը...*

Եւ Զօրութեան Եւ,

ԵՐԲ ԿԸ ՆՊԱՍՏԵՄ ԱՍՏՈՒԾՈՅ
ՈՐԴԻՆԵՐՈՒՆ ԵՒ ԴՈՒՍՏՐԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ
ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ:

ԱՆՆԵՐՈՂԱՄՏՈՒԹԵԱՆ ԾԱԿԱՏԱՄԱՐՏԸ

*Թագաւոր մը կար, որ ուզեց իր ծառաներուն հաշիւները քննել: Եւ երբ հաշուեքննութեան սկսաւ, իրեն բերին պարտապան մը, որ միլիոնաւոր ոսկի պարտք ունէր: Եւ քանի վճարելու կարողութիւն չունէր, տէրը հրամայեց, որ զայն իր կնոջ եւ զաւակներուն հետ որպէս ստրուկ ծախեն, ինչպէս նաեւ ունեցածը վաճառեն եւ պարտքը վճարեն: Ծառան թագաւորին ոտքերուն ինկաւ եւ աղաչեց՝ ըսելով.
«Համբերէ եւ ժամանակ տուր ինձի, եւ ես բոլորը կը վճարեմ քեզի»:
Ծառային տէրը գթաց եւ պարտքը շնորհելով՝ դրկեց զինք:*

ՄԱՏԹԷՈՍԻ 18.23-27

*Շ*երողամտութիւնը բժշկութեան արարք մըն է: Անիկա կ'ազատագրէ մեզ դառնութենէն եւ կ'արձակէ մեզ յանցանքէն: Բայց ներողամտութիւնը նաեւ բանալի դեր ունի հոգեւոր պատերազմի մէջ: Քու իրական ճակատամարտդ անոր դէմ չէ, որ վիրաւորեց քեզ, այլ՝ քու հոգիիդ յաւիտենական թշնամիին դէմ է: Երբ կը ներենք, զայն կը մերկացնենք իր զէնքերէն, որովհետեւ աններողամտութեան մէջ ապրողները ենթակայ կ'ըլլան յարձակումի:

Այսօրուան հատուածը մեզի աւելի խորաթափանցութիւն կու տայ աններողամտութեան խաւար խորութիւններուն մասին: Ինքզինքդ դի՛ր ծառային տեղը: Պատկերացո՛ւր այն սարսափը, որ պիտի ապրէիր երբ թագաւորի մը առջեւ բերուէիր՝ լուծելու համար հարցը պարտքի մը, զոր չես կրնար վճարել: Բոլորովին անօգնական եւ անյոյս, կը խոնարհիս իր առջեւ եւ կ'աղաչես,

որ համբերի քեզի՝ ըսելով, որ ձեռով մը եւ ժամանակ մը ետք պիտի վճարես պարտքդ: Բայց փոխանակ քու առաջարկած պայմաններուդ համաձայն գտնուելու, թագաւորը կ'ողորմի քեզի: Գիտնալով, որ դուն երբեք պիտի չկարենաս պարտքդ վճարել, ան կը ջնջէ ամբողջ պարտքդ: Քու անհանդուրժելի բեռդ արձակուած է քեզմէ: Ապշած եւ զգացուած ես թագաւորին բարութեամբ:

Փոխանակ հետեւելու թագաւորին ողորմութեան օրինակին, կը յիշես, որ մարդիկ կան, որ պարտք ունին քեզի: Ուստի կը գտնես զանոնք եւ կը պահանջես, որ իրենց պարտքը վճարեն, հակառակ անոր, որ անոնք նոյնքան անյոյս են վճարելու իրենց պարտքը որքան դուն էիր (կարդա՛ Մատթէոսի 18.28-31): Առակին մէջի ծառան ճիշդ նոյնը կ'ընէ, եւ երբ թագաւորը կը տեղեկանայ այդ մասին, կը յայտարարէ. «Չա՛ր ծառայ, ամբողջ պարտքերդ շնորհեցի քեզի, որովհետեւ աղաչեցիր ինձի: Պէտք չէ՞ր, որ դուն ալ ողորմէիր ընկերոջդ, ինչպէս որ ես քեզի ողորմեցայ» (Մատթէոսի 18.32-33):

Առակին մէջ թագաւորը մեր երկնաւոր Հայրն է, մենք ծառան ենք, մեր Քրիստոնէայ եղբայրներն ու քոյրերը միւս ծառաներն են, իսկ մեր թշնամին՝ կ'ուզէ խաղալ դահիճի դերը: Երբ չենք ներեր, ուրիշները կը բանտարկենք յանցանքի եւ դատապարտութեան շղթաներուն մէջ, եւ կը յանձնուինք դահիճներուն՝ մինչեւ որ վճարենք պարտք մը, զոր գիտենք, որ չենք կրնար վճարել: Բոլորս ալ հանդիպած ենք մարդոց, որոնք կը տանջուին ճիշդ այն բաներով, զորս կը մերժեն ներել ուրիշներու մէջ: Երբ այդ ձեռով կը վարուինք, թշնամիին գործը ըրած կ'ըլլանք: Վերցնենք շղթաները մէկս միւսէն:

Տէր, բացայայտէ՛ ռեւէ մէկը, զոր ես բանտարկած եմ իմ աններողամտութեամբս: Կ'ընտրեմ արձակել զայն, ճիշդ ինչպէս դուն արձակած ես զիս:

Եւ Զօրաւոր Եւ,

ԵՐԲ ԿԸ ՆԵՐԵՄ ԻՆՉՊԷՍ ԻՆՏԻ
ՆԵՐՈՒԱԾ Է ԹԱԳԱՒՈՐԻՆ ԿՈՂՄԷ:

ԱՊԱՍՏԱՆԴ

Աստուած իր հրեշտակներուն պիտի պատուիրէ որ քեզ պահպանեն:

ՂՈՒԿԱՍԻ 4.10

Ուսածախս կը մոռնամ, որ հրեշտակներու պաշտպանութիւն ունիմ, բայց պէտք չէ մոռնամ: Կը սիրեմ այն պատկերները, զորս Դաւիթ կու տայ մեզի Սաղմոսներուն մէջ. «Ողորմէ՛ ինձի, ո՛վ Աստուած, ողորմէ՛ ինձի, որովհետեւ իմ անձս քեզի՛ կ'ապաւինի: Քու թելերուդ հովանիին պիտի ապաւինիմ, մինչեւ որ աղէտները անցնին» (Սաղմոսներու 57.1):

Աստուած է մեր պաշտպանութիւնը: Երկար ժամանակ առաջ սորվեցայ, որ իմ անձս պաշտպանելու իմ կարողութիւնս շատ սահմանափակ է: Աստուծո՛յ է, որ պէտք է վազենք: Ձգէ՛ ձեռքէդ հեռաձայնդ երբ սուտ ամբաստանութեան ենթարկուած ես, զրպարտութեան զոհ գացած ես կամ ուղղակի ստած են քու մասիդ. գոցէ՛ դիւրակիր համակարգիչդ (*լաւթոփոդ*) եւ վազէ՛ դէպի Աստուծոյ թելերուն ապաստանը: Ես ատիկա կ'ընեմ ինքզինքս սենեակի մը մէջ փակելով, երաժշտութիւն բանալով եւ պաշտամունք ընելով: Պաշտամունքը միշտ լաւ պատասխան է երբ չես գիտեր ի՛նչ ընես: Երբ կեանքը ծանր կը թուի քեզի, ինչ ալ ըլլան պայմանները, կը տեսնես, որ պատսպարան մը կը սպասէ քեզի Աստուծոյ ներկայութեան մէջ:

Մի՛ արտօներ, որ թշնամին քեզ իյնացնէ ինքզինքդ պաշտպանելու կամ դուն քեզ պահպանելու ծուղակին մէջ. թերի պիտի գտնուիս: Աստուած կը հրաւիրէ մեզ, որ իր մէջը պահենք մենք մեզ մինչեւ որ փոթորիկը անցնի եւ կարենանք յստակ տեսնել:

Բոլոր միւս անելի նուազ ապաստանները դուրս են Աստուծոյ

թեւերուն հովանիէն: Վրէժխնդրութիւնը եւ զայրոյթը երբեք ապաստաններ չեն, հակառակ անոր որ անոնք պիտի ստեն եւ ըսեն, թէ են: Այդ սուտ պատսպարանները պէտք է մէկ կողմ դրուին, որպէսզի Աստուծոյ ներկայութեան մէջ մտնենք: Ինքզինք պաշտպանելու ջանքերը եւ ինքզինքին վրայ վստահիլը իրապէս տկար պատսպարաններ են բաղդատաբար Աստուծոյ: Փախուստ տալը, դեղերով կամ այլ նիւթերով ինքզինք թմրեցնելը կամ նիւթէն խուսափիլը միայն ժամանակաւոր միջոցներ են յետաձգելու խնդիրը, եւ աշխարհի բոլոր խրատները, ինքզինքին օգնելու միջոցները (*սելֆ-հելփ*) կամ «փաստուած լուծումներ»ը չեն բաղդատուիր Աստուծոյ հետ:

Ուստի երբ զգաս, որ աղէտները քեզ պիտի տապալեն եւ կամ ամէն կողմէ պաշարուած ես, խանդավառու՛: Աստուած կը պատրաստուի յայտնուիլ եւ ընել այն ինչ որ դուն չես կրնար: Աստուած ոչ միայն իր հրեշտակներուն կը պատուիրէ, որ քեզ պահպանեն, այլեւ ան Ինքզինք տրամադրելի կը դարձնէ քեզի: Երբ թշնամին կատղած վիճակի մէջ է, մենք Աստուծոյ հաւաստիքը ունինք Բ. Օրէնքի 3.22-ին մէջ, որ կ'ըսէ. «Անոնցմէ մի՛ վախնաք, որովհետեւ Տէրը՝ ձեր Աստուածը ի՛նք կը պատերազմի ձեզի համար»:

Երբ ճակատամարտը շատ մեծ է քեզի համար, իրե՛ն մօտեցիր:

Տէր, դո՛ւն ես իմ պաշտպանութիւնս: Ես քեզի պիտի մօտենամ եւ պաշտամունք ընեմ՝ վստահելով, որ դուն պիտի պապերազմիս իմ փոխարէնս երբ ես շարք ճնշուիմ:

Եւ Զօրաւոր եմ,

ՈՐՈՎՎՇԵՏԵՒ ԱՊԱՀՈՎ ԵՄ ԵՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԱԾ
ԱՍՏՈՒԾՈՅ ԹԵԻԵՐՈՒՆ ՀՈՎԱՆԻՒՆ ՏԱԿ:

ՄԵՆՔ ԾԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՄԸ ՄԷՉ ԵՆՔ

Որովհետև մեր պատերազմը մարդոց հետը չէ, այլ՝ երկինքի փակ գործող չար ոգիներուն, իշխանութիւններուն եւ պետութիւններուն, այս խաւար աշխարհի փիրակալներուն դէմ:

ԵՓԵՍԱՑԻՆԵՐՈՒՆ 6.12

Չնամին կը փորձէ խաբել մեզ եւ մտածել տալ, որ մեր պատերազմը մեր տեսած մարդոց դէմ է, եւ ոչ թէ մեր չտեսած խաւարի ոյժերուն: Պօղոս ասիկա չըսեր մեզի, որպէսզի վախցնէ մեզ, այլ՝ մեզի անդրադառնալ տալու համար, թէ ճիշդ ի՞նչ տեղի կ'ունենայ: Կայ ամբողջ խաւարի մարզ մը, որուն դէմ երբեք չենք կրնար պատերազմիլ մեր սեփական ոյժերով: Պօղոս կը շարունակէ, ըսելով. «Ուստի Աստուծոյ սպառազինութիւնը առէք, որպէսզի երբ չար օրը գայ՝ կարենաք ետ մղել Չարին հարուածները, եւ ամէն ինչ ընէք՝ կանգուն մնալու համար» (Եփեսացիներուն 6.13):

Մեր կանգուն մնալուն համար Աստուած արդէն իսկ անհրաժեշտ ամէն բան հայթայթած է մեզի: Այն իրականութիւնը, որ Պօղոս կը կրկնէ սպառազինուելու այդ պատուէրը, ինծի մտածել կու տայ, որ ան չ'ուզեր, որ պարզի առնենք մեր զէնքերը: Ան չ'ուզեր, որ մենք կարծենք, որ կրնանք մեր տարազին միայն կէսը հագած եւ անզէն երթալ պատերազմի դաշտ եւ տակաւին ոյժը ունենալ ոտքի կանգնելու: Ի՞նչ կը նշանակէ կանգուն մնալ: Այսինքն՝ առնել վճռականութեան կեցուածք մը, որ կ'ըսէ, թէ կը մերժես տեղի տալ: Պօղոս կը շարունակէ, ըսելով. «Շտուաբար պատրաստ եղէք. ճշմարտութեամբ ամրապնդեցէք ձեր

մէջքը, արդարութիւնը հագէք զրահի պէս, եւ խաղաղութեան Աւետարանը քարոզելու պատրաստակամութիւնը հագէք կօշիկի պէս» (Եփեսացիներուն 6.14-15):

Մենք կը կենանք՝ մեր անձին առանցքը ճշմարտութեամբ ամրապնդած, մեր սիրտը եւ կենսատու գործարանները պահած Քրիստոսի արդարութեան ետին եւ մեր ոտքերը պատրաստ՝ խաղաղութեան ւետարանով մը: Մենք կ'ապրինք աշխարհի մը մէջ, որ խենթի պէս կ'աղաղակէ խաղաղութեան համար: Ճշմարտութիւնը եւ արդարութիւնը նախապայմաններն են խաղաղութեան: Ճշմարտութենէն զիջում ընելը պատճառ կ'ըլլայ, որ գետին կորսնցնենք եւ ըլլանք աւելի նուազ քան ինչ որ իրապէս ենք: Մենք զօրաւոր ենք երբ կը պատերազմինք խաղաղութեան դիրքէ մը: Քրիստոսով, խաղաղութիւնը կը դառնայ միջոց մը փոթորիկներ հանդարտեցնելու, սիրտեր բժշկելու եւ հոգիներ վերականգնելու:

Երկնաւոր Հայր, սորվեցո՛ւր ինձի ի՛նչպէս պատերազմիմ մէջդ գրնուող խաղաղութեան այդ տեղէն: Մինչ կը կարդամ քու Խօսքդ, ճշմարտութիւնովդ փաթթէ սիրտս, որպէսզի զիջումներ չընեմ:

Եւ Զօրաւոր Եւ,

ԵՐԲ ԿԸ ԿԱՆԳՆԻՄ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ,
ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՄԷՋ:

ՎԱՅԱՆՆԵՐ ԵՒ ՆԵՏԵՐ

Եւ այս բոլորին վրայ՝ հաւատքի վահանը առէք, որպէսզի կարենաք մարել Չարին արձակած բոլոր միացող նետերը:

ԵՓԵՍԱՑԻՆԵՐՈՒՆ 6.16

Մեզի տրուած է վահան մը, որ կրնայ պաշտպանել մեզ ամէն միացող նետէ, զոր Չարը կ'արձակէ մեզի դէմ: Պօղոս զանիկա կը կոչէ հաւատքի վահան: Եբրայեցիներուն 11.1-ը մեզի կ'ըսէ. «Ի՞նչ է հաւատքը: Հաւատք՝ կը նշանակէ վստահ ըլլալ այն բաներուն՝ որոնց կը յուսանք, եւ համոզուած ըլլալ այն բաներուն՝ որոնք չեն երեւիր»: Վստահաբար չենք կրնար տեսնել, որ այդ վահանը կը պաշտպանէ մեզ, բայց կրնանք զարգացնել զանիկա: Հաւատքը կու գայ Աստուծոյ խօսքը լսելէն եւ սերտելէն: Ես կը պատկերացնեմ հաւատքը իբրեւ ոյժի դաշտ մը: Որքան աճի մեր հաւատքը այդքան պաշտպանուած կ'ըլլանք: Հաւատքը կրնայ սկսիլ մեր ստացածով, բայց անիկա միշտ պէտք է աճի եւ ըլլայ բան մը, որ կու տանք:

«Առէք նաեւ փրկութեան սաղաւարտը եւ Սուրբ Հոգիին սուրը, այսինքն՝ Աստուծոյ խօսքը» (Եփեսացիներուն 6.17): Փրկութիւնը այն սաղաւարտն է, որ կը ծածկէ մեր միտքը: Երբ նոր փրկուած էի, շատ անգամ սոսկալի միտք մը կու գար ինծի: Կը սարսափէի մտածելով, թէ ո՛րկէ եկաւ ատիկա: Փրկուելէս ետք սկսայ անդրադառնալ այն միտքերուն, որոնք իմս չէին: Փրկութիւնը խաղաղութիւն կը բերէ մեր միտքին, եւ երբ մտահոգիչ կամ չարչրկող խորհուրդ մը յարձակի, մենք մեր սուրը կը վերցնենք...

Աստուծոյ Խօսքը մեր Հոգիին սուրն է: Ինչպէս Յիսուս ըրաւ երբ փորձութեան կ'ենթարկուէր չարախօսին կողմէ, մենք մեր հոգիին թշնամիին կը խօսինք այն ինչ որ գրուած է: Երբ ան յարձակում կը գործէ մեր խաղաղութեան դէմ, մենք կը դիմադրենք Եսայիի 26.3-ի Աստուծոյ խոստումով, որ կ'ըսէ. «Հաստատ միտքը կատարեալ խաղաղութեան մէջ կը պահես, որովհետեւ քեզի կը վստահի»:

Երկնաւոր Հայր, շնորհակալ եմ հաւաքքի պարգեւին համար, որ կը պաշտպանէ զիս թշնամիին յարձակումներէն ինչպէս նաեւ շնորհակալ եմ միտքի խաղաղութեան եւ ձեռքիս մէջ քու Հոգիիդ սուրը ունենալուս համար:

Եւ Զօրաւոր Եմ,

ՄԻՆՉ Կ'ԱՃԻՄ ՀԱԻԱՏՔԻ ՄԷՋ՝ ԿԱՐԴԱԼՈՎ,
ԽՕՍԵԼՈՎ ԵՒ ԱՊՐԵԼՈՎ ԽՕՍՔԸ:

ԻՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ճիշդ է, որ աշխարհի մէջ կ'ապրինք, բայց աշխարհային նկատումներէ առաջնորդուած չէ, որ կը պատերազմինք:

Բ.ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ 10.3

Մենք երկրի վրայ կ'ապրինք, բայց չենք կրնար անոր ձեւերով պատերազմիլ: Հարցումը այն չէ, թէ պատերազմ պիտի մղե՞նք կամ ոչ, այլ՝ թէ ի՞նչ ձեւով պատերազմ պիտի մղենք: Այդ տարբերութիւնը լաւագոյնս կ'երեւի պատերազմին ետին գտնուող մեր շարժառիթին կամ մեր «ինչո՞ւ»ին մէջ: Մենք միշտ պէտք է պատերազմինք *բանի մը համար* եւ ոչ միայն բանի մը դէմ: Մենք նաեւ գիտենք ճշմարտութիւն մը, որ շատ անլի խորունկ է քան անոնք, որոնք կը պատերազմին այս աշխարհին համաձայն. մարդիկը չեն բնաւ մեր իրական թշնամիները: Գիտեմ, որ կան ժամանակներ երբ այդ ճշմարտութիւնը սուտի պէս կը հնչէ: Բոլորս ալ կրնանք տալ անուններ մարդոց, որոնք վիրաւորած են մեզ: Բայց Աստուած կը սիրէ իր ժողովուրդը: Անոնք են, զորս փրկելու եկաւ Յիսուս, ուստի մենք անոնց դէմ պէտք չէ կռուինք բնաւ: Մենք պէտք է գերիները ազատ արձակենք եւ ոչ թէ գերիներուն դէմ կռուինք: Մենք կը յարձակինք այն ամրոցներուն դէմ, որոնք իրենց մէջը բռներ են զանոնք եւ ոչ թէ անձերուն: Ահա՛ պատճառը. «Պատերազմի մեր զէնքերը աշխարհային չեն, այլ՝ Աստուծոյ զօրաւոր զէնքերն են՝ ամրոցներ խորտակելու համար» (Բ.Կորնթացիներուն 10.4):

Մեզի վստահուած են աստուածային զօրութեամբ օժտուած զէնքեր, որոնք հակառակն են այս աշխարհի զէնքերուն: Քանի որ այդ զէնքերը անլի զօրաւոր են, մենք պէտք է այդքան ալ անլի զգոյշ ըլլանք անոնցմով: Երբեք մի՛ մոռնաք, թէ մեր խօսքերն իսկ

կրնան օրհնել կամ անիծել, ուստի ո՛րքան ասելի մեր արարքները ատիկա պիտի ընեն: Այս աշխարհի զէնքերը կը սպաննեն մինչ մեր զէնքերը կեանք կու տան: Աշխարհային զէնքերը կը բաժնեն մարդիկը, ազգերը եւ մշակոյթները, մինչ մեր աղօթքի զէնքերը կը միացնեն մեզ՝ իր Թագաւորութեան կառավարման տակ: Այս երկրի զէնքերուն նպատակը վիրաւորել է անոնց եւ հաշմել է զանոնք, որոնց իբրեւ թշնամի կը տեսնենք, մինչ մեր երկսայրի սուրերը սուտը ճշմարտութենէն կը բաժնեն, որպէսզի բժշկութիւն եւ վերականգնում սկսին իրականանալ: Այս աշխարհի զէնքերը ստեղծուած են մարդոց կողմէ՝ ահարկութիւն պատճառելու եւ վախով անդամալուծելու ուրիշները, մինչ մեր սպառազինութիւնը դարբնուած է երկինքի մէջ՝ արձակելու եւ քաջութիւն ներշնչելով զօրացնելու համար վախի մէջ եղող գերին, որպէսզի ազատ ըլլայ ընթանալու իր աստուածային կոչումի նպատակին մէջ:

Երկնաւոր Հայր, երբ ինքզինքս գտնեմ ճակատամարտի մը մէջ, ցոյց տուր, թէ ճիշդ ի՛նչ բանի համար կը պատերազմիմ ես: Սուրբ Հոգի, միշտ յիշեցո՛ւր ինձի, որ պէտք է հարուածեմ ամբողջ եւ ոչ թէ վիրաւորեմ գերին:

Եւ Զօրաւոր Եւ,

ԵՐԲ ԿԸ ՊԱՏԵՐԱԶՄԻՄ՝ ԱԶԱՏԵԼՈՒ
ՀԱՄԱՐ ՈՒՐԻՇՆԵՐԸ:

ՊԱՏԵՐԱԶՄԻԼ ԼՈՅՍԻՆ ՄԷՉ

Աստուած լոյս է, բնաւ խաւար չկայ անոր մէջ:

Ա.ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 1.5

Յետոյ Գիրքին մէջ կը կարդանք պատմութիւնը Աստուծոյ ժողովուրդին եւ իր թշնամիներուն միջեւ կատաղի պատերազմի մը: Տէրը կը պատերազմէր անոնց կողքին: Յետո՛ւ անոնց ղեկավարը, որոշեց, թէ աւելի լոյսի պէտք ունէին՝ պատերազմը շարունակելու համար, ուստի ըսաւ. «Արե՛ւ, Գաբաւոնի՛ դիմաց կեցիր. իսկ դուն՝ լուսի՛ն՝ Այեղոնի՛ հովիտին դիմաց» (Յետոյի 10.12): Աստուածաշունչը մեզի կ'ըսէ. «Ուստի արեւը կեցաւ եւ լուսինը իր տեղը մնաց մինչեւ որ ազգը իր թշնամիներէն վրէժ առաւ [...] Արեւը երկինքին մէջտեղը մնաց, ու լման մէկ օրուան չափ մայր մտնելու չփութաց [...] Որովհետեւ Տէրը Իսրայէլի համար պատերազմեցաւ» (Յետոյի 10.13-14):

Ըստ երեւոյթին, այդ ճակատամարտին մէջ բացակայող տարրը լոյսն էր, եւ Աստուած ատիկա հայթայթեց հրաշալի ձեւով մը: Արեւու լոյսին տակ անոնք կրնային յստակօրէն տեսնել իրենց դաշնակիցները եւ թշնամիները: Բայց մութին մէջ դիւրին է թշնամին բարեկամ կարծել եւ անգիտակցաբար քու խումբիդ դէմ գործել: Նոյնպէս ալ մեր հոգեւոր պատերազմին մէջ մենք պէտք ունինք լոյսի՝ կռուելու համար: Եւ Աստուած մեզի առատօրէն կու տայ այդ լոյսը: Ան է արեւը մեր երկինքին մէջ եւ կը փարատէ այն խաւարը, որ կը շուարցնէ, անակնկալի կը բերէ եւ մեր ոյժը կը ծծէ: Մինչ մեր թշնամին կը բարգաւաճի խաւարին մէջ, մենք կը

բարգաւաճինք եւ յաղթանակ կ'ապահովենք Աստուծոյ սիրոյ լոյսին եւ ճշմարտութեան լոյսին մէջ: «Արդարեւ ահա՛ խաւարը պիտի ծածկէ երկրագունդը, ու մառախուղը՝ բնակչութիւնը. իսկ քու վրադ Տէ՛րը պիտի ծագի, եւ անոր փառքը պիտի երեւնայ քու վրադ» (Եսայիի 60.2): Ճիշդ Իսրայէլի որդիներուն նման, մենք ալ չենք կառավարուած մեզ շրջապատող խաւարով, որովհետեւ Տէր Աստուծոյ Որդին ծագած է մեր վրան: Իսրայէլի բանակը հաւանաբար կը մտածէր, որ անկարելի էր կասեցնել գիշերուան վրայ հասնիլը, բայց այն ինչ որ անկարելի է մարդոց համար կարելի է Աստուծոյ համար: Մեր Աստուծոյ գործը անկարելիներն են: Ան կը պատասխանէ. «Գիտեմ, որ կը տեսնէք, որ խաւարը կ'իյնայ աշխարհի եւ անոր ժողովուրդին վրայ, բայց մի՛ վախնաք, որովհետեւ ես եմ ձեզ ծածկող լոյսը»:

Մինչ կը պատերազմիս, մի՛ նայիր շուրջդ պատող խաւարին: Յիշէ՛ քու մէջդ գտնուող լոյսը: Աստուած կը շարունակէ փայլիլ մեր վրան եւ փարատել ստուերները մեզի համար, նոյնիսկ եթէ ատիկա ամբողջ ցերեկը եւ ամբողջ գիշերը տեսէ:

*Տէր Աստուած, ես ոյժ կը ստանամ մէջս գտնուող քու լոյսէդ:
Փայլեցո՛ւր լոյսդ իմ վրաս մինչեւ որ պատերազմը վերջանայ:*

Եւ Զօրաւոր Եմ,

ԵՐԲ ԿԸ ՊԱՏԵՐԱԶՄԻՄ, ՔԱՆԻ ՈՐ
ԱՍՏՈՒԱԾ ԻՄ ԼՈՅՍՍ Է:

ՎՆՈՒԱԿԱՄ

*Դուք ներկայացէ՛ք ու հանդա՛րիր կեցէ՛ք, որպէսզի Տիրոջ
ձեզի համար իրագործած փրկութիւնը տեսնէ՛ք:*

Բ.ՄՆԱՑՈՐԴՆԵՐՈՒՆ 20.17

Եւանքի այս ճամբորդութեան մէջ դուն պիտի ուզես հրաժարիլ: Ամէն մարդու կեանքին մէջ կու գայ ժամանակ մը երբ մարդ կ'ուզէ ինկած տեղը մնալ եւ հրաժարիլ կամ դադրիլ պայքարել: Այն բանը, որ սայթաքողները եւ ձախողողները կը բաժնէ յաղթանակ իրագործողներէն՝ վերջիններուն ետ ոտքի ելլելու կարողութիւնն է: Շատ մը պատերազմներ կը շահուին պարզապէս թշնամիէն աւելի երկար ժամանակ դիմանալով: Բոլորս ալ գետին պիտի իյնանք: Ատոր արգելք չես կրնար ըլլալ, բայց քու ձեռքդ է դարձեալ ոտքի ելլելը: Որոշէ՛ յարատեւել հաւատքի մէջ. նոյնիսկ երբ զօրաւոր չես զգար: Զգացումներդ պիտի սահմանափակեն քեզ, որովհետեւ իրականութեան մէջ չես գիտեր, թէ ի՛նչ բանի կարող ես մինչեւ որ պատերազմի դաշտ յայտնուիս: Մինչ մենք հաստատ կը մնանք, Տէրը կը պատերազմի մեզի համար: Այո, դժուար պիտի ըլլայ: Բայց երբուրնէ ի վեր կ'երեւակայենք, որ յաղթանակ կայ առանց ճակատամարտի: Կա՛յ ճակատամարտ մը, որմէ շարունակ կը խուսափիս կամ կը նահանջես: Կա՛յ հոգեւոր գետին մը, որմէ ետ քաշուած ես: Աստուած քեզ դարձեալ այդ դիրքին կը կանչէ: Ան՝ որ խոստում տուած է քեզի, հաւատարիմ է: Աստուած զօրաւոր է եւ կ'ուզէ, որ զօրաւոր ըլլաս: Ան իր զօրութիւնը պիտի յայտնէ քեզի, որպէսզի կարենայ զանիկա քու միջոցաւ յայտնաբերել: Երբ յոգնած ես, երբ կ'ուզես հրաժարիլ, յիշէ՛ թէ ի՛նչ կ'ըսէ Բ.Մնացորդներուն 20.17-ին մէջ.

«Այս պատերազմին մէջ դուք պիտի չպատերազմիք. դուք ներկայացէ՛ք ու հանդա՛րտ կեցէք, որպէսզի Տիրոջ ձեզի համար իրագործած փրկութիւնը տեսնէք: Ո՛վ Յուդա ու Երուսաղէմ, մի՛ վախնաք եւ մի՛ զարհուրիք. վաղը դո՛ւրս ելէք՝ անոնց դիմաց, ու Տէրը ձեզի հետ պիտի ըլլայ»:

Տէրը կը պատերազմի մեզի համար: Երբեմն յաղթանակը կու գայ եթէ պարզապէս ներկայանանք պատերազմի դաշտ եւ հոն մնանք: Կը յաղթենք մինչ կը շարունակենք սիրել, տալ, ծառայել եւ սորվիլ: Ուրիշ ճակատամարտներ կը շահուին երգելով: Երբ կ'երգենք Աստուծոյ Խօսքը, երգած կ'ըլլանք Հոգիին սուրը: Երբ կ'աղօթենք իր խոստումները, երգած կ'ըլլանք աղօթք մը: Կարգ մը ճակատամարտեր կը շահուին լռութեան մէջ եւ իրեն յանձնուելով: Մենք այնքան վստահ կ'ըլլանք, որ Աստուած բարի է եւ բարիք կը գործէ, որ պարզապէս կը ժպտինք ինքնավստահօրէն՝ գիտնալով, որ անոր ձեռքերուն մէջն է ամէն բան: Երբ յառաջ կ'երթանք Աստուծոյ զօրութեամբ, կրնանք դիմագրաւել որեւէ բան, որ կեանքը կը նետէ մեր վրան... յուսալքութիւն, սպառում կամ ուղղակի հակառակութիւն: Աստուածաշունչը մեզի կ'ըսէ. «Մի՛ վախնար, քանի որ ես քեզի հետ եմ. մի՛ զարհուրիր, քանի որ ես քու Աստուածդ եմ. քեզ պիտի զօրացնեմ, քեզի պիտի օգնեմ, եւ իմ արդարութեանս աջ ձեռքով քեզի նեցուկ պիտի ըլլամ» (Եսայիի 41.10):

*Ամենակարող Աստուած, պիտի կենամ քու
հաւարարմութեանդ մէջ մինչ դուն կը պատերազմիս
ինծի համար: Ամէն օր վճռականութիւն եւ յարաբերութիւն
կ'ընդրեմ մինչեւ որ ճակատամարտը շահուի:*

Եւ Զօրաւոր Եմ,

ԵՐԲ ԿԸ ԿԱՆԳՆԻՄ՝ ՎՍՏԱԿ ԸԼԼԱԼՈՎ, ՈՐ ՏԵՐԸ՝
ԻՄ ԱՍՏՈՒԱԾՍ, ԿԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԻՆԾԻ ՀԱՄԱՐ:

Զօրաւոր՝

Շնորհովի մէջ

ԱՆՑԵԱԼԴ ԱՊԱԳԱԴ ՉԷ

Ապա [Յիսուս] շարկուեցաւ եւ հարցուց կնոջ. «Ո՛վ կին, ո՞րք ես քեզ ամբաստանողները. մէկը քեզ չդատարարեց՞»: Անիկա պատասխանեց. «Ո՛չ մէկը, Տէ՛ր»: Յիսուս ըսաւ. «Ես ալ քեզ չեմ դատարարեր. գնա՛ եւ ասկէ ետք մի՛ մեղանջեր»:

ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 8.10-11

Մեզմէ ոչ մէկը առանց մեղքի է, եւ շատ յաճախ մենք մեր անձերը կու տանք տղամարդոց, կրօնին կամ աշխարհին՝ ընդունուած զգալու համար: Բայց ասոնք միշտ յուսախաբ պիտի ընեն մեզ: Վերջաւորութեան մեղքը եւ կրօնը կը դաւաճանեն քեզ: Յովհաննէսի 8-ին մէջ Յիսուս արժանապատուութիւն, իշխանութիւն եւ պատիւ տուաւ անանուն կնոջ մը, որ ինքզինք գտած էր հանրային խայտառակութեան մը մէջ: Յիսուս երեւցածէն անդին նայեցաւ եւ մերժեց ճանչնալ անոր ներկայի կացութիւնը իբրեւ անոր մնայուն վիճակը: Կարծես հետեւեալը ըսաւ անոր. «Անցեալդ ապագադ չէ՛: Գնա՛ եւ այլեւս մեղք մի՛ գործեր: Մեղքը քու անցեալդ էր, բայց բարեպաշտութիւնը քու ապագադ է: Կապանքը քու անցեալդ էր, բայց ազատութիւնը քու ապագադ է: Ամօթը քու անցեալդ էր, բայց արժանապատուութիւնը քու ապագադ է: Մերկութիւնը քու անցեալդ էր, բայց շքեղութեան հանդերձները քու ապագադ են»:

Յիսուս ներելէն շատ աւելին կ'ընէ այդ կնոջ համար... ան ազատ կ'արձակէ զինք: Ներումէն ետք է, որ ազատութիւնը կը սկսի: Մեղքի կապանքներէն ազատած՝ շնորհքը մեզ յառաջ կը տանի,

որպեսզի մեղքը դարձեալ ծուղակի մէջ չծգէ մեզ: Յիսուս նախ կը ողողէ մեզ գութով, ապա կը զօրացնէ մեզ շնորհքով: «Մեղքը ձեր վրայ պէտք չէ իշխէ, քանի դուք Օրէնքին ենթակայ չէք, այլ՝ շնորհքին» (Հռոմայեցիներուն 6.14):

Գութը կը լուծէ մեր ըրածներուն հարցը, իսկ շնորհքը կը զօրացնէ մեզ՝ ընթանալու համար այնպիսի ձեւով մը, որ կը պատուէ մեզի համար Յիսուսի ըրածը: Աստուծոյ գութը եւ շնորհքը կը զօրացնեն մեզ, որպէսզի կարենանք ետեւ ձգել մեր մեղաւոր կեանքը եւ քայլ առնել իր ապագային եւ յոյսին մէջ:

Մեզի շնորհք տրուած է: Մեր նախկին կապանքին զօրութիւնը կտրուած է: Ժամանակն է ունենալու ւաւելի՛ հաւատք Քրիստոսի՝ մեր ազատարարին, խօսքերուն նկատմամբ քան կապանքներուն զօրութեան: Կապանքներուն բռունցքը կամ իշխանութիւնը քու վրադ այնքան մեծ չէ որքան Աստուծոյ պահանջքը քու անձիդ համար: Համարձակի՛ր հաւատալ եւ ետե՛ւ ձգէ անցեալիդ ստուերները:

Երկնաւոր Հայր, շնորհակալ եմ ինձի ներելոյդ համար եւ զիս ապագայ մը շնորհելոյդ համար: Կը հաւատամ քու յոյսի խօսքերոյդ ւաւելի քան խաւարի սուրբերուն:

Եւ Զօրացր Եմ,

ՈՐՈՎՈՒՄ ԵՆՏԵՆԻ ԱՆՅԵԱԼՍ ԱՊԱԳԱՍ ՉԷ:

ՆԵՐՈՒԱԾ

Իրարու հանդէպ քաղցր ու գթած եղէք եւ ներեցէ՛ք իրարու, ինչպէս Աստուած ալ Քրիստոսի միջոցաւ ներեց մեզի:

ԵՓԵՍԱՑԻՆԵՐՈՒՆ 4.32

*Չ*ս բաւական մեծ թիով անօրէնութիւններ եւ յանցանքներ դիզած էի թղթածրարիս մէջ երբ վերջապէս Քրիստոնեայ դարձայ: Երբ ամուսինս՝ Ճոնը, ապաշխարութեան աղօթքը ըրաւ հետս, ուզեց, որ իր ետեւէն կրկնեմ. «Տէր, կը խոստովանիմ իմ մեղքերս»:

Իրար անցայ: «Չեմ գիտեր եթէ պիտի կարենամ բոլորը յիշել», ըսի: Վախցայ, որ փրկութիւնս պիտի կորսնցնեմ իմ թերի յիշողութեանս պատճառով:

«Պէտք չունիս նշելու ամէն մէկը. պարզապէս խոստովանիր, որ մեղք գործած ես», վստահեցուց ինծի Ճոնը: Մխիթարուեցայ, քանի որ վստահ էի, որ Աստուած շատ ասելի ճշգրիտ արձանագրութիւն ունէր քովը: Գիտէի, որ մեղաւոր մըն էի, եւ գիտէի, որ ողորմութեան կարիքը ունէի: Կարիքը ունէի ներումի եւ ստացայ զանիկա Աստուծոյ շնորհքով:

Քրիստոնէական կեանքը սկսիլ ապրելէս երկար ժամանակ ետք չէր, որ նկատեցի, որ աններողամիտ էի ուրիշ Քրիստոնեաներու կամ թերեւս պէտք է ըսեմ ծառայակիցներու հանդէպ: Այնպէս կը զգայի, որ անոնք ինծի ներողութիւն պէտք էր ըսէին, եւ արտօնած էի, որ ատիկա ներսէս ուտէր զիս: Այդ ժամանակաշրջանին բուն հոգեւոր պատերազմի մէջ էի: Այնպէս կը զգայի, որ իբրեւ թիրախ ընտրուած էի... քանի որ այդպէս էի: Հակառակ անոր որ Քրիստոնեայ էի, ինկած էի չարախօսին ծուղակը: Երկար ժամանակ կ'անցընէի աղօթքի մէջ՝ կապելով եւ արծակելով, բայց

անօգուտ: Ես կապուած էի իմ շինած կապերովս: Երբ վերջապէս տեսայ ճշմարտութիւնը, անդրադարձայ, որ կարելոր չէր, թէ ի՛նչ ըրած էին ինձի: Կարելոր չէր, որ ես ճիշդ էի եւ իրենք սխալ: Կարելորը հնազանդիլն էր Աստուծոյ պատուէրին. ներել ինչպէս ինձի ներուած էր:

Զարմացած էի, թէ ո՛րքան խաբուած էի: Մտածած էի, թէ ես ճիշդ էի մինչ իրականութեան մէջ շատ սխալ էի: Այդ անդրադարձումին շնորհիւ ես ազատօրէն ներեցի եւ աղաղակեցի Տիրոջ, որ լուայ զիս իր գութի մաքրող գետով, եւ անշուշտ ան ատիկա ըրաւ: Պարզապէս ըսեմ, որ ես եղած եմ թէ՛ կապուած եւ թէ՛ ազատ, եւ ազատը աւելի լաւ է: Կարելոր չէ, թէ որքան պէտք է խոնարհեցնես անձդ, ազատ ըլլալը տակաւին աւելի լաւ է:

*Երկնաւոր Հայր, յայտնաբերէ որեւէ խաբկանք եւ
աններողամտութեան մարզեր կեանքիս մէջ:*

Եւ Զօրացր Եմ,

ՈՐՈՎՀԵՏԵՒ ԿԸ ՆԵՐԵՍ ԱՆՁԻՍ
ԵՒ ՈՒՐԻՇՆԵՐՈՒՆ:

ՇՆՈՐՅԱԼԻ

*Մարդուն ուշիմութիւնը իր բարկութիւնը կը յետաձգէ,
եւ անոր պարծանքն է յանցանքը անտեսելը:*

ԱՌԱԿՆԵՐՈՒ 19.11

*Ս*ոսկներու Գիրքը գրողը կ'ըսէ, թէ մեր «պարծանքն» է անօրէնութիւն մը կամ յանցանք մը անտեսելը: Քրիստոնեայի մը պատիւը, գովասանքը, վսեմութիւնը եւ իւրայատկութիւնն է անտեսել յանցանքը: Անիկա մէկ օրինակն է մեր Քրիստոսի նման վարուելուն:

Միայն կարելի է անտեսել նախատինքները, վիրաւորանքները եւ սպառնալիքները եթէ նախ մենք մեզ յանձնենք մեր Հօրը՝ արդար Դատաւորին: Յաճախ երբ մեր զաւակները տեսակ-տեսակ անհամաձայնութիւններ կ'ունենան, կը դիմեն մեր արդարութեան դատողութեան: «Ինքը պէտք եղած չափով մաքրութիւն չ'ըներ» կամ «Շատ երկար ժամանակ է, որ համակարգիչը կը գործածէ»: Անոնք կ'ուզեն, որ իրենց դատը լսուի՝ յուսալով, որ իրենց փափաքը կը կատարուի, եւ ապա կ'ուզեն տեսնել, որ արդարութիւն կ'ըլլայ: Ճոնը եւ ես կը միջամտենք եւ կարելի եղած լաւագոյն ձեւով կը կառավարենք կացութիւնը, բայց յաճախ անոնց կարծիքով մեր որոշումները արդար չեն ըլլար: Ատիկա կրնայ պատճառ ըլլալ այն աղիտալի հաւանականութեան, որ անոնք որոշեն հարցը իրենց ձեւով լուծել: Ես չեմ խօսիր բախումներ լուծելու մասին. մենք կը քաջալերենք, որ ատիկա ընեն: Կը խօսիմ հատուցումի մասին: «Ինչո՞ւ զարկիր եղբորդ»: «Որովիտեսու ան...»: Լսած էք այդ ցանկը ասկէ առաջ: Երբ իրենց կ'ըսենք, որ իրենց հարցը մեզի բերեն փոխանակ զարնելու, յաճախ իրենցմէ կը լսենք. «Բայց անցեալ անգամ բան մը չըրիր»: Ինչ որ կը թարգմանուի իբրեւ՝ «Որոշեցի, թէ չսիրեցի քու լուծելու ձեւը»:

հետեւաբար այս անգամ չեմ ուզեր այդ առիթը տալ քեզի: Ես իմ ձեռովս կը լուծեմ»:

Ճոնը եւ ես առաջիններն ենք, որ կ'ընդունինք, որ մենք՝ իբրեւ ծնողներ սխալներ կ'ընենք, բայց լաւ լուրը այն է, որ Աստուած սխալ չ'ըներ: Ան արդար եւ կատարեալ Դատաւոր մըն է: Անոր որոշումները կրնան չըլլալ այն ժամանակին կամ այն ձեռով, որ մենք պիտի առաջարկէինք, բայց անոր ձեւերը կատարեալ են մինչ մերինները՝ սխալական: Երբ կ'անտեսենք յանցանքը, կը նմանինք այն ծնողներուն վստահող զաւակներուն, որոնք կ'ըսեն. «Հայր, գիտեմ, որ կրնամ վստահիլ քեզի այս հարցին մէջ: Անիկա շատ մեծ եւ ցաւալի է ինձի համար: Կը մերժեմ սխալ կերպով հակադարձել: Փոխարէնը քու ոտքերուդ առջեւ կը դնեմ այս հարցը եւ կը ներեմ»: Անիկա թագաւորական ժեստ մըն է: Այդպէս է, որ Աստուծոյ Որդին կ'ընդօրինակենք մեր երկրաւոր կեանքերուն մէջ: Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Նոյնիսկ եթէ մէկ օրուան մէջ եօթն անգամ քեզի դէմ մեղանչէ [եղբայրդ] եւ եօթն անգամ քեզի գալով ըսէ՝ “Կը զղջամ”, պէտք է ներես իրեն» (Ղուկասի 17.4):

Պիտի ըլլան յանցանքներ, զորս բոլորս ալ պէտք պիտի ունենանք անտեսելու: Անգլերէնով «անտեսել» բառը բառացիօրէն կը նշանակէ՝ բանէ մը վեր նայիլ: [Անիկա *օվըրլուք* բառն է, զոր եթէ ստուգաբանենք կ'ունենանք *օվըր* (վեր) եւ *լուք* (նայիլ) բառերը - *Թարգմանիչ*]: Անիկա ընտրել է բաները տեսնել աւելի բարձր մակարդակի վրայ քան գայթակղութեան կամ վիրաւորանքի մակարդակը: Կը նշանակէ՝ շնորհք եւ ողորմութիւն ցուցաբերել այն ատեն երբ պիտի նախընտրէիր դատաստան ի գործ դնել:

Տէր, ուրիշներու հանդէպ ողորմած դարձուր զիս, փոխանակ որ մտաւոր կամ մտազբաղ մնամ գայթակղութիւններով կամ վիրաւորանքներով: Թող արտացոլացնեմ քու շնորհքդ եւ ողորմութիւնդ ամէն բանի մէջ, որ կ'ընեմ:

Եւ Զօրմեոյ Եւ,

ԵՐԲ ԱՅՆՔԱՆ ՈՂՈՐՄԱԾ ԵՄ ՄԱՐԴՈՅ ՀԱՆԴԷՊ
ՈՐՔԱՆ ԱՍՏՈՒԱԾ ԵՂԱԾ Է ԻՆՏԻ ՀԱՆԴԷՊ:

ԱՃՈՒՄ, ՈՉ՝ ՅԱՆՑԱԴՈՐԻ ԶԳԱՑՈՒՄ

*Անոնք որ Քրիստոս Յիսուսի միացած են՝
դատարարություն ենթակայ չեն:*

ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ 8.1

*Չ*նչո՞ւ այդքան խիստ ենք մենք մեր անձերուն նկատմամբ: Ի՞նչ կը կարծենք, որ ատիկա պիտի իրագործէ: Անցեալին երբ անկողին մտնէի միտքիս մէջ մէկ-մէկ կը հաշուէի այդ օրուան ծախողութիւնները: Ինքզինքս կը ծեծէի անոնցմով՝ մտրակելով անձս ամօթովը որեւէ սխալի, որ կը յիշէի՝ փորձելով տուգանք մը վճարել իմ օրինագանցութիւններուս համար: Կրնայ ըլլալ, որ օրը աւարտեցիր յուսախաբութեամբ եւ դուն քեզմէ նեղացած, եւ կը պատկերացնես, որ դուն քեզ պատժելով, ձեռով մը փոխուած եւ տարբեր դուրս պիտի գաս: Բայց ատիկա ճիշդ չէ: Այդ ձեռը կործանարար է փոխանակ շինիչ ըլլալու:

Սխալ չէ անդրադառնալ, որ սխալներ գործեցիր կամ մտածել, որ երանի կարգ մը բաներ տարբեր ձեռով ընէիր: Առողջ է արտօնելը Սուրբ Հոգիին, որ միտքդ բերէ սխալ խօսքերդ եւ արարքներդ: Բայց այդ խոկումը աճումի համար է, ոչ թէ յանցաւոր զգալու: Ամէն գիշեր ես ինքզինքս կը նախատէի օրուան ծախողութիւններուն պատճառով մինչեւ որ կը սկսէի խեղդուիլ անոնց ծանրութեան տակ: Միայն այդ ատեն էր, որ ինքզինքիս կ'արտօնէի, որ աղօթի եւ ներողութիւն խնդրէի: Բայց արդէն այդ ատեն յանցաւորի զգացումը այնքան խեղդիչ մակարդակի հասած կ'ըլլար, որ

դժուարութիւն կ'ունենայի հաւատալու, որ յաջորդ առտուայ ողորմութիւնը բաւարար պիտի ըլլար զանիկա ծածկելու համար:

Օրինակի համար, եթէ օրուան ընթացքին զաւակներուս հետ վարմունքէս յուսախաբ եղած էի, հարցը կը դիմագրաւէի իմ անծիս դէմ յարձակելով հետեւեալ ձեւի հարցումներով. «Ինչո՞ւ այդքան անհամբեր ես»:

Փոխանակ աւելի համբերատար ըլլալու ձեւեր փնտռելու, ինքզինքս իբրեւ ձախող կը պիտակէի, ինչ որ զիս կը դնէր դարձեալ ձախողելու դիրքին մէջ:

Ինքզինքս ատելը եւ ինքն իրմէ բարկանալը շարունակ յանցաւորի զգացումի մէջ կը ձգէ քեզ՝ ինչ որ կործանարար է:

Յիսուս հասկցաւ, որ յանցաւորի զգացումին ծանրութիւնը շատ պիտի ըլլար մեզի համար, ուստի Ինք կրեց զանիկա: Մեր թերութիւնները պէտք է իր Խօսքին լոյսին տակ բերուին: Հոն է, որ խրատ եւ ներըմբռնում կը գտնենք փոխանակ ամբաստանութեան եւ յանցաւորի զգացումին: Այն ինչ որ լոյսը կը յայտնաբերէ նաեւ զօրութիւնը ունի բուժելու: Յանցաւորի զգացումը խաւար է. գուրջը լոյս է: Փոխանակ մեր սխալները շարունակ կրկնելու, եկէք կրկնենք այն պատասխանները, որոնք կը սրբագրեն այդ սխալները:

Սիրելի երկնաւոր Հայր, ներէ ինծի ինքզինքս նախապելուս եւ ծեծելուս համար: Թող քու Խօսքիդ լոյսը ներթափանցէ սիրտս ճշմարտութիւնով: Օգնէ՛ ինծի, որ ետ դառնամ իմ ինքնաքննադատութենէս եւ ընդունիմ քու ողորմութիւնդ:

Եւ Զօրացր Եւ,

ՈՐՈՎՀԵՏԵՒ Կ'ԸՆՏՐԵՄ ԱՃՈՒՄ ՓՈԽԱՆԱԿ

ՅԱՆՑԱԻՈՐԻ ՁԳԱՅՈՒՄԸ:

ՍԻՐՏԻ ՊԱՐՏԵՉԸ

*Ուշադիր հսկեցեք, որ ռեւե մէկը Աստուծոյ շնորհքէն չզրկուի:
Չըլլայ որ մէկը դառնութեան արմատ դառնալով խոռովութեան
պարճառ ըլլայ եւ շարերը անկէ վարակուին:*

ԵՐՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ 12.15

Չ որ պզտիկ աղջիկ մըն էի, ինծի յաճախ կը տրուէր վնասակար խոտեր փրցնելու գործը: Միշտ կ'աճապարէի գործը վերջացնելու, որպէսզի յետոյ երթայի խաղալու: Անհոգութեանս մէջ, յաճախ վնասակար խոտերը քաշելու ատեն կը կտրուէին եւ իրենց արմատէն չէր, որ կը փրցնէի զիրենք: Լման հանելու համար պէտք էր, որ ձեռքս ցեխին մէջ մտցնէի քիչ մը, որպէսզի խոտին հիմը գտնէի, իսկ ես չէի ուզեր աղտոտիլ: Կը կարծէի, որ եթէ խոտը առանց ցողունի եւ տերեւներու մնար, կը մեռնէր, եւ մայրս չէր գիտնար բնաւ, թէ ինչ կար հողին մէջ: Հող կը թափէի ցողունին հանգուցաւոր արմատին վրայ եւ վազելով կը հեռանայի: Քանի մը շաբաթ ետք ուրիշ վնասակար խոտ մը կ'երեւէր անոր տեղը: Աւելի պզտիկ կ'ըլլար սկիզբի խոտէն, որ քաշելու ատեն կտրած էի, բայց հիմա անիկա զարմանալիօրէն յամառ արմատներու համակարգ մը ունէր: Մայրս ինծի ցոյց տուաւ, թէ ինչպէս անհրաժեշտ պիտի ըլլար, որ բոյսին հիմին շուրջը փորէի եւ արմատները բաւարար չափով մէջտեղ հանէի, որպէսզի կարենայի մահացու հարուած մը տալ անոր: Այն ինչ որ սկսած էր իբրեւ դիւրին գործ մը, հիմա արդէն դարձած էր յոգնեցուցիչ պատերազմ մը:

Ո՛րքան յաճախ մենք ալ նոյն բանը կ'ընենք մեր սիրտի պարտէզներուն մէջ:

Սատանան կը փափաքի անյուսութեան, սխալ մտածումներու կամ բարկութեան հունտեր ցանել մեր մէջ մինչեւ որ դառնութեան արմատը խեղդէ Աստուծոյ Խօսքի սննդարար տնկիները:

Վնասակար խոստերը աւելի արագ եւ դիրին կ'աճին քան միւս բոյսերը: Անոնք վայրի բոյսեր են, որոնք ազատօրէն կը ճամբորդեն՝ յարմարելով որեւէ տեսակի հողի, որ կը գտնեն: Միւս կողմէ պտուղներու եւ բանջարեղէններու կեանք տուող հունտերը պէտք է զգուշութեամբ մշակուին եւ դիրութեամբ կը խեղդուին զիրենք շրջապատող վնասակար խոստերով կամ հողի սխալ պայմաններու պատճառով: Դառնութեան արմատները կը ծլին ամէնէն անպատշաճ ժամանակներու. երբ ամէնէն անյարմարն է անոնց հետ զբաղիլը: Հակառակ անյարմար ըլլալուն, անոնք պէտք չէ անտեսուին, որովհետեւ մահացու կը դառնան եթէ անոնց հարցը չլուծուի: Մի՛ իյնար անոնք եղածին պէս ձգելու ծուղակին մէջ, եւ երբեք միայն տեսանելի բաժինը մի կտրեր՝ մտածելով, որ այդպիսով արմատը պիտի մեռնի: Արմատը պիտի չմեռնի, այլ՝ պիտի ծառայէ զանիկա աւելի զօրացնելու: Շատ յաճախ գոհացում կ'ունենանք այն խաբկանքով, որ ամէն բան մեր հակակշիռին տակ է կամ ամէն բան լաւ կ'ընթանայ, փոխանակ արտօնելու, որ Սուրբ Հոգին խորունկ գործ մը ընէ մեր մէջ:

Ուստի եկէք ըլլանք աշախուհ պարտիզպաններ: Եթէ դառնութիւն նկատենք մեր սիրտերուն մէջ (անիկա կը փորձէ մէջտեղ ելլել ամէն եղանակի մէջ), կրնանք զանիկա տանիլ մեր Վարպետ Պարտիզպանին, որ պիտի օգնէ մեզի բացայայտելու արմատներու համակարգը, որպէսզի կործանենք զանիկա: Եթէ անոր Խօսքը սուզուի մեր սիրտի հողին մէջ, պիտի մշակենք գեղեցիկ հունձք մը:

*Հայր, օգնէ ինձի, որ փութաջան ըլլամ անձս մշակելու մէջ՝
երբեք չվախնալով բացայայտել դառնութեան արմատները,
որոնք կրնան աճած ըլլալ մէջս: Զգուշացո՛ւր զիս ամէն
պզտիկ ծիլի մասին եւ զօրացո՛ւր զիս քու զօրութիւնովդ՝
արմատախիլ ընելու համար այն ինչ որ հոն չի պատկանիր:*

Եւ Զօրաւոր Եմ,

ԵՐԲ ՀՈԳ ԿԸ ՏԱՆԻՄ ՍԻՐՏԻՍ
ԻՆՉՊԷՍ ՊԱՐՏԷՋԻ ՄԸ:

ԴԱՏԱՍՏԱՆԻ ՏՈՒՓԸ

*Մի՛ դադարեք ուրիշները, որպեսզի Աստուած ալ ձեզ չդադարէ.
որովհետեւ ի՛նչ սկզբունքով որ ուրիշները դադարէ՞ք՝ Աստուած
անով պիտի դադարէ ձեզ, եւ ի՛նչ չափանիշ որ գործածէ՞ք՝
նոյնը Աստուած պիտի գործածէ՝ ձեզ դադարելու համար:*

ՄԱՏԹԷՈՍԻ 7.1-2

Մեծ մասս կը սիրենք կոկիկ տուփերու մէջ ունենալ ամէն բան: Մենք աւելի հանգիստ կ'ըլլանք երբ կը գիտնանք, թէ ի՛նչ կը յարմարի իւրաքանչիւր բաժինի մէջ: Եթէ չկարենանք բան մը կամ մէկը մեր տուփերուն մէջ դնել, յաճախ կը դատենք: Բայց իրականութեան մէջ ատիկա աւելի շատ բան կ'ըսէ մեր մասին քան այն անձին, զոր կը դատենք: Կը յիշեմ ի՛նչպէս չարչարուեցայ միտքերով կացութեան մը մէջ, որ պատահեցաւ երբ ես միայն քանի մը տարիէ ի վեր Քրիստոնեայ էի: Պարզապէս զանկա չէի կրնար կոկիկ տուփի մը մէջ յարմարցնել:

Կար Քրիստոնեայ զոյգ մը, որ բացէ ի բաց վկայեց, թէ Աստուած ի՛նչպէս միացուցած էր զիրենք ամուսնութեամբ: Մենք ժամանակ անցուցած էինք երկուքին հետ ալ եւ գիտէինք, որ երկուքն ալ անկեղծօրէն կը սիրէին զԱստուած եւ Աստուծոյ ժողովուրդը: Յանկարծ ամէն տեսակի տգեղ ըսիւսաւներ լսուեցան իրենց մասին եւ շատ կարճ ժամանակ ետք անոնք իրենք զիրենք գտան ամուսնալուծման ցաւերուն մէջ: Շնութիւն չէր եղած. այնպէս կ'երեւէր, թէ անոնք յարմար չէին իրարու: Ասիկա մեծապէս զարմացուց զիս: Ես ալ դժուարութիւններ կ'ունենայի ամուսնութեանս մէջ եւ վստահութիւնս Աստուծոյ վրայ դրած էի, որ պիտի լուծէր զանոնք, որովհետեւ վստահ էի, որ Աստուած էր, որ ճոնը եւ զիս մէկտեղ բերած էր: Սակայն այդ զոյգը, որոնք նաեւ ըսած էին, որ Աստուած զիրենք միացուցած էր՝ հրաժարեցաւ:

Ատիկա ցնցեց իմ վստահութիւնս այն բանին վերաբերեալ, թէ Աստուած կրնար բան մը ընել ամուսնութեանս մէջ: Մղուած զգացի այդ գոյգին մէջ թերութիւն մը գտնելու: Եթէ միտքիս մէջ որակագրկէի զիրենք, կրնայի զիրենք տուփի մը մէջ թխմել:

Այդ ներքին տագնապս բաժնեկցեցայ վստահելի խորհրդատուի մը հետ՝ ակնկալելով երկար եւ լաւապէս մտածուած աստուածաշնչական պատասխան մը: Բայց փոխարէնը ան պարզապէս հառաչեց եւ ըսաւ. «Դժուար խնդիր մըն է: Ուրախ եմ, որ ես պէտք չունիմ ըլլալու դատաւորը»:

Անմիջապէս զգացի, որ այդ կացութեան կշիռքը կամ բեռը վերցուեցաւ ինձմէ: Անոր պարզ բառերը ազատ արձակած էին զիս իմ բեռէս: Ան ճիշդ էր: Ես արտօնած էի Սատանային, որ դրդէր զիս, որ դատէի ուրիշները, եւ ատիկա պատճառ եղած էր, որ կասկածէի Աստուծոյ հաւատարմութեան վրայ: Ես իմ ամուսնութիւնս իրենցինով չափած էի, եւ սահմանափակած էի զԱստուած՝ անոնց ամուսնութեան մէջ, ըստ ինձի, անոր չըրածովը: Ես դատած էի՝ վախի պատճառով: Մենք յաճախ կը դատենք՝ մենք մեզ պաշտպանելու համար վիրաւորանքէ կամ քննադատութենէ, բայց իրապէս մեզմէ իւրաքանչիւրն ալ յանցաւոր է: Այսօրուայ հատուածին յաջորդող համարը կ'ըսէ. «Ինչո՞ւ եղբօրդ աչքին մէջ եղած շիւղը կը տեսնես եւ չես անդրադառնար, թէ աչքիդ մէջ գերան կայ» (Մատթէոսի 7.3):

Յիսուս մեզի կը յիշեցնէ, թէ պէտք է դատողութեան գերանը հանենք մեր աչքէն, որպէսզի յստակ տեսնենք եւ իրապէս կարենանք օգնել ուրիշներուն եւ մենք մեզի: Երբ չենք կրնար ուրիշները յարմարցնել մեր տուփերուն մէջ, պէտք է քննենք մեր սիրտերը եւ շնորհակալ ըլլանք, որ մեր գործը չէ դատելը:

Հայր, երբ կը դադրեմ ուրիշները, յիշեցո՛ւր ինձի, որ այն նոյն դատողութեան չափը, որով ուրիշները կը դադրեմ՝ պիտի գործածուի ինձի համար: Օգնէ՛ ինձի, որ ողորմութիւն ցանեմ, քանի որ ես պէտք ունիմ ողորմութեան:

Եւ Զօրաւոր ԵՏ:

ՈՐՈՎՎՇԵՏԵՒ ԿԵԱՆՔԸ Կ'ԱՊՐԻՍ
ԴԱՏՈՂՈՒԹԵԱՆ ՏՈՒՓԷՆ ԴՈՒՐՍ:

ԸՆԴՈՒՆՒԼ ԵՒ ԱՐՁԱԿԵԼ

*Իսկ եթե խոստովանինք մեր մեղքերը, վստահ եղէ՞ք՝
թէ Աստուած, որ արդար է, պիտի ներէ մեր մեղքերը եւ
մեզ պիտի սրբէ մեր բոլոր անիրաւութիւններէն:*

ԱՅՈՎՀԱՆՆԷՍԻ 1.9

Մեծ ազատութիւն կայ այս խոստումին մէջ: Երբ կը խոստովանինք մեր մեղքերը, ան ոչ միայն կը ներէ մեզի, այլեւ կը մաքրագործէ մեզ մեր ընտրութիւններուն հետեւանքներէն: Ինչո՞ւ համար մենք պատրուակներ ընելով կը փորձենք մեզմէ շեղել յանցանքը: Ես սորված եմ, որ երբ կ'ընդունիս սխալը, անիկա այլեւս չի տիրեր վրայ: Պատճառ չկայ մեղադրանքի խաղը խաղալու երբ Յիսուս մեր յանցանքները առաւ. մենք կը խոստովանինք եւ կը շարունակենք մեր ճամբան:

Առաջին, եկէք խօսինք ընդունելու մասին: Երբ տակաւին փոքր էի, կար Ֆլիփ Ուիլսըն անունով կատակերգակ մը, որ կը խաղար Ճերալտին անունով տիպար մը, որ շարունակ կ'ընէր հետեւեալ պատրուակը. «Չարախօսը ստիպեց, որ ընեմ»: Մենք կրնանք ստեղծագործ ըլլալ պատրուակներ հնարելու մէջ, բայց իրականութիւնը այն է, որ չարախօսը չի կրնար ոեւէ մէկուն ընել տալ որեւէ բան, զոր ան ընել չ'ուզեր: Կը հաւատամ, որ կայ ուրիշ ձեւ մըն ալ, որով մենք ակամայ մեզմէ կը շեղենք մեղադրանքը եւ պատրուակներ կ'ընենք: Այդպէս ըրած կ'ըլլանք երբ կ'ըսենք. «Չկրցայ չընել» կամ «Չկրցայ ինքզինքս կառավարել»: Այդպիսով հակասած կ'ըլլանք Աստուծոյ՝ որ կ'ըսէ, թէ կրնանք ընել ամէն բան Քրիստոսով, որ կը զօրացնէ մեզ, եւ ըսած կ'ըլլանք, թէ մեղքը կը տիրէ մեր վրան եւ անկարող ենք տիրապետելու անոր: Անպայման մեր բերանով չենք ըսեր ատիկա, բայց շատ հաւանական է, որ

ատիկա ըսենք մեր կենցաղով: Ապաշխարութիւնը կ'ըսէ. «Ես գործեցի այդ մեղքը կամ սխալը, կը զղջամ եւ կը դառնամ քեզի՝ Տէր, որպէսզի զիս լուսա եւ մաքրես»:

Երբ կ'ընդունինք մեր սխալը, կը հասնինք աւելի դժուար քայլի մը. արձակել: Պէտք է արձակես դուն քեզ: Ասիկա շատ կարեւոր է, քանի որ անիկա բանալի գործօն մըն է քու զգացական, ֆիզիքական եւ հոգեւոր առողջութեանդ համար: Օգուտ մը չունի դուն քեզ փորձել պատժելը բանի մը համար, զոր Աստուած արդէն ներած է եւ մոռցած: Եթէ ան քու անօրէնութիւններդ հեռացուցած է քեզմէ այնքան որքան արեւելքը հեռու է արեւմուտքէն (տե՛ս Սաղմոսներու 103.12), անիմաստ է, որ այդ նիւթը բանաս:

Աստուծոյ բարութիւնը եւ ազնուութիւնն են, որոնք մեզ կ'առաջնորդեն ապաշխարութեան: Ասիկա հակառակ է մեր մէջ արմատացած բոլոր բաներուն: Մենք կ'ուզենք գին վճարել. այդպէս է, որ արձակուած կը զգանք յանցաւորի զգացումէն: Փոքր տարիքիս միշտ լսած եմ հետեւեալ խօսքը. «Կը հաւատամ, որ զղջացած ես երբ փոխուիս»: Բայց Աստուած իր ողորմութիւնը կ'երկարէ մեզի երբ արժանի չենք ըլլար անոր՝ որպէ՛սզի փոխուինք: Ողորմութիւն կ'ըլլայ երբ չենք ստանար այն բանը, որուն արժանի ենք: Ասիկա մեզմէ շատերուս համար դժուար հասկնալի է: Մենք աւելի հանգիստ ենք օրէնքներով եւ «աչք՝ աչքի դէմ» ու «ակռայ՝ ակռայի դէմ»ով: Օրէնքը, մեր թշնամին եւ մեր միտքին մէջ գտնուող ամբաստանողը միշտ դատաստան կամ դատողական կեցուածք պիտի պահանջեն մինչև Հոգին ողորմութիւն կը շնորհէ: Ընդունէ՛ այդ ողորմութիւնը, բարեկամ: Ընդունէ՛ մեղքէ զուրկ ըլլալու Աստուծոյ ուղին:

*Տէր, յայտնէ ինձի եթէ որեւէ ձեռով դէմ կը դնեմ մեղքէն
ազատագրուելու քու նախախնամութեանդ: Յոյ՛ց փուր ինձի,
թէ ի՛նչ մարզի մէջ պէտք է բան մը ընդունիմ եւ արձակեմ:*

Եւ Զօրմեոյ Եւ,

ԵՐԲ Կ'ԸՆԴՈՒՆԻՄ ՍԽԱԼՆԵՐՍ ԵՒ ԿԸ ՍՏԱՆԱՄ
ԱՅՆ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆԸ, ՈՐՈՒՆ ԱՐԺԱՆԻ ՉԵՄ:

ՉԻՆՈՒԱԾ՝ ԿԵԱՆՔՈՎ ՑՈՅՑ ՏԱԼՈՒ ՅԱՄԱՐ

*Ով որ իր եղբայրը կ'ատէ՝ մարդասպան մըն է. եւ գիտէք, թէ
ոեւէ մարդասպան յաւիտենական կեանքը չունի իր մէջ:*

ԱՅՈՎՀԱՆՆԷՍԻ 3.15

*Մ*եր աշխարհին մէջ շատ ատելութիւն կայ: Ժամանակն է, որ այս համարը լուրջի առնենք: Ով որ կ'ատէ իր եղբայրը ի՞նչ մըն է... Մարդասպանութիւնը ներս կը մտնէ ատելութեան դուռէն: Այս համարը կը սկսի ըսելով «Ով որ», եւ «Ով որ»ին մէջ կայ ամէն մարդ: Չկայ բացառութեան յօդուած մը, որ կ'ըսէ՝ «Ով որ իրապէս վատ վարմունքի արժանացած է իր եղբորմէն կամ եղբայրներէն՝ բացառուած է»: Երբ կը կարդանք՝ ով որ, ոեւէ մէկը կամ ամէն մարդ, ատիկա կը նշանակէ, թէ ատիկա բոլորիս եւ իւրաքանչիւրիս համար կիրարկելի է: Կցուած չկայ օրինականօրէն դուրս գալու կամ հրաժարելու յօդուած մը:

Եւ ահա՛ լաւ լուրը: Ատիկա առիթ մըն է մեզի համար զօրանալու եւ շնորհքի մէջ աճելու: Մինչ մենք կ'ենթարկուինք իր Խօսքին, ան պիտի զինէ մեզ՝ ճշմարտութիւնը ապրելու համար: Վերի համարը կ'ըսէ, թէ ով որ կ'ատէ իր եղբայրը մարդասպան մըն է: Ուրիշ ձեւ կամ լուծում չկայ. ատիկա ուժգին է: Ես չեմ ուզեր մարդասպան կոչուիլ: Եւ սակայն եղած են ժամանակներ իմ Քրիստոնէական կեանքիս ընթացքին երբ ատելութիւն գտած եմ պահուած սիրտիս մութ խորերը: Արդեօք ատիկա կը նշանակէ, որ ես յաւիտենապէս դատապարտուած եմ իբրեւ օրինազա՞նց մը կամ նոյնիսկ մարդասպա՞ն մը: Ոչ, եթէ զղջամ եւ մերժեմ արտօնել, որ խաւարը մնայ եւ աճի աննկատ կերպով կամ անարգել:

Մենք ապրած ենք Աստուծոյ զօրացնող շնորհքը եւ ծածկող գութը: Չկայ մեղք մը, որ այնքան խաւար կամ գարշելի է, որ ան պիտի չներէ: Աստուած կը ներէ մարդասպաններուն, որոնք կը զղջան:

Մենք կեանքին կը նայինք Թագաւորութեան տեսանկիւնէն եւ ոչ թէ մեր երկրաւոր դատական համակարգի տեսանկիւնէն: Մենք այլեւս սոսկ այս երկրին քաղաքացիները չենք, որովհետեւ Աստուածաշունչը մեզի կ'ըսէ. «Այլեւս Աստուծոյ համար օտար եւ խորթ չէք, այլ՝ Աստուծոյ ժողովուրդին հետ համաքաղաքացի էք եւ Աստուծոյ ընտանիքին հարազատ անդամները» (Եփեսացիներուն 2.19):

Մենք կը կառավարուինք երկինքի բարձր ճամբաներով կամ ձեւերով եւ անո՛նց հաշիւ կու տանք, ոչ թէ այս երկրի օրէնքներուն եւ դատարաններուն: Երկինքը չի կառավարուիր քարի վրայ փորագրուած արտաքին օրէնքներով եւ կանոններով. անիկա կը փոխակերպէ մեզ մեր սիրտին վրայ գրուած գաղտնի *քոյրով*: Մեռած, անկեանք օրէնքները մեռած, կարծր սիրտերու համար են: Ազատութեան օրէնքը մարմնեղէն սիրտերու համար է: Ատոր համար է, որ երկրի դատարաններուն մէջ պէտք է իրապէս մէկը սպաննած ըլլաս, որպէսզի մարդասպան համարուիս, բայց Թագաւորութեան մէջ պարզապէս ատելը մեզ այդպիսին կը դարձնէ: Ժամանակն է, որ լուծենք հարցը ստուերի մէջ մնացած որեւէ ատելութեան, որ կրնայ գոյութիւն ունենալ մեր սիրտերուն մէջ եւ դէմ դնենք մարդասպանութեան հոգիին:

*Երկնաւոր Հայր, բացայայտ սիրտիս մէջ արելութեան որեւէ մարգ:
Կը մերժեմ անիկա՝ ինչպէս պիտի մերժէի մարդասպանութեան
մեղքը: Ներէ ինձի՝ ինչպէս ես ալ կը ներեմ ուրիշներուն:*

Եւ Զօրաւոր Եւ,

ԵՐԲ ԿԸ ՎՍՏԱՀԻՄ ԱՍՏՈՒԾՈՅ ԳԵՐԲՆԱԿԱՆ
ԶՕՐՈՒԹԵԱՆ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԵՒ ՇՆՈՐՀՔԻՆ:

ՉԿԱՅ

ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԻՒՆ

Յիսուս ըսաւ. «Ես ալ քեզ չեմ դատապարտեր.
գնա՛ եւ ասկէ ետք մի՛ մեղանչեր»:

ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 8.11

Մտնք են այն բառերը, զորս մեր Տէրը կ'ըսէ բացայայտօրէն մեղաւոր կիներուն: Դժբախտաբար Եայի դուստրերուն դէմ Սատանային ամէնէն կատաղի յարձակումը յաճախ կը շղթայագերծուի կրօնի կերպարանքին տակ: Յովհաննէսի 8-ին մէջ յստակօրէն կը տեսնենք օրէնքին ու կրօնին անգթութիւնը եւ Աստուծոյ գութին ու սիրոյն գեղեցկութիւնը: Եկէք միասին այցելենք այդ տեսարանը եւ հաւանաբար զանիկա տեսնենք ուրիշ լոյսի տակ:

Վաղ առաւօտեան աղօտ լոյսին տակ մեծ բազմութիւն մը կը սպասէ Յիսուս անունով երիտասարդ ռաբբի մը: Յիսուս շատ տարբեր է: Երբ կը խօսի, Հայր Աստուծոյ խօսքերը կը լսես:

Լուսաբացին Յիսուս կը յայտնուի իր աշակերտներուն հետ: Բազմութեան մէջ քանի մը հոգիի բարեւելէ ետք, կը նստի՝ ուսուցանելու համար: Ուշադրութեամբ մտիկ կ'ընեն իրեն՝ իրենց սիրտին մէջ ընդունելով անոր ամէն մէկ ըսածը: Յանկարծ իրարանցում մը կ'երեւնայ հորիզոնին վրայ: Յիսուսի եւ իր աշակերտներուն գլուխներուն վրայէն երեւցաւ ուրիշ խումբ մը, որ կը մօտենար: Անոնց բարկացած ձայները եւ մութ կերպարանքները պայքարի մէջ են մէկու մը հետ: Անոնք կրօնաւոր ղեկավարներն են, որոնք իրենց հետ կը քաջքշեն տարտղնուած կին մը, որ ամուր բռնած է կտաւի կտոր մը՝ փորձելով ծածկել իր մերկութիւնը: Յայտնի է, որ քաջքշուած էր ամօթի անկողինէ մը: Տղամարդը, սակայն, մէջտեղ չկայ:

Անոնք Յիսուսի կ'ըսեն. «Վարդապե՛տ, այս կինը շնութիւն ըրած ատեն բռնուեցաւ: Մովսէս իր տուած Օրէնքին մէջ մեզի պատուիրեց այսպիսիները քարկոծել: Արդ, դուն ի՞նչ կ'ըսես այս մասին» (Յովհաննէսի 8.4-5):

Ի՞նչ պիտի ըսէ Յիսուս այդպիսի կնոջ մը: Սկիզբը չ'ուզեր կնոջ նայիլ կամ անոնց պատասխանել: Կը ծռի եւ կը սկսի հողին վրայ մատովը գրել: Ապա ան միայն ամբաստանողներուն կ'ուղղէ իր խօսքը՝ մարտահրաւեր ուղղելով, որ անոնց մէջէն անմեղը նետէ առաջին քարը: Մէկ առ մէկ մարդիկը կը հեռանան: Կ'երթան բոլորը մինչեւ որ կը մնան Յիսուս, բազմութիւնը եւ վստահաբար յանցաւոր կինը: Հակառակ անմեղ ըլլալուն, Յիսուս քար չի նետեր կնոջ վրայ: Միայն ան է արդար դատաւորը, որ եկած էր փրկելու զայն եւ ոչ դատապարտելու:

Յիսուս լուռ կը մնայ մինչեւ որ կինը ամբաստանողները կ'երթան: «Ապա շտկուեցաւ եւ հարցուց կնոջ. “Ո՛վ կին, ո՛ր ես քեզ ամբաստանողները. մէկը քեզ չդատապարտե՞ց”: Անիկա պատասխանեց. “Ո՛չ մէկը, Տէ՛ր”: Յիսուս ըսաւ. “Ես ալ քեզ չեմ դատապարտեր. գնա՛ եւ ասկէ ետք մի՛ մեղանչեր”» (Յովհաննէսի 8.10-11): Կինը Յիսուսի աչքերուն մէջ կը տեսնէ ներում, սէր եւ նոյնիսկ ցաւ: Ինք այլեւս մահուան եւ խաւարի դուստր չէ, այլ՝ կեանքի եւ լոյսի: Երբ օձը մեր ամօթը քաշքշելով դուրս կը հանէ եւ կ'ամբաստանէ մեզ, մենք ալ կրնանք այդ նոյն աչքերուն նայիլ եւ գիտնալ, թէ ան չի դատապարտեր մեզ: Անոր ողորմութիւնը կը պաշտպանէ մեզ, եւ անոր Շնորհքը մեզի կ'ըսէ, թէ կրնանք «երթալ... եւ այլեւս չմեղանչել»:

Տէր, շնորհակալութիւն մեզ պաշտպանելուդ համար երբ մենք չէինք կրնար մենք մեզ պաշտպանել: Շնորհակալութիւն մեզ փրկելուդ եւ չդատապարտելուդ համար:

Եւ Զօրմեոյ Ե՛՛՛՛,

ԵՐԲ ԿԸ ԶԳԵՄ, ՈՐ ՓՐԿԻՉԸ ՊԱՇՏՊԱՆԷ
ԶԻՍ ԱՄԲԱՍՏԱՆՈՂՆԵՐՈՒՆ ԴԻՄԱՅ, ԵԻ
ԱՅԴՊԻՍՈՎ Կ'ԵԼԼԵՄ ԱՄՕԹԷՍ:

Զօրանքի՝

Ռեֆլեկսիոնային մեջ

ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՄԲ ՄՏԻԿ ԸՆԵԼ

*Բերանովդ մի՛ արտորար, եւ սիրտդ թող չշտապէ
Աստուծոյ առջեւ խօսելու. քանի Աստուած երկինքն է,
իսկ դուն երկրի վրայ, քու խօսքերդ թող քիչ ըլլան:*

ԺՈՂՈՎՈՂԻ 5.2

*Ստուածաշունչը շատ բան ունի ըսելու մեր խօսքերուն
ձգրութեան եւ մեր բերանները կառավարելու մասին:*
Սակայն նաեւ կարելոր է, որ ուշադիր ըլլանք լսելու ձգրութեան:
Լսելը կը պահանջէ կարգապահութիւն, ինչպէս նաեւ ժամանակ
կ'առնէ եւ համբերութիւն կը պահանջէ: Անիկա կը նշանակէ, որ
կը հարցնենք այն հարցումները, որոնք պիտի օգնեն մեզի, որ
հասկնանք ըսուածը, որպէսզի կարենանք աւելի խորանալ: Շատ
կարելոր է, որ մարդիկ զգան, որ իրենց շուրջինները կը լսեն
զիրենք կամ իրենց կարծիքները նկատի կ'առնեն:

Ատիկա ընելու համար պէտք է դէմ դնես ուրիշներու մտածածները
ենթադրելու մղումներուն. մարդիկ կրնան զարմացնել մեզ:
Խօսք մը կայ, որ կ'ըսէ. «Ամէն մարդու, որ կը հանդիպիս, բան
մը ունի քեզի սորվեցնելու»: Մենք կ'աճինք երբ մնայուն կերպով
սորվողներ ենք: Մտիկ մի՛ ըներ, որպէսզի յետոյ դուն խօսիս: Մտիկ
ըրէ՛, որպէսզի սորվիս: Դէ՛մ դիր դիմացինին խօսած ատեն քու
պատասխանդ ձեւաւորելու մղումիդ (ինչպէս զոյգեր կ'ընեն երբ կը
կռուին): Դիմացինդ պատուած կ'ըլլաս երբ իրապէս մտիկ կ'ընես
անոր սիրտէն ելած խօսքերուն: Մարդիկ կը գիտնան երբ դուն
իրենց մտիկ կ'ընես: Ես շատ կը ճամբորդեմ, եւ Աստուած ինծի
շատ առիթներ կու տայ իր սէրը եւ լոյսը բաժնեկցելու օգանալին

մէջ. Խօսակցութիւնը միշտ կը սկսի մտիկ ընելով: Մարդիկ մտիկ կ'ընեն քու ըսելիքներուդ եթէ դուն մտիկ ընես իրենց ըսելիքներուն: Մտիկ ըրէ իրենց կարիքներուն, ցաւերուն եւ մտածումներուն: Ապա խնդրէ՝ Հոգիէն, որ խօսի քու միջոցաւ:

Ուրիշներուն լաւ կերպով մտիկ ընելը քու մէջդ ալ կրնայ բան մը արթնցնել: Եկէք չարտօնենք, որ մեզմէ վրիպի այն ինչ որ կրնանք սորվիլ պարզապէս որովհետեւ շատ կ'աճապարենք բաժնեկցելու այն ինչ որ արդէն գիտենք:

Առակը կը զգուշացնէ. «Խօսքերու շատութեան մէջ յանցանք չի պակսիր, բայց իր շրթունքը զսպողը ուշիմ է: Արդարին լեզուն ընտիր արծաթ է. ամբարիշտներուն սիրտը քիչ արժէք ունի» (10.19-20): Ընտիր արծաթը կը զտուի կրակով: Երբ կ'արտօնենք, որ Աստուծոյ Խօսքին կրակը մաքրէ մեր խօսակցութիւնը՝ անմաքրութիւնները եւ անխոհեմութիւնները կը վերնան մեր խօսակցութիւններէն: Յակոբոսի Գիրքը կը քաջալերէ մեզ, որ դանդաղ ըլլանք խօսելու մէջ: Քանի՜ առիթներով ես փրկուած եմ կացութենէ մը երբ դանդաղած եմ խօսելու մէջ: Որքան լսեմ, այդքան աւելի դանդաղ պէտք է խօսիմ: Նոյնիսկ Աստուծոյ հետ խօսակցութեան մէջ, մեզի կը թելադրուի շատախօս չըլլալ: Ան երկինքն է մինչ մենք պարզապէս երկրի բնակիչներ ենք: Աստուծոյ հանդէպ մեր ճիշդ վախի եւ յարգանքի մէկ կարեւոր մասն է գիտնալ ե՛րբ խօսիլ եւ ե՛րբ մտիկ ընել: Մենք կը սորվինք մտիկ ընելով, ոչ թէ խօսելով: Ատիկա կը նշանակէ, որ աղօթքի կեանքդ պէտք է նաեւ պարունակէ մտիկ ընելու ժամանակ: Աստուծոյ հետ չկայ անհանգիստ լռութիւն ըսուած բան: Կա՛նգ առ: Մտի՛կ ըրէ... Աստուծոյ, եւ այն մարդոց, զորս ան կը դնէ ճամբուդ մէջ, եւ աւելի պիտի զօրանաս:

*Տէր, օգնէ՛ ինձի, որ լսեմ, թէ մարդիկ իրապէս ի՛նչ կ'ըսեն
եւ պարասխանեմ այնպէս ինչպէս դուն կ'առաջնորդես:*

Մարզէ՛ սիրտս, որ մտիկ ընէ քու ծայնիդ ամէն օր:

Եւ Զօրաւոր Եմ,

ԵՐԲ ԼԱԻ ԿԵՐՊՈՎ ՄՏԻԿ Կ'ԸՆԵՄ
ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՄԱՐԴՈՅ:

ԱԽՈՐԺԱԿԴ ԿԱՌԱՎԱՐԵԼ

Ամէն ինչ արքայութեան է ինծի. բայց ամէն ինչ օգտակար չէ: Ամէն ինչ արքայութեան է ինծի. բայց պէտք չէ որեւէ բանի գերին դառնամ:

Ա.ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ 6.12

Զընդունիմ, որ յաճախ փոքրիկ կ'ունենամ առանց կաթի տուրմի եւ սուրճի: Միշտ կը մտածեմ, որ արդեօք ես այդ փոքրիկները պիտի ունենամ՞ ի եթէ բնաւ համտեսած չըլլայի այդ տեսակի աղուոր տուրմ: Իսկ սուրճի պարագային... Եթէ երբեք խառնած չըլլայի լեփլեցուն մեծ դգալ մը Պրէյլըրգի սուրճի համով պաղպաղակը գաւաթ մը սուրճի մէջ եւ վրան կ'ինեմնոն սրսկած չըլլայի՝ ամբողջ ջանքով փորձելով արթուն մնալ առտու մը, արդեօք տակաւին փոքրիկս *մոքա լաթէ* պիտի ուզե՞ր:

Անշուշտ պիտի չուզէր: Եւ բնաւ պիտի չգիտնայի, թէ ի՞նչ կը վրիպէր ինձմէ... այդ համով բաներուն ճաշակը պիտի չունենայի բնաւ: Այնքան ատեն, որ ես սուրճը կը ճանչնայի իբրեւ թանձր, սեւ, դառն հեղուկ մը, կ'ատէի զանիկա: Այնքան ատեն, որ տուրմին միայն ճերմակին եւ կաթով տարբերակին ծանօթ էի, հարց չունէի դէմ դնելու կամ չուտելու:

Իրականութեան մէջ պայքար չկայ... Ես դէմ չեմ դներ ատեն-ատեն տուրմ ուտելու իմ մղումիս կամ զանազան համերով հարստացած սուրճս խմելու առաւօտեան արարողութեանս... Ես կը վայելեմ զանոնք: Անոնք իմ տէրերս չեն, բայց մաս կը կազմեն այն հանգիստի արարողութեանս, որ կ'ընեմ: Կրնամ մէկ շաբաթ կամ աւելի անցընել առանց տուրմի, եւ ոչ ոք կը վնասուի: Խոժոռ չեմ ըլլար: Բայց հաճոյք կը ստանամ երբ ուտեմ զանիկա: Ինչ կը վերաբերի սուրճին, եթէ պէտք ըլլայ, որ անմիջապէս արթննամ փոխանակ մշուշի մը մէջէն անցնելու պէս արթննալու, կը խմեմ զանիկա:

Բայց ի՞նչ կը պատահի եթէ անոնցմէ ստացած հաճոյքս գերազանցէ ուրիշ առողջապահական կերակորներու իմ փափաքս: Հապա եթէ որոշէի, որ զգայական հաճոյքը (եկած՝ առանց կաթի տուրմէն) եւ արագ զարթնումի վիճակը (եկած՝ սուրճէն) աւելի կարելոր էին քան որեւէ ուրիշ զգացում կեանքիս մէջ: Այդ պարագային խառն կանաչ աղցանները որեւէ գրաւչութիւն պիտի չունենային, որովհետեւ ինծի պիտի չտային տուրմին տուած զգացումը: Թերեւս ուտելիքի եւ խմելիքի իմ բոլոր միւս ընտրութիւններս ձանձրացուցիչ եւ անհամ պիտի թուէին:

Իսկ եթէ իրականութենէն փախուստ տայի եւ երկու շաբաթ ապրէի միմիայն տուրմով եւ սուրճով... Պիտի ըլլայի ուրախ, նիհար եւ արթուն... առնուազն որոշ ժամանակ: Բայց ատկէ ետք ամէն բան հաւասարակշռութենէ դուրս պիտի գար եւ ախորժակներս անգամ մը եւս պէտք էր ստուգուէին եւ հաւասարակշռութեան բերուէին:

Ըսելիքս այն է, որ մենք ենք, որ մեր ախորժակները եւ փափաքները կը շինենք կամ կը զարգացնենք: Ըլլայ ատիկա կերակորի համար, սեռային յարաբերութեան, հաճելի ժամանցի կամ զբաղումի կամ ընկերային հաղորդամիջոցներու... որեւէ ախորժակ կրնայ մոլութեան վերածուիլ՝ իրականութեան տեղը գրաւելով եւ մեզ հաւասարակշռութենէ հանելով: Ատոր համար պէտք է զօրաւոր ըլլանք եւ ինքնակառավարում ունենանք եւ ոչ թէ կառավարուինք մեր ախորժակներով: Մենք ունինք զօրութիւնը աւելցնելու կամ նուազեցնելու անոնց ազդեցութիւնը՝ մեր անոնց տուած կարելորութեան չափով:

Երկնաւոր Հայր, ցոյց փոր ինծի ի՛նչպէս ախորժակներու արժեւորում մը ընեմ, որպէսզի անոնք հաւասարակշռութենէ դուրս չելլեն: Տո՛ւր ինծի իմաստութիւնը գիտնալու, թէ ո՞րքանը չափէն աւելի է կեանքիս մէջ որեւէ բանի պարագային, որպէսզի բանի մը գերին չդառնամ:

Եւ Հօրաւոր Եւ,

ՈՐՈՎՀԵՏԵՒ ԿԸ ԿԱՌԱՎԱՐԵՄ ԱԽՈՐԺԱԿՆԵՐՍ ԵՒ
ՀԱՒԱՍԱՐԱԿՇՈՒԹԻԻՒՆ ԿԸ ՊԱՀԵՄ ՓՈԽԱՆԱԿ
ԱՐՏՕՆԵԼՈՒ, ՈՐ ԱՆՈՆՔ ԿԱՌԱՎԱՐԵՆ ԶԻՍ:

ՀԱՐՑ ՉԷ ԲԱՐԿԱՆԱԼԸ

Բարկացէ՛ք, բայց մի՛ մեղանչէք:

ԵՓԵՍԱՑԻՆԵՐՈՒՆ 4.26

*Չ*փեսացիներուն 4.26-ի առաջին բաժինը բաւական դիւրին է. «Բարկացէ՛ք»: Ես ասիկա կրնամ իրագործել առանց իսկ ջանք թափելու: Աստուած մեզի կ'ըսէ՝ բարկացէ՛ք, որովհետեւ հարց չէ բանէ մը վրդոված կամ նեղացած ըլլալը: Վրդովիլը կամ բարկանալը վաւերական մարդկային զգացում մըն է, ինչպէս են ուրախութիւնը, տառապանքը, հաւատքը եւ վախը: Աստուած ալ կը բարկանայ. իրականութեան մէջ՝ բաւական յաճախ: Հին Կտակարանը քանի մը հարիւր անգամ կը նշէ Իսրայէլի եւ այլ ազգերու դէմ Աստուծոյ բարկանալուն մասին:

Երբ զգացում մը կը ճնշուի որովհետեւ մէկը չի վաւերացներ զանիկա կամ անոր գոյութիւնը չի ճանչնար կամ չ'արժեւորեր, անիկա վերջաւորութեան անպատշաճ կերպով պիտի արտայայտուի: Հակառակ պարագային ալ, եթէ զգացում մը առանց կաշկանդումի արտայայտուի, ապա մեղքը պիտի յաջորդէ անոր: Աստուած Ի՛նք կը վաւերացնէ մարդուն բարկութիւնը: Եւ սակայն մեծ մասս չենք հասկնար իսկ զանիկա: Արդեօք անիկա մեր սիրելիներուն վրայ առարկաներ նետելը եւ պոռալ-կանչե՞լն է: Դաւաճանական վերաբերումի պատճառով քէ՞ն պահելն է: Ո՛չ: Ատոնք բարկութեան անպատշաճ արտայայտութեան օրինակներ են: Բարակ գիծ մը կայ բարկութեան եւ մեղքին միջեւ:

Տի Ամերիքըն Հերիթէճ Տիքընըրին բարկութիւնը կը սահմանէ

իրբեւ՝ «զօրաւոր, ընդհանրապէս ժամանակաւոր, տհաճութիւն կամ դժգոհութիւն մը՝ առանց արտայայտութեան որոշակի ձեւի մը»: Հարց չէ սաստիկ տհաճութիւն կամ դժգոհութիւն զգալը պատահարի մը պատճառով կամ մէկու մը մէկ ըրածին. համաձայն չըլլալ, չհաւնիլ կամ նեղանալ: Այդ զգացումները բոլորս ալ կը զգանք եւ թերեւս ամէն օր: «Բայց մի՛ մեղանչէք» բաժինն է, որ քիչ մը գործ կ'ուզէ: Սխալ պիտի ըլլայ նոյն հակազդեցութիւնները ակնկալել մանուկէ մը ինչպէս չափահասէ մը: Մինչ կը հասունանանք, պէտք է հասուննայ նաեւ ինքնակառավարման մեր կարողութիւնը: Սխալ չէ նեղանալը, բայց սխալ է ուրիշները պատժելը քանի որ մենք նեղացած ենք: Իբրեւ Քրիստոնեաներ՝ մենք այլեւս միայն մենք մեզ չենք ներկայացներ: Մենք Աստուծոյ ներկայացուցիչներն ենք, ինչ որ կը նշանակէ, թէ պէտք է մէկ քայլ ետեւ երթանք եւ նկատի առնենք, որ մեր հակազդեցութիւնները ի՛նչ ազդեցութիւն կ'ունենան ուրիշներու վրայ: Ոչ մէկս կրնայ կառավարել իրեն պատահածները, բայց բոլորս ալ կրնանք կառավարել մեր հակազդելու ձեւը:

Տէր, կը խնդրեմ, որ օգնես ինձի, որ զգացումներս լաւ կերպով տիրեմ եւ՝ այն հասունութեամբ եւ շնորհքով, որ պատշաճ է քեզի պատկանող զաւակի մը: Յոյ՛ց տոր ինձի բարկութեան եւ մեղքին միջեւ գործող նորք գիծը, եւ առաջնորդէ՛ զիս քու հոգիովդ երբ պէտք եղածէն ասելի մօտենամ անոր:

Եւ Զօրաւոր Եւ,

ՈՐՈՎՀԵՏԵԻ ԵՍ Կ'ԸՆՏՐԵՄ, ԹԷ Ի՛ՆՉ ՊԻՏԻ
ԸՆԵՄ ԲԱՐԿՈՒԹԵԱՆՍ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ:

ՈՒՇԱԴԻՐ ԸԼԼԱԼ ԲԱՌԵՐՈՒԴ

*Բոլորս ալ յանցանքներ ունինք: Ան որ գիտէ իր խօսքերը
կշռել՝ կատարեալ մարդ է, ինքզինքին իշխելու կարող:*

ՅԱԿՈԲՈՍԻ 3.2

Յակոբոսի Գիրքը կը շարունակէ բացատրել լեզուն կրթելու
մասին, 3-րդ եւ 4-րդ համարներուն մէջ.

Տե՛ս, թէ ի՛նչպէս ձիերուն բերանը սանձ կը դնենք՝ որպէսզի
մեզի ենթարկուին, եւ անով ձիուն բոլոր շարժումները կը
կառավարենք: Կամ դիտէ՛ նաւերը. ո՛րքան ալ մեծ ըլլան եւ
ինչպիսի՛ զօրաւոր հովերէ ալ քշուին, փոքրիկ ղեկ մը գիրենք
կ'ուղղէ դէպի հոն՝ ուր նաւավարը կը փափաքի տանիլ:

Մեր խօսքերը կրնան մեր կեանքը ուղղել դէպի բարին կամ
չարը: Խօսքերը ոչ միայն կ'ուղղեն մեր քայլերը, այլեւ կրնան
ըլլալ կործանումի գործակալներ: Յակոբոս կը շարունակէ մեր
խօսքերը բաղդատել պզտիկ կայծերու, որոնք կրնան ամբողջ
անտառ մը հրդեհել: Ոչ մէկս կ'ուզէ հրդեհել ամբողջ վայր մը: Միւս
կողմէ, Հռոմայեցիներուն Գիրքը կը խօսի զօրութեան մասին
խօսքերուն, որոնք մեզ կրնան փրկել եւ փոխադրել խաւարի
թագաւորութենէն լոյսի թագաւորութեան: Հռոմայեցիներուն
10.9-10-ին մէջ մեզի կը խոստացուի.

Եթէ բերանովդ խոստովանիս, թէ Յիսուս Տէր է, եւ սրտիդ մէջ հաւատաս, թէ Աստուած զինք մեռելներէն յարուցանեց՝ կը փրկուիս: Այսինքն՝ ոեւէ մէկը որ իր սրտին մէջ կը հաւատայ՝ կ'արդարանայ, եւ երբ բերանով խոստովանի՝ կը փրկուի:

Այն բանը, որ մեզ խնդիրի կ'առաջնորդէ, կրնայ մեզ անկէ դուրս հանել. «Մահն ու կեանքը լեզուին ձեռքն են. զայն սիրողները անոր պտուղը կ'ուտեն» (Առակներու 18.21): Մենք ձեւակերպուած ենք պատկերով մեր երկնաւոր Հօրը, որ իր խօսքերը կը գործածէ ստեղծելու եւ կեանք տալու համար: Ատիկա կը նշանակէ, որ մենք կրնանք ընտրել օրհնել կամ անիծել մեր խօսքերով:

Կը հաւատամ, որ ասիկա առիթ է շարունակ սորվելու: Եկէք խօսինք այնպիսի ձեւով մը, որ կ'առաջնորդէ կեանքի եւ ոչ մահուան ու կործանումի: Քու կեանքդ պիտի հետեւի քու բերանիդ, ուստի այնպէս ըրէ, որ խօսիս այն ուղղութեամբ, որ կ'ուզես երթալ:

Սիրելի Տէր, հսկէ՛ բերանիս: Թող խօսքերս ծառայեն իբրեւ ղեկ մը, որ զիս կը տանի ճիշդ ուղղութեամբ՝ խօսելով ճշմարտութեան եւ լոյսի բառեր փոխանակ կործանումի:

Եւ Զօրաւոր Եւ,

ՈՐՈՎՀԵՏԵՒ ԿՐ ԿԱՌԱՎԱՐԵՄ ԽՕՍՔԵՐՍ:

ԱԶԱՏԱԳՐՈՒԻԼ ԶՂՋՈՒՄԵՆ

*Աստուած երբեմն մեզ կը ցուցնէ՝ ապաշխարութեան միջոցաւ
փրկութեան առաջնորդելու նպատակով, որուն համար չենք
զղջար բնաւ: Մինչդեռ աշխարհի ցաւը մահուան կ'առաջնորդէ:*

Բ.ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՆ 7.10

*Ք*ոյրս ալ կը զղջանք բաներու համար, բայց պէտք չէ արտօնենք, որ անոնք կառավարեն մեր կեանքը: Կործանիչ զղջումը կրնայ առաջնորդել անոր, զոր Պօղոս կոչեց՝ «աշխարհի ցաւը»: Ի՞նչ է աշխարհի ցաւը: Անիկա սգալ է կորսուած բաներու համար, ինչպէս՝ համբաւ, դրամ, ստացուածք, յարաբերութիւններ կամ ուրիշ բաներ, որոնք կապուած են այս աշխարհին: Այդ տեսակի տառապանքը կը կեդրոնանայ այդ տեսակի կորուստներուն վրայ, առանց անդրադառնալու այն ցաւին, որ մեր արարքները կրնան պատճառած ըլլալ ուրիշներու: Այդ տեսակի զղջումը պիտի փորձէ փոփոխութիւն բերել առանձինը կամ կրօնական ջանքերով: Բայց այդ մօտեցումը հազուադէպօրէն կը հասնի սիրտի շարժառիթի արմատին:

Աստուծոյ պատճառած ցաւը անելի անդին կ'երթայ հետեւանքներու մասին մտահոգութենէն եւ կը կեդրոնանայ որեւէ վնասի վրայ, որ հասցուած է Աստուծոյ կամ ուրիշներու հետ մեր յարաբերութիւններուն: Անիկա շինիչ է եւ ոչ կործանիչ: Աստուծոյ պատճառած ցաւը կ'օգնէ մեզի, որ ամէն բան տեսնենք այնպէս ինչպէս որ է: Դաւիթ Աստուծոյ պատճառած ցաւին օրինակը կու տայ Սաղմոսներու 51.1-ին մէջ, ուր կ'ըսէ. «Ողորմէ՛ ինձի, ո՛վ Աստուած, քո կարեկցութեանդ համեմատ, ջնջէ՛ իմ յանցանքներս՝ քու առատ գթութեանդ համեմատ»:

Դաւիթ կը դիմէ Աստուծոյ կարեկցութեան եւ կը խոստովանի, որ

մեղանչած է Աստուծոյ դէմ: Պաշտպանութեան գիծ կամ մեղադրանք չկայ անոր խօսքերուն մէջ: Ան կ'ընդունի իր սխալը եւ բաց կերպով կը ճանչնայ իր մեղքը: Երբ մենք կ'ընդունինք մեր սխալները, անոնք այլեւս չեն տիրեր մեր վրան: Բոլորս ալ պէտք ունինք անկաշկանդ ողորմութեան. մինչ կը խոնարհեցնենք մեր անձերը, Աստուած պիտի վերցնէ մեզ մեր պայմաններէն: Դաւիթ գիտէր, որ չէր կրնար ինքզինք մաքրել, ուստի Տիրոջ դիմեց: Միայն Աստուած ունի իշխանութիւնը ոչ միայն մեր մեղքերը ներելու, այլեւ վերցնելու ամէն ստուերի եւ արատի հետք: Դաւիթ հասկցած էր, որ մեղքը կը բթացնէ սիրտը եւ կը տկարացնէ մեր վճռակամութիւնը: Սաղմոսը կը շարունակուի հետեւեալ ձեւով. «Վերադարձո՛ւր ինձի քու փրկութեանդ բերկրանքը, ու յօժարակամ հոգի մը նեցուկ թող ըլլայ ինձի: Յանցաւորներուն պիտի սորվեցնեմ քու ճամբաներդ, ու մեղաւորները քեզի պիտի վերադառնան» (հմր 12-13):

Այս համարները կը խոստանան ուրախութեան վերականգնում եւ նոր սկիզբ մը հոն, ուր զոջում եւ վիշտ կայ: Աստուած կրնայ գեղեցիկ բան մը ընել մեր տգեղութիւնով: Այդպիսով մեր ձախողութիւնները կը դառնան առիթ մը՝ ուրիշներու սորվեցնելու Աստուծոյ հաւատարիմ գութին եւ սիրոյն մասին: Իմ աղօթքս է, որ մեր երկնաւոր Հայրը փոխակերպէ զոջումի ամէն մութ անկիւն՝ զանոնք դարձնելով իր հաւատարմութեան եւ ճշմարտութեան լուսաւոր փարոսներ: Այդ ձեւով ան կը յաղթէ մեր փրկութեան մէջ: Կը քաջալերեմ քեզ, որ ամէն ցաւող տեղ դարձնես կենդանի օրինակ մը գեղեցկութեան եւ ազատութեան մինչ ուրիշներու կը սորվեցնես այն սիրոյն եւ ճշմարտութեան մասին, որոնք ազատագրած են քեզ: Ատիկա է պայծառ արդիւնքը Աստուծոյ պատճառած ցաւին:

*Տէր, թող վիշտերս ըլլան աստուածային փոխանակ աշխարհային:
Երբ զոջում ունենամ, ես զանոնք պիտի բերեմ քեզի՝
ապաշխարութեամբ եւ սրանամ քու բժշկութիւնդ: Շնորհակալ
եմ, որ գեղեցիկ բաներ կը հանես մեր խառնակութիւններէն:*

Եւ Տօբանք Եւ,

ՈՐՈՎՎԵՏՏԵԻ ԻՄ ԱՆՕՐԷՆՈՒԹԻԻՆՆԵՐՍ
ԿԸ ՏԱՆԻՄ ԱՍՏՈՒԾՈՅ:

ԽՕՍՔԻՆ ՄԷՋ ԱՐՄԱՏԱՑԱԾ

*Այս Օրէնքին գիրքը բերանէդ թող չհեռանայ, հապա գիշեր-
ցերեկ անոր մասին խորհրդածէ, որպէսզի բոլոր անոր մէջ
գրուածները զգուշութեամբ գործադրես. քանի որ այն արեւն քու
ճամբաներդ պիտի յաջողցնես, եւ այն արեւն պիտի յառաջդիմես:*

ՅԵՍՈՒԻ 1.8

Մէկ բան կը զօրացնէ մեզ այնպէս ինչպէս Աստուածաշունչի
խօսքերը կ'ընեն: Ատոր համար շատ կարեւոր է ամէն օր
Աստուծոյ Խօսքին հետ առանձնանալու վարժութիւնը շինելը: Մինչ
կը կարդաս եւ կը գործադրես Աստուծոյ Խօսքը, նոյնը չես մնար:
Սիրտդ կը կակուղնայ եւ փափուկ կը դառնայ Հօրդ վերաբերող
բաներուն նկատմամբ: Ասիկա քեզ արեւի բաց կը դարձնէ անոր
առաջնորդութեան: Աստուծոյ Խօսքը սերտելը այն հոգեւոր
վարժութիւնն է, որ կեանք եւ կենսունակութիւն կը բերէ բոլոր միւս
հոգեւոր վարժութիւններուն:

Ինչպէս Թագաւորութեան վերաբերող բոլոր բաներուն
պարագային, կարեւորը քու քանի՛ աստուածաշնչական համար կամ
հատուած գիտնալո՞ չէ, այլ՝ թէ անոնցմէ քանի՛ն կ'ապրիս: Այդպիսով
Խօսքը մարմին կը ստանայ կեանքիդ մէջ եւ պտուղ կու տայ:

Ուստի ո՛րկէ պէտք է սկսիս:

Կան շատ ձեւեր սկսելու եւ անհամար թիւով ծրագիրներ,
որոնց կրնաս հետեւիլ: Կրնաս ընտրել ամբողջ Աստուածաշունչը
կանոնաւոր կերպով կարդալու ծրագիր մը, քեզ հետաքրքրող
նիւթի մը մասին գրաւոր սերտողութիւն մը կամ կրնաս պարզապէս
փնտռել համարներ, որոնք կը խօսին կեանքիդ հարցերուն մասին:

Ո՛ր ձեւն ալ, որ ընտրես, այնպէս ըրէ, որ ամէն օր որոշ ժամանակ անցընես Աստուծոյ Խօսքին հետ: Մի՛ դներ այնպիսի ծրագիր մը, որով գիտես, որ կրնաս ծանրաբեռնուիլ, բայց այնպէս ըրէ, որ անպայման Գիրքը բանաս ամէն օր: Խօսքին հետ անցուցած այդ ժամանակդ շուտով խարիսխ մը պիտի ըլլայ կեանքիդ մէջ:

Տրամադրութեանդ տակ ունենալով գրիչ մը եւ տետրակ մը, աղօթե՛ եւ Սուրբ Հոգիէն խնդրէ՛, որ խօսի քեզի Աստուծոյ Խօսքին ընդմէջէն: Խոկա՛ ընտրած համարներուդ կամ հատուածիդ մասին եւ ապա փորձառութիւնդ մէկ քայլ անդին տար. տետրակիդ մէջ գրէ՛, թէ ի՛նչպէս պիտի գործադրես սորված ճշմարտութիւններդ: Ի՞նչ է գործի ծրագիրդ կեանքիդ մէջ այդ ճշմարտութիւնները համարկելու: Ի՞նչ պիտի ընես յաջորդ 24 ժամուան ընթացքին կամ եկող շաբաթներուն՝ հոգ տանելու համար սիրտիդ մէջ ցանուած այդ ճշմարտութեան սերմին: Կա՞ն ձեւեր յառաջդիմութեանդ հետեւելու: Երբ կը մտածենք կարգապահութեան մասին, յաճախ մեր միտքը կու գայ բան մը, զոր չենք ուզեր ընել կամ նոյնիսկ պատիժի գաղափարը: Բայց Աստուածաշունչին հետ ժամանակ անցընելը կը նմանի միայն առողջապահական ուտելիքներ ուտելու կարգապահութեան: Անիկա կարգապահութիւն մըն է, որ կը թարմացնէ եւ կ'աշխուժացնէ՝ միեւնոյն ատեն հանդարտեցնելով: Անիկա սրբագործուած տեղ մըն է փնտռելու այն ինչ որ Աստուած կ'ուզէ ըսել քեզի, եւ նպատակաւոր կերպով արտօնելու, որ իր խօսքերը վերակենդանացնեն կեանքիդ ամէն մէկ բաժինը: Այսօր, ըլլայ ատիկա հինգ վայրկեան կամ ամբողջ յետմիջօրէն, սկսէ՛ Աստուծոյ Խօսքը սերտելու ճամբով բժշկուելու վարժութիւնը եւ տե՛ս, թէ անիկա ի՛նչպէս կը զօրացնէ քեզ:

Հայր, շնորհակալ եմ, որ խօսքերդ հայթայթած ես ինձի: Ծինէ՛ մէջս ծարաւ մը անոնց հանդէպ, որպէսզի անոնց մէջ կեանք գտնեմ ամէն օր:

Եւ Հօրաւոր Եմ,

ԵՐԲ ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԵՐԸ ԿԸ ՅԱՆԵՄ ՍԻՐՏԻՍ
ՄԷՋ ԵՒ ԿԸ ԶՐԵՄ ԶԱՆՈՆՔ ԱՂՕԹՔՆԵՐՈՎԱՍ,
ՀՈԳԱՏԱՐՈՒԹԵԱՄԲՍ ԵՒ ԴԻՏԱԻՈՐՈՒԹԻՒՆՈՎ:

ՑԱՆԵԼ ԵՒ ՅՆՁԵԼ

Մարդ ինչ որ ցանէ՝ այն կը հնձէ: Ով որ իր մարմինի անդաստանին մէջ կը ցանէ՝ մահ պիտի հնձէ իր մարմինէն, իսկ ով որ Սուրբ Հոգիի անդաստանին մէջ ցանէ՝ յաւիտենական կեանք պիտի քաղէ Սուրբ Հոգիէն:

ԳԱՂԱՏԱՅԻՆԵՐՈՒՆ 6.8

*Ս*տիկա ցանելու եւ հնձելու օրէնքն է: Երբ ճիշդ բաները կը ցանենք՝ կը հնձենք աներեւակայելին: Աստուածաշնչական սերմերը հզօր եւ սննդարար հունձք մը կու տան:

Տարիներ առաջ ես աստուածաշնչական համարներ ցանեցի սիրտիս մէջ՝ այն յոյսով, որ յառաջ պիտի բերէին արդարութեան հունձք մը: Իմ նախասիրածներէս մէկը կը գտնուէր Յակոբոսի Գիրքին մէջ, որ կ'ըսէ. «Յիշեցէ՛ք, սիրելի՛ եղբայրներս, որ աւելի պատրաստակամ պէտք է ըլլաք լսելու, քան՝ խօսելու: Դիւրաւ մի՛ բորբոքիք» (1.19):

Ես այդ վարմունքին ճիշդ հակառակը ունէի: Աւելի պատրաստակամ էի խօսելու, քան՝ լսելու, ինչպէս նաեւ աւելի պատրաստակամ էի բարկանալու: Վերը նշուածներէն ոչ մէկը ճիշդ կ'ընէի: Դիմեցի Աստուծոյ օգնութեան՝ բերանս զսպելու մէջ: Ինչպէս Դաւիթ աղօթեց, իմ աղօթքս ալ եղաւ. «Ո՛վ Տէր, պահապան՝ դիր իմ բերանիս, ու պահպանէ՛ իմ շրթունքիս դուռը» (Սաղմոսներու 141.3):

Այդ պահապանը դրուած է, որպէսզի սխալ բառեր փախուստ չտան եւ վնաս չհասցնեն: Ես սորված եմ, որ Սուրբ Հոգին կ'առնէ սիրտիդ մէջ դրուած Աստուծոյ խօսքը եւ երեւան կը հանէ զայն ճիշդ ժամանակին: Ատիկա զգուշացում կ'ըլլայ քեզի նախքան որ սխալ բառեր փախչին բերանէդ:

Գիտութիւնը մեզի կ'ըսէ, թէ քսանմէկ օր կ'ուզէ սովորութիւն մը

կոտրելու կամ դադրեցնելու համար: Սովորութիւնները զօրաւոր բաներ են: Անոնք այն պատասխանները կամ հակազդեցութիւններն են, որոնք մենք կու տանք առանց մտածելու: Կար ժամանակ մը երբ զայրոյթը սովորութիւն մը դարձած էր կեանքիս մէջ: Առանց խախտումի քսանմէկ օր պատկերացնելը անկարելի էր: Քսանմէկ օրը քսանմէկ տարուայ պէս կը թուէր: Զայրոյթը փորագրուած էր մէջս:

Ուրեմն, ի՞նչպէս կը կոտրես կամ կը դադրեցնես սովորութիւն մը: Կը դադրեցնես այնպէս ինչպէս կը զարգացնես կամ կը շինես զանիկա: Պատահար առ պատահար, ամէն անգամ հինգ վայրկեան միայն, մէկ ժամ միայն, մէկ օր միայն: Այդ ձեւը որդեգրեցի՝ զայրոյթի շրջանակէն դուրս գալու համար: Ամէն առտու նախքան որ նոյնիսկ անկողիկէս իջնէի՝ կ'աղօթէի. «Աստուած, ես քեզի պէտք ունիմ այսօր: Շատ անգութ եւ խիստ պահապան մը դի՛ր բերանիս վրայ: Ես չեմ ուզեր մեղք գործել քեզի կամ ոեւէ մէկուն դէմ: Օգնէ՛, որ աւելի պատրաստակամ ըլլամ լսելու, քան խօսելու եւ բարկանալու»: Այդ աստուածաշնչական յիշեցումները դարձան իմ օրական աղօթքներս եւ ոյժս: Պիտի չստեմ եւ ըսեմ, որ դիւրին էր. դիւրին չէր: Բայց կրնամ ըսել, որ Աստուծոյ համար ամէն բան կարելի է: Եւ ահա երկու տասնամեակէ ի վեր կ'ապրիմ զայրոյթի հակակշիռէն ազատ կեանք մը: Ատիկա իմ հոյակապ հունձքս էր՝ այդ համարը ցանելու եւ անոր համաձայն վարուելու իբրեւ արդիւնք:

Ի՞նչ պիտի ցանես սիրտիդ մէջ այսօր: Ի՞նչ կ'ուզես հնձել: Խօսքին մէջ փնտռէ սերմեր, ցանէ զանոնք եւ Աստուած պիտի շատցնէ զանոնք:

Աստուած, ցոյց տուր ինձի այն համարները, զորս պէտք ունիմ ցանելու հոգիիս մէջ: Կը հաւատամ, որ մինչ ես կը ցանեմ եւ անոնք համաձայն կը գործեն հաւատքով, դուն ես, որ հունձք պիտի տես:

Եւ Զօրաւոր Եւ,

ՈՐՈՎՎԵՏՏԵՒ ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԸ ԿԸ ՅԱՆԵՄ ՍԻՐՏԻՍ
ՄԷՋ ԵՒ ԱՆՈՐ ՀԱՄԱՁԱՅՆ ԱԼ ԿԸ ԳՈՐԾԵՄ:

ՀԱՆԳԻՍՏԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Աստուած իր բոլոր գործերը եօթներորդ օրը ամարտեց, ու եօթներորդ օրը հանգստացաւ իր բոլոր գործերէն:

ԾՆՈՒՆԴՆԵՐՈՒ 2.2

Սրբ Շաբաթին նիւթը կը բացուի, շատերս քիչ մը յանցաւոր կը զգանք: Իբրեւ կիներ, մենք հազուադէպօրէն արձակուած կամ ազատ կը զգանք մեր ուշադրութիւնը պահանջող միշտ ներկայ կարիքներէն: Հալածուած կը զգանք լուացքի դէզերուն կողմէ, եւ մեր շուրջիները շարունակ մեզի կը յիշեցնեն մեր ընելիքներու ցանկին մասին, որ յաճախ տակնուվրայ վիճակի մէջ է: Ունինք ընտանիքներ, որոնք օրինական կերպով պէտք ունին, որ ըլլանք գործունէայ: Նոյնիսկ եկեղեցի երթալու համար ամբողջ ընտանիքը դուռէն դուրս հանելը ծանր աշխատանք մըն է: Այնպէս չէ, որ կ'ուզենք անտեսել չորրորդ պատուիրանը («Յիշէ՛ Հանգստութեան օրը՝ զայն սրբացնելու համար» (Ելքի 20.8)), այլ՝ պարզապէս չենք կարծեր, որ կրնանք մենք մեզի արտօնել, որ հանգիստ ընենք: Վերջապէս, հարցը վստահութեան հարց է: Մենք կը մտահոգուինք, որ եթէ կանգ առնենք, եթէ հանգիստ ընենք, Աստուած պիտի չկարենայ հոգ տանիլ մեզի:

Իրապէս հանգիստի օրուայ (Շաբաթի) գաղափարը հրաւեր մըն է առողջութեան եւ վերականգնումի: Ընդհանրապէս Կիրակի օրերը հանգիստի օր չ'ըլլար ինծի համար, ուստի սորված եմ Շաբաթս ուրիշ ձեւերով առնել: Նոյնիսկ Յիսուս հրաւիրեց իր աշակերտները, որ դադար առնեն ծառայութենէն. «Եկէք երթանք ամայի տեղ մը, ուր առանձին կրնանք ըլլալ եւ հոն քիչ մը կը հանգչինք» (Մարկոսի 6.31): Ան գիտէր, որ եթէ շարունակէին յոգնեցնել իրենք զիրենք, ոչ ոքի օգտակար պիտի ըլլային ծառայութեան մէջ եւ դժուարութեան

պիտի մատնուէին: Ես դժուար ձեւով սորված եմ, որ երբ յոգնած ըլլամ, կարող չեմ ըլլար լաւ որոշումներ տալու: Երբ ճնշուած ըլլամ, «Ոչ» կ'ըսեմ այն բաներուն, որոնց պէտք է «Այո» ըսեմ, եւ «Այո» կ'ըսեմ այն բաներուն, որոնց պէտք է «Ոչ» ըսեմ: Ապա այդ վատ որոշումներուն հետ ապրիլը տակաւին աւելի կը սպառէ զիս:

Ինչո՞ւ ոչ դուն քեզի տաս արտօնութիւն՝ հանգիստ ընելու իր հրաւերը ընդունելու: Ընտրէ՛ օր մը, կէս օր մը կամ նոյնիսկ քանի մը ժամ եւ յատկացուր զանհկա մարմինիդ եւ հոգիիդ վերականգնումին համար: Սկիզբէն ծրագրէ եւ մարդոց ըսէ, որ հասանելի չես: Ատիկա լաւ ժամանակ կ'ըլլայ զուակներուդ հետ խնդալու, բարեկամներուդ ներկայութիւնը վայելելու կամ ամուսինիդ հետ ժամանակ անցընելու: Այդ օրը դուրսը ճաշեցէք կամ մէկ օր առաջուրնէ պատրաստէ օրուան կերակուրը: Մի՛ մտածեր տան գործերուդ մասին եւ մէկ կողմ դիր որեւէ գործ, որ գործատեղիէդ տուն բերեր ես: Օգտագործէ այդ ժամանակամիջոցը պաշտպանելու, սնուցանելու եւ պահպանելու սիրտդ: Այդպիսով պիտի թարմանաս եւ կարենաս ընել այն գործը, որ Աստուած ունի քեզի համար:

Երբ գործի ես՝ աշխատէ՛. ժրաջանօրէն եւ կարողութեանդ առաւելագոյն չափով: Բայց երբ հանգիստի մէջ ես՝ հանգիստ ըրէ: Ընդունէ՛ հանգիստ ընելու Աստուծոյ հրաւերը՝ իբրեւ առիթ վերակայման (*ռիսէթի*):

*Տէր, չեմ ուզեր սպառումի հասնիլ: Յոյց փութ ինձի
ի՞նչպէս հաւասարակշռել գործս եւ հանգիստս այն
ձեւով, որ պէտք է ընեմ, որպէսզի իրական Շաբաթի
հանգիստ մը կարենամ առնել կամ ունենալ:*

Եւ Զօրաւոր Ե՛մ,

ԵՐԲ ԿԸ ՀԱՆԳՍՏԱՆԱՄ՝ ԿՍՏԱՀԵԼՈՎ, ՈՐ ԱՍՏՈՒԾՈՅ
ԲԱՐՁՐ ՀԱԿԱԿԵՒՈՒՆ ՏԱԿ Է ԱՄԷՆ ԲԱՆ:

ԱՍՏՈՒԾՈՅ ԴԵՍՊԱՆԸ

Դուք ընտրուած ցեղ մըն էք, թագաւորելու կոչուած քահանաներ, սուրբ ազգ մը, Աստուծոյ սեփական ժողովուրդը. եւ ձեր պարտականութիւնն է քարոզել զօրութիւնը անոր՝ որ ձեզ խաւարէն իր սքանչելի լոյսին կանչեց: Որովհետեւ հիմա Աստուծոյ ժողովուրդն էք, մինչ նախապէս չէիք. հիմա իր ողորմութիւնը կը վայելէք, մինչ նախապէս զրկուած էիք անկէ:

Ա.ՊԵՏՐՈՍԻ 2.9-10

*Պ*ղիմպիական խաղերուն մէջ յաղթողները կը ճանչցուին եւ կը վարձատրուին մետալով մը, եւ իրենց երկրին դրօշակը կը դրուի իրենց ուսերուն շուրջը, որպէսզի գիտցուի, թէ ո՞ր երկիրը կը ներկայացնէ իւրաքանչիւր մասնակից: Ի՞նչ պիտի պատահէր եթէ մրցանակաբաշխութեան արարողութեան ընթացքին, Ամերիկայի կողմէ մասնակցող ոսկեմետալակիր մարզիկ մը որոշէր, որ կ'ուզէր Քանատան ներկայացնել: Պիտի արտօնէ՞ին իրեն: Անշուշտ ոչ: Ան ընտրուած էր իբրեւ Ամերիկայի դեսպան, ոչ Քանատայի. ամերիկեան մշակոյթը եւ ժողովուրդն է, զորս ան հոն է ներկայացնելու եւ ներշնչելու:

Շատ մը ձեւերով մեր պարագան ալ նոյնն է: Մենք ներկայացուցիչները եւ դեսպաններն ենք երկինքի: Մենք հոս ենք մարդոց վրայ ձգելու համար տպաւորութիւն մը, որ կը հաղորդէ, թէ որո՞նն ենք մենք եւ ի՞նչ Թագաւորութիւն կը ներկայացնենք: Պօղոս Առաքեալ մեզ կը կոչէ՝ Քրիստոսի դեսպաններ (տե՛ս Բ.Կորնթացիներուն 5.20): Իսկ Պետրոս Աստուծոյ ժողովուրդը կը կոչէ՝ թագաւորական քահանայութիւն մը (Բ.Պետրոսի 2.9): Մենք ունինք պատիւը ըլլալու թէ՛ դեսպաններ եւ թէ՛ մաս կազմելու իր քահանաներու թագաւորական ընտանիքին: Ինչո՞ւ երբեք

պիտի ուզենք շեղել մեր հաւատարմութիւնը եւ ներկայացնել թագաւորութիւն մը, որ մեր Հօրը չէ: Պետրոս կը շարունակէ, ըսելով.

Որովհետեւ հիմա Աստուծոյ ժողովուրդն էք, մինչ նախապէս չէիք. հիմա իր ողորմութիւնը կը վայելէք, մինչ նախապէս զրկուած էիք անկէ: Կ'աղաչեմ, սիրելիներ՛, իբրեւ աշխարհի մէջ պանդուխտներ եւ օտարականներ՝ հեռո՛ւ մնացէք մարմնական ցանկութիւններէն, որոնք հոգիին դէմ կը պատերազմին: Նայեցէք որ պարկեշտ կենցաղ ունենաք հեթանոսներուն մէջ, որպէսզի իրենք, որ ձեզ կը բամբասեն իբրեւ չարագործ, ձեր բարի գործերը տեսնելով՝ փառաւորեն զԱստուած, իր Գալստեան օրը: (Ա.Պետրոսի 2.10-12)

Նախապէս Աստուծոյ չէինք պատկաներ, բայց հիմա կը պատկանինք: Նախապէս Աստուծոյ դատաստանին ենթակայ էինք, իսկ հիմա անոր ողորմութիւնը կը վայելենք: Այլ խօսքով, նախապէս այս աշխարհին մէջն էինք եւ անոր դատաստանի վճիռին, մինչ հիմա այս աշխարհէն չենք, այլ՝ Աստուծոյ Թագաւորութեան մէջն ենք:

Այսօր, մինչ ընտրութիւններդ կ'ընես, մինչ կը գործես եւ կը հակազդես, յիշէ՛, թէ որո՛ն ամպիոնին վրայ կանգնած ես: Ապրէ՛ այնպիսի «պարկեշտ կենցաղ [մը] հեթանոսներուն մէջ», որ մարդիկ փառաւորեն զԱստուած եւ միանան մեզի՝ մեր ձայնը փառաբանութեան հօր քայլերգով բարձրացնելու մէջ:

*Տէր, ես շար հպարտ եմ քու դեսպանդ ըլլալու
համար: Թող իմ կեանքս եւ արարքներս
արտացոլացնեն քու բարութիւնդ եւ շնորհքդ:*

Եւ Զօրմար Ե՛՛՛,

ՈՐՈՎՇԵՏԵՒ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԵՄ ՓԱՌՔԻ ԹԱԳԱՒՈՐՈՒ-
ԹԻՒՆ ՄԸ, ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ՔԱՀԱՆԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ՝
ԹԱԳԱԴՐՈՒԱԾ ԱՍՏՈՒԾՈՅ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ:

Զօրանքի՝

Միսկոսությունն մեզ

ՄԵՂՔԷՆ ԱՐՁԱԿՈՒԱԾ

Յիսուս ըսաւ անոնց. «Լաւ գիտցէք, թէ ով որ մեղք կը գործէ՝ ծառայ է մեղքին: Ծառան տան մէջ մնայուն չէ, մինչդեռ որդին մնայուն է: Արդ, եթէ Որդին ձեզ ազատէ, այն ատեն իրապէս ազատ պիտի ըլլաք»:

ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 8.34-36

*Ս*րբ Որդին մեզ ազատէ... մենք «իրապէս ազատ» կ'ըլլանք: Ի՞նչ կը նշանակէ այդ «իրապէս» բառը: Կը նշանակէ՝ առանց հարցումի, յիրաւի (ճշմարտապէս) եւ ստոյգ: Մարդիկ կրնան հարցականի տակ առնել ազատութեան քու իրաւունքը: Անցեալը կրնայ փորձել ամօթի մէջ ձգել քեզ՝ ետ տանելով քեզ քու սխալներու բանտին մէջ, բայց Աստուծոյ համար կեանքիդ մէջ մեղքին եւ ամօթին իշխանութիւնը վերջ գտած է: Մարդիկ տակաւին կրնան ուզել քար նետել վրադ, բայց Յիսուսի խօսքերը կեանքիդ մէջ գտնուող մեղքէն արձակում կ'արձագանգեն. «Յիսուս ըսաւ. “Ես ալ քեզ չեմ դատապարտեր. գնա՛ եւ ասկէ ետք մի՛ մեղանչեր» (Յովհաննէսի 8.11):

Մէյ մը, որ կը խոստովանինք, ժամանակը կ'ըլլայ յառաջ երթալու եւ ետեւ ձգելու մեղքը, ամօթը, ուրիշներու ամբաստանութիւնները եւ մեր ներքին անձին խղճահարութիւնը: Մինչ կ'երթանք խաւարէն դէպի իր լոյսը, զօրութիւն կը ստանանք երթալու եւ այլեւս մեղք չգործելու: Եթէ Աստուած կ'ըսէ, թէ դատապարտուած չես, ուրեմն արձակուած ես քալելու այդ ճշմարտութեան մէջ: Այս հարցին մէջ չես կրնար զգացումներուդ վստահիլ, որովհետեւ անոնք պիտի ստեն քեզի: Մենք երբեք արդարացուած պիտի չզգանք,

որովհետեւ մենք առանձին արդարութիւն չունինք: Մենք Աստուծոյ դիմաց չենք արդարանար մեր գործերով կամ վարմունքով, այլ՝ միայն Քրիստոսով: Ատիկա մեզի կու տայ զօրութիւն հեռանալու մեր անցեալի ճախողութիւններէն եւ սխալներէն եւ յառաջ երթալու: «Առաջին բաները մի՛ յիշէք, ու հին բաներուն վրայ մի՛ մտածէք» (Եսայիի 43.18):

Մեր այսօրը այլեւս կապուած չէ մեր երէկուայ ճախողութիւններուն: Մենք ազատ ենք քայլ առնելու կեանքի նոր ձեւի մը մէջ՝ մաքրուած ողորմութեամբ մը, որ ամէն առտու կը վերանորոգուի:

Երկնաւոր Հայր, կ'ընդունիմ քու ողորմութիւնդ: Պիտի արթօնեմ, որ անիկա յաղթէ կեանքիս մէջ գոյութիւն ունեցող ամէն դատապարտութեան մարզի մէջ: Կը ձգեմ այս յանցաւորի զգացումի եւ ինքնաբերութեան վայրը: Ուրքի կ'ելլեմ եւ կ'երթամ՝ այլեւս մեղք չգործելու համար:

Եւ Զօրուք Եւ,

ՈՐՈՎՀԵՏԵԻ ԳԵՐԱԳՈՅՆ ԴԱՏԱԻՈՐԸ
ԱՐՁԱԿԱԾ Է ԶԻՍ ԱՄԷՆ ՅԱՆՑԱԻՈՐԻ
ԵՒ ԱՄՕԹԻ ԶԳԱՅՈՒՄԷ:

ՆՈՐ ՍԻՐՏ ՄԸ

Նաեւ ձեզի նոր սիրտ պիտի տամ, եւ ձեր ներսը նոր հոգի պիտի դնեմ. ձեր մարմիններէն քարեղէն սիրտը պիտի հանեմ ու ձեզի մարմնեղէն սիրտ պիտի տամ:

ԵԶԵԿԻԷԼԻ 36.26

*Տ*բբեւ Քրիստոնեաներ, մենք շարունակ կը փորձենք կակուղ սիրտ մը պահել կամ, ինչպէս Աստուածաշունչը կ'ըսէ՝ «մարմնեղէն սիրտ մը»: Ատիկա սիրտ մըն է, որ կ'աճի գութի մէջ, սիրոյ մէջ եւ Աստուծոյ առաջնորդութեան նկատմամբ զգայուն ըլլալու մէջ: Երկինքը կը կառավարէ սիրոյ սրբազան *քոյրով* մը՝ գրուած մեր սիրտին մէջ: Քարի վրայ փորագրուած մեռած, անկենդան օրէնքները մեռած, կարծր սիրտերու համար են: Ազատութեան օրէնքը կակուղ, մարմնեղէն սիրտերու համար է եւ ոչ քարեղէն, կարծր սիրտերու համար:

Սակայն պէտք է զգուշացնեն ձեզ, որ կակուղ սիրտերը աւելի մեծ կարողականութիւն ունին թէ՛ սիրոյ եւ թէ՛ ցաւի քան քարեղէն սիրտերը: Եթէ արտօնենք, վիրաւորանքը կրնայ կարծրացնել մեր սիրտը, եւ եթէ զգոյշ չըլլանք, անիկա դանդաղօրէն բայց վստահաբար կը գրաւէ Աստուծոյ բաներուն տեղը մեր կեանքին մէջ: Ծանր եւ քամուած կամ սպառած զգալը ատոր մէկ նշանն է: Ծանր սիրտը երթալէն աւելի կը դժուարանայ ուրիշները ներելու: Սպառիչ է ապրիլ դառնութեան եւ դժգոհութեան կամ զայրոյթի սահմանին վրայ:

Լաւ լուրը այն է, որ նոյնիսկ ամէնէն կարծր սիրտը կրնայ ազատագրուիլ Աստուծոյ Խօսքի ճշմարտութեամբ: Քրիստոնեայ դառնալէս ետք իսկ ատելութիւն գտայ սիրտիս մէջ: Ընտրեցի, որ չարտօնեմ, որ անիկա մնայ հոն: Քու սիրտդ պէտք է պահպանես,

որպէսզի վստահ ըլլաս, որ անիկա ազատ կը մնայ չլուծուած գայթակղութիւններէ. ազատ բարկութենէ, ատելութենէ, նախանձէ կամ այլ մեղքերէ, որոնք շատ դիրութեամբ կը թակարդեն մեզ: Ձեւերէն մէկը մեր սիրտը պահպանելու, զանիկա շարունակ ճշմարտութեան առջեւ դնելն է: Ատիկա կը պահանջէ աշխատանք, խոնարհութիւն եւ անկեղծութիւն: Բայց սիրտդ արժանի է, որ պայքարիս իրեն համար:

Նոյնիսկ այս պահուն կրնայ ըլլալ, որ պատճառաբանութեան պատերազմ մը կ'ընթանայ սիրտիդ մէջ: Մէկ կողմը մէջտեղ կը հանէ այն անունները, որոնք վիրաւորած են քեզ՝ աղաչելով, որ ներես եւ արձակես զիրենք: Միւս կողմը կը պատճառաբանէ, որ դուն արդարացուած ես անոնց հանդէպ քու ատելութեանդ կամ զայրոյթիդ մէջ: Յանձնուէ՛ առաջին ձայնին: Մի՛ երեւակայեր, որ կարծր սիրտ մը պիտի պաշտպանէ քեզ... անիկա պիտի չպաշտպանէ քեզ:

Հայր, կը խոստովանիմ սիրտիս մէջ գոյութիւն ունեցող որեւէ կարծրութիւն: Կոտրէ՛ արտաքին պատեանը քու Խօսքիդ ժայռովը, որպէսզի մարմնեղէն սիրտ մը մէջտեղ ելլէ:

Եւ Զօրաւոր Եւ,

ՈՐՈՎՀԵՏԵՒ ԿԸ ՊԱՀՊԱՆԵՄ ՍԻՐՏՍՍ,
ՈՐՊԷՍՁԻ ԱՆԻԿԱ ՄՆԱՅ ԿԱԿՈՒՂ ԵՒ
ԲԱՅ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԻՆ ԴԻՄԱՅ:

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ՉՕՐՈՒԹԻՒՆԸ

Հեղեատար ձեր մեղքերը իրարու խոստովանեցէք եւ իրարու համար աղօթեցէք, որպէսզի բժշկուիք. որովհետեւ արդարի մը աղօթքը ազդեցիկ է եւ մեծապէս կ'օգնէ:

ՅԱԿՈՐՈՍԻ 5.16

*Մ*ոստովանութիւնը ամէնէն դժուարն է հոգեւոր վարժութիւններուն մէջ: Ինչո՞ւ անհրաժեշտ է անիկա: Մենք կը գիտնանք, որ ներուած ենք երբ մեր մեղքերը կը խոստովանինք մեր Հօրը: Բայց Յակոբոսի Գիրքը մէկ քայլ անդին կը տանի նիւթը եւ մեզի կ'ըսէ, թէ անհրաժեշտ է, որ կարգ մը մեղքեր իրարու խոստովանինք եւ մէկս միւսին հետ աղօթենք, որպէսզի բժշկուինք: Կը հաւատամ, որ ասիկա ճիշդ է երեք պատճառներով:

Առաջին, Թագաւորութիւնը չի գործեր բնական սկզբունքներով: Յիշէ՛, որ Յիսուս փարիսեցիներուն ըսաւ, թէ ո՛վ որ կնոջ մը նայի ցանկութեամբ՝ շնութիւն ըրած կ'ըլլայ իր սիրտին մէջ: Սիրտի հարցերը շատ կարեւոր են Թագաւորութեան մէջ: Մեր սիրտերը լաւ եւ վատ սերմերու համար ջերմոցներ են: Փարիսեցիներուն պարագային, մեղքը իրապէս չէր գործուած, բայց անիկա պատահած էր իրենց սիրտերուն մէջ:

Երկրորդ, մեր մեղքերը խոստովանելով եւ ուրիշ քրիստոնէաներու հետ աղօթելով մեր անձերը խոնարհեցնելով, մենք մեզ կը դնենք բժշկութիւն ստանալու դիրքին մէջ: Բժշկութիւնը կը հոսի մեր սիրտերու խաւար բաժիններուն մէջ երբ մեղքը կը դնենք բաց եւ ապահով միջավայրի մը մէջ: Խոստովանութիւնը

կը լուսաւորէ մեղքի եւ ամօթի մարզերը, եւ այդ լոյսի մթնոլորտին մէջ աղօթքը կը սկսի բժշկել եւ վերականգնել:

Երրորդ պատճառը այն է, որ խոստովանութիւնը մեզի կու տայ հաշուետուութեան մակարդակ մը: Խոստովանութեան հետ կու գայ պատասխանատուութիւն: Խօսքը մեզի կ'ըսէ. «Բարեկամին տուած վերքերը հաւատարիմ են» (Առակներու 27.6): Երբ կը խոստովանիմ, կարեկցութեան պէտք չունիմ. պէտք ունիմ մէկու մը, որ փաթթէ զիս ճշմարտութեամբ: Միասին աղօթելէ ետք, կը զգամ, որ ամօթի բեռ մը վերցուեցաւ ուսերէս:

Բայց կը մնայ սովորութիւն դարձած բաներուն հարցը: Մատթէոսի 16.24-ին մէջ Յիսուս կ'ըսէ. «Եթէ մէկը ուզէ ինծի հետեւիլ՝ թող ուրանայ իր անձը, առնէ իր խաչը եւ ետեւէս գայ»: Խոստովանութիւնը ուրիշ ձեւ մըն է «խաչը առնելու»՝ ճանչնալով մեր բոլորովին Աստուծմէ կախեալ ըլլալը: Մենք կ'ուրանանք մեր անձերը շտկելու իրաւունքը կամ առանձին մեղքի շրջանակներ կոտրելը: Խոստովանութիւնը վարժութիւն մըն է, որ ցոյց կու տայ, թէ գիտենք, որ առանձին չենք կրնար ընել: Բայց Աստուծոյ օգնութեամբ եւ մեր ընտանիքին օգնութեամբ, կը սկսինք բժշկուիլ:

Հայր, ցոյց տուր ինծի այն բժշկութիւնը, որ կու գայ խոստովանութեամբ: Առաջնորդէ՛ զիս դէպի ճիշդ մարդիկը, եւ դարձուր զիս անկեղծ, քաջ եւ այնքան բաց, որ այդ ձեռով խաչս առած ըլլամ: Կ'ուզեմ հետեւիլ քեզի, եւ կ'ընդունիմ, թէ չեմ կրնար առանձինս ընել ապիկա:

Եւ Զօրաւոր Ե՛մ,

ԵՐԲ ԽԱԶՍ Կ'ԱՌՆԵՄ՝ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ
ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆ
ՅԱՆՁՆ ԱՌՆԵԼՈՒ ՁԵՒՈՎ:

ՄԵՂՔԷՆ ԱԶԱՏԱԳՐՈՒԱԾ

Այդ շնորհքը մեզ կը մղէ, որ անհաւապ կենցաղէն եւ աշխարհիկ ցանկութիւններէն հեռանանք, զգաստութեամբ, արդարութեամբ ու բարեպաշտութեամբ ապրինք այս աշխարհի մէջ, եւ յոյսով սպասենք այն երջանիկ օրուան, երբ մեր մեծ Աստուածն ու փրկիչը՝ Յիսուս Քրիստոս իր փառքով պիտի յայտնուի: Որովհետեւ Քրիստոս իր անձը տուաւ մեզի համար, որպէսզի մեզ ազատէ մեր բոլոր անօրէնութիւններէն, եւ մեզ մաքրելով՝ իր սեփական ժողովուրդը դարձնէ, բարի գործերու նախանձախնդիր:

ՏԻՏՈՍԻ 2.12-14

*Ս*փկա շատ լաւ լուր է: Մեղքը այլեւս իրական իշխանութիւն չունի մեր վրայ: Կարելի է, թէ անցեալին քանի՛ անգամ «Այո» ըսած ենք մեղքին. անիկա տեղ չունի մեր ապագային մէջ: Մենք ամէն իրաւունք ունինք անկէ դառնալու եւ «Ոչ» ըսելու երբ մեղքը փորձէ հրապուրել մեզ եւ ամօթի ծուղակը ձգել: Յիսուս կոտրեց անոր զօրութիւնը կամ իշխանութիւնը, ողորմութիւն շնորհեց մեզի եւ լիազօրեց մեզ՝ ապրելու Աստուծոյ շնորհքով: Քրիստոսով, մենք չենք ստանար այն դատաստանը, որուն արժանի ենք, որովհետեւ ան մեր մեղքերը իր վրան առաւ: Մենք ներում ստացած ենք եւ նորէն ծնած ենք՝ մահէն կեանքի գալով: Սիրելի դուստրեր, ձեր հոգիներուն թշնամին չ'ուզեր, որ գիտնաք ատիկա: Ան կ'ուզէ, որ ամօթի մէջ մնաք՝ յոյս ունենալով անգամ մը եւս ձեզ թակարդել մեղքի մէջ: Ան չ'ուզեր, որ գիտնաք, որ դուք իշխանութիւն ունիք մեղքին վրայ, բայց այդպէս է: Վստահաբար

մենք մեր սեփական ոյժով եթէ փորձենք՝ պիտի ձախողինք, բայց մենք այլեւս առանձին չենք մեր ճակատամարտերուն մէջ: Մենք անոր մէջն ենք, եւ մեր զէնքերը հզօր են:

*Յիսուս, շնորհակալ եմ, որ կործանեցիր մեղքին իշխանութիւնը:
Ես կը մերժեմ թշնամիին սուտերը եւ ետ կը դառնամ
անոնցմէ՝ դէպի քեզ: Քու մահդ ինձի տրուաւ ամէն բան, որուն
պէտք ունիմ՝ այս ճակատամարտը շահելու համար:*

Եւ Զօրաւոր Եմ,

ՈՐՈՎՀԵՏԵԻ ՔՐԻՍՏՈՍ ԻՆԾԻ ՄԵՂՔԻՆ
ՎՐԱՅ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ԿՈՒ ՏԱՅ:

ԵՐԲ ՑԱԻԸ ՇԱՏ ՄԵԾ Է

Անոնց աչքերէն ամէն արցունք պիտի սրբէ. այլեւս ո՛չ մահ գոյութիւն պիտի ունենայ, ո՛չ սուգ, ո՛չ ողբ, ո՛չ ցաւ եւ ո՛չ ալ յոգնութիւն, որովհետեւ նախկինները անցան գացին:

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ 21.4

*Գ*ուգեմ քաջալերել քեզ, որ արձակես ցաւդ: Կրնաս հարց տալ. «Մարդ ի՞նչպէս իր ցաւը իր ետին կը ձգէ»: Կրնաս ինձի ըսել, որ ես չեմ հասկնար քու ցաւդ կամ չեմ գիտեր ի՛նչ պատահած է հետդ կամ թէ ո՛րքան մեծ է ցաւդ: Եւ ճիշդ ես: Ես չեմ գիտեր. բայց կայ Մէկը, որ գիտէ: Կրնանք թուել շատ ուրիշ վէրքեր: Վստահ եմ, որ ձեզմէ ոմանք բռնաբարուած են մէկու մը կողմէ, որուն վստահած են: Ոմանք բռնաբարուած կամ պղծուած են օտարականի մը կողմէ: Թերեւս լքած է քեզ մէկը, որ խոստացած էր միշտ հոն ըլլալ քեզի համար: Թերեւս զաւակդ մեռաւ վայրագ կամ անիմաստ ձեռով: Մէկը, զոր կը սիրես սխալ ձեռով վարուեցաւ հետդ: Ծնողներդ մերժեցին քեզ եւ դուն բնաւ չզգացիր, որ բաւարար ես: Շահտ շատեր ծաղրուած են իրենց մորթին գոյնին համար: Ուրիշներ ծաղրանքի առարկայ դարձած են հաշմութեան մը պատճառով: Եւ, ցաւ ի սիրտ, մեծ մասս դաւաճանութեան ենթարկուած ենք բարեկամի մը կողմէ:

Այդ ողբերգութիւններէն որեւէ մէկը եւ տակաւին ուրիշներ՝ զորս չեմ թուած, բաւարար չափով ցաւալի են մեզ խորապէս վիրաւորած ըլլալու համար: Եւ ապա երբ մենք մեր ամէնէն խոցելի վիճակին մէջն ենք, Սատանան մեր վիրաւոր հոգիին մէջ կը ցանէ

դառնութեան խօսքեր եւ վրէժխնդրութեան խորհուրդներ: Ան կը քաջալերէ մեզ, որ մեր միտքին մէջ շարունակ վերապրինք վիրաւորանքը եւ յիշենք ցաւը: Ան կ'ուզէ, որ մենք անիկա ամուր կերպով սեղմենք մեր կուրծքին եւ երբեք չարձակենք: Ան կը ստէ՝ խոստանալով, որ անիկա մեր մէջը պահելը պիտի պաշտպանէ մեզ ապագայի խախտումներէ: Բայց ատիկա սուտ մըն է:

Բժշկութիւն կայ ցաւդ Յիսուսին արձակելու մէջ. Միակը, որ իրապէս կը հասկնայ: Եսայիի Գիրքը մեզի կ'ըսէ, թէ Յիսուս «մեր յանցանքներուն համար վիրաւորուեցաւ, մեր անօրէնութիւններուն համար ճզմուեցաւ: Մեզի խաղաղութիւն տուող պատիժը անոր վրայ եղաւ, եւ իր վէրքերով մենք բուժուեցանք» (53.5):

Յաւիդ կառչած մնալը միայն աւելի եւս պիտի վնասէ քեզի: Կ'ուզեմ, որ գոցես աչքերդ եւ պատկերացնես, որ Յիսուսի կու տաս ամբողջ ցաւդ: Ան պիտի չպզտիկցնէ քեզի հետ պատահածը: Արձակէ՛ զանիկա եւ արտօնէ՛, որ ան առնէ քեզմէ զանիկա եւ հատուցում ընէ քեզի:

*Յիսուս, կը հաւատամ, որ դուն ես իմ բժշկութիւնս, ուստի
կրնամ վստահիլ քեզի ամէն ցաւ, որ ապրած եմ: Կը
մերժեմ կրել այն ինչ որ ձեռակերպուած չեմ պահելու:
Կ'արձակեմ (թուէ՛ ցաւի մարզերը) քու հոգաբարութեանդ:
Հատուցանէ զանոնք քու փառքիդ համար:*

Եւ Զօրաւոր Եւ,

ՈՐՈՎՀԵՏԵՒ ԻՄ ՅԱԻՍ ԿՈՒ ՏԱՄ ԻՄ ԲԺԻՇԿԻՍ:

ՀԱՍՏԱՏ՝ ԱՉԱՏՈՒԹԵԱՆ ՄԵՉ

*Ուստի հաստատուն կեցեք այն ազատութեամբ՝
որով Քրիստոս ազատեց մեզ, եւ դարձեալ
ստրկութեան լուծին տակ մի՛ կաշկանդուիք:*

ԳԱՂԱՏԱՅԻՆԵՐՈՒՆ 5.1

*Ս*րբ ազատ կ'ըլլանք, կրնայ ըլլալ, որ դժուարութիւն ունենանք հաւատալու, թէ իրապէս ազատ ենք... յաւիտեան: Մեր մշակոյթը եւ կրօնական կապանքը իրենց լաւագոյնը պիտի ընեն, որ մեզ դարձեալ գերեն: Անոնք կ'ուզեն, որ դարձեալ կաշկանդուինք ստրկութեան լուծին տակ եւ արտօսենք մեր անձերուն, որ քաջքշուին այն ծանր, նեղութիւն տուող բեռով, որ կը կապէ մեզ այն ամօթին եւ մեղքերուն, որոնք ժամանակին մեզ գերած էին: Ազատութիւնը կը պատահի թէ՛ անմիջապէս եւ թէ՛ ժամանակի ընթացքին: Յիսուս կ'ազատէ մեզ երբ մենք մեր կեանքերը իրեն կու տանք, եւ այդ ազատութիւնը մեր սեփականութիւնը կ'ըլլայ: Ապա, ժամանակի ընթացքին, մենք շարունակ կը գործադրենք այդ ազատութիւնը՝ հաստատուն մնալով ընդդէմ այն մեղքին, որ ատեն մը կը բեռնաւորէր մեզ եւ չընդունելով մեր սեփական ոյժով կատարեալ ըլլալ փորձելու բեռը:

Ուստի ամո՛ւր կեցիր ազատութեանդ մէջ: Դէ՛մ դիր որեւէ յանցաւորի եւ ամօթի զգացումի, որ պիտի փորձէ քաշել քեզ պարտութեան ընկճուածութեան մը մէջ կամ ետ դէպի մեղքի կենցաղը: Դէ՛մ կեցիր անցեալի ամօթի ամէն ստուերի, որ մարտահրաւէր կ'ուղղէ ինկած ինքնութեան ամէն վարժութեան

«Ոչ» ըսելու իրաւունքիդ: Թերեւս անցեալին դժուարութիւն ունէիր «Ոչ» ըսելու՝ յանցաւորի եւ ամօթի զգացումներուն պատճառով, բայց ազատած ես անցեալէդ, եւ ապագադ փայլուն եւ ազատ է:

Քրիստոսի մեզի տուած ազատութեան եւ փառաւոր յոյսին շնորհիւ, պատճառ չունինք վախնալու մեր Տիրոջ եւ Փրկիչին վերադարձէն, որովհետեւ ան փրկած է մեզ չարութենէ եւ մեզ իր սեփականը դարձուցած է: Նախապէս մենք կ'ուզէինք չարիք գործել... Իսկ հիմա կ'ուզենք բարիք գործել: Երբ իրապէս վերստին կը ծնինք, մեր բնական փափաքները կը փոխուին: Ան կը ներէ մեզի եւ ապա կը փոխէ մեր բնութիւնը հետեւեալ բառերով՝ «Գնա՛ եւ այլեւս մի՛ մեղանչեր»: Անիկա ներումին նախապայմանը չէ. ներումը արդէն իսկ շնորհուած է: Անիկա վստահութեան քուէ մըն է եւ գալիքին աւելի լաւ բաներ ըլլալու համոզում մը:

Յիսուսի խօսքերը հետեւեալ ձեւով կարելի է պարզաբանել. ես չեմ դատապարտեր քեզ: Ես կը ներեմ քեզի եւ կ'արձակեմ քեզ մեղքին դատավճիռէն եւ դատապարտութենէն: Գնա՛ եւ այլեւս մի՛ մեղանչեր: Դուն ազատ ես (Յովհաննէսի 8.11): Մենք երբեք պիտի չկարենանք շահիլ Աստուծոյ գութով մեզի շնորհուածները, ճիշդ ինչպէս երբեք պիտի չկարենայինք քալել բարեպաշտութեան մէջ եւ ոչ ըսել մեղքին եւ աշխարհային կիրքին առանց Աստուծոյ շնորհքին: Մեղքը այլեւս իրաւունքի պահանջք չունի մեր կեանքերուն մէջ, որովհետեւ՝ «հաստատո՛ւն կը կենանք այն ազատութեամբ՝ որով Քրիստոս ազատեց մեզ»:

Տէր, ես երախտապարտ եմ, որ քու ներումդ եւ փրկութիւնդ ինձի շնորհած ես: Յոյց փորդ ինձի ինչպէս գործադրեմ ազատութիւնս՝ օգնելով ինձի, որ ետ դառնամ զիս գերող բաներէն:

Եւ Զօրմեոյ Ե՛՛՛՛,

ՈՐՈՎՀԵՏԵԻ ՔՐԻՍՏՈՍ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԱԾ Է
ԶԻՍ: ԱՅԴ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՓԱՍՏԸ ԱՄԷՆ
ՕՐ Կ'ԱԻԵԼՆԱՅ ԿԵԱՆՔԻՍ ՄԷՋ:

ՉԿԱՊՈՒԱԾ

Մենք աղախինն զառակները չենք, այլ՝ ազատին:

ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ 4.31

Օրք տարիքիս հայրս շատ կապ չէր ունենար հետս, բացի երբ իր հպարտութիւնը կ'ուզէր յայտնել իմ զօրաւոր կամ կարծր մէկը ըլլալու մասին: Զիս կ'անուանէր «վագր» կամ «պայքարող»: Ձեռով մը կնոջական հագուստները կամ կնոջական առարկները չէին յարմարեր այդ պատկերներուն: Ես որոշած էի չըլլալ նուրբ կամ կնոջական տիպարի մէջ:

Շաբաթ օր մը միջնակարգի տարիքիս *ֆիլմ* կը դիտէի եւ տեսայ կնոջ մը պատկերը, որուն հետ նոյնացուցի ինքզինքս: Նուրբ կանացի տեսք չունէր: Անոր կեանքը արկածախնդրական էր: Ան ճէյմզ Պոնտի ընկերուիներէն մէկն էր: Ես շատ աւելի հանգիստ էի նեղ տափատ հագած, գէնք կրող եւ տղաներուն հետ վազող կիներու տիպարին հետ: Այդ կիները իրենց ոտքը կը կոխէին տղամարդոց դիմաց եւ ոչ ոք կը համարձակէր սխալ վարմունք ունենալ անոնց հանդէպ: Անոնք չէին սպասեր, որ տղամարդ մը գար եւ պաշտպանէր զիրենք: Իրե՛նք կ'ընէին ատիկա:

Բայց Պոնտի աղջիկներուն հետ կապուած հետեւեալ իրականութիւնը կայ: Եթէ ճիշդ կը յիշեմ, այդ կիներէն առնուազն մէկը կը սպաննուէր ամէն 007-ի *ֆիլմ*ի մէջ: Վերջաւորութեան ճէյմզ սեռային յարաբերութիւն կ'ունենար ողջ մնացողին հետ, բայց անոնք երբեք նորէն չէին տեսնուեր: Գլխաւոր կ'անցնէր իր յաջորդ արկածախնդրութեան, բայց կիները իրեն հետ չէին երթար. ան ուրիշ մը կը հետապնդէր: Կը կարծեմ, որ անոնք իրապէս «պոնտի կիներ» էին [անգլերէնով *պոնտի* կը նշանակէ՝ կապանք- *Թարգմանիչ*]՝ գերուած համակարգի մը կողմէ, որ չէր գիտեր իրենց արժէքը:

Գիտեմ, որ այդ կարծր, զորաւոր եւ սեռային առումով ինքնավստահ կինը առաջին հայեացքով կրնայ քաջ թուիլ, բայց ան այդպէս չէ: Բոլոր «պոնտի կիներ»ը վախի մէջ կ'ըլլան: Անոնցմէ շատեր երբեք չէին ստացած այն պաշտպանութիւնը եւ սէրը, որոնց պէտք ունէին իրենց հայրերէն երբ փոքր աղջիկներ էին, ուստի որոշեցին իրենց ձեռով լուծել հարցերը: Ուրիշներ սիրուած էին եւ գուրգուրանք ստացած էին, բայց մտիկ ըրին մշակոյթի մը, որ զիրենք քաջալերեց, որ վստահին իրենք իրենց պաշտպանելու իրենց կարողութեան՝ փոխանակ Աստուծոյ: Պարզապէս որովհետեւ կին մը սեռային առումով ցանկալի է, ատիկա չի նշանակեր, որ ան ազատ է:

Մեր մշակոյթը մեզի աւելի առիթներ կու տայ հասկնալու գերի դուստրը քան ազատ կինը: Բայց պէտք չունինք ընտրութիւն ընելու այս երկու «տեսակ»ներուն միջեւ՝ ծաղկաւոր հագուստով, զգայուն կնոջ մը տիպարը կամ յարձակողական, գայթակղիչ կնոջ մը տիպարը խաղալու միջեւ: Աստուած կիները ստեղծեց այնքան անհամար, բացառիկ ընտրութիւններով որքան որ կան դուստրեր: Մի՛ հաւատար այն սուտին, որ դուն սահմանափակուած ես մարդու ստեղծած կարծրատիպի մը մէջ: Մենք իր արքայական դուստրերն ենք, ոչ թէ «պոնտի կիներ», որոնք ստիպուած են վստահելու բաներու, որոնք վերջաւորութեան կը լքեն զիրենք: Եւ իբրեւ իր զաւակները, մենք ազատ ենք ըլլալու ով որ ենք՝ գիտնալով, որ ամբողջական ձեռով եւ իւրայատուկ ձեռով սիրուած ենք:

*Հայր, կ'ուզեմ ընդունիլ ամէն բան, որ ստեղծեցիր
զիս, որ ըլլամ: Երբ կը փորձուիմ խաղալու աւելի
նուազ դեր մը, յիշեցո՛ւր ինձի, թէ ճիշդ ո՛վ եմ:*

Եւ Զօրմուք Ե՛մ,

ՈՐՈՎՀԵՏԵԻ ԿԱՊՈՒԱԾ ՉԵՄ ԿՆՈՒԹԵԱՆ
ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԵՐԵՒԱԿԱՅԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԻ ՄԸ.
ԵՍ ԿԵՆԴԱՆԻ ԱՍՏՈՒԾՈՅ ԴՈՒՍՏՐՆ ԵՄ:

ՆՈՐ ԴԱՐՁԱԾ

*Ուեյ մէկը, որ Քրիստոսի միացած է՝ նոր արարած է. այլևս չէ՛ այն՝
ինչ որ էր նախապէս, որովհետեւ ամբողջութեամբ նորոգուեցաւ:*

Բ.ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ 5.17

Որք Քրիստոս կը դառնայ մեր Փրկիչը եւ Տէրը, մեր մեղքին համար մեր յաւիտենական պատիժը հեռացուած կ'ըլլայ մեզմէ այնքան որքան արեւելքը հեռու է արեւմուտքէն (տե՛ս Սաղմոսներու 103.12): Մեղքը այլևս չի տիրեր վրադ եւ օրինական գետին չունի քու հոգիդ կապանքի մէջ պահելու: Դուս ազատ արձակուած ես: Սակայն ազատութիւնը եւ ներումը արմատախիլ չեն ըներ մեղքին գործնական կամ բնական հետեւանքները: Եթէ ես ոճիր մը գործեմ եւ բանտարկութեան դատապարտուիմ, հոգիս ազատ է, բայց մարմինս տակաւին դէպի բանտ կ'ուղղուի: Ատիկա չի նշանակեր, որ ես ներում չեմ ստացած: Ատիկա կը նշանակէ, որ ես իր իմաստութիւնը կը փնտռեմ մինչ յանձն կ'առնեմ կամ կ'ապրիմ իմ իրականութիւններս:

Կրնայ ըլլալ, որ կը մտածես, թէ ուրեմն ի՞նչպէս կը կիրարկուի «Ներուած եմ եւ նոր արարած դարձած եմ» ճշմարտութիւնը: Հինը անցած է եւ ամէն բան նոր եղած է ինձի համար: Այս ճշմարտութիւնը շարունակ կը գործադրուի մեր մէջ: Մենք ներուած ենք եւ մեր մեղքերը կը լուացուին այն պահուն, որ կը խոստովանինք զանոնք: Մենք հոգեւորապէս նոր կը դառնանք այն պահուն երբ փորձառաբար կ'ապրինք Քրիստոսի մե՛ծ գութը: Բայց ատիկա չի նշանակեր, որ իմ նախկին ընտրութիւններս որեւէ մէկ ազդեցութիւն պիտի չունենան վրաս: Ես այլևս յանցաւոր եւ յաւիտենական դատաստանի տակ չեմ, բայց կարգ մը հետեւանքներ կը մնան:

Յաւելեալ առարկութեան կամ փաստարկի համար, նկատի

առնենք հետեւեալը: Ըսենք թէ յղի մնացած էի երիտասարդութեանս սանձարձակ օրերուն: Ատիկա վստահաբար զարթնումի կոչ մը պիտի ըլլար ինձի: Իսկ եթէ հաւատքի գայի յղանալէս ետք... Արդեօք այդ մանուկը յանկարծ պիտի անհետանա՞ր: Ոչ, ա՛նշուշտ ոչ: Մանուկ մը կրելս ոչ մէկ ձեռով պիտի ժխտէր ներուած ըլլալս, ճիշդ ինչպէս մեղքիս ներումը պիտի չջնջէր զաւակիս գոյութիւնը: Մանուկը մեղք մը չէ: Ան արդիւնքն է ընտրութեան մը, որ ես ըրած էի: Զաւակը պիտի սիրուէր եւ անոր համար պիտի ուրախանայինք իբրեւ նուէրի մը, նոյնիսկ որ յղութիւնը տեղի ունեցած էր ամուսնութեան ուխտէն դուրս:

Աստուած հոն է՝ մեր սխալներէն, մեր կեանքի վատ պատահարներէն եւ մեղքէն մեզ փրկելու համար: Հրաշքները միշտ չունին մեր ակնկալած երեւոյթը, եւ գեղեցիկ բաներ կարելի է կառուցանել կոտրուած կտորներով: Ոչինչ անկարելի է Աստուծոյ համար, բայց երբ մէկու մը սիրտը կը կոտրուի, ատիկա Աստուծոյ թիւ մէկ մտահոգութիւնը կ'ըլլայ: Ան կը հանէ անձին մէջէն քարեղէն, կոտրուած սիրտը եւ զանիկա կը փոխարինէ մարմնեղէն, կակուղ սիրտով մը: Մենք կրնանք վստահիլ իրեն երբ կ'ըսէ, թէ մենք նոր կը դառնանք:

Տէր, ցոյց փոր ինձի փարբերութիւնը յաւիտենական ներումին եւ բնական հեպտեանքներուն: Կը վստահիմ զիս ամէն առումով ամբողջական եւ առողջ ընելու քու կարողութեանդ:

Եւ Զօրաւոր Եւ,

ԵՐԲ ԿԸ ՎՍՏԱՀԻՄ ԻՄ ԻՐԱԿԱՆՈՒԹԻԻՆՆԵՐԷՍ
ԶԻՍ ՓՐԿԵԼՈՒ ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ:

ԱԶԱՏԱԳՐՈՒԹ՝ ԻՐԸ ԸԼԼԱԼՈՒ ԶԱՄԱՐ

*Ե՛ս եմ Տէրը՝ ձեր Աստուածը, որ ձեզ Եգիպտոսի
երկրէն հանեցի՝ Քանանի երկիրը ձեզի տալու
համար ու ձեզի Աստուած ըլլալու համար:*

ՂԵՒՏԱՅԻՆԵՐՈՒ 25.38

Մեզմէ քանինե՞ր լսած են հետեւեալ հարցումը. «Եթէ այս գիշեր մեռնիս, վստահ գիտե՞ս, թէ ո՛ր պիտի երթաս»: Հարցումին նպատակը այն է, որ ունկնդիրները իրենք իրենց հարց տան, թէ՛ «Վստահ գիտե՞մ, որ երկինք կ'երթամ»: Եթէ վստահ չեն, առիթը կ'ունենան աղօթելու եւ ապահովելու իրենց յաւիտենական դիրքը: Բայց յաւիտենականութիւնը աւելին է քան սոսկ մահէն ետք երթալիք տեղ մը. անիկա կեանքի ձեւ մըն է այսօր: Հետեւեալ համարը կը յայտնաբերէ Աստուծոյ ամէնէն խորունկ փափաքը եւ նպատակը Իսրայէլը Եգիպտոսէն ազատելու. «Դուք տեսաք ի՛նչ որ ըրի Եգիպտացիներուն, ի՛նչպէս ձեզ արծիւի թելերուն վրայ կրեցի ու քովս բերի» (Ելքի 19.4):

Կը սիրեմ այս համարին գեղեցկութիւնը եւ զօրութիւնը: Երկինքի հզօր Թագաւորը կը խոյանայ երկրի վրայ՝ քաջաբար փրկելու համար իր զաւակները չորս հարիւր տարի գերութենէ ետք: Այդ ընթացքին ան կը հարուածէ Եգիպտոսը՝ աշխարհի ամէնէն հզօր երկիրը՝ զանիկա նուազեցնելով խայտառակ աւերակի մը: Իսրայէլացի գերիները կը ստանան Եգիպտացիներուն արծաթն ու ոսկին:

Ատիկա միայն Իսրայէլի համար իր փափաքը չէր. ատիկա քեզի համար ալ իր փափաքն է:

Մեր բուռն սիրով լեցուն եւ սուրբ Աստուածը քեզ կը հետապնդէ, քեզ կ'ուզէ: Ան կը սպասէ եւ կը դիտէ, որ դուն իր կողմը նայիս: Ան կը փափաքի, որ կարդաս այն սիրոյ նօթերը, զորս Ինք հիւսած է քեզի համար ամբողջ Աստուածաշունչին մէջ՝ յուսալով, որ կը փոխադարձես իր դիմումները: Ան կ'ուզէ արծակել քեզ գերութենէն աշխարհի մը, որ թակարդուած է խաւարի մէջ՝ դէպի կեանքը իր լոյսի աշխարհին: Ան կ'ուզէ յափշտակել քեզ անհաւատարիմ սիրականներու թելերուն մէջէն եւ բերել քեզ իր հաւատարիմ, յաւերժական գիրկը: Ան կ'ուզէ ազատագրել քեզ այս աշխարհի դժուար գործավարներէն եւ անգութ կապանքներէն, որպէսզի ցոյց տայ քեզի իր քնքոյշ սէրը եւ գութը:

Եգիպտոսէն փրկելը երբեք միայն խոստացուած երկիր տանելու համար չէր. անիկա կը վերաբերէր անոր, որ խոստումը տուաւ: Ան վերջաւորութեան կ'ուզէ մեզ իրեն բերել: Հին Կտակարանի խոստումները պարզապէս շուքն էին գալիք բաներուն: Փրկութեան մէջ Աստուծոյ վերջնական նպատակը իր մէջ վերականգնել էր իր գաւակները: Սիրելիս, փրկութիւնը շատ աւելին է քան կրակը եւ կեանքի ապահովագրութիւնը:

Ո՛վ չ'ուզեր յափշտակուիլ այս աշխարհի անգթութենէն եւ տարուիլ Աստուծոյ լեռը: Վերջապէս այս աշխարհը մեր տունը չէ, ուստի ճիշդը պիտի ըլլայ այն, որ մենք սնուցանենք այդ ձգտումը: Բոլորս ալ պէտք է ողջունենք կապանքէն եւ դատաստանէն փախուստը, բայց փրկութիւնը հող չի կենար: Եկէք իրացնենք իրը ըլլալու գաղափարը:

*Հայր, շնորհակալ եմ զիս ազապելուդ համար, որպէսզի
ոչ մէկ բան արգելք ըլլայ քուկդ ըլլալու: Կընտրեմ
հեղապնդել քեզ ճանչնալու խոստումը:*

Եւ Զօրաւոր եմ,

ՈՐՈՎՀԵՏԵԻ ՓՐԿՈՒԱԾ ԵՄ՝

ԻՐԸ ԸԼԼԱԼՈՒ ՀԱՄԱՐ:

Զօրանքի
Արքայաթեան և՛

ՈՉ ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ

*Ես ձեզ այս աշխարհին զարեցի, եւ դուք այս
աշխարհին չէք պարկանիր այլեւս:*

ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 15.19

Յիսուս կը յստակացնէ, որ այս աշխարհը չի տիրապետեր մեզի: Այդ իրականութիւնը ի՞նչպէս երեւան պիտի հանէ իր պտուղը մեր վարմունքին մէջ: Այս աշխարհը, եւ աւելի որոշակիօրէն անոր մշակոյթը, մեզ կը քաջալերէ, որ իր վարմունքին համակերպինք: Բայց մենք այլեւս մեր մշակոյթին չենք պատկանիր. մենք յարաբերութեան մէջ ենք մարդոց հետ եւ Աստուծոյ: Մենք կանչուած ենք ըլլալու մեր մշակոյթէն տարբեր. կը սիրենք՝ երբ անիկա ատելութեամբ լեցուն է մեզի դէմ, եւ ազնիւ ենք՝ երբ անիկա անգութ է: Այս տարբերութիւնը նաեւ կը կիրարկուի մեր բարոյական կողմնացոյցին մէջ: Եփեսացիներուն Գիրքը մեզի ցոյց կու տայ մեր հիւսիսը. «Պոռնկութեան, որեւէ պղծութեան կամ ազահութեան խօսքն իսկ թող չըլլայ ձեր մէջ, որովհետեւ այդպէ՛ս կը վայելէ Աստուծոյ ժողովուրդին» (5.3):

Այս համարին մէջ չկայ մոխրագոյն գօտի: Ինչո՞ւ այդքան խիստ: Կը հաւատամ, որ անոր պատճառը այն է, որ նոյնիսկ ակնարկութիւն մը այդ բաներուն մասին կրնայ խառնուած կամ անյստակ տպաւորութիւն ձգել, ինչ որ կրնայ շփոթեցուցիչ ըլլալ ուրիշներուն համար: Որո՞վհետեւ մենք Աստուծոյ կը պատկանինք, մենք կը պատուենք զինք մեր բոլոր ըսածներուն եւ ըրածներուն մէջ: Ատիկա կը նշանակէ, թէ մեր խօսած խօսքերը եւ մեր վարմունքը պէտք է արտացոլացնեն Աստուծոյ ազդեցութիւնը մեր կեանքին վրայ: Քրիստոսով մենք ոչ միայն ներուած ենք, այլեւ սրբացած ենք: Մենք լոյս ենք մինչ ժամանակին խաւար էինք:

Եփեսացիներուն ղրկուած նամակը նաեւ կը շարունակէ ըսելով. «Վայել չէ, որ լկտի եւ ամբարիշտ խօսակցութիւններով կամ խեղկատակութեամբ զբաղիք. այլ՝ ձեր խօսակցութիւնը միշտ գոհաբանութիւն պէտք է ըլլայ» (5.4): Պօղոս ցանկին վրայ կ'աւելցնէ՝ լկտի եւ ամբարիշտ խօսակցութիւններ եւ խեղկատակութիւն: Այդ խօսակցութեան նիւթերէն կամ ոճերէն ոչ մէկը կը համապատասխանէ բարեպաշտութեան, այլ՝ անոնք միայն կը ցեխտտեն ջուրը՝ արգելք ըլլալով անոնց, որոնք կը փնտռեն: Փոխանակ մեր խօսակցութիւնները լկտիութեան կէտադրութիւններ ունենան, անոնք պէտք է երախտագիտութեամբ սահուն ըլլան: Այդ ձեւով մենք կ'ունենանք երախտագիտութեան կեցուածք կամ վերաբերում մը Աստուծոյ շնորհքին եւ ողորմութեան հանդէպ: Ասիկա միայն պէտք է բաւարար ըլլայ մեզմէ ոմանց համար, որ շարունակեն խօսիլ երկար ժամանակ: Փոխանակ ըլլալու կոպիտ, կոշտ տրտնջացողներ եւ գանգատողներ, մենք կրնանք ընդօրինակել մեր Հայրը՝ օրհնելով եւ կեանք արձակելով մեր խօսակցութիւններուն ընդմէջէն: Աստուածաշունչը մեզի կը զգուշացնէ, որ չարօտնենք, որ ոեւէ մէկը խաբէ մեզ պարապ խօսքերով: Պարապ խօսքերը կը բթացնեն մեզ եւ կը մղեն համակերպելու. «Ամէն բան լաւ պիտի ըլլայ... Մեծ խնդիր չէ... Ամէն մարդ այդպէս կ'ընէ...»: Եթէ բառերը կրնան պարապ ըլլալ, ապա անոնք կրնան նաեւ լեցուն ըլլալ: Կեանքի խօսքերը մեզ կը կանչեն ամէն բան աւելի լաւը ընելու: Անոնք մեզի կը յիշեցնեն, թէ մենք ամէն մարդու պէս չենք, որովհետեւ մենք դուստրերն ենք Ամենաբարձր Աստուծոյ: Մենք աշխարհի մէջ կ'ապրինք, բայց աշխարհին չենք պատկանիր (տե՛ս Յովհաննէսի 17.15-16):

Աստուած, կը խնդրեմ, որ ինձի յայտնես փարբերութիւնը անոր, թէ՛ աշխարհը ինչ ձեւով կը գործէ եւ թէ դուն ինչ ձեւով կը գործես: Կ'ուզեմ պատուել քեզ իմ խօսքերովս եւ գործերովս՝ առանց նոյնիսկ ակնարկութիւն մը ընելու ուրիշ որեւէ բանի մասին:

Եւ Զօրմեար Եւ,

ՈՐՈՎՎՇԵՏԵՒ ԿԸ ԳՈՐԾԵՄ ԱՍՏՈՒԾՈՅ
 ԶԱՓԱՆԻՇՆԵՐՈՎ, ՈՉ՝ ԱՇԽԱՐՀ:

ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ ՍՈՐՎԻԼ

*Երանի՛ր բոլոր անոնց՝ որ Տիրոջմէն կը վախնան,
եւ անոր ճամբաներէն կ'ընթանան:*

ՍԱՂՄՈՍՆԵՐՈՒ 128.1

Յաճախ պզտիկները խակ եւ բացայայտ կերպով օրինակը կ'ըլլան այն բաներուն, զորս չափահասները սորված կ'ըլլան գեղեցկացնելով ծածկել: Երբ երկրորդ որդիս՝ Օսթընը, տակաւին փոքր էր, բան մը պատահեցաւ, որ ցոյց կու տայ, թէ ի՛նչպէս կրնանք հակազդել երբ դժուարութիւն կ'ունենանք Աստուծոյ հնազանդելու:

Երբ Օսթըն միայն երկու տարեկան էր, իր ընկերներէն ոմանք եկած էին մեր տունը՝ խաղալու: Երբ ժամանակը եկաւ, որ անոնք իրենց տունները երթան, որոշեցի պզտիկներուն ծամուելիք շաքարներ տալ՝ իբրեւ հրաժեշտի նուէր: Օսթընին ձեռքին մէջ լեցուցի մեծ քանակութեամբ այդ կակուղ շաքարներէն, որպէսզի ինք բաժնէր զանոնք իր ընկերներուն: Մինչ պզտիկները դուռէն կ'անցնէին դուրս ելլելու համար, կը ստանային իրենց շաքարները: Բայց երբ վերջին երկու շաքարները մնացին, Օսթըն ձեռքը զոցեց: Միայն մէկ աղջիկ մնացած էր, որ դուրս ելլէր: Ես Օսթընին քաջալերեցի, որ տայ անոր շաքարները, ըսելով. «Օսթըն, շատ աւելին կայ տոպրակին մէջ: Այդ երկուքը ընկերուհիի՛դ տուր»:

Միակ պատասխանը, որ Օսթըն տուաւ վազել էր դուրս, նամակատուփի սիւնին փաթթուիլ եւ գլուխը ոչ-ի նշանով շարժել: Ան միտքը չէր փոխեր:

Ներս վազեցի եւ այդ աղջնակին համար շաքարներ բերի: Ձեռքս շարժեցի ընկերուհիներուս եւ իրենց զաւակներուն հրաժեշտ տալու համար մինչ փորձելով փրցնել տղաս նամակատուփէն:

Երբ ներս մտանք, կացութիւնը բարդացաւ: Քրտնած, ճգմուած

շաքարները հանեցի տղուս ափին մէջէն եւ զինք սենեակ դրկեցի մինչեւ որ հանդարտի:

«Սենեակ պիտի չերթամ», յայտարարեց մինչ ուժգին քայլերով դուրս կու գար խոհանոցէն:

«Այո՛, պիտի երթաս», պատասխանեցի հանդարտօրէն, մնալով խոհանոցին մէջ:

Այդ խօսքի փոխանակումը կրկնուեցաւ քանի մը անգամ, բայց նկատեցի, որ անոր ծայնը երթալէն աւելի եւ աւելի հեռուէն կու գար: Ան քայլ առ քայլ սենեակ կ'երթար: Շուրջ տասնհինգ վայրկեան ետք, լսեցի, որ շեշտակիօրէն կ'ըսէր. «Պիտի չքնանամ: Պիտի չմրափեմ»: Ապա լռութիւն տիրեց: Քիչ ժամանակ անց կամացուկ մը ելայ սենեակ եւ տեսայ, որ խոր քունի մէջ էր: Տեղ մը Օսթըն գիտէր, որ սխալ էր եւ նոյնիսկ գիտէր, թէ ի՛նչ բանի պէտք ունէր: Ատոր համար մրափեց: Ինչո՞ւ այդ սպառիչ բողոքը: Ինչո՞ւ այդքան ուժգին կերպով դէմ դրաւ:

Ինչո՞ւ մենք այդքան ուժգին կերպով դէմ կը դնենք հնազանդութեան: Յոգնած ըլլալու կողքին, կը հաւատամ, որ յաճախ այն նոյն պատճառով, որ տղաս դէմ դրաւ: Ան կը տեսնէր շաքարներուն հետզհետէ պակսիլը եւ զգաց, որ կարծես մէկը իր իրաւունքը կը խլէր իրմէ: Անկեղծօրէն, ես ինքզինքս տեսայ իր մէջը: Ես ալ ունեցած եմ յուսախաբութեան նոյն զգացումները, զորս չեմ գիտեր ի՛նչպէս բառերով արտայայտեմ իսկ: Ատոր համար ալ ըրած եմ անկախութեան անմիտ հռչակումներ, կարծես ըսել ուզելով. «Աստուած, կը հնազանդիմ, բայց գիտցի՛ր, որ համաձայն չեմ, եւ պիտի հնազանդիմ ե՛րբ որ պատրաստ ըլլամ»:

Մինչ կ'աճիմք եւ աւելի հասուն կը դառնանք, կը սորվինք դէմ չդնել եւ անձնասէրօրէն չհակազդել, այլ՝ վստահիլ, որ Աստուած գիտէ, թէ ի՛նչն է լաւագոյնը մեզի համար: Շատ աւելի նուազ յոգնեցուցիչ է սկիզբէն ճիշդ բանը ընելը քան թէ դժուար ճամբով հոն հասնիլը:

Տէր, երբ չեմ ուզեր հնազանդիլ, սորվեցո՛ւր ինձի դէմ չդնել, այլ՝ քեզի գալ սկիզբէն փոխանակ վերջաւորութեան:

Եւ Զօրաւոր Եմ,

ԵՐԲ ԿԸ ՀՆԱԶԱՆԴԻՄ ԱՌԱՆՅ ԴԻՄԱԴՐՈՒԹԵԱՆ:

ՍՐԲԱՑԱԾ

*Այլ, ինչպէս որ ձեզ կանչողը՝ Աստուած սուրբ է, դուք
ալ սուրբ եղէք ձեր ամբողջ կեանքով, որովհետեւ
գրուած է. «Սուրբ եղէք, որովհետեւ ես սուրբ եմ»:*

Ա.ՊԵՏՐՈՍԻ 1.15-16

*Ս*տուած սուրբ է... ուստի մենք ալ սրբութեան հետամուտ կ'ըլլանք: Սրբութիւնը լաւ ըլլալու մէկ ուրիշ ձախողած փորձ մը չէ մեր կողմէ. անիկա յայտնութիւն մըն է, թէ մենք իրն ենք: Սրբութիւնը հովիւներու կամ քարոզիչներու գործի նկարագրականէ մը աւելին է. անիկա պատուէր մըն է բոլորին, որոնք կը հաւաքուին սուրբ Աստուծոյ առջեւ: Մենք կանչուած ենք սուրբ ըլլալու, որովհետեւ ինք սուրբ է: Մեզմէ չէ պահանջուած, որ սուրբ կերպով վարուինք կամ սուրբ երեւինք. մենք հրաւիրուած ենք *ըլլալու* սուրբ: Բան մը ըլլալ կը նշանակէ, որ անիկա մէկ մասը կը դառնայ մեր էութեան կամ կեանքի ոյժին: Մենք կը լեցուինք եւ կ'առաջնորդուինք իր Հոգիով, որ սուրբ է. Սուրբ Հոգին:

Սրբութիւնը պէտք է իր ազդեցութիւնը ունենայ մեր անձնական յարաբերութիւններուն եւ մեր հանրային վարմունքին վրայ: Մենք կրնանք սուրբ կերպով վարուիլ, բայց սուրբ չըլլալ. կրնանք սուրբ երեւիլ, բայց սուրբ չըլլալ: Բան մը ըլլալ կը նշանակէ, որ անիկա կը սահմանէ ինքնին մեր գոյութիւնը:

Ի՞նչ կը նշանակէ սուրբ ըլլալ: Սուրբ Գիրքերը մեզի կու տան որոշ խորաթափանցութիւն. «Անիկա աշխարհի գոյութենէն իսկ առաջ մեզ ընտրած էր՝ Քրիստոսի միջոցաւ իրեն

պատկանելու համար, որպէս սուրբ եւ անարատ ժողովուրդ»
(Եփեսացիներուն 1.4):

Նախքան որ մենք մեր առաջին շունչը քաշենք, մենք ընտրուած էինք: Մենք իր միտքն էինք նախքան որ երկիրը ստեղծէր: Դուն ընտրուած էիր Աստուծոյ կողմէ Քրիստոսի միջոցաւ եւ կոչուած՝ ըլլալու սուրբ եւ անարատ: Քանի որ Յիսուս թէ՛ սուրբ եւ թէ՛ անարատ է, մենք ալ կը ժառանգենք իր դիրքը Հօր առջեւ:

Առանց Քրիստոսի մենք օտար էինք թէ՛ անոր զօրութեան եւ թէ՛ խոստումներուն: Բայց խաչին վրայ վարագոյրը երկուքի պատռուեցաւ: Ամէն բան, որ մեզի արգելք էր՝ գամուեցաւ խաչին վրայ, եւ մենք մէկ եղանք Աստուծոյ հետ (տե՛ս Կողոսացիներուն 2.14):

Սուրբ ըլլալ կը նշանակէ՝ անջատուած կամ զատուած ըլլալ. հոգի, շունչ եւ մարմին: Պարզ ծելով եթէ պիտի ըսենք, սուրբ կը նշանակէ՝ մենք իրն ենք:

*Հայր, շնորհակալ եմ քու գերագոյն զոհողութեամբդ
զիս սուրբ ընելուդ համար: Դուն սուրբ ես: Թող ամէն
բան, որ կ'ընեմ զիս մօտեցնէ քեզի՝ սրբութեամբ:*

Եւ Զօրութեամբ Եւ,

ՈՐՈՎՀԵՏԵԻ ՍՈՒՐԲ ԵՄ ԵՒ ԻՐՆ ԵՄ:

ՉՏՈՒԱԾ՝ ԿՐԱԿՈՎ

*Ահա՛ քեզ զտեցի, բայց ո՛չ թէ արծաթի պէս. քեզ
տառապանքի քուրային մէջ փորձարկեցի:*

ԵՍԱՅԻԻ 48.10

*Մ*սկին եւ արծաթը յատուկ քուրաներու կամ հնոցներու մէջ կը գտուին այնքան բարձր աստիճանի տաքութեան տակ, որ այդ մետաղները հեղուկ կը դառնան: Այդ վիճակին մէջ կղկղանքն ու անմաքրութիւնները մակերես կ'ելլեն եւ յայտնի կը դառնան: Մետաղագործը կը հեռացնէ կղկղանքը նախքան արտօնելը, որ մետաղը պաղի եւ կարծրանայ: Այդ գործընթացը կարելի է կրկնել մինչեւ որ մետաղը ազատ ըլլայ ամէն ապականութենէ եւ խառնուրդներէ, որոնք կը տկարացնեն զինք:

Աստուած չի գտեր մեզ իրական կրակի հնոցի մը մէջ: Ան ուրիշ ձեւեր ունի իրագործելու իր գտելու գործընթացը: Ան կը գործածէ տառապանքի հնոցը կամ քուրան: Տառապանքի կարգ մը հոմանիշներն են՝ դժուարութիւն, խնդիր, հակառակութիւն, նեղութիւն եւ փորձութիւն: Ոչ ոք կը սիրէ տառապանքը, բայց լաւ կ'ըլլայ, որ շարունակենք ճամբան եթէ կ'ուզենք գործընթացին պտուղը տեսնել: Ասիկա կարելոր է, որ յիշենք, որովհետեւ երբ փորձութիւններ կը դիմագրաւենք, հարցը «եթէ»ի հետ կապ չունի, այլ՝ «երբ»ի:

Երբ ջուրերէն անցնիս, ես քեզի հետ պիտի ըլլամ. երբ գետերէն անցնիս, քեզ պիտի չընկղմեն. երբ կրակի մէջէն քալես, պիտի չայրիս, բոցը քեզ պիտի չվառէ: Եսայիի 43.2

Կեանքի նեղութիւններուն մեզի տուած զգացումը կրնայ շատ նման ըլլալ ջրհեղեղներու եւ կրակներու: Մեզմէ ոչ մէկուն այդ փորձութիւններէն զերծ մնալու յատուկ արտօնութիւնը տրուած է, բայց մեզի խոստացուած է, որ անոնք պարզապէս եղանակի մը համար են: Մենք այդ դժուարութիւններէն կ'անցնինք երբ կը մերժենք արտօնել անոնց, որ տապալեն մեզ: Մեր Հայրը գիտէ ինչ կ'ընէ, եւ զտուելու գործընթացը կը նշանակէ, թէ անկէ դուրս պիտի գանք աւելի զօրաւոր:

Վերջաւորութեան Աստուած աւելի հետաքրքրուած է մեր վիճակով քան մեր հանգիստով: Ատիկա կը նշանակէ, թէ ան պիտի արտօնէ, որ կեանքը երբեմն անհանգիստ ըլլայ մեզի համար, որպէսզի մեր ճիշդ վիճակը մէջտեղ ելլէ: Շատ յաճախ այդ զտումը շարժումի կը դրուի մեր աղօթքներուն պատճառով: Բաներ պիտի սկսին տաքնալ երբ կը խնդրենք Աստուծմէ, որ վերցնէ ամէն բան, որ արգելք է մեր աճումին կամ որ հաճելի չէ իրեն: Կրակի մէջէն անցնելու զգացումը տուող փորձութիւնները այն միջոցն են, որ մէջտեղ կը հանեն թէ՛ մեր զօրաւոր կէտերը եւ թէ՛ մեր ճամբաներուն մէջի սխալները: Կը քաջալերեմ, որ երգես բոցերուն մէջ եղած առենդ եւ արտօնես, որ շնորհակալական աղօթքներդ բարձրանան ջրհեղեղի ջուրերէն վեր, որովհետեւ Աստուած կը զտէ քեզ իր նպատակին համար եւ քու զօրութեանդ համար:

*Սիրելի Տէր, բաց աչքերս, որպէսզի ճանչնամ հակառակութիւնը
եւ նեղութիւնը իրենց ճիշդ էութեան մէջ. իբրեւ գործակալները
իմ փոխակերպումիս: Գիտեմ, որ դուն պիտի չլքես զիս
այս զրումին ընթացքին, ուստի թող քու կամքդ ըլլայ:*

Եւ Զօրաւոր Եմ,

ԵՐԲ Կ'ԱՐՏՕՆԵՄ, ՈՐ ԿԵԱՆՔԻՍ ԿՐԱԿՆԵՐԸ
ՁՏԵՆ ԵՒ ՄԱՔՐԵՆ ՍԻՐՏԱ:

ՖԻԶԻԹԱՊԵՍ ԾՈՄ ՊԱՅԵԼ

*Հնազանդեցէ՛ք Աստուծոյ, եւ դէմ դրէք չարախօսին՝
Սաղանային, եւ հեռու պիտի փախչի ձեզմէ:*

ՅԱԿՈՐԹՈՍԻ 4.7

Ծոմապահութիւնը հիմնականօրէն ներքին անձին (շունչին) կշիռք կորսնցնելն է: Միայն հոգեւոր ծոմապահութիւնը այն է երբ կը հրաժարիս խորհուրդէ մը, արարքէ մը կամ սովորութենէ մը: Ֆիզիքական ծոմապահութիւնը ուտելիքէ հրաժարելով զԱստուած փնտռելու աստուածաշնչական վարժութիւնն է:

Ֆիզիքական ծոմապահութիւնը ի՞նչ ձեւով կը տարբերի սննդականոնի մը հետեւելէն: Գլխաւոր տարբերութիւններէն մէկը այն է, որ սննդականոնը կը փոխէ նայելու ձեւը, իսկ ծոմապահութիւնը կը փոխէ տեսնելու ձեւը: Մէկը կշիռքդ կը պակսեցնէ, միւսը աչքերուդ վրայի քողը կը վերցնէ: Ծոմապահութիւնը կ'արտայայտէ Աստուծոյ հանդէպ մեր ենթակայութիւնը: Երբ կանգ կ'առնենք եւ կ'իյնանք մեր ծունկերուն վրայ՝ յանձնուած Աստուծոյ, թշնամին կը սարսափի եւ փախուստ կու տայ: Երբ կը դադրինք ուտելէ, մենք մեզ կը դնենք Աստուծոյ բաներուն հանդէպ անօթութիւն եւ ծարաւ զարգացնելու դիրքին մէջ: Մեր ախորժակները կը փոխակերպուին մինչ մենք կը սնանինք իր Խօսքին վրայ եւ կը յիշենք իր բարութիւնը եւ սէրը: Ծոմապահութիւնը իրեն հետ կը բերէ սրուած արթնութիւն, որ նաեւ կը ծառայէ կակուղցնելու մեր սիրտը: Եթէ ասիկա առաջին անգամն է, որ ծոմապահութիւն պիտի ընես, սկսէ՛ պարզ եւ առողջ բանով մը՝ ինչպէս ծոմապահութիւն ճերմակ ալիւրի եւ շաքարի նման ոչ-առողջապահական ուտելիքներէ: Համացանցին վրայ կրնաս կարդալ Դանիէլի ծոմը ըսուած բանի մը մասին: Կամ թերեւս քու ծոմապահութիւնդ պէտք է ըլլայ կէսօրուայ ճաշ չուտելը:

Եթէ կ'ուզես ընել միայն ջուր խմելու ծոմապահութիւն եւ եթէ բժշկական պարագաներ ունիս կամ դեղ կ'առնես, պէտք է նախ բժիշկիդ հետ խօսիս*։ Ծոմապահութիւն կը նշանակէ՝ ուրանալ մարմինդ։ Անիկա ֆիզիքապէս անհանգիստ փորձառութիւն մըն է։ Բայց հոգեւորապէս, անիկա ժամանակ է տօնակատարութեան, խնճոյքի եւ ուրախութեան։ Մինչ կը պատուես Թագաւորը, ան ալ քեզ պիտի պատուէ իր ներկայութեամբ։ Ծոմապահութիւնը սուրբ առաջնահերթութիւն մըն է, ոչ թէ պատիժ մը։

Ապա անդրադարձի՛ր, որ ասիկա կեանքի եւ մահուան հարց է, որովհետեւ իրապէս այդպէս է։ Դուն մահուան կը դատապարտես կապանքը։ Իմաստ չունի ինքզինքդ կերակուրէ զրկելը եթէ Աստուծոյ ներկայութիւնը չվայելես։ Ապահովէ ամէն բան, որուն պէտք ունիս նախքան որ ծոմապահութեան սկսիս։ Մարէ՛ հեռաձայնդ, համակարգիչդ (փակէ ընկերային համացանցերու էջերդ) եւ հեռատեսիլդ։ Փառաբանութեան եւ պաշտամունքի երաժշտութիւն բաց։ Շաբաթի ժամանակ է քեզի համար, ուստի մի՛ աշխատիր ուրիշ բաներու վրայ։ Հանգի՛ստ ըրէ, քնացի՛ր եւ Աստուծոյ մօտեցիր։ Խօս՛քք կարդա, ներառեալ Եսթերի Գիրքը եւ ծոմապահութեան խոստումները կամ այլ Քրիստոնէական աշխատութիւններ, որոնք կը քաջալերեն քեզ։ Ծոմապահութեան ատեն կը զօրացնես քու հոգիդ։ Գրի՛ առ աղօթքի խնդրանքներդ այդ ժամանակի։ Բաց եւ անկեղծ եղիր Հօրդ հետ եւ արձանագրէ՛ այն ինչ որ ան ցոյց կու տայ քեզի Սուրբ Գիրքերուն ընդմէջէն եւ աղօթքի ատեն։

Ասիկա ժամանակ է սիրելու, եւ ես ամէն պատճառ ունիմ հաւատալու, որ ան քեզի պիտի տայ կենդանի ջուր եւ սնունդ։

Տէր Աստուած, մինչ ծոմապահութիւն կ'ընեմ, մօտեցի՛ր ինձի։ Շեղէ՛ ախորժակներս եւ ինձի տո՛ւր անօթութիւն մը քեզ աւելի ունենալու։ Ես պիտի լռեցնեմ ինքզինքս՝ հաւաքալով, որ դուն պիտի խօսիս։ Աւելցո՛ւր զգայնութիւնս եւ բացայայտէ՛ այն բաները, որոնք բթացուցած են զիս։

Եւ Զօրաւոր Եմ,

ՈՐՈՎՀԵՏԵՒ ՄԻՆՉ ԾՈՄԱՊԱՀՈՒԹԻՒՆ Կ'ԸՆԵՄ,
ԽՆՃՈՅՔ Կ'ԸՆԵՄ ԹԱԳԱԻՈՐԻՍ ՀԵՏ։

ՍԻՐՏԴ ՏՍԼ

Ուստի հիմա ալ Տէրը սա՛ կը պատգամէ. «Վերադարձէ՛ք ինձի ձեր ամբողջ սիրտով՝ ծոնապահուութեամբ, լացով ու կոծով: Ձեր սիրտերը պատռեցէ՛ք, եւ ո՛չ թէ ձեր հագուստները, ու վերադարձէ՛ք Տիրոջ՝ ձեր Աստուծոյն. արդարեւ ան ողորմած եւ գթած է, համբերաբար ու շար կարեկից, եւ չարիքէն կը հրաժարի»:

ՅՈՎԷԼԻ 2.12-13

Մստուած առանց յոգնելու կը հետապնդէ մեզ: Ո՛ր որ ալ ըլլանք, ի՛նչ ալ ըրած ըլլանք, ան պիտի հետեւի մեզի մինչեւ երկրի ծայրերը: Աստուած կ'աղաղակէ այս սերունդին. «Հիմա ալ երբ ամէն բան այդքան անյոյս կը թուի, եւ այդքան աղտոտ եւ անօգնական կը զգաս: Հիմա ալ: Երբ ուրիշ ամէն մարդ ծախողած է եւ ամէն բան, որ փորձած ես յուսախաբ ըրած է քեզ... Ես յուսախաբ պիտի չընեմ քեզ: Հիմա ալ: Երբ այնպէս կը թուի, որ արդէն իսկ շատ ուշ է... Այդպէս չէ: Ինձի՛ վերադարձիր ամբողջ սիրտովդ»:

Քանի՛ որ ան կը հետապնդէ մեզ, մեր ընելիքը իրեն դառնալն է: Ան կը հրաւիրէ մեզ, որ ողջամիտ ըլլանք, մեր վիճակին նայինք քաջաբար եւ ճշմարտաբար եւ անդրադառնանք, որ պատկերը գեղեցիկ չէ... Մեր մեղքերը վարդագոյնի բաց երանգ մը չեն... անոնք աղաղակող կարմիր են: Բայց Աստուած չ'ուզեր մեր կարմիր գոհը, քանի որ Իշխանը արդէն գինը վճարած է: Աստուած կը փափաքի մեզ լուալ եւ մաքրել: Փոխանակ մեզ կերակրելու պարապ «կերակուր»ով, որ չի գոհացներ (այն բաները, զորս կը հետապնդենք այս աշխարհի մէջ), ան մեզի կ'առաջարկէ երկրին տուած լուսագոյն բերքը... Եթէ նախ պատրաստ ըլլանք

կամ կամքը ունենանք եւ ապա հնազանդ ըլլանք: Պատրաստ ըլլանք զղջալու եւ ըսելու, որ շեղեցանք: Պատրաստ՝ ծառայելու իրեն ուրախութեամբ, որովհետեւ ան բարի է, հաւատարիմ եւ ճշմարիտ: Պատրաստ՝ հնազանդութեամբ ենթարկուելու իր Խօսքին, որովհետեւ անիկա սիրոյ, կեանքի եւ ազատութեան օրէնքն է: Պատրաստ՝ առնելու մեր խաչը եւ մեր կեանքը պահելու Քրիստոսի մէջ՝ մարմնացած Խօսքին, եւ հետեւելու իր օրինակին: Յովէլի Խօսքերը մեզի ուղղուած են այսօր. «Վերադարձէ՛ք ինձի ձեր ամբողջ սիրտով», անկախ անկէ, թէ ի՛նչ վիճակ ունի սիրտդ: Ճակատամարտը միշտ եղած է կիներուն սիրտերուն համար, եւ Աստուած կ'ուզէ քու կտրուած, ճզմուած եւ վիրաւորուած սիրտդ: Ան կը հրաւիրէ քեզ, որ դառնաս աշխարհի մղձաւանջներէն եւ քալես իր երազին մէջ, որովհետեւ Ժամանակի սկիզբէն ի վեր ան կը փնտռէ հարս մը... ճիշդ քեզի պէս:

*Հայր, շնորհակալ եմ ինձի այնքան մօտէն հետեւելուդ համար,
որ միակ ընելիքս դառնալ է եւ արդէն թելերուդ մէջ կ'իյնամ:
Ես քեզի կու տամ իմ սիրտս եւ դարձեալ քեզի կը դառնամ:*

Եւ Զօրաւոր Եմ,

ԵՐԲ ԿԸ ԴԱՌՆԱՄ ԱՆՈՐ, ՈՐ ԿԸ ՀԵՏԱՊՆԴԷ ԶԻՍ:

ԽԱՉՐ ԱՌՆԵԼ

Եւ բոլորին ըսաւ. «Եթէ մէկը ուզէ ինծի հետեւիլ՝ թող ուրանայ իր անձը, ամէն օր իր խաչը առնէ եւ ետեւէս գայ: Որովհետեւ ով որ ուզէ իր կեանքը փրկել՝ պիտի կորսնցնէ զայն, եւ ով որ ինծի համար կորսնցնէ իր կեանքը՝ պիտի փրկէ զայն»:

ՂՈՒԿԱՍԻ 9.23-25

Ստուած միշտ ալ ուզած է, որ իրը ըլլանք եւ ոչ թէ թերի մարդկային փորձեր ընենք լաւ մարդիկ ըլլալու: Ան կ'ուզէ, որ մենք տեսնենք կրօնի վարագոյրէն եւ մարմնաւոր գործերէն անդին եւ համարձակինք իրեն մօտենալ հաւատքով՝ առանց կասկածելու իր բարութենէն: Ան կը փափաքի, որ մենք զինք պաշտենք Հոգիով եւ ճշմարտութեամբ, մեր խաչը առնենք ամէն օր եւ իրեն հետեւինք:

Ի՞նչ կը նշանակէ Յիսուսի ըսածը, թէ՛ մեր խաչը առնենք: Ատիկա մեր վիզին շուրջը զարդարանք մը կապելու պէս դիւրին բան մը չէ: Անիկա ամէն օր մեր սիրտին վրայ գեղազարդել է, թէ՛ մենք կենդանի զոհեր ենք իրեն համար: Բայց մեր խաչը առնելը հոգ չի կենար. անիկա կ'ընդարձակի առնելու այն զօրութիւնը եւ խոստումը, զորս խաչը գնած է մեզմէ իւրաքանչիւրին համար՝ այս կորսուած եւ մեռնող աշխարհին մէջ: Խաչը կը փոխակերպէ ամէն բան:

Հին Կտակարանին մէջ քահանաները ամէն օր նուէրներ կը բերէին Տիրոջ առջեւ: «Այն ատեն Սողոմոն ներքնագաւիթին առջեւ կառուցանած Տիրոջ զոհասեղանին վրայ ողջակէզներ մատուցանեց Տիրոջ: Մովսէսի պատուէրին համաձայն՝ օրական քանակը կը մատուցանէր [...]» (Բ.Մնացորդներուն 8.12-13): Խաչը

առնելը մեր օրական «ողջակէզ»ը կամ նուէրն է: Անիկա պատուէր մը չէ՝ տրուած Մովսէսի կողմէ, այլեւ Ինքնին կեանքի Տիրոջ կողմէ:

Ոմանք կրնան ըսել, թէ մենք պէտք չունինք խաչը կրելու, քանի որ Յիսուս վերջին զոհն էր, ուստի ատիկա կատարուեցաւ: Մեր խաչը կրելը կամ առնելը մեղքի համար զոհաբերում մը չէ: Ոչ մէկ ողջակէզ կամ նուէր, որ կրնանք բերել կրնայ զոհացնել մեզ դատապարտեալի դիրքին մէջ դնող գրաւոր օրէնքները: Միայն Յիսուս իրագործեց ատիկա՝ մեր մեղքերուն համար մեռնելով: Անոր կեանքը ինքնին պահուած է Աստուծոյ մէջ, ինչպէս մերը պէտք է պահուած ըլլայ իրենինին մէջ:

Մենք պէտք չունինք մեր արիւնը թափելու, քանի որ ան թափեց իրը: Բայց կենդանի զոհ ըլլալ կը նշանակէ ապրիլ այնպէս ինչպէս ինք ապրեցաւ երկրի վրայ՝ մեռած մեղքին բայց կենդանի Աստուծոյ: Մենք Աստուծոյ կու տանք մեր անձերը՝ մարմին եւ շունչ, իբրեւ արդարութեան գործիքներ:

Ողորմութիւնը մեզ կը դնէ շնորհքի տակ, ոչ Օրէնքին, եւ իբրեւ պատասխան այդ առատածեռն պարգեւին, մենք կը հետեւինք Քրիստոսի խաչի օրինակին: Մենք ամէն օր կը յանձնուինք Աստուծոյ եւ արդարութեան՝ փոխանակ մարմնաւորին եւ չարութեան: Մեր ազատ կամքով, մենք մեր կեանքերը կը դնենք իր առջեւ եւ մեր մարմինները կու տանք իրեն: Ապա հաւատքով կը ձօտենանք Աստուծոյ սիրտին՝ ողջունելով խաչը:

*Յիսուս, շնորհակալ եմ ինձի համար խաչը ելլելուդ համար:
Սորվեցո՛ւր ինձի, թէ ի՞նչ կը նշանակէ խաչս առնել եւ ապրիլ
քեզի հանդէպ հնազանդութեամբ եւ երախտագիտութեամբ:*

Եւ Զօրմեոյ Եւ՛՛,

ԵՐԲ Կ՛ԱՌՆԵՄ ԽԱԶՍ ԱՄԷՆ ՕՐ՝ ԻՆՔԶԻՆՔՍ
ՆՈՒԻՐԵԼՈՎ ԻԲՐԵԻ ԿԵՆԴԱՆԻ ԶՈՎ ՄԸ:

ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԸ

Այս խօսքերս ձեր սիրտի՛ն եւ անձի՛ն մէջ դրէք, ու զանոնք իբր նշան ձեր ձեռքերո՛ւն վրայ կապեցէք, որ իբր ճակատնոց ըլլայ ձեր աչքերուն մէջտեղ [...] Զանոնք գրէ՛ տանդ դրանդիներուն վրայ եւ դռներուդ վրայ, որպէսզի այն երկրին վրայ, որուն համար Տէրը ձեր հայրերուն երդում ըրաւ՝ անոնց տալու, ձեր օրերն ու ձեր որդիներուն օրերը շարունակես:

Բ.ՕՐԷՆՔԻ 11.18,20-21

*Մ*ատուած Իսրայէլի որդիները յորդորեց, որ իր Խօսքը գրեն իրենց տան դրանդիներուն եւ դռներուն վրայ ինչպէս նաեւ իրենց սիրտերուն վրայ: Աստուծոյ Խօսքին վրայ խոկալու եւ զանիկա գոց սորվելու կողքին, ես ատիկա կը հասկնամ իբրեւ ստեղծագործ ըլլալու հրաւեր: Աստուծոյ ժողովուրդը վստահաբար այդպէս ըրաւ: Եբրայեցի տղամարդիկը պզտիկ տուփիկներ շինեցին եւ զանոնք լեցուցին Աստուծոյ Խօսքը պարունակող պզտիկ մագաղաթիկներով եւ զանոնք բառացիօրէն կապեցին իրենց ճակատներուն, որպէսզի իրենց յիշեցնէին, թէ պէտք էր, որ Օրէնքին հնազանդէին: Եբրայերէն *մեզուզա* բառը կը նշանակէ՝ դրանդի եւ անիկա զարդարուն կերպով փորագրուած տուփ մըն է, որ կախուած կ'ըլլայ տան մը դրան վրայ եւ մէջը կ'ըլլայ փաթթուած թուղթ մը կամ պատաստ մը, որուն վրայ գրուած կ'ըլլան հետեւեալ բառերը. «Մտի՛կ ըրէ, ո՛վ Իսրայէլ. Տէրը՝ մեր Աստուածը միա՛կ Տէրն է: Սիրէ՛ Տէրը՝ քու Աստուածդ՝ ամբողջ սրտովդ, ամբողջ անձովդ եւ ամբողջ զօրութեամբդ» (Բ.Օրէնքի 6.4-5): Ի՛նչ գեղեցիկ յիշեցում մը: Ինչո՞ւ մենք ալ նոյնը պիտի չընենք:

Տղաներս ծանօթ են իրենց հայելիներուն վրայ փակցնելով

կփչող թուղթերու վրայ գրուած այն համարները, որոնց մասին կը խոկան այդ հանգրուանին: Ամուսինս Աստուածաշունչը մտիկ կ'ընէ խտասալիկի վրայ իր ինքնաշարժին մէջ, իսկ երբ մարմնամարզի սրահ կ'երթայ, հոն ականջին մէջ քարոզներ մտիկ կ'ընէ: Համացանցին վրայ կան անհատական յայտագիրներ (*փոփրքասթներ*), պաշտամունքի երգեր եւ քարոզներ: Իրականութեան մէջ շատ դիւրին է Աստուծոյ Խօսքը մտցնելը ամենօրեայ կեանքիդ մէջ:

Թոռներս համարներ գոց կը սորվին՝ զանոնք իրենց սիրտին մէջ պահելու համար: Ոմանք դաջուածքներ (*թաթուններ*) կ'ընեն իրենց մարմիններուն վրայ: Եթէ ընտանեօք համարներ գոց սորվելու ձեւը որդեգրէք, կրնաք հատուածները տան մէջ զանազան տեղեր փակցնել եւ կրնաք խօսիլ այն մասին, թէ ի'նչպէս կարելի է զանոնք գործնականօրէն կիրարկել: Կամ անձնական խոկումի համար, կրնաս օրագիր մը պահել անոր մասին, թէ այդ համարը ի'նչ ձեւով կրնայ տարբերութիւն բերել ամենօրեայ կեանքիդ մէջ, յարաբերութիւններուդ մէջ եւ Տիրոջ մէջ աճմանդ առումով:

Այդ ձեւի գործնական քայլերը մեզի կը յիշեցնեն, թէ Աստուծոյ Խօսքը ներկայ է եւ կիրարկելի ամէն տեղի մէջ, ամէն կացութեան եւ մեր կեանքի ամէն խաչմերուկի վրայ: Գրէ՛, փակցո՛ւր, գոց սորվէ՛ եւ կրկնէ՛... մինչեւ որ Աստուծոյ Խօսքերը գլուխէդ սիրտիդ իջնեն:

Տէր, ցոյց տուր ինձի սրտեղծագործ ձեւեր՝ քու Խօսքդ անբաժանելի մէկ մասը ընելու համար առօրեայ, գործնական կեանքիս:

Եւ Զօրաւոր Ե՛մ:

ԵՐԲ ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԵՐԸ ԱԶՔԵՐՈՒՄ ԱՌՋԵՒ
ԵՒ ՄԻՏՔԻՄ ՄԷՋ ԿԸ ՊԱՀԵՄ ՄԻՇՏ:

ՅԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ

Եղբայրներ, դուք ձեզ շար երջանիկ համարեցե՞ք՝ երբ զանազան փորձություններու մէջ կ'իյնաք: Գիտցե՞ք, որ փորձութիւնը համբերութիւն կը ծնի, եթէ ձեր հաւատքը փորձին դիմանայ:

ՅԱԿՈԲՈՍԻ 1.2-3

*Տ*րապէս: Դժուար ժամանակները ուրախութի՛ն պէտք է ներշնչեն: Անգամ մը եւս կը տեսնենք, որ բաներու հանդէպ մեր հակազդեցութիւնը հակառակ է մեր միջավայրին կամ ընկերութեան հակազդեցութեան: Վերջապէս ո՛վ ինքնաբերաբար «երջանիկ» կ'ըլլայ՝ ուր մնաց «շատ երջանիկ», երբ զանազան տեսակի փորձութիւններու դիմաց գտնուի: Սակայն ատի՛կա է, որ Յակոբոս՝ Յիսուսի եղբայրը, կը քաջալերէ, որ ընենք: Կը տեսնէ՞ք, դժուար ժամանակներուն է եւ ոչ թէ հանգիստի ժամանակներուն, որ համբերութիւն կը սորվինք: Այս բառին կարգ մը հոմանիշներն են՝ նպատակ, մղում, նուիրում, վճռականութիւն, քաջութիւն եւ հաստատամտութիւն: Մենք պէտք պիտի ունենանք այդ բոլորին եթէ պէտք է ամուր կենանք աշխարհի մը մէջ, որ կը ջանայ ականահարել մեր ոյժը: Ուրիշ սահմանում մը համբերութեան կու տայ «աստուածային շնորհք» բացատրութիւնը:

«Իսկ համբերութիւն պէտք է ունենալ մինչեւ վերջ, որպէսզի ամբողջական եւ կատարեալ ըլլաք, եւ ձեզի որեւէ բան չպակսի» (Յակոբոսի 1.4): Ամբողջական եւ կատարեալ ըլլալու այդ խոստումին լոյսին տակ, կրնաս հասկնալ, թէ ինչո՞ւ Յակոբոս մտածեց, թէ «շատ երջանիկ» ըլլալը պէտք է ըլլայ մեր հակազդեցութիւնը կամ պատասխանը: Փորձութիւններու դժուար ժամանակներուն է, որ կը յայտնաբերենք, թէ ո՛ր դրած էինք մեր վստահութիւնը կամ ո՛րկէ կը ստանայինք մեր ոյժը: Կեանքի չոր եղանակներուն է, որ կը

յայտնաբերենք մեր ջրհորին խորութիւնը: Առատութեան եղանակները չեն, որ մէջտեղ կը հանեն ներքին անձը (ի՛նչ նիւթով շինուած ըլլալդ): Շատ մը ձեւերով փորձութիւնները եւ դժուարութիւնները մեր հոգեւոր զօրութիւնը մարզողներն են: Եկէք նայինք Պօղոսի բառերուն՝ գիտնալու համար, թէ առաջին առաքեալներուն ժամանակներուն փորձութեան ի՛նչ օրինակներ կային:

Երեք անգամ խարազանուած եմ հռոմայեցիներէն. մէկ անգամ քարկոծուած, երեք անգամ նաւաբեկութեան հանդիպած եւ լման գիշեր մը եւ ցերեկ մը ծովուն բացերը մնացած: Ճամբորդութիւններու ընթացքին ի՛նչ վտանգներէ անցայ.- յորդած գետեր, աւազակներ, վտանգ՝ թէ՛ ազգակիցներէս եւ թէ՛ հեթանոսներէն, քաղաքներու մէջ, անբնակ վայրերու մէջ թէ՛ ծովերու վրայ, եւ վտանգ՝ սուտ քրիստոնեաներու կողմէ: Բ.Կորնթացիներուն 11.25-26

Եւ ասոնք միայն երկու համարներն են այն հատուածէն, որուն մէջ Պօղոս կը նկարագրէ իր դիմագրաւած դժուարութիւնները: Երբ կը կարդամ այդ ցանկը, քիչ մը տկար կ'իյնամ բաղդատութեան մէջ: Այսօր մեր դժուարութիւններուն ցանկը կրնայ այսպէս բան մը ըլլալ. ընկերային համացանցերուն վրայ ինծի հետեւելէն հրաժարեցաւ, բարեկամներու հաւաքոյթի մը չհրաւիրուեցայ, ըրածներու համար չգնահատուեցայ, ուրախ չեմ տեսքովս կամ կշիռքովս: Թերեւս առաջին դարու Եկեղեցւոյ դիմագրաւածին լոյսին տակ, ժամանակն է, որ բարձրացնենք մեր ոյժի մակարդակը:

*Երկնաւոր Հայր, ես կ'ընտրեմ փորձութիւնները շարք
երջանկութիւն կոչել, ոչ թէ որովհետեւ վայելք են անոնք ինծի
համար, այլ՝ որովհետեւ երախտապարտ եմ այն համբերութեան
համար, որ պիտի գործադրուի իմ մէջս անոնց միջոցաւ:*

Ըն Զօրաւոր Եմ,

ԵՐԲ ԿԸ ԳԻՏՆԱՄ, ԹԷ Ի՛ՆՉ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ
ԿԸ ԳՈՐԾԵՆ ԻՄ ՄԷՋՍ:

ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Այս թարգմանության մէջ տեղ գտած աստուածաշնչական համարները առնուած են Աստուածաշունչի հետեւեալ չորս հայերէն տարբերակներէն՝ իւրաքանչիւր մէջբերումի պարագային ընտրելով հեղինակին գործածած աստուածաշնչական տարբերակին ամէնէն մօտիկ հայերէն տարբերակը.

- Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001
- Աստուածաշունչ Նոր Կտակարան Յիսուս Քրիստոսի. Նոր Աշխարհաբար Թարգմանութիւն՝ Համեմատութեամբ՝ Յունարէնի եւ Գրաբարի, Անթիլիաս, 2001
- Աստուածաշունչ Գիրք Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայական եւ Յունական Բնագիրներէն Թարգմանուած, 1981:
- Սաղմոսներ. Նոր Աշխարհաբառ Թարգմանութիւն, Համեմատութեամբ Եբրայերէնի եւ Գրաբարի, Անթիլիաս 2002:

Այն մէջբերումները, ուր հեղինակը գործածած է աւելի այժմէական անգլերէն տարբերակներ, ինչպէս՝ MSG, TLB, ESV եւ NIV տարբերակները, որոնց հայերէն ուղղակի համարժեքները գոյութիւն չունին, թարգմանիչը զանոնք թարգմանած է բառացիօրէն:

* էջ 191 – Այս գիրքին նպատակը բժշկական խրատ տալը կամ բժիշկիդ տալիք խրատին տեղը առնել չէ: Խորհուրդ կու տամ, որ ծոմապահութեան վերաբերեալ կապուիս բժիշկիդ: Եթէ տասնութ տարեկանէն վար ես, ծոմապահութիւն մի՛ ըներ նախքան, որ այդ մասին ծնողներուդ հետ խօսիս:

ՍՈՒՐ ԿՐՈՂ ԱՂՋԻԿՆԵՐ

Ի՞նչպես խաչդ կրես հերոսի մը պէս



Աստուծոյ Խօսքը սուր մըն է, զոր մենք աւելի հանգիստ կերպով կը կարդանք քան կը ճօճենք կամ կը գործածենք: Ժամանակն է, որ սուրեր դնենք աղջիկներու ձեռքերուն մէջ եւ տեսնենք, որ անոնք ինչպէս երկինքը երկիրին պիտի կապեն: Ամբողջ աշխարհի տարածքին կիները թիրախներն են նախապաշարումի, սեռային մաքսանենգութեան, բռնաբարումի եւ նոյնիսկ սեռասպանութեան: Լիսա Պըվիը կը գրէ, թէ այդ յարձակումները աւելի բան կ'ըսեն անոր մասին, թէ կիները ո՛վ կրնան ըլլալ ապագային քան թէ ո՛վ էին անցեալին: «Սուր Կրող Աղջիկներ»ուն մէջ ան կը բացատրէ, թէ հոգեւոր թշնամին կը փորձէ զինաթափ ընել կիները ամէն մակարդակի վրայ: Ժամանակն է, որ կիները ըլլան այն հերոսները, որ Աստուած ստեղծած է զիրենք, որ ըլլան եւ ոտքի ելլեն՝ քաջաբար, զանազանելու կարողութեամբ, ներող եւ իմաստուն կերպով: Ժամանակն է, որ սուրդ քաշես եւ հերոս մը ըլլաս:

ԿԵԱՆՔ՝ ԱՌԱՆՑ ՄՐՑԱԿՑՈՒԹԵԱՆ



Պատճառ մը կայ, որ մենք ուրիշներուն կը նայինք որպէս մրցակիցներ եւ մենք զմեզ կը սահմանափակենք՝ շարունակ անոնց հետ բաղդատուելով եւ մրցակցելով: Մենք ունինք թշնամի մը, որ կը յարձակի մեր միտքին, կամքին եւ զգացումներուն վրայ՝ յուսալով, որ մեզ մեր անձին եւ ուրիշներուն թշնամի կը դարձնէ: Ատիկա կրկնուող շրջան մըն է, որ մեզ կը մեկուսացնէ մտերիմ յարաբերութիւններէ, մեր ինքնութիւնը կասկածի կ'ենթարկէ եւ կը սահմանափակէ մեր արդիւնաւէտութիւնը:

Կեանք՝ Առանց Մրցակցութեան գիրքին մէջ մեծ վաճառք ունեցող գիրքերու հեղինակ Լիսա Պըվիրը ցոյց կու տայ, թէ ինչպէս Աստուծոյ սիրոյն մասին յայտնութիւնը կը քանդէ այս սահմանափակումները: Դուն պիտի սորվիս այլեւս չտեսնել ուրիշները իբրեւ մրցակիցներ եւ քու Ստեղծիչիդ հետ պիտի հաստատես այն խոր կապերը, որոնց համար մեծ փափաք ունիս. կապեր, որոնց շնորհիւ կը բացայայտես քու իսկական ինքնութիւնդ եւ մտերմօրէն կը ճանչնաս զինք: Լիսային առողջ աստուածաշնչական ուսուցումը՝ լեցուն մեր օրերուն վերաբերող մարգարէական խորաթափանցութեամբ եւ համեմուած *հիմըրով* եւ կրակով, կոչ կ'ուղղէ քեզի.

- Օգտագործելու մրցակցութիւնը, որպէսզի անիկա քու մէջէդ լաւագոյնը դուրս բերէ:
- Այլեւս չպահուռելու այն խօսակցութիւններէն, որոնց պէտք է մասնակցիս:
- Պատասխանելու այն պատճառաբանութեան, որ կ'ըսէ, թէ կիները որոշ գործերու համար յարմար չեն եւ թէ անոնք կրնան դիւրութեամբ խաբուիլ եւ դիւրահաւատ են:
- Պատռելու սեռերուն միջեւ գտնուող մրցակցութեան դիմակը եւ համագործակցելու այն տղամարդոց հետ, որոնք կեանքիդ մէջ կը գտնուին: Ժամանակն է, որ քայլ առնես եւ ապրիս կեանք մը, որ մրցակցութենէ զուրկ է:

Հասանելի է  MessengerX.com կայքին մէջ

X MessengerX

Աշակերտ ըլլալու ճամբորդութիւն մը ամէն մարդու համար ամէն տեղ




- Անվճար, աւելի քան 125 տարբեր լեզուներով
- Հասանելի որպէս հեռաձայնային կիրարկում («Էփիլէյշըն») եւ առցանց
- Աղբիւրներ՝ նախատեսուած ձեր աճին համար
- Հետեւեցէք ձեր անցած նիւթերուն եւ աշակերտութեան ուղիին



Ստացէք «Messenger»-ի աշակերտական նիւթերուն ամբողջ գրադարանը, ներառեալ ելեկտրոնային գիրքեր, օտիօ-գիրքեր, կարճ ֆիլմեր, վիտէօ-ուսուցումներ, Աստուածաշունչներ եւ աւելին. դիտեցէք, կարդացէք կամ լսեցէք ձեր բոլոր սարքերուն միջոցով:

MessengerX.com



Հասանելի է աշխարհի տարածքին «App Store»-ի եւ «Google Play»-ի մէջ

ՉՕՐԱԿՈՐ ԸԼԼԱԼԸ ՍԻՎԱԼ ՉԷ: Աստուած ստեղծեց քեզ, որպեսզի զօրաւոր ըլլաս կեանքիդ բոլոր մարգերուն մէջ: Սակայն սխալ ըլլալը զօրաւոր ըլլալ չէ: Այսօրուայ մշակոյթին մէջ կարելոր է ոչ միայն ըլլալ այն զօրաւոր կիները, զորս Աստուած կանչած է մեզ, որ ըլլանք, այլեւ ըլլանք զօրաւոր իր խօսքին ճշմարտութեան մէջ. անգիջող՝ արդարութեան մեր հետապնդումին մէջ:

Չօրութիւնը կոչում մըն է եւ պատուէր մը: Բայց թէ ճիշդ կը քաշենք մեր զօրութիւնը կամ ոյժը նոյնքան կարելոր է որքան մեր զանկա դրսեւորելու ձեւը: Մեր մշակոյթը մեզի կ'ըսէ, թէ զօրութիւնը անձին մէջէն եկող բան մըն է, բայց ճշմարտութիւնը այն է, որ զօրութիւնը կու գայ Աստուծմէ:

Չօրաւոր վերնագիրով իր այս գիրքին մէջ, Նիու Եորթ Թայմզի մեծաբանակ վաճառք ունեցող հեղինակներու ցանկին մէջ տեղ առած Լիսա Պըվիթ, կու տայ թարմ տեսակետ մը անոր մասին, թէ ինչ կը նշանակէ ըլլալ զօրաւոր աշխարհի մը մէջ, որ յաճախ սխալ է: 90 առօրեայ խորհրդածութեան նիւթերով, Լիսան կ'արծարծէ նիւթեր ինչպէս՝ ինչպէս ըլլալ թէ՛ զօրաւոր եւ թէ՛ քնքոյշ, յարաբերութիւններու մէջ բժշկութիւն, գոհացում, բուժում՝ զղջումէ, հանգիստին զօրութիւնը եւ ուրիշներ: Ան պիտի ներշնչէ քեզ, որ ոտքի ելլես զօրութեամբ, անլի խորանաս հաւատքիդ մէջ եւ ունենաս Աստուծոյ, ուրիշներու եւ քու անձիդ հետ ներդաշնակութեան մէջ ապրելու ուրախութիւնը:

Լիսա Պըվիթի հարազատ, բուն եւ զուարթ մօտեցումը խորունկ աստուածաշնչական ճշմարտութիւնները կը հիւսէ գործնական կիրարկումներու հետ: Անոր գիրքերը, ինչպէս՝ *Կոուէ Աղջկայ մը պէս*, *Երբ Կին Առիւծները Կ'արթնան* եւ *Սուր Կրող Աղջիկները*, թարգմանուած են անլի քան 65 լեզուներու եւ բաժնուած միլիոնաւոր մարդոց ամբողջ աշխարհի շուրջ: Լիսան եւ իր ամուսինը՝ ճոնը, մեծաբանակ վաճառք ունեցող հեղինակներ են եւ հիմնադիրները *Մասէնճըր Ինթըրնաշընլի*:



Անլին տրամադրելի է՝ [MessengerX.com](https://messengerx.com) կայքէջին վրայ:



Այս գիրքը նուր է հեղինակին կողմէ, եւ ծայտւ չէ:

Կը ըսմանք անին՝
Տեսնելու համար:

